ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ



# ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԸ

## ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՍԱՆՅԱՆ ՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎԵՐԱՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

671

ԵՐԵՎԱՆ
2016

NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ORIENTAL STUDIES

ARTHUR MELIQYAN

# THE RELIEF OF SALMAS

## (THE REINTERPRETATION OF A SASANIAN MONUMENT OF HISTORICAL ARMENIA)

6746

EDIT PRINT
publishing house

EREVAN
2016

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

АРТУР МЕЛИКЯН

# САЛМАСТСКИЙ РЕЛЬЕФ

## (РЕИНТЕРПРЕТАЦИЯ ОДНОГО САСАНИДСКОГО ПАМЯТНИКА ИСТОРИЧЕСКОЙ АРМЕНИИ)

ЭДИТ
ПРИНТ
издательство

ЕРЕВАН
2016

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐԹՈՒՐ ՄԵԼԻՔՅԱՆ

# ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԸ

## (ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՍԱՆՅԱՆ ՄԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՎԵՐԱՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ)

ԷԴԻԹ
ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ԵՐԵՎԱՆ
2016

**Գիրքը տպագրվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

Պատասխանատու խմբագիր՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Վ. Քոսյան

Գրախոս՝ պ.գ.դ. Ռ. Լ. Մանասերյան

**Արթուր Տիգրանի Մելիքյան**

Սալմաստի ժայռաքանդակը (Պատմական Հայաստա-նի Սասանյան մի հուշարձանի վերամեկնաբանություն)/ Ա. Մելիքյան. – Եր.: Էդիթ Պրինտ հրատ., 2016. – 220 +20 էջ նկ.:

Աշխատությունը ներկայացնում է III դարում Պատմական Հայաստանի Սալմաստ քաղաքի հարևանությամբ ստեղծված ժայռաքանդակի պատմամշակութաբանական քննությունը: Գրքում պարզաբանված են հուշարձանի հեղինակի, ժանրային պատկանելիության, ստեղծման ժամանակի և քաղաքական նպատակադրության հարցերը: Գիրքը հասցեագրված է հայագետներին, իրանագետներին և մշակութաբաններին:

ISBN 9789939751023

© Ա. Մելիքյան

**«... զի որ Հայոց թագաւոր էր՝**
**նա էր երկրորդ Պարսից տէրութեանն...»**

**Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, 18**

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Պատմական անցյալից մեզ հասած ժայռակերտ հուշարձանները սոսկ անցյալի անխոս վկաներ չեն: Նրանցից յուրաքանչյուրը, անկախ ձևից, չափերից, ունեցած գեղարվեստական արժեքից, թաքուցյալ տեղեկություն է պարունակում իր արարման ժամանակների ընկերային հարաբերությունների, ստեղծման քաղաքական-գաղափարական դրդապատճառների և նպատակադրման մասին: Այս առումով բացառություն չէ վաղ Սասանյան դարաշրջանում Պատմական Հայաստանի Պարսկահայք նահանգում՝ Սալմաստ քաղաքից ոչ հեռու, ստեղծված ժայռաքանդակը:

Իրանի պատմության և մշակույթի նկատմամբ XX դ. սկզբներից ի վեր աճող հետաքրքրության պայմաններում համակողմանի ուսումնասիրության են արժանացել Սասանյան հարստության օրոք Իրանում և նրա սահմաններից դուրս ստեղծված ժայռաքանդակները: Մինչդեռ այդ բախտը հիմնականում շրջանցել է Սալմաստի ժայռաքանդակը: Դրա պատճառները մի քանիսն են:

Նախ՝ խնդրո առարկա հուշարձանը պատմաաշխարհագրական առումով դուրս է գտնվում Պատմական Իրանի տարածքից և որևէ կերպ կապված չէ Պարսքի նշանավոր քանդակագործական կենտրոններին, չի աղերսվում դրանց հնամենի ավանդույթներին: Այս հանգամանքը ուսումնասիրողին ակամա դրդել է թերագնահատելու նրա պատմական-աղբյուրագիտական արժեքը: Մյուս կողմից՝ այն ժանրային, հորինվածքային և կատարողական տեսանկյուններից սկզբունքորեն տարբերվում է Սասանյան դարաշրջանում Պարսքում ստեղծված իրանական մյուս ժայռաքանդակներից, իսկ գեղարվեստական արժեքով անհամեմատ զիջում է նրանց: Վերջապես՝ Սալմաստի հուշարձանին կից արձանագրություն չկա: Այդ ամենը, նկատելիորեն դժվարացնելով նրա մեկնաբանության գործը, տեղիք է տվել իրարամերժ վարկածների ու տեսակետների: Ուսումնասիրողների մի մասը Սալմաստի հուշարձանի վերաբերյալ իրենց մեկնաբանությունները կառուցել են ավանդական գրավոր սկզբնաղբյուրների տեղեկությունների հենքով, այլք փորձել են բացահայտել նրա գաղտնիքը իրանական պատկերագրության շրջանակներում դիտարկված օրինաչափությունների լույսի տակ: Սակայն երկու դեպքերում առաջարկվող մեկնաբանությունները մնացել են խիստ խոցելի, իսկ հուշարձանի մեկնաբանության հետ ուղղակիորեն առնչվող շատ սկզբունքային հարցեր՝ պատասխանի կարոտ:

Ե՞րբ է ստեղծվել Սալմաստի ժայռաքանդակը, ո՞վ է նրա հեղինակը, ի՞նչ է պատկերված նրա վրա, և ի՞նչ քաղաքական-քարոզչական նշա-



նակությամբ է այն արարվել. այս հարցերն առանցքային են նաև ներկայացվող աշխատության մեջ: Սակայն, հաշվի առնելով նախորդ ուսումնասիրողների փորձը, մենք նախընտրել ենք Սալմաստի ժայռաքանդակի հետազոտությունը կատարել համեմատաբար լայն տեսադաշտում՝ գրավոր աղբյուրների, դրամագիտական, վիմագրական և պատկերագրական տվյալների համադիր քննության մեթոդաբանությամբ: Ուսումնասիրության ընթացքում հանգամանորեն անդրադարձել ենք Սալմաստի ժայռաքանդակի վերաբերյալ նախկինում հնչեցված կարծիքներին՝ փորձելով տեսանելի դարձնել նրանց ինչպես ռացիոնալ և ընդունելի, նույնպես և թերի և մերժելի կողմերը: Ոչ միայն հիմնախնդրի վերաբերյալ առաջարկված մեկնաբանությունների քննությունը, այլև մեր սեփական դիտարկումները կատարել ենք անտիկ կերպարվեստի ծիրում կենցաղվարած պատկերագրական կարծրատիպերի ձևավորման և զարգացման տեսանկյունից: Ուսումնասիրության այս մեթոդաբանությունը միանգամայն արդարացված է, քանի որ հին մշակույթների բազմադարյան ինտեգրացիայի արդյունքում անտիկ պատկերագրության լեզուն վերածվել էր յուրօրինակ «միջազգային լեզվի», և վաղ սասանյան դարաշրջանի իրանական և, առհասարակ, առաջավորասիական կերպարվեստը շարունակում էր զարգանալ դրա մշակութային ժառանգականության հենքով: Նույն տրամաբանությամբ նկատելի տեղ ենք հատկացրել նաև հռոմեական պատկերագրության նյութերին, քանի որ կայսրության դարաշրջանի հռոմեական կերպարվեստը, արդեն բավական յուրացրած լինելով հին արևելյան պատկերագրության լեզուն, իր հետադարձ ազդեցությունն էր թողնում Իրանի նորահաստատ հարստության քաղաքական հռչակագրերի և գաղափարախոսության պատկերավորման ոճի և կատարողական արվեստի վրա: Հաշվի առնելով պաշտոնական պատկերագրության լեզվի երկու «բարբառների»՝ հռոմեական և իրանական պատկերագրությունների միջև առկա ակնառու ընդհանրությունները՝ Սալմաստի բարձրաքանդակի հետ կապված մի շարք հարցեր պարզաբանել ենք նաև հռեմեական դրամահատության բնագավառում դիտարկված հորինվածքային օրինաչափությունների լույսի ներքո: Այդուհանդերձ, հուշարձանի թվագրության և պատկերների նույնականացման գործում հատուկ ուշադրություն ենք դարձրել վաղ Սասանյան պաշտոնական պատկերաքանդակի բնականոն ձևափոխությանը:

Ուսումնասիրության առանձին բաժիններում Սալմաստի ժայռաքանդակի ժանրային պատկանելիության և ստեղծման ժամանակի վերաբերյալ հնչեցված մեկնաբանությունների իսկությունը ստուգելու նպատակով նրա կոմպոզիցիան համեմատել ենք հաղթանակի, ինվես-

տիտուրայի, ինչպես նաև կառավարչակցության իրողությունների՝ հին առաջավորասիական կերպարվեստի ծիրում գոյություն ունեցած պատկերագրական շաբլոնների հետ: Արդյունքում՝ հուշարձանի պատկերների դիրքային և չափական հարաբերությունների, նրանց հագուստի, հարդարանքի, իշխանության նշանների և պատկերագրական այլ, արտաքուստ ոչ էական թվացող տարրերի քննությունը հնարավորություն է ընձեռել ոչ միայն ճշտելու, թե երբ են տեղի ունեցել ժայռաքանդակի վրա ներկայացված իրադարձությունները, այլև պատասխանելու այն հիմնահարցին հարցին, թե ով և ինչ նպատակով է ստեղծել այս հուշարձանը:

Կարևորելով ժայռակերտ հուշարձանների և նրանց ստեղծման պատմաաշխարհագրական միջավայրի միջև գոյություն ունեցող կապը՝ մենք քննադատորեն ենք մոտեցել Սալմաստի բարձրաքանդակը Պատմական Հայաստանից օտարելու, ի մասնավորի, այն «ատրպատականացնելու» ուղղությամբ մեր ժամանակներում կատարվող փորձերին: Միևնույն ժամանակ հաշվի ենք առել Սալմաստի ժայռաքանդակի պաշտոնական բնույթը և նրա պատկերների նույնականացման ու ամբողջ հորինվածքի մեկնաբանության պահանջմունքով անդրադարձել նաև Սասանյան Իրանի քաղաքական պատմությանը՝ պարսկա-հռոմեական ու հայ-պարսկական հարաբերություններին, III դ. Սասանյան տերության վարչական կյանքում Հայաստանի գրաված դերին, Հայաստանի Սասանյան կառավարիչների իրավաքաղաքական դիրքին և այլն: Ըստ այդմ էլ Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման դրդապատճառներն ու նշանակությունը գտել ենք Սասանյան տերության ներքաղաքական կյանքի ծալքերում՝ այն լուռ, բայց անզիջում կրոնաքաղաքական պայքարի համապատկերում, որ մղվում էր մանիքեականության և զրադաշտականության, իրանական բարձր ազնվականության և վեհապետական իշխանության միջև:

Մեր հետազոտական հանձնառությունն ի կատար ածելու ընթացքում մշտապես զգացել ենք գործընկերների և մտերմագույն անձանց օժանդակությունն ու խրախուսանքը, որի համար հայտնում ենք մեր երախտիքը՝ Ս. Քառյան, Ռ. Ցականյան, Վ. Փիլոյան, Ս. Աղաջանյան, Թ. Մուսաեյան, Լ. Կոշկակարյան, Ն. Զաղինյան, Ա. Աճինյան, Ա. Տոնոյան: Առանց նրանց մասնագիտական և հոգևոր սատարման այս ուսումնասիրությունը հազիվ թե հասներ իր եզրագծին:



# 1
# ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Սասանյան դարաշրջանից հայտնի իրանական 45 մեծ ու փոքր վիմաքանդակների շարքում ուրույն տեղ է զբաղեցնում Սալմաստի ժայռաքանդակը (նկ. 1): Մինչ օրս ըստ հարկի չարժևորված այս հուշարձանը ստեղծվել է Պատմական Հայաստանի Զարեհավան քաղաքի (այժմ՝ Քյոհնշահր) արևմտյան արվարձան Սաղամասից մոտ 8 կմ հարավ-արևելք և Ուրմիայից 72 կմ հյուսիս (հյուս. լ. 38° 47′.68″, արևել. երկ. 44° 53′. 33″): Այն գտնվում է նախկինում Միջագետքից ու Ատրպատականից Ուրմիայի վրայով դեպի Նախիջևան և Վաղարշապատ տանող հնամենի ու բանուկ ճանապարհի մոտ գտնվող Խան Թախտ (*Xān Taxtī*)[1] գյուղի եզրին բարձրացող համանուն ժայռի (հաճախ կոչված է նաև Պիռ Չաուշ) հարավահայաց լանջին՝ ստորոտից 20 մ բարձրության վրա: Անշուշտ, վերոնշյալ տեղադրության շնորհիվ Սալմաստի բարձրաքանդակը տակավին իր ստեղծման ժամանակներից ծանոթ է եղել հիշյալ ուղին անցնող քարավաններին և ճանապարհորդներին: Այդուհանդերձ, մինչև XIX դ. 20-ական թ.թ. եվրոպական հասարակությունը անտեղյակ էր պատմական այդ հուշարձանին:

Հուշարձանի «հայտնաբերման» պատիվը վաստակել է շոտլանդացի ճարտարապետ և նկարիչ սըր Ռոբերտ Կեր Պորտերը (1777-1842 թ.թ.), ով 1819 թ. անձամբ տեսել է այս հուշարձանը: Դրանից մի քանի տարի անց նա հրատարակեց Իրանում, Միջագետքում, Հայաստանում և Վրաստանում 1818-1820 թ.թ. իր կատարած ճանապարհորդությունների տպավորությունները, որտեղ, ի թիվս հին և միջնադարյան Իրանի նյութական մշակույթի մոտ 60 հուշարձանների, եվրոպական հասարակությանը ներկայացրեց Սալմաստի բարձրաքանդակի նկարագրությունն[2] ու իր կողմից արված գրաֆիկական նկարը (նկ. 2):

Երկրորդ եվրոպացին Շառլ Տեքսիեն էր, ով, Կեր Պորտերից երկու տասնամյակ անց ճամփորդելով Պարսկաստանում, այցելեց այս հուշարձանը և նրա գրաֆիկական նկարը ներառեց իր՝ 1842 թ.հրատարակված

[1] XānTaxtī արտահայտությունը համամարժեք է արդի պարսկերենի Taxt-e Xān «կառավարչի գահ» արտահայտությանը (**Shavarebi E.**, A Reinterpretation of the Sasanian Relief at Salmas, *IrCa*, 18, 2014, p. 115):

[2] **Sir Ker Porter R.**, Travels in Georgia, Persia, Armenia and Ancient Babylonia, &c. &c. During the Years 1817, 1818, 1819, and 1820, Vol. 2, London, Printed for Longman, Hurst, Rees, Orme, and Brown, Paternoster-row, 1822, p. 597-600, Plate LXXXII.

«Հայաստանի, Պարսկաստանի և Միջագետքի նկարագրությունները» աշխատության մեջ[3] (նկ. 3):

Նույն ժամանակահատվածում Սալմաստի բարձրաքանդակին անդրադարձել են նաև է. Ֆլանդենն ու Պ. Կոստեն, որոնք նույնպես հրատարակել են հուշարձանի՝ իրենց հեղինակած գեղեցիկ, բայց նախորդներից էապես տարբերվող ձեռանկարը[4] (նկ. 4): Ավելի ուշ քննարկվող հուշարձանի սեփական ձեռանկարն է արել նաև Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը[5]:

Հետագայում խնդրո առարկա հուշարձան են այցելել և նրա մասին իրենց տպավորություններն են թողել Ս. Գ. Վիլսոնը[6], Վ. Ջեկսոնը[7], Վ. Մինորսկին[8], է. Շմիդտը[9], իսկ Վիլյամ Ջեկսոնը տակավին 1903 թ. լուսանկարել է այն: Այնուամենայնիվ, շուրջ մեկուկես դար՝ մինչ 1965 թ. գերմանացի մշակութաբան Վ. Հինցի կողմից հուշարձանի հաջողված լուսանկարի հրապարակումը[10], պատմաբաններն ու մշակութաբանները Սալմաստի ժայռաքանդակի վերաբերյալ իրենց դատողությունները կառուցել են հիմնականում Ռ. Կեր Պորտերի, Շ. Տեքսիեի, է. Ֆլանդինի և Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի հեղինակած նկարների հիման վրա:

Սալմաստի ժայռաքանդակի չափագրական տվյալները տարբեր ուսումնասիրողների մոտ տարբեր են. Մ. Վանդաին ժայռաքանդակի երկարությունը նշում է 6,05 մ, իսկ լայնությունը՝ ձախ կողմում 2,60, աջ կողմում 2,34 մ[11], մինչդեռ է. Շավարեբիի 2012 թ. սեպտեմբերի 26-ին կատարած չափագրության համաձայն, նրա երկարությունը 5,20 մ, իսկ բարձրությունը 2,20-2,80 մ է: Մեր կարծիքով, նշված տարբերությունները պայմանավորված են հուշարձանի քանդակային մակերեսի արդի վիճակով: ժայռաքանդակի ձախակողմյան եզրը, դարերի ընթացքում ողողամաշման ենթարկվելով, զգալիորեն ջնջվել է, և հետազոտողները,

[3] **Texier Ch.**, Description de l'Arménie, et la Perse, la Mésopotamie, tome I, Paris, 1842, Pl. 40.
[4] **Flandin E.**, Voyage en Perse, Tome II, Paris, 1851, p. 456 ff.; **Flandin E., and Costa P.**, Voyage en Perse pendant les années 1840 et 1841, Paris, 1843-54, Pls. 204-205.
[5] **Lehmann-Haupt C. F.**, Armenian Einst und Jetzt, Bd. 1, Berlin, 1910, S. 316 ff..
[6] **Wilson S. G.**, Persian Life and Costoms, 3rd ed., New York Chicago Toronto, 1900, p. 89 ff..
[7] **Jekson W. A.V.**, Persia Past and Present. A Book of Travel and Research, London, 1906, p. 79 ff..
[8] **Минорский В. Ф.**, Келяшин Стелла у Топузава и древнейший памятники вблизи Урмийского озера. *ЗВОИРАО*, т. XXIX, 1916, с. 145-193. Таблица VII, Сасанидский рельиеф на горе Пир-чауш в Салмасе.
[9] **Schmidt E. F.**, Persepolis III: The Royal Tombs and other Monuments, Chicago, 1970, p. 139-140.
[10] **Hinz W.**, Das sassanidische Felsrelief von Salmās, *IrAn* 5, 1965, S. 152 f..
[11] **Վանդաի Մ.**, Արտաշիր Պապականը Խան Թախտի Սալմասում, «*Քանդ ո Քավ*», թիվ. 4, 1390 (2012), էջ 85 -112, (*պարսկերեն*):



սկսած թերևս Ռ. Կեր Պորտերից ու Շառլ Տեքսիեից, յուրովի են պատկերացրել նրա ձախակողմյան եզրագիծը:

Սալմաստի ժայռաքանդակը, ինչպես որ Տանգաբի հովտում՝ Փիրուզաբադի մոտ կերտված մարտական տեսարանով հուշարձանը (Փիրուզաբադ I), ստեղծվել է այսպես կոչված հարթ քանդակի սկզբունքով: Սակայն քանդակի խորությունն այստեղ անհամեմատ փոքր է. հեծյալ պատկերների դեպքում այն 7-9 սմ, իսկ հետիոտն պատկերների դեպքում՝1-6 սմ է[12]: Ավելին, պատկերներն այստեղ որոշ տեղերում մասամբ են առանձնացված քանդակի ֆոնից, իսկ դրանց առանձին դետալները հաճախ միայն գծագրված են: Այս հանգամանքը Գ. Հերմանին առիթ է տվել վաղ սասանյան այս հուշարձանի վրա տեսնելու «պարթևական ժայռաքանդակային արվեստի ավանդույթների ազդեցությունը»[13]:

Հուշարձանի կոմպոզիցիան բաղկացած է չորս պատկերներից. ներկայացված են երկու հեծյալներ, որոնք աջ ձեռքերը մեկնել են իրենց դեմ կանգնած և աջ ձեռքերն իրենց պարզած անձանց:

Երկու հետիոտների պատկերները (նկ. 5. ա, բ), որոնց նույնականացման մասին մանրամասնորեն կխոսվի հետագա շարադրանքի մեջ, բացի իրենց չափերից (առաջին պատկերի հասակը 191 սմ, իսկ ուսի լայնությունը 43 սմ է, իսկ աջակողմյան պատկերի հասակը 167 սմ, ուսերի լայնությունը 40 սմ է[14]) սկզբունքորեն չեն տարբերվում իրարից: Երկու պատկերներն էլ ներկայացված են առանց գլխի պատվի *(kulāf)*, մեջտեղից բացված և երկու կողմերում գնդաձև հավաքված մազերի հարդարանքով և համեմատաբար կարճ բեղ-մորուքով: Նրանք կրում են պարթևական ոճի մինչև ծնկները հասնող գոտեզարդ վերնահագուստ և ներքևում հավաքվող լայն տաբատներ: Ցավոք, վնասվածքի պատճառով անհնարին է դատողություն անել հետիոտն պատկերների կոշիկների մասին:

Խիստ նույնական է նաև հետիոտն պատկերների դիրքը. երկուսն էլ աջ ձեռքը մեկնել են դիմացի հեծյալին, իսկ ձախը չի երևում՝ քանդակի չնչին խորության կամ վնասվածքի պատճառով: Ռ. Կեր Պորտերը խուսափել է կռահումներից և պատկերագրական այդ դետալը պարզապես չի ներկայացրել: Մինչդեռ Շ. Տեքսիեն երևակայել է ազատորեն՝ ձախակողմյան պատկերի ձախ ձեռքը ներկայացնելով աջին զուգահեռ՝ դեպի հեծյալը մեկնած, իսկ աջակողմյանինը՝ արմունկից մի փոքր

[12] **Վանդաի Մ.**, Արտաշիր Պապականը..., էջ 85 -112:
[13] **Hermann G.**, The Dārābgird Relief – Ardashīr or Shāhpūr?: A Discussin in the Context of Early Sasanian Sculpture, *Iran* 7, 1969, p. 74.
[14] **Վանդաի Մ.**, Արտաշիր Պապականը..., էջ 85 -112:

առաջ պարզած: Ինչ վերաբերում է մյուս երկու գրաֆիկական նկարներին, ապա դրանց հեղինակները խնդրո առարկա պատկերների ձախ ձեռքերը չեն նկարել՝ ըստ երևույթին առաջնորդվելով այն տրամաբանությամբ, որ դրանք եղել են կախ ընկած և պատկերների աջ դարձած դիրքի պայմաններում չէին կարող երևալ: Էհսան Շավարեբին նույնպես պատկերագրական հիշյալ դետալը վերականգնում է բացառապես կռահման հենքով. նրա կարծիքով հետիոտների ձախ ձեռքի ափը դրված է եղել գոտուց կախված սրի բռնակին[15]:

Արտաքուստ բավականին նման են նաև հեծյալների պատկերները (նկ. 6. ա, բ): Նրանք երկուսն էլ ներկայացված են ձախ դարձած, սակայն նրանց դեմքերն ու մարմնի վերին մասերը պատկերված են ճակատային դիրքով՝ ասես քանդակագործները հատուկ հոգացել են, որ դիտորդը պատկերները նույնականացնի առանց դժվարության: Երկու հեծյալներն էլ ունեն բեղ-մորուք, որը ծնոտից ներքև անց է կացված օղակի միջով: Առաջին անգամ Արտաշիրի՝ Փիրուզաբադ I-ի ժայռաքանդակի վրա երևացող այս դետալը Սասանյան պատկերագրության մեջ հանդիսանում էր վեհապետական իշխանության խորհրդանիշերից մեկը: Միօրինակ են նաև երկու հեծյալների իշխանական մյուս նշանները. երկուսն էլ կրում են կորոմբոսով (*korymbos*) վերջացող միօրինակ թասակաձև թագեր, որոնք համադրված են դիադեմայի հետ: Վերջիններիս լայն, կրկնակի ժապավենները (*dastār*), որոնք սասանյան պատկերագրության մեջ հանդիսացել են արքայական փառքի խորհրդանշաններ[16], ծածանվում են հանգույցի ետևում: Երկուական ժապավեններ էլ փողփողում են նրանց թիկունքից: Քանի որ Սասանյան մյուս ժայռաքանդակների վրա պատկերագրական այս տարրը բացակայում է, մնում է միայն ենթադրել, որ դրանք կերպավորել են հեծյալների թիկնոցները:

Հեծյալների հագուստը քանդակված է սասանյան արքայական հանդերձանքի հատկանշական ձևով՝ ներառյալ ծանր մանյակը, թևքավոր տունիկան, լայնացված անդրավարտիքները և այլն: Նրանց տունիկաների փեշերը իջնում են ազդրերին ու ձիերի գավակներին՝ ձախակողմյան հեծյալինը՝ ծանրորեն, իսկ աջակողմյանը՝ ավելի թեթև: Տունիկաները գոտկատեղից բոլորված են գոտիով, որոնցից կախված են երկար, նեղ շեղբավոր սրերը: Հեծյալները ձախ ձեռքով ձիերի սանձերն են բռնել, իսկ աջերը մեկնել են դեպի հետիոտները:

[15] **Shavarebi E.**, A Reinterpretation of the Sasanian Relief at Salmas, *IrCa*, 18, 2014, p. 118.
[16] **Soudavar A.**, The Aura of Kings: Legitimacy and Divine Sanctionin Iranian Kingship, Mazda Publishers, Inc. Costa Mesa, California, 2003, p. 14.



Սալմաստի ժայռաքանդակի վրա ձիերի պատկերները իրարից տարբերվում են չափական առումով և թամբասարքի ոճով: Բայց նրանց դիրքն ու կանգնելաձևը ևս միօրինակ է. երկուսն էլ ներկայացված են առջևի աջ ոտքը ծնկից ծալած՝ մի դիրքով, որն իրանական պատկերագրության մեջ հայտնի է Միհրդատ I Արշակունու Հոնգ-ի Աշդարի վիմաքանդակից և Ք.ա. II-I դ.դ. պարթևական դրամներից: Երկուական ժապավեններ են փողփողում յուրաքանչյուր ձիու ձախ ականջից ներքև, հավանաբար, իբրև նժույգների «արքայականության» ցուցիչները: Թամբերը երիվարներին են ամրացված դրվագազարդ երկու ժապավեններով, որոնք գրկում են ձիերի ողջ մարմինը: Դրանց հանգույցից դարձյալ ծածանվում են երկուական կարճ ժապավեններ: Երկուսի թամբամասից էլ կախված է վրձնաձև ինչ-որ առարկա, որի նշանակության հարցը մինչ օրս բանավեճի առարկա է[17]: Սակայն այսքանով իսկ ավարտվում են այրուձիու պատկերների միջև ընդհանրությունները: Իսկ ինչ վերաբերում է տարբերություններին, ապա դրանք դիտարկվում են ոչ միայն ձիերի ու հեծյալների չափերում (ձախից առաջին հեծյալի հասակը 259 սմ է, ուսերի լայնությունը՝ 57 սմ, իսկ երկրորդի հասակը 232 սմ է, ուսերի լայնությունը՝ 40 սմ[18]), այլև հեծյալների հագուստի, գլխի հարդարանքի, ձիերի սանձասարքի դետալներում: Տարբեր են հեծյալների տաբատները. ձախակողմյան հեծյալինը երկար է՝ մի քանի ուղղահայաց ծալքերով՝ նման նրան, որ Արտաշիր I-ը կրում է Նախշ-ի Ռուստամի ժայռաքանդակի վրա: Մինչդեռ մյուս հեծյալի տաբատն ավելի թեթև է և իր ոճով կրկնում է Շապուհ I-ի կերտած վիմաքանդակների վրա առկա ոճը:

Հեծյալների ակնառու տարբերություններից մեկը նրանց մազերի հարդարանքն է. առաջին հեծյալի մազերը հավաքված են թագի տակ, մինչդեռ երկրորդի խոպոպները գնդաձև հավաքված են երկու կողմից: Այս դետալը ճշգրիտ են վերարտադրել Ռ. Կեր Պորտերը, Է. Ֆլանդինն ու Կ. Ֆ. Լեհմանն-Հաուպտը: Մինչդեռ Շ. Տեքսիեն իր հեղինակած նկարում ձախակողմյան հեծյալին պատկերել է մազերի այն նույն ուռուցիկ հարդարանքով, ինչ որ ունի երկրորդ հեծյալը: Ինչպես կտեսնենք ստորև, Շ. Տեքսիեի այս «խմբագրումը» Սալմաստի ժայռաքանդակի մեկնաբանության գործում ավելի մեծ սխալի նախապայման է դարձել:

Դեռևս Ռ. Կեր Պորտերը Սալմաստի ժայռաքանդակի այնպիսի ակնառու դետալների հիման վրա, ինչպիսիք են հեծյալների թագերի ձևը, մազերի հարդարանքը, բեղ-մորուքը, հագուկապը, թիկունքում փողփո-

[17] **Hinz W.**, Altiranische Funde und Fourschungen, B., 1969, S. 135-136.
[18] **Վանդաի Մ.**, Արտաշիր Պապականը..., էջ 87:

դացող թիկնոցն ու պարանոցի ետևում ծածանվող դիադեմայի լայն ժապավենները, սպառազինությունը և այլն, հանգել էր այն ճիշտ հետևությանը, որ խնդրո առարկա հուշարձանը պատկանում է վաղ Սասանյան դարաշրջանին[19]: Ըստ էության, այս կարծիքին համերաշխել են հետագայի բոլոր ուսումնասիրողները:

Սակայն, Սասանյան դարաշրջանի իրանական մոնումենտալ ժայռաքանդակների[20] հետ ունեցած բազմաթիվ ընդհանրություններով հանդերձ, Սալմաստի հուշարձանը պարունակում է նաև որոշ սկզբունքային առանձնահատկություններ, որոնք հատուկ ուշադրության են արժանի:

Սասանյան ժայռաքանդակները ստեղծվել են Իրանում՝ մեծամասամբ պատմական Պարսքի տարածքում: Դրանք կերտվել են որոշակի կենտրոններում, ինչը բացատրվում է Հին Իրանի վարչաքաղաքական ու կրոնական կյանքում այդ շրջանների ունեցած կարևոր դերով և տակա-

[19] **Sir Ker Porter R.**, Travels in Georgia, Persia, Armenia ..., p. 597-598.

[20] Սասանյան ժայռաքանդակների մեծամասնությունը կերտվել է այս արքայատան կառավարման առաջին 157 տարիների ընթացքում՝ Արտաշիր I-ից (224-241 թ.թ.) մինչև Շապուհ III-ն (383-388 թ.թ.) ընկած ժամանակահատվածում (**Canepa M.**, Sasanian Rock Reliefs, in *The Oxford Handbook of Ancient Iran*, Oxford University Press, 2013, pp. 856-876): Նրանցից վեցը Տանգ-ի Բոստանում են (**Vanden Berghe L., Haerinck E. and Smekens E.**, Reliefs rupestres de l'Iran ancient, Brussels, 1983, pp. 92-95, Pls. 36-40), մեկը՝ Վանա լճից 110 կմ հարավ-արևմուտք՝ Բոշատի մոտ (**Lehmann-Haupt C. F.**, Armenian Einst und Jetzt, Bd. 1, Berlin, 1910, S. 419 f.), մեկը՝ Հյուսիսային Աֆղանստանում՝ Ռաջ-ի Բիբիում (**Grenet F., Lee J., Marquis P. & Ory F.**, The Sasanian relief at Rag-i Bibi (Northern Afghanistan), in (eds), After Alexander: Central Asia before Islam, eds. by J. Cribb & G. Herrmann, Oxford University Press, Oxfoerd, 2007, pp. 243-267), մեկը կերտված է եղել Ռեյում, սակայն ոչնչացվել է XIX դ. սկզբներին (**Potts D.T.**, A Companion to the Arcaeology of the Ancient Near East, Tom 1, Chichester, West Sussex, 2012, p. 1090): Պարսքում հայտնաբերված ժայռաքանդակներից ինը կերտվել են Աքեմենյան արքաների Նախշ-ի Ռուստամի ժայռափոր դամբարանների հարևանությամբ (**Schmidt E.F.**, Persepolis III: The Royal Tombs and Other Monuments, Chicago, 1970, pp. 127-137, Pls. 80-95), երկուսը՝ Նախշ-ի Ռաջափում՝ Պերսեպոլիսից 2 կմ հյուսիս (**Ibid.**, pp. 123-127, Pls. 96-101), երկուսը՝ Շիզի մոտ՝ Բարմ-ի Դիլակում (**Vanden Berghe L., Haerinck E. and Smekens E.**, Reliefs rupestres…, pp. 80-81, 136-137; **Overlaet B.**, Flower and Fire Altar. Fact and Fiction on the Barm-i Dilak Reliefs, *IrAn*. XLV, 2010, pp. 346-352, Pl. 2-8), մեկը՝ դարձյալ Շիզի մոտակայքում՝ Գույումում (**Vanden Berghe L., Haerinck E. and Smekens E.**, Reliefs rupestres…, p. 77, 137), վեցը՝ Բիշապուհի մոտակայքում՝ Տանգ-ի Չովգանում (**Ibid.**, p. 72-74, 131-134), մեկը՝ Բիշապուհից 15 կմ հյուսիս-արևմուտք՝ Տանգ-ի Քանդիլում (**Ibid.**, p. 80), մեկը՝ Նուրաբադ-ի Մամասանիի մոտ՝ Սարաբ-ի Բահրամում (**Ibid.**, p. 78-80, Fig. 10), երկուսը՝ Տանգաբի հովտում՝ Փիրուզաբադում (**Ibid.**, pp. 62-66, Figurs 8-9), մեկը՝ Կազերունի և Բուշեհրի միջև՝ Սար-ի Մաշհադում (**Ibid.**, p. 80, Pl. 29), և երկուսը՝ հարավարևելյան Պարսքում՝ Դարաբգիրդում (**Ibid.**, p. 72, 108):



վին Աքեմենյան դարաշրջանում այդտեղ ձևավորված քանդակագործական ավանդույթների ազդեցությամբ: Դրանց մեջ Սալմաստի հուշարձանը Ռաջ-ի Բիբիի և Բոշատի ժայռաքանդակների հետ կազմում է այն բացառիկ եռյակը, որոնց հանդես գալը հնարավոր չէ պայմանավորել վերոնշյալ գործոնների ազդեցությամբ:

Բացի տեղագրական առանձնահատկությունից՝ խնդրո առարկա հուշարձանի վրա առկա են նաև ոճական և կատարողական բնույթի ինքնատիպություններ, որոնք հավելյալ դժվարություններ են ստեղծում հուշարձանի մեկնաբանության գործում:

Վաղ սասանյան դարաշրջանից մեզ հասած ժայռաքանդակները, որպես կանոն, կատարողական արվեստի համեմատաբար բարձր մակարդակով, քանդակային մակերեսից պատկերների հստակ առանձնացմամբ, դրանց անատոմիական ճշգրտությամբ ու անհատականությամբ հատկանշվող բարձրարվեստ հուշակոթողներ են: Մինչդեռ Սալմաստի հուշարձանը նույնիսկ որոշ վերապահությամբ կարելի է վերագրել բարձրաքանդակի դասին: Այստեղ շատ թույլ են արտահայտված պատկերների անհատական գծերը, իսկ տարբերակիչ զինանշանները, որոնք, որպես կանոն, պատկերված են վաղ սասանյան ժայռաքանդակների պատկերների սաղավարտներին, բացակայում են:

Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի կարծիքով Սալմաստի ժայռաքանդակը վաղ սասանյան շատ վիմաքանդակների օրինակով[21] ունեցել է արձանագրություն, որը սակայն, ոչնչացվել է[22]: Արձանագրության գոյության գաղափարը պաշտպանել են նաև այլք[23]: Ընդ որում, սովորաբար, դրա հեղինակ է համարվել Ռ. Կեր Պորտերը, այն դեպքում, երբ վերջինիս «Ճանապարհորդություններում» նման արձանագրության մասին որևէ հիշատակություն չկա: Իսկապես, ժայռաքանդակի վերևի աջ անկյունում առկա է համեմատաբար լավ հղկված քառակուսի մի մակերես, որը, ամենայն հավանականությամբ, ստեղծվել է հենց վիմագրի ստեղծման նկատառումով: Սակայն Վ. Հինցը, ով առաջին անգամ մանրազնին ուսումնասիրության է ենթարկել այս հուշարձանը, փաստում է, որ խնդրո առարկա մակերեսի վրա գրության որևէ հետք չկա: Նրա համոզմամբ, արձանագրության գո-

[21] Արքաներին նույնականացնող արձանագրություններ կան Նախշ-ի Ռաջափ I, Նախշ-ի Ռուստամ I և VI, Բիշապուհ V, Տաք-ի Բուստան II և, հնարավոր է, Բարմ-ի Դիլակ I և II, մոգպետ Կարտիրի Սար-ի Մաշհադի, Նախշ-ի Ռուստամի և Նախշ-ի Ռաջափ ժայռաքանդակների վրա (**Back N.**, Die sassanidischen staatsinschriften, *AI* XVIII, 1978, pp. 279-520):

[22] **Lehmann-Haupt C. F.**, Armenian Einst und Jetzt, S. 535.

[23] **Gabriel A.**, Die Erforschung Persiens: Die Entwicklung der abendländischen Kenntnis der Geographie Persiens, Wien, 1952, S. 239.

յության գաղափարը միայն երևակայության արգասիք է[24]:

Անշուշտ, վաղ սասանյան ժայռաքանդակային արվեստի ոճակատարողական ընդհանուր օրինաչափություններից շեղումները և, հատկապես, ժայռաքանդակին կից արձանագրության պակասը անչափ դժվարացնում են ոչ միայն Սալմաստի ժայռաքանդակի պատկերների նույնականացման, այլ նաև նրա թվագրության և նշանակությունը պարզելու գործը: Թերևս, հենց դա է հիմնական պատճառը, որ մինչև վերջերս Սալմաստի հուշակոթողը միայն եզակի դեպքերում էր դարձել առանձին ուսումնասիրության առարկա: Հին Իրանի պատմությանն ու մշակույթին նվիրված աշխատություններում այն մեծամասամբ կարևորվում էր պարսկահռոմեական հարաբերությունների համատեքստում՝ որպես Սասանյանների հերթական հաղթանակի մի վկայություն, իսկ երբեմն էլ որակվել է իբրև ***«պարթևական ոճով կատարված ուշ շրջանի գավառական գործ»[25], «գավառական արվեստով ստեղծված, ոճական առումով ծանր և անկենդան քանդակ»[26]*** կամ էլ՝ ***«պատմական արժեքից բացարձակապես զուրկ ստեղծագործություն»[27]:***

Սակայն պաշտոնական բնույթի ցանկացած ստեղծագործություն, անկախ իր գեղարվեստական արժեքից, նաև վավերական սկզբնաղբյուր է, որը պատկերագրության լեզվով որոշակի տեղեկություն է հայտնում տվյալ դարաշրջանի քաղաքական և գաղափարական իրողությունների ու միտումների մասին[28]: Եվ այս առումով Սալմաստի բարձրաքանդակը բացառություն չէ: Հետևաբար, պատմաբանը դրանք պետք է գնահատի ոչ թե իբրև պատմական անցյալի մեռած մնացուկ, այլ իբրև անցյալի քաղաքակրթության լեզվով մեզ հասցեագրված կենդանի հաղորդագրություն, ուղերձ: Այլ հարց է, թե որքանով է այդպիսի ուղերձը ընթեռնելի ու հասկանալի այսօր:

---

[24] **Hinz W.**, Das sassanidische Felsrelief von Salmās, S. 151.
[25] **Chaumont M-L.**, Recherches sur l'histoire d'Arménie, Paris, 1969, p. 173.
[26] **Luschey H.**, Ardašīr I: II. Rock reliefs, *EIr*, Vol. II, Fasc. 4, p. 380.
[27] **Chaumont M-L.**, Recherches sur l'histoire d'Arménie, p. 173.
[28] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, М., 1969, с. 24.



## 2
## ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԻ ՎԱՂ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բոլոր այն ուսումնասիրողները, որոնք այս կամ այն չափով անդրադարձել են Սալմաստի ժայռաքանդակին, հանգել են երեք հիմնական խնդիրների՝ հուշարձանի ժանրային պատկանելության հարցի, պատկերների նույնականացման և ներկայացված պատմական իրողության պարզաբանման անհրաժեշտությանը: Եվ գրեթե առանց բացառության, բոլորն էլ, իբրև ելակետ, սկսել են հուշարձանի ժանրային պատկանելիության հարցից:

Սովորաբար, Սասանյան դարաշրջանի իրանական կերպարվեստի ստեղծագործությունների մեկնաբանությունը մեծ դժվարություններ չի հարուցում՝ շնորհիվ պատկերների դիրքային դասավորության, նրանց տարբերակիչ նշանների և ներկայացվող գործողությունների պատկերագրության կանոնական սկզբունքների անխախտ պահպանության: Սասանյան դարաշրջանի ժայռաքանդակային արվեստում պատկերագրական կանոնների կայուն և շարունակական գործադրությունն էլ շատ ուսումնասիրողների դրդել է Սալմաստի հուշարձանի խորհուրդը դրանց պատկերագրական օրինաչափությունների լույսի ներքո բացահայտելու փորձերին: Սակայն այսպիսի մեթոդաբանությամբ որևէ մի ուսումնասիրող դեռևս հիմնավոր և լիարժեք մեկնաբանության չի հանգել: Դրա հիմնապատճառն այն է, որ Սալմաստի ժայռանդակի վրա **հեծյալ և հետիոտն պատկերների դիրքային հարաբերությունները և, հատկապես, նրանց միջև կայացող գործողությունը հազվադեպ են սասանյան և, ընդհանրապես, իրանական ժայռաքանդակային արվեստի մեջ:** Ուստի և անչափ դժվար է այս հուշարձանը անվերապահորեն սասանյան արվեստի հիշյալ բնագավառում կենցաղավարած ժանրերից որևէ մեկին վերագրելը:

Սալմաստի ժայռաքանդակի «բացառիկության» հիմնական պատճառներից մեկն էլ նրա «հիբրիդայնություն» է: Այս հուշարձանի համեմատությունը մի կողմից Սարպոլ-ի Զահաբի պարթևական ժայռաքանդակի, մյուս կողմից՝ Քերմանշահում և Պարսքում Սասանյանների ստեղծած հուշարձանների հետ պարզորոշ է դարձնում, որ այն կերտող քանդակագործները թեև ոճակատարողական առումներով գտնվել են պարթևական արվեստի ազդեցության ներքո, այնուամենայնիվ, սասանյան կերպարվեստից յուրացրել են կերպարներին անհատական դիմագծերով, ինքնատիպ թագով և հագուստով ներկայացնելու սկզբունքը:

Ինչպես երևում է, Սալմաստի հուշարձանի ինքնատիպության գոր-

ծում որոշակի դեր է խաղացել նաև նրա կոնկրետ տեղադրությունը: Ըստ երևույթին, հուշարձանի պատվիրատուն սկզբունքային նշանակություն է տվել նրա ստեղծման վայրին՝ առանց այդքան էլ կարևորելու ընտրված տեղանքի ընձեռնած հնարավորությունները: Հավանաբար հուշարձանի պլանավորման ժամանակ թույլ տրված չափագրական սխալի պատճառով արդեն իսկ հուշարձանի նախագծողները կանգնել են քանդակի համար պիտանի ոչ մեծ մակերեսի վրա պատկերները պատշաճ մեծությամբ տեղաբաշխելու խնդրի առջև: Զրկված լինելով քանդակային մակերեսն ընդլայնելու հնարավորությունից՝ նրանք խնդիրը լուծել են պարթևական կերպարվեստին բնորոշ «ինտելեկտուալ» սկզբունքով. աջ պատկերախմբի պատկերների ազատ տեղորոշման համար բավարար տարածություն շահելու նպատակով (այս իրողությունը հուշում է, որ պատվիրատուն առավել կարևորել է աջ պատկերախումբը) նրանք պարզապես ձախ պատկերախմբի գործողությունը «տեղափոխել» են ձիու պարանոցի հետևը: Դա, ամենայն հավանականությամբ, կատարվել է այն նկատառումով, որ երկու պատկերախմբերի ընդհանուր սիմետրիայից դիտորդը պետք է հետևություն աներ նաև ձախակողմյան պատկերախմբում ներկայացված գործողության մասին:

Աջակողմյան պատկերախմբի հեծյալն ու հետիոտնը աջ ձեռքերը մեկնել են միմյանց՝ պարզորոշ դարձնելով, որ փոխանցում են ինչ-որ բան (նկ. 7): Սակայն, փոխանցվող առարկան էրոզիայի պատճառով XIX դ. սկզբներին արդեն մեծամասամբ ջնջված էր: Այդ հանգամանքը եվրոպացի ճանապարհորդներին հուշարձանի ձեռանկար վերականգնումների գործում լուրջ շփոթի մեջ է գցել:

Շառլ Տեքսիեն հուշարձանի իր ձեռանկարում աջ պատկերախմբի հետիոտնի ձեռքը ձախ պատկերախմբի օրինակով «տեղավորել» է ձիու պարանոցի հետևում, իսկ վնասվածքն էլ վերականգնել է սկավառակների տեսքով, որոնք, սակայն, ասես ոչ թե փոխանցվող առարկա, այլ ձիերի գլխի հարդարանքի մասերն են կազմում:

Շ. Տեքսիեի օրինակին է հետևել նաև Է. Ֆլանդինը, որի ձեռանկարի վրա հեծյալների ու հետիոտների դաստակները ամբողջովին «թաքցվել են» ձիերի պարանոցների հետևում, իսկ վերոնշյալ սկավառակաձև դետալն ընդհանրապես դուրս է թողնվել:

Փաստորեն՝ Սալմաստի բարձրաքանդակի վերոնշյալ ձեռանկարներում հեծյալ և հետիոտն պատկերների միջև դիրքային հարաբերությունները ներկայացված են այնպես, որ նրանց միջև տալու-ստանալու գործողության տպավորություն բոլորովին էլ չի ստեղծվում: Նման պայմաններում բարձրաքանդակի հատկանշական կողմը դառնում են հեծյալ



և հետիոտն պատկերների դիմահայաց դիրքերը, ինչի հիման վրա էլ ուսումնասիրողներից ոմանք հուշարձանը վերագրել են արքայական ընդունելության ժանրին:

Սալմաստի բարձրաքանդակի կոմպոզիցիայի վերականգնման գործում իրատեսական մոտեցում են դրսևորել Ռ. Կեր Պորտերն ու Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը, ովքեր աջակողմյան հեծյալի և հետիոտնի միջև փոխանցվող առարկան վերականգնել են օղակի տեսքով[29]: Այսպիսի մեկնաբանությունը մեզ միանգամայն արդարացված է թվում, երբ հաշվի ենք առնում իրանական կերպարվեստում այս մոտիվի լայն տարածումը: Սակայն ո՞վ է ում հանձնում և օղակով խորհրդանշվող ի՞նչ է հանձնում. ըստ էության, սրանք մնում են Սալմաստի հուշարձանի մեկնաբանության գործում ծառացող առանցքային հարցերը: Դրանց պատասխանելու փորձերն էլ ծնունդ են տվել բազմաթիվ իրարամերժ կարծիքների ու մեկնաբանությունների, որոնց հարկ ենք համարում անդրադառնալ ստորև:

Սալմաստի հուշակոթողի ստեղծման ժամանակի և նշանակության փոխկապակցված հարցերին առաջինը փորձել է պատասխանել Ռ. Կեր Պորտերը: Նրա ենթադրությամբ՝ հուշարձանի ձախակողմյան պատկերախմբում արտահայտված է հայոց Տրդատ III Արշակունու (այդ պատկերախմբի հետիոտն կերպար) կողմից պաշտոնապես Հայաստանի մասերը հանդիսացած անդրտիգրիսյան գավառների հանձնումը Գալլերիուս Մաքսիմիանուս կեսարին: Իսկ աջ պատկերախմբի հեծյալը, համաձայն Ռ. Կեր Պորտերի, արքայից արքա Ներսեհն (293-302 թ.թ.) է, որը Ատրպատական գավառի տնօրինությունը հանձնում է «հայոց թագաժառանգ» Տրդատին՝ որպես փոխհատուցում Հռոմի նրա ունեցած տարածքային կորուստների[30]:

XIX դ. առաջին քառորդի պատմագիտության մակարդակին հարիր այս մեկնաբանությունը լուրջ կռվաններ չունի, և պատահական չէ, որ հետևորդներ չունեցավ. Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման առիթը չէր կարող անդրտիգրիսյան գավառների՝ Հռոմին անցնելը լինել, քանի որ, ինչպես հայտնի է, 298 թ. Մծբինի պայմանագրով Հռոմը դրանք ստացավ ոչ թե հայերից՝ իբրև Հայաստանի միավորման գործում իր մասնակցության հատուցում, այլ պատերազմում պարտված պարսիկներից՝ իբրև անեքսիա[31]: Բացի այդ՝ աներևակայելի է, որ Ներսեհի դեմ կատարյալ

---

[29] **Sir Ker Porter R.**, Travels in Georgia, Persia, Armenia ..., Vol. II, p. 597, Pl. LXXXII; **Lehmann-Haupt C. F.**, Armenian Einst und Jetzt, S. 317.

[30] **Sir Ker Porter R.**, Travels in Georgia, Persia, Armenia ..., Vol. II, p. 599-600.

[31] **Petrus Patricius**, Fragm. 14, *see* Corpus Scriptorum Historiae Byzantinae, Pars I. Dexippi, Eunapii, Petri Patricii, Prisci, Malshi, Menandri Historiarum que supersunt e

հաղթանակ տարած Գալլերիուսն իրեն պատկերել տար Սասանյան արքայի, այլ ոչ թե հռոմեական կեսարի պատվանշաններով ու հանդերձանքով, կամ թե, բարձրաքանդակ ստեղծեր իր հաղթանակի հետ որևէ առնչություն չունեցող Պարսկահայքում, այլ ոչ թե անդրտիգրիսյան գավառներում, որոնց բռնակցումը Հռոմին Գալլերիուսի հաղթանակի ուղղակի արգասիքներից մեկն էր:

Նմանապես անհիմն է Սալմաստի ժայռաքանդակի աջ պատկերախմբի մեջ Ներսեհի կողմից հայոց արքային Ատրպատական գավառի շնորհման իրողությունը տեսնելը, քանզի չափազանց շատ են այդ մեկնաբանությունը բացառող աղբյուրագիտական և պատկերագրական տվյալները: Ի մասնավորի հայտնի է, որ հայ մատենագիրների կողմից «Ատրպատիճք գավառ» անվամբ հիշատակվող տարածքը որպես «Ձեռին իշխանութեան տուն» Պարթևաց Վաղարշ I Արշակունու կողմից հանձնվել էր եղբորը՝ Հայոց գահի թեկնածու Տրդատին, երբ սա դեռևս պատրաստվում էր Հայաստանից վտարել Հռադամիզդին[32]: Եվ թեպետ Հռանդեայի պայմանագրով փոխվեցին Տրդատի և Վաղարշի հարաբերությունները, այնուամենայնիվ, հիշյալ տարածքը թողնվեց Մեծ Հայքի Արշակունի գահակալների տնօրինության տակ՝ կամ պարթևական աշխարհակալության հետ նրանց դրականորեն հարաբերելու, կամ էլ, իրենց նկատմամբ Մեծ Հայքի Արշակունիների ստորադասության պատրանք ստեղծելու համար[33]: Բնական է, որ Իրանում իշխանությունը զավթած Սասանյանները չէին կարող ճանաչել հիշյալ գավառի նկատմամբ Մեծ Հայքի Արշակունիների իրավունքները և, հավանաբար, մինչև III դ. կեսերը այդ տիրույթները հանված են եղել հայոց արքայի վարչությունից: Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի Բ գրքի ՁԲ, ՁԵ, ՁԷ գլուխների քննությունը ցույց է տալիս, որ միայն IV դ. սկզբներին՝ Ներսեհի կամ Որմիզդ II-ի կողմից է, որ խնդրո առարկա տարածքը վերադարձվել է Մեծ Հայքի Արշակունիներին: Բայց դրանից հետո էլ «Ատրպատիճք գաւառ»-ը շարունակել է պաշտոնապես Իրանական տերության մաս կազմել և որպես այդպիսին՝ հարկվել

recensione MM. Bekkeri et B.G. Niebuhri C.F., Bonnae, impensis Ed. Weberi, 1829, p.135. **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչա-քաղաքական կացությունը III դարի վերջին և IV դարի սկզբին, *ԲԵՀ*, 1982, N 2, էջ 82:

[32] **Երեմյան Ս.**, Պայմանական հողատիրության առաջացման հարցի շուրջը ֆեոդալականացող Հայաստանում: «Ձեռական իշխանութիւնը» հին Հայաստանում, *ՊԲՀ*, 1971, N 1, էջ 3-4:

[33] **Մելիքյան Ա.**, Մեծ Հայքի Արշակունի արքաների Պարթևական տերության երկրորդը լինելու հարցի շուրջ, *ԼՀԳ*, 2003, N 1, էջ 21.



հօգուտ նրա[34]: Հետևաբար, պայմանական տիրության կարգով դրա շնորհումը հայոց արքային չէր կարող պաշտոնական պատկերաքանդակի նյութ դառնալ, առավել ևս, խորհրդանշվել օղակի հանձնման ծեսով:

Ֆերդինանդ Յուստին առաջինն է պրոֆեսիոնալ ուսումնասիրության ենթարկել Սալմաստի ժայռաքանդակը: Անվանի հետազոտողը հուշարձանի ժանրային պատկանելիության և պատկերների նույնականացման հարցերը լուծում է III դ. առաջին կեսի հայ-պարսկական հակամարտության մասին եղած ընդհանրական պատկերացումների հենքով՝ կռվան ծառայեցնելով այդ պատերազմում պարսիկների հաղթանակի փաստը: Ֆ. Յուստիի կարծիքով հեծյալի դիրքով պատկերված են Սասանյան հարստության հիմնադիր Արտաշիր I Պապականը և նրա որդի Շապուհը, իսկ նրանց դիմացի հետիոտն անձիք պարտված Հայաստանի երկու կառավարիչներ են, որոնք ներկայացել են հաղթողներին՝ հանձնելու իրենց սուվերենության սիմվոլները՝ «իշխանության օղակները»[35]: Այսպիսով, ի տարբերություն Ռ. Կեր Պորտերի, որը բարձրաքանդակի երկու պատկերախմբերում շարժումը պատկերացնում էր տարամետ՝ հետիոտնից դեպի հեծյալը և հեծյալից դեպի հետիոտնը, Ֆ. Յուստին այն ներկայացնում է միօրինակ՝ հետիոտներից դեպի հեծյալները: Այս հարցում Ֆ. Յուստին ունեցավ շատ հետևորդներ՝ ի դեմս Է. Հերցֆելդի[36], Կ. Ֆ. Լեհման-Հաուպտի[37], Կ. Էրդմանի[38], Վ. Էնսլինի[39], Լ. Վանդեն Բերգի[40], Մ.-Լ. Շոմոնի[41], Շ. Շահբազիի[42], Վ. Լուկոնինի[43], Է. Շավարեբիի[44] և այլոց: Վերջիններս Սալմաստի ժայռաքանդակի թվագրման, ինչպես նաև, պատկերների նույնականացման գործում առաջնահերթ նշանակություն

[34] **Մելիքյան Ա.**, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» մի վկայության պարզաբանման փորձ», Հանրապետական գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2009, էջ 43:

[35] **Justi F.**, Geschichte des Alten Persiens, II, Berlin, 1879, S. 179.

[36] **Sarre F. and Herzfeld E.**, Iranische Felsreliefs, Berlin, 1910, S. 246; **Herzfeld E.**, Am Tor von Asien, Berlin, 1920, S. 70; **Idem**, Paikuli: Monument and Inscription of the Early History of Sasanian Empire, Berlin, 1924, I, p. 37; **Idem,** Iran in the Ancient East, London-New York, 1941, p. 313.

[37] **Lehmann-Haupt C. F.**, Armenian Einst und Jetzt, Bd. 1, S. 318 f..

[38] **Erdmann K.**, Die Kunst Irans zur Zeit der Sasaniden, Berlin, 1943, S. 51.

[39] **Enslin W.**, Zu den Kriegen des Sassaniden Schapur I, (Sitzungsberichte der Bayerischen Akademic der Wissenschaften, Philosophisch-historische Klasse. München, Jahrgang 1947, Haft 5, S. 6).

[40] **Vanden Berghe L.**, Archéologie de l'Iran ancient, Leiden, 1959, p. 120.

[41] **Chaumont M-L.**, Recherches sur l'histoire d'Arménie..., p. 174.

[42] **Shahbazi Sh.**, Shapur I, *EIr.*

[43] **Луконин В. Г.**, Иран в III веке, М., 1979, с. 18.

[44] **Шавареби Е.,** К датировке рельефных изображений Ардашира I. См. *SPl,* № 4, 2012, с. 55.

են տալիս դեռևս 1938 թ. է. Հերցֆելդի մատնանշած այն աքսիոմիկ դրույթին, ըստ որի՝ **Սասանյան արքաներից յուրաքանչյուրն ունեցել է գլխի ինքնատիպ հարդարանք, որն այդ դինաստիայի կառավարման չորս դարերի ընթացքում ավելի ու ավելի է բարդացել**[45]:

Ռ. Գյոբլը կարևորում է այն փաստը, որ Սալմաստի ժայռաքանդակի հեծյալների թագերն իրենց ձևով նույնանում են Արտաշիր I-ի՝ Նախշ-ի Ռաջափի, Փիրուզաբադի ու Նախշ-ի Ռուստամի ինվեստիտուրային ժայռաքանդակների և նրա վերջին թողարկման դրամների վրա պատկերված թագերին: Ըստ այդմ էլ հուշարձանի պատկերների ինքնության հարցը նա լուծում է կատեգորիկ ձևով՝ առաջարկելով նրա աջ և ձախ պատկերախմբերն ընդունել որպես հայոց դեմ Արտաշիր I-ի հաղթանակը հավերժացնող նույն տեսարանի կրկնապատումներ: Իսկապես, միևնույն մոտիվի կրկնությունը հին իրանական արվեստի հիմնական առանձնահատկություններից մեկն էր[46], որը վառ է արտահայտված նաև Սասանյան դարաշրջանի իրանական արվեստում: Այդուհանդերձ, այդ հիմքով Սալմաստի ժայռաքանդակի մեկնաբանությունը ոչ միայն համոզիչ չէ, այլև բացարձակապես չի համապատասխանում Սասանյան պատկերագրության ավանդույթին: Այսպես, ժանրային առումով բավականին դյուրությամբ դասակարգվող սասանյան ժայռաքանդակների շարքում և նույնիսկ նրանց մեջ, որոնք կերտվել են միևնույն առիթով (ինչպես օրինակ Շապուհ I-ի՝ հռոմեացիների դեմ տարած հաղթանակների առթիվ ստեղծված Դարաբգիրդի, Նախշ-ի Ռուստամի, Բիշապուհի բարձրաքանդակները), անհնար է գտնել նույնական կամ նմանվող երկու բարձրաքանդակներ. պատվիրատուներն ու քանդակողներն ամեն անգամ ձգտել են ապահովել իրենց քանդակների ինքնատիպությունը: Եվ եթե միևնույն թեմայի տեղայնացման միտումը առկա է իրարից նշանակալի հեռավորության վրա ստեղծված հուշարձաններում, ապա դա առավելապես պետք է դրսևորվեր միևնույն մակերեսի վրա կերտված պատկերախմբերի պարագայում: Հակառակ դեպքում այդ նմանությունը որևէ տեղեկություն հաղորդելու փոխարեն միայն կմոլորեցներ դիտորդին:

Մյուս կողմից՝ Ռ. Գյոբլի մեկնաբանությունը չի համապատասխանում նաև Սալմաստի ժայռաքանդակի պատկերագրական իրողություններին: Ամենայն հավանականությամբ, անվանի իրանագետի վերոնշյալ եզրակացության համար հիմք է ծառայել Շ. Տեքսիեի հեղինակած նկարը, որտեղ ոչ միայն թագերը, այլև հետիոտն ու հեծյալ պատկերների գլխի հարդարանքներն ու դիմագծերը կատարելապես նույնացված են: Մինչդեռ հուշարձանի լուսանկարի պարզ զննությունն իսկ ցույց է տալիս, որ նույնական են միայն հեծյալների թագերը, իսկ նրանց մազերի հարդարանքը, հագուստը, հասակը, դիմագծերը, ինչպես նաև ձիերի սանձասարքերը միանգամայն տարբեր են: Մասնավորապես, նկատելի է, որ աջ պատկերախմբի հեծյալը առաջինից անհամեմատ երիտասարդ է, ինչը պարզորոշ խոսում է այն մասին, որ Սալմաստի բարձրաքանդակի վրա ներկայացված են իրարից տարբեր երկու արքաներ: ***Այս ամենը բավարար հիմք է տալիս Սալմաստի հուշարձանի երկու պատկերախմբերի միջև առկա կոմպոզիցիոն նմանության Ռ. Գյոբլի մեկնաբանությունը համարելու հիմնազուրկ և սխալ:***

Ինչպես վերը նշվեց, Սալմաստի հուշակոթողը Սասանյանների «հաղթական ժանրի» բարձրաքանդակների շարքին են դասել նաև Վ. Էնսլինը, Մ. Լ. Շոմոնը, Շ. Շահբազին, Վ. Լուկոնինը և այլք, ովքեր, հետևելով Ֆ. Յուստիին, բարձրաքանդակի չորս պատկերներն ընդունել են իբրև մեկ ամբողջական կոմպոզիցիա, իսկ նրա շարժման ուղղությունը՝ հետիոտներից դեպի հեծյալները:

Վ. Էնսլինի համոզմամբ՝ Սալմաստի բարձրաքանդակի վրա արձանագրվել է Մաքսիմինուս Թրակացի կայսեր (235-238 թ.թ.) կառավարման երկրորդ տարում (ըստ հեղինակի՝ 238 թ.) Հայաստանի դեմ Արտաշիր I-ի և նրա որդի Շապուհի ունեցած մի մասնակի հաջողությունը[47]: Մասնակի

[45] Պարասպատամը դեռևս Աքեմենյան դարաշրջանից հայտնի էր որպես Ահուրամազդայի թագի բնութագրիչ տարր: Այն առկա է Արտաշիր I-ի, Շապուհ I-ի, Շապուհ II-ի, Հազկերտ II-ի, Վաղարշի, Արտաշիր III-ի թագերի վրա: Վարահրան II, Պերոզ, Խոսրով II, Որմիզդ V, Խոսրով III, Խոսրով IV, Հազկերտ III արքաների, ինչպես նաև Բորան և Ազարմիդուխտ թագուհիների տիարաները զարդարող թևերը փոխառնված էին Վերեթրագնա և ջրերի աստվածուհի Անահիդի թագերից (**Soudavar A.**, The Aura of Kings, p.19): Արծվի գլուխը՝ կտուցին նուռ կամ մարգարիտ, ինչպես օրինակ Որմիզդ II-ի դեպքում, նույնպես խորհրդանշում էր տիրակալի կապը Անահիդի հետ: Ներսեհի և Շապուհ III-ի թագերի վրայի բուսակերպ զարդերը ևս այս աստվածուհու նշաններն էին: Իսկ Վարահրան I-ի թագի վրայի ճառագայթաձև տարրերը խորհրդանշում էին արևի և պայմանադրության աստված Միթրայի հետ նրա կապը: Եվ քանի որ միապետները հաճախ հավակնում էին մեկից ավելի աստվածությունների կողմից ինվեստիտուրայի ենթարկվելու, ուստի աստվածային թագերից վերցված դետալները համակցվում էին, ինչի արդյունքում էլ արքայական թագերի ձևերը ավելի ու ավելի էին բարդանում: Սասանյան թագերի ձևական էվոլյուցիան տե՛ս **Göbl R.**, Sasanian Coins, *CHI*, Vol. 3(2), p. 325. **Луконин В. Г.**, Культура Сасанидског Ирана, с. 235-240, табл. XV-XX. **Дитлв В. Б., Соколовский Е. Б., Шаманаева И. Н.**, Сасанидские драхмы, Екатеринбург, 2006, с. 13. **Alram M.**, Early Sasanian Coinage, in *The Idea of Iran,* Vol. III, *The Sasanian Era:* ed. by V.S. Curtis and S. Stewart, London, 2008, pp. 17-30; **Peck E. H.**, Crwn ii. From the Seleucids to the Islamic conquest, *EIr,* Vol. VI, Fasc. 4, 1993, pp. 408-418.

[46] **Porada E.**, Ancient Iran, London, 1965, p. 36.



[47] **Enslin W.**, Zu den Kriegen des Sasaniden Schapur, S. 6.

շտկումներով այս մեկնաբանությունը մինչ օրս պաշտպանվում է շատ պատմաբանների ու մշակութաբանների կողմից: Սակայն հարց է առաջանում, թե առաջարկված մեկնաբանությունը որքանով է համապատասխանում գրավոր աղբյուրների տվյալներին, հարի՞ր է արդյոք այն հաղթական ժանրով ստեղծված Սասանյան բարձրաքանդակների պատկերագրական սկզբունքներին թե ոչ:

Նախ, քննության առնենք Վ. Էնսլինի մեկնաբանության փաստական հիմքը: Հայտնի է, որ Ալեքսանդր Սևերուսի արևելյան արշավանքին հաջորդած շուրջ չորս տարիներին քուշանների դեմ լարված պայքարից հետո Արտաշիրը 237 թ. (Մաքսիմինուսի կառավարման երրորդ տարում) կրկին հարձակվել է Վերին Միջագետքի վրա՝ գրավելով Մծբինը, Խառանը[48], հնարավոր է, նաև Ռեշայնը և Սինգարան[49]: Իսկ 240 թ. նրա զորքերը հաղթականորեն մտել են մինչ այդ հռոմեական հովանավորությունն ընդունած Հաթրա:

Վերոնշյալ քաղաքների անկումը ծանր կորուստ էր հռոմեացիների համար, քանի որ դրանով բացվում էր պարսիկների ճանապարհը դեպի Կապադովկիա և Ասորիք: Ուստի բնական է, որ այդ դեպքերը ժամանակակիցների վրա թողել են խիստ ծանր տպավորություններ, որոնք հետագայում փոխանցվել են նաև ուսումնասիրողներին: Թերևս հենց դրանով պետք է բացատրել այն, որ պարսիկների կողմից Հայաստանի հպատակեցումը կապի մեջ են դրել Վերին Միջագետքում Հռոմի կրած տարածքային կորուստների հետ: Իհարկե, չի բացառվում, որ Արտաշիր I-ի կողմից Վերին Միջագետքում 237 թ. ծավալած ռազմական գործողությունները հասել են նաև հարավհայկական գավառներին, որոնց մի մասը տակավին 220-ական թ.թ. անցել էր պարսիկների իսկողության տակ: Սակայն, եթե պարսիկներին իսկապես հաջողված լինեին նվաճել Մեծ Հայքը կամ նրա տարածքի մեծագույն մասը, ապա հռոմեական մատենագիրները ավելի մեծ տագնապով, իսկ սասանյան վիմագրերը շեշտված հպարտությամբ կնշեին այդ մասին: Մինչդեռ աղբյուրները լռում են: Թերևս, բացառություն է Ագաթանգեղոսի մշուշոտ հիշատակությունն այն մասին, որ հայոց արքա Խոսրովի (Տրդատ II - Ա.Մ.) պայքարն Արտաշիրի դեմ տևել է «ամս մետասան»`[50] սկսած «ի միւս ևս ի գլուխ տարւոյն [ի

[48] **Scribtores Historiae Augustae** (այսուհետ՝ SHA), Gordianus Tres, XXVI-LVI; Zonaras Ioannes, Annales, ex recensione Mauricii Pinderi, Bonnae, Bonnae impensis ed. Weberi, t. I-II, 1841-1844, Lib. XII. 18. (այսուհետ՝ Zonaras)

[49] **Drinkwater J.**, Maximinus to Diocletian and the 'Crisis', *CAH*, Vol. XII, Edited by A. Bowman, P. Garnsey, A. Cameron, Cambridge, 2008, p. 30.

[50] **Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց**, 23, քննական բնագիրը Գ.Տեր-Մկրտչյա-



սպանութենէ Արտավանայ]»:

Ագաթանգեղոսը ժամանակագրական հստակություն չի մտցնում իր հաղորդման մեջ, ուստի նրա վկայած փաստի արժևորման համար սկզբունքային նշանակություն է ստանում Արտավանի վախճանի թվականի ճշգրտումը: Ցավոք, Իրանի և ողջ Առաջավոր Ասիայի պատմության մեջ շրջադարձային նշանակություն ունեցած այս իրադարձությունն աղբյուրներում հստակ թվագրված չէ: Բիրունին, հղելով նշանակոր կրոնական գործիչ Մանիի «Շապուհականի»-ին, գրում է. *«Աստվածային հայտնությունը նա (Մանին -Ա.Մ.) ստացավ տասներեք տարեկանում՝ բաբելոնյան աստղաբաշխների 539 թվականին, արքայից արքա Արտաշիրի (կառավարման) երկրորդ տարում»*[51]: Հայտնի է, որ Մանին ծնվել է 216 թ. ապրիլի 14-ին[52]: Հետևաբար, նրա տասներեքամյակը և Արտաշիրի կառավարման երկրորդ տարին կհամապատասխանի մեր թվականության 228/229 թ., իսկ Արտավանի վախճանի, հետևաբար, և Արտաշիրի գահակալության առաջին տարին էլ կլինի 227/228 թ., ինչպես ընդունում է Ն. Դիբվոյսը[53]: Այս դեպքում Արտաշիրի դեմ «Խոսրովի» պայքարի տասնմեկերորդ տարին, երբ, համաձայն հայկական պատմական ավանդության, սպանվել է հայոց արքան, իսկ երկիրը ռազմակալվել է պարսիկների կողմից, կստացվի 238/239 թ.: Սա թեև Մաքսիմինուսի գահակալության ոչ թե երկրորդ, այլ վերջին տարին է, այնուամենայնիվ, այն արտաքուստ ներդաշնակում է Վերին Միջագետքում կատարված իրադարձություններ ժամանակին: Մեր համոզմամբ, Հայաստանի հպատակեցման վարկածի այսօրինակ «փաստարկվածության» շնորհիվ է, որ Սալմաստի բարձրաքանդակի ստեղծման ժամանակի և մեկնաբանության Ֆ. Յուստիի առաջադրած և Վ. Էնսլինի զարգացրած վարկածը մինչ օրս ընդհանուր առմամբ պաշտպանվում է շատ ուսումնասիրողների կողմից: Սակայն միանգամայն այլ պատկեր է ստացվում, երբ Ագաթանգեղոսի խնդրահարույց հաղորդումը, որի վրա կամա թե ակամա խարսխվում է վերոնշյալ մեկնաբանությունը, դիտարկում ենք այլ աղբյուրների լույսի ներքո:

Ասորի մատենագիր Մշիխա Զեխան հաղորդում է,- «Պարթևների թագավորությունը վերջ գտավ հույների թագավորության (Սելևկյան

նի և Ս. Կանայանցի, աշխ. թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983 (այսուհետ՝ Ագաթանգեղոս):

[51] См. **Хосроев А. Л.**, История манихейство, Санкт-Петербург, 2007, с. 93, прим. 452.

[52] ***Acta Iranica***, 9 (1975), vol. II, A Reader in Manichaean Middle Persian and Parthian texts With Notes, Introduction: Sketch of Mani's Life and the Growth of his Charch, p. 1; **Sundermann W.**, Mani, *EIr*, Orig. Publ. July 20, 2009.

[53] **Дибвойз Н.К.**, Политическая история Парфии, Санкт Петербург, 2008, с. 228. **Фрай Р.**, Наследие Ирана, М., 2002, с. 285.

տոմարի – Ա. Մ.) 535 թ. Նիսան (մարտ-ապրիլ) ամսի 28-ի չորեքշաբթի օրը»[54]: Այս հիման վրա ուսումնասիրողներից շատերը Որմիզդականի ճակատամարտը, որտեղ և նահատակվել է Արտավանը, թվագրում են 224 թ. (535 - 311=224)[55]: Եվ եթե Արտավանի անկման հաջորդ տարվանից հաշվենք տասնմեկ տարի, կհանգենք 235 թ., որը, սակայն, համապատասխանում է Մաքսիմինուս Թրակացու գահակալության ոչ թե երկրորդ, այլ առաջին տարվան, մի շրջանի, երբ Պարսից տերության արևմտյան սահմաններում պատերազմը դեռ նիրհում էր:

Սալմաստի ժայռաքանդակի վրա ներկայացված իրադարձությունն իբրև հայոց արքայի անձնատվություն մեկնաբանության, այն 238 թ., և ընդհանրապես, Մաքսիմինուս Թրակացու գահակալության ժամանակաշրջանով թվագրության պարագայում առաջանում են նաև պատկերագրական և այլ բնույթի անհամապատասխանություններ, որոնց ևս հարկ ենք համարում անդրադառնալ:

Այսպես, Վ. Էնսլինը ևս ուշադրություն է հրավիրում հեծյալների թագերի նմանության վրա: Սակայն անվանի ուսումնասիրողն աչքաթող է անում այն հանրահայտ փաստը, որ Արտաշիր I-ի և նրա թագաժառանգ որդի Շապուհի կառավարչակցությունը, որից հետո միայն որդին կարող էր հոր թագին նման թագ կրել, սկսվել է 240 թ. ապրիլին[56], այսինքն՝ Մաքսիմինուսի սպանությունից երկու տարի հետո միայն: Իսկ մինչ այդ Արտաշիրը Իրանի միահեծան տիրակալն էր, իսկ որդին, որքան էլ որ բարձր լիներ նրա տեղն ու դիրքը Իրանի պետական համակարգում, արքայական այդ խորհրդանշանը կրել չէր կարող: Այս իրողության ընդունումը կատարելապես բացառում է Սալմաստի հուշարձանի և 230-ական թ.թ. վերջերին Վերին Միջագետքում Սասանյանների ունեցած ռազմաքաղաքական հաջողությունների միջև աղերսները: Հետագայում Վ. Լուկոնինը, Շ. Շահբազին և այլք, պաշտպանելով Վ. Էնսլինի տեսակետը, փորձել են շտկել նրանում առկա ժամանակագրական անհամապատասխանությունը: Նրանցից առաջինը, ելակետ առնելով Ռ. Կեր-Պորտերի հեղինակած նկարի առանձին դետալները, ենթադրում է, որ Սալմաստի ժայռաքանդակը Արտաշիր I-ի կերտած ամենավերջին հուշակոթողն է[57], իսկ Մ. Մեյերը, Մ. Կանեպան, Մ. Գրաբովսկին, Է. Շավարեբին և այլք, մատնանշելով հեծյալների թագերի միօրինակությունը, հուշարձանի ստեղծումը վերագրում են Արտաշրի ու նրա որդի Շապուհի կառավարչակցության շրջանին (240-242 թ.թ.)[58]:

Իհարկե, ժայռաքանդակի վերոնշյալ թվագրության պարագայում վերանում է միևնույն կոմպոզիցիայի մեջ միօրինակ թագերով երկու արքաների առկայության դիլեման: Բայց այս դեպքում ևս գոյանում են սկզբունքային հակասություններ Սալմաստի ժայռաքանդակի վրա ներկայացված ենթադրվող իրադարձության և նրա ներկայացման կոմպոզիցիոն ձևի միջև, որոնք հատուկ քննության կարիք են զգում (տե՛ս բաժին 4):

1969 թ., Դարաբգիրդի սասանյան ժայռաքանդակի ուսումնասիրությանը նվիրված ուշագրավ հոդվածում Գ. Հերմանն առաջարկում է Սալմաստի ժայռաքանդակի թվագրության իր վարկածը, որի կռվաններն են հուշարձանի պատկերների ճակատային ներկայացումն ու «հարթ քանդակի» մեթոդի կիրառությունը: Համարելով դրանք «պարթևական ազդեցության» արտահայտություններ և Սալմաստի հուշարձանը վերագրելով Արտաշիր I-ի կառավարման վաղ շրջանին՝ Գ. Հերմանը եզրա-

[54] **The Chronoicle of Arbela**, Translated by P. Kawerau, English translation by T. Kroll, Lovanii in Aedibus E. Peeters, in *Corpus Scriptorum Christianorum Orientalium*, Editum Consilio Universitatis Catholicae Americae et Universitatis Catholicae Loviensis, Vol. 468, Scriptore Syro, Tomus 200, 1985, Footnot. 118. **Ադիաբենեի եկեղեցու պատմությունն**, էջ 83, տե՛ս *ՕԱՀՀՍ*, հ. 8, Ասորական աղբյուրներ, Ա, թարգմ. բնագրից, առաջաբանը և ծանոթ. Հ. Գ. Մելքոնյանի, Երևան, 1976:

[55] **Nöldeke Th.**, Tabary. Geschichte der Perser und Araber zur Zeit der Sasaniden, Copyright 1973 by J. Brill, Leiden, S. 411; **Bivar A. D. H.**, The Political History of Iran Under the Arsacids, *CHI*, vol. 3 (I), p. 99 ; **Frye R. N.**, The Political History of Iran Ander Sasanians, *CHI*, vol. 3 (I), p. 118; **Daryaee T.**, Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London-New York, 2009, p. 2; **Schippmann K.**, Dynasty of Arshacids, *EIr*; **Фаррох К.**, Персы: Армия великих царей, М., 2009, с. 198.

[56] Համաձայն Մանիի ինքնակենսագրության՝ Արտաշիրի ու Շապուհի կառավարչակցությունը սկսվել է իր 24 տարեկանը լրանալու ժամանակ (**Henrichs A. and Koenen L.**, Ein griechischer Mani-Codex, *ZPE* V, (Bonn, 1970), S. 120; **Sundermann W.**, Studien zur kirchengeschichtlichen Literatur der iranischen Manichäer I, *AoF* 13, 1986, S. 49): Քանի որ Մանին ծնվել է 216 թ. ապրիլի 14-ին, հետևաբար՝ նշված տարին համապատասխանում է 14.04.239 թ. մինչև 13.04.240 թ. ընկած ժամանակահատվածին: 240 թվականն են ցուցում նաև իրանական և հռոմեական աղբյուրները. Շապուհ I-ի պալատական Աբնունը վկայում է, որ հռոմեացիները Պարսկաստանի դեմ արշավել են արքայից արքա Շապուհ I-ի III տարում, ինչը համապատասխանում է «Օգոստոսների պատմության» հաղորդմանը, որ «Պրետեկստատի և Ատտիկոսի կոնսուլության տարում (242 թ.) Գորդիանուսը



բացեց երկդեմ Յանուսի տաճարը… և գնաց պարսիկների դեմ…» (**SHA**, Gordiani tres, XXVI):

[57] **Луконин В.Г.**, Иран в III веке, М., 1979, с. 18.

[58] **Meyer M.**, Die Falsbilder Shapurs I., *JDAI 105,*1990, S. 268-271; **Canepa M.P.**,The Two Eyes of the Earth: Art and Ritual of Kingship between Rome and Sasanian Iran, University of California Press, Berkeley-Los Angeles-London, 2009, p. 57; **Grabovski M.**, Wczesnosasanidzkie relify skalne Iranu, *SMA* 14, 2009, p. 24-25; **Shavarebi E.**, Few Notes on Some Historical Aspects of the Sasanian Relief at Salmās. International Conference on the Autochtonous Peoples of the Caucasian-Caspian Region, 5-7 October, 2012, Erevan (Abstracts), p. 27.

կացնում է, որ այն ստեղծվել է «ի նշանավորումն Տիգրիսի վերին հովտում Հայաստանի դեմ Արտաշիրի ու Ադիաբենեի արքայի տարած հաղթանակի տարելիցի»[59]: Առաջին հայացքից Հերմանի թվագրումն ունի տրամաբանական հիմք. մի կողմից Սալմաստի ժայռաքանդակը ոճով ու կերտման տեխնիկայով իսկապես բավականին մոտ է պարթևական դարաշրջանի քանդակներին, մյուս կողմից՝ «Արբելլայի ժամանակագրության» մեջ իրոք փաստված են Արտաշիրի ու Ադիաբենեի արքա Շարիատի համադաշն և հաջողակ գործողությունները Արամեայում, Զաբդիկենեում և Արզնում: Սրանցից առաջին երկուսը մտնում էին Վերին Միջագետքի հռոմեական տիրույթների մեջ, իսկ Արևմտյան Տիգրիսի հովտում ընկած վերջին երկրամասը համապատասխանում է հայկական Արզանին: Այդուհանդերձ, ինչպես նկատում են Մ.-Լ. Շոմոնն[60] ու Է. Շավարեբին[61], Գ. Հերմանի մեկնաբանությունը բավարար չէ և չի պաշտպանվում աղբյուրագիտական վկայություններով: Բացի դրանից՝ անհասկանալի է մնում, թե ինչու պետք է հուշարձանը կերտվեր «հիշատակվող հաղթանակից» տարածապես այդչափ օտարված: Ուստի պատահական չէ, որ Գ. Հերմանի վարկածը ուսումնասիրողների կողմից չզարգացվեց:

Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի ու նշանակության հիմնախնդիրներին նույն 1969 թ. անդրադարձել է նաև Մ.-Լ. Շոմոնը: Հեղինակը համերաշխում է արդեն գոյություն ունեցող տեսակետին՝ նշելով, որ «Մեր ուշադրությունը գրաված այդ հուշարձանը ամենայն հավանականությամբ վերաբերում է վաղ Սասանյան դարաշրջանին»[62]: Սակայն նա անմիջապես էլ խոստովանում է. «Մեկնաբանության դժվարությունների պատճառով մենք վարանում ենք այն ներառել մեր հետազոտության շրջանակների մեջ»[63]: Այդուհանդերձ, համառոտակի անդրադառնալով Սալմաստի ժայռաքանդակի վերաբերյալ արդեն հնչեցված մեկնաբանություններին, Մ.-Լ. Շոմոնը նախապատվությունը տալիս է Ֆ. Յուստիի առաջարկած և Վ. Էնսլինի զարգացրած վարկածին՝ մատնացույց անելով նաև նրա խոցելի տեղը, այն, որ հայոց արքայի կողմից «իշխանության օղակի հանձնումը Սասանյան արքայից արքային կարող է մեկնաբանվել որպես նրա լիակատար պարտության և հպատակության



---

[59] **Hermann G.**, The Dārābgird Relief – Ardashīr or Shāhpūr?..., p. 74.
[60] **Chaumont M.-L.**, Gorégence et avènement de Shāhpuhr I[er], in: Ph. Gignoux; A. Tafazzoli (éds.), Mémorial Jean de Menasce, Louvani, 1974, p. 136.
[61] **Shavarebi E.**, A Reinterpretation of the Sasanian Relief at Salmas, p. 136.
[62] **Chaumont M.-L.**, Recherches sur l'histoire d'Arménie, p. 174.
[63] **Ibid.**

նշան, այլ ոչ թե մասնակի անհաջողության»[64]: Հեղինակի կարծիքով «ատրպատականյան հուշարձանի» վրա ներկայացված իրադարձությունը կարող էր տեղի ունեցած լինել Արտաշիրի կողմից Հայաստանը հպատակեցնելու 228 թ. ձախողված փորձի և Սասանյան այդ տիրակալի մահվան միջև ընկած ժամանակահատվածում: Վերջում, փաստելով հուշարձանի մեկնաբանության գործում առկա դժվարությունները, նա Սալմաստի ժայռաքանդակը որակում է որպես «պարթևական ոճով կատարված ուշ շրջանի գավառական գործ»[65] և «բացարձակ պատմական արժեքից զուրկ» ստեղծագործություն[66]: Թեև հետագայում Մ.-Լ. Շոմոնը երկիցս անդրադարձել է Սալմաստի ժայռաքանդակին, սակայն վերանայել է միայն նրա «գավառական նշանակության» մասին իր նախկին կարծիքը[67]:

Սալմաստի ժայռաքանդակի վերաբերյալ հետաքրքիր, բայց ավելի քան վիճարկելի մեկնաբանություն է առաջարկել Գ. Վիդենգրենը: Հեղինակը ոչ միայն բացառում է հետիոտն պատկերների հայկական ինքնությունը, այլև հուշարձանի որևէ առնչությունը Հայաստանի հետ: Նրա կարծիքով խնդրո առարկա հուշարձանի վրա ներկայացված է Ատրպատականի (*Ādubādagān*) նկատմամբ Արտաշիր Սասանյանի տիրապետության հաստատման իրողությունը[68]: Այս տեսակետը պաշտպանում են Մ. Գոհադրատ-Դիզաջին[69]և Է. Շավարեբին՝ իր նորերս հրապարակած «Սալմասի ժայռաքանդակի վերամեկնաբանում» հոդվածում[70]: Վերջինս պատկերագրական մի շարք դետալների քննության հիման վրա հեծյալներին նույնականացնում է Արտաշիր I և սրա գահաժառանգ որդի Շապուհի հետ[71]: Ինչ վերաբերում է հետիոտն պատկերներին, ապա հեղինակը հոդվածի առաջին մասում պաշտպանում է նրանց ատրպատականյան ինքնության վարկածը: Հղելով նախ Բունդահիշնին (*Bundahišn*), որի համաձայն Ուրմիա լճից արևմուտք ընկած տարածքը մտել է Ատրպատականի կազմի մեջ, ապա և արաբ ու պարսիկ



---

[64] **Ibid.**
[65] **Ibid.**, p. 173.
[66] **Ibid.**
[67] **Chaumont M.-L.**, Gorégence et avènement de Shāhpuhr I[er], p. 135; **Eadem,** A props de la chute de Hatra et du cournnement de Shapur I[er], *AA* 27, (1979), p. 211 f..
[68] **Widengren G.**, The Establishment of the Sasanian Dynasty in the Ligth of New Evidence, in *Atti del convegno internazionale sul tema: La Persia nel Medioevo*, (Roma, 31 marzo – 5 aprile), Roma, 1971, p. 749.
[69] **Gohadrat-Dizaji M.**, Administrativ Geography of Early Sasanian Period: the Case of Ādurbādagān, *Iran* 45, 2007, p. 88.
[70] **Shavarebi E.**, A Reinterpretation of the Sasanian Relief at Salmas, p. 125.
[71] **Ibid.**, p. 117; Его же, К Датировке рельефных изображений Ардашира I, c. 61-62.

աշխարհագիրներ Աբուլ-Ֆիդայի, Իբն Հաքալի, Համավիի, Մոստովֆիի երկերին, որոնցում Սալմաստը հիշատակված է որպես Ատրպատականի տարածաշրջանում գտնվող բնակավայր, է. Շավարեբին գրում է. «Սասանյան ժայռաքանդակների մեծամասնությունը, ներառյալ նրանք, որ ներկայացնում են Հռոմեական կայսրության դեմ տարած հաղթանակները, կերտվել են Պարսք նահանգում, և մենք չենք կարող դրանք փնտրել Երանշահրից *(Ērānšahr)* դուրս՝ հռոմեական/հռոմեականացած երկրամասերում: Հետևաբար, նաև առիթ չկա կարծելու, որ Իրանական Ատրպատական երկրամասում գտնվող Սալմաստի ժայռաքանդակի վրա պատկերված է Հայաստանին առնչվող իրադարձություն»[72]:

Սալմաստի ժայռաքանդակի վերոնշյալ մեկնաբանության հետ հազիվ թե կարելի է համաձայնել, քանզի, նրանում պատմական այդ հուշարձանը թեև դիտարկվել է պատմաաշխարհագրական տեսանկյունից, բայց միանգամայն սխալ մեթոդաբանությամբ՝ իր կոնկրետ պատմական ժամանակից ու պատմաաշխարհագրական միջավայրից կտրված: Նախ, նրանում Պարսկահայքի մասին դատողություններն արված են ընդհանրական ձևով՝ առանց հաշվի առնելու Մեծ Հայքի այս նահանգի հյուսիսային և հարավային գավառների վարչաքաղաքական պատմության մանրամասները[73]: Բացի այդ՝ քննության առարկա մեկնաբանությունները կառուցվել են այնպիսի աղբյուրների վկայությունների հենքի վրա, որոնք արտահայտում են անհամեմատ ուշ ժամանակաշրջանի վարչաքաղաքական իրողությունները, երբ ողջ Պարսկահայքը, իսկապես, մտնում էր Ատրպատականի կազմի մեջ: Հաշվի անելով, որ Սալմաստի ժայռաքանդակի «ատրպատականացման» միտումը շարունակվում է, հարկ ենք համարում վերոնշյալ մեկնաբանության քննությունը սկսել նույն պատմաաշխարհագրական տեսանկյունից:

Պարսկահայքի խնդրո առարկա հյուսիսային հատվածը, որը մեծամասամբ համապատասխանել է Ստրաբոնի հիշատակած Բասորոպեդիային (*Βάσοροπέδα*)[74], հայոց պետականության մաս է կազմել տակավին Ք. ա. II դ.: Համաձայն մի կարծիքի՝ այն համապատասխանել է Կ. Պտղոմեոսի «Աշխարհացույց»-ում հիշատակված Կոտաիա (Κωταία) զորավա-

[72] **Shavarebi E.**, A Reinterpretation of the Sasanian Relief at Salmas, p. 125.
[73] Պարսկահայքի վարչաքաղաքական կառուցվածքի մասին մանրամասն տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, էջ 310-353:
[74] Բասորոպեդիա անվան Պարսկայաքի վերափոխման մասին տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 342-343:



րությանը, որը հիշատակվել է Գորդյուենեի (Կորդուք) և մարդերի երկրի (Մարդաստան) միջև[75]:

Ցավոք, հնարավոր չէ ճշտիվ որոշել, թե խնդրո առարկա վարչամիավորը III դ. առաջին կեսին տարածապես համապատասխանել է արդյոք «Աշխարհացոյց»-յան Պարսկահայքին թե ոչ: Ուսումնասիրողներից ոմանց կարծիքով Պարսկահայքի սահմանները հարավում հասել են մինչև Ուրմիա լիճ թափվող Արասխ գետին[76], որից անդին տարածվել են հայ Արշակունիների ատրպատականյան «Ձեռական իշխանության» տիրույթները[77]: Սակայն, մեզ թվում է, որ Պարսկահայքը մինչև III դ. վերջերն ունեցել է ավելի սեղմ ընդգրկում և պարփակված է եղել բացառապես հյուսիսային հայաբնակ Հեր, Զարեվանդ, Զարեհավան, Ըռնա, Տամբեր գավառների տարածքով: Ամենայն հավանականությամբ, Պարսկահայքն իր «Աշխարհացոյց»-յան տեսքը ստացել է միայն III դ. վերջին: Համաձայն Պ. Պատրիկիոսի՝ 298 թ. Մծբինի հաշտության պայմանագրով Ատրպատականի (Մարաստանի) հաշվին Հայաստանի սահմանները ընդարձակվել են մինչև Զինթա ամրոցը[78]:

Թեև հույն հեղինակը մանրամասներ չի հաղորդում զիջված տարածքների մասին, սակայն Բ. Հարությունյանը «Աշխարհացոյց»-ի ու Փավստոս Բուզանդի վկայությունների հիման վրա եզրակացնում է, որ Պարսկաստանի կողմից զիջվել են Մահկերտ-տուն, Դասն և Նիհորական գավառները: Մեր կարծիքով վերոհիշյալ տարածքային զիջումը ունեցել է ավելի մեծ ընդգրկում և ներառել է նաև «Աշխարհացոյց»-յան Պարսկահայքի հարավային Արիսի (Ովէա), Թրաբի, Մարի և Այլի (Կուռիճան) գավառները, որոնք վերը նշված երեք գավառների հետ ներառվել են նորաստեղծ Նոր Շիրական բդեշխության մեջ:[79] Իհարկե, հազիվ թե կարելի է գտնել մեր կարծիքը հաստատող որևէ աղբյուրագիտական ուղղակի վկայություն: Սակայն մի շարք իրողություններ, այնուամենայնիվ, խոսում են հենց դրա օգտին: Այսպես, հայտնի է, որ 298 թ. հաշ-

[75] **Claudii Ptolomaei** Geographia, Edidit C. F. Nobbe, Tom. II, Lipsiae, 1845, V, 13, 20, Pagina 54;“Απ ἀνατολῶν δὲ τῶν τοῦ Τίγριδος ποταμοῦ πηγῶν ἣ τε Βαγραυανδηνή καὶ ὑπ’ αὐτὴν ἡ Γορδυηνή, ἧς ἀνατολικωτέρα ἡ Κωταία καὶ ὑπ’ αὐτήν Μάρδοι”. **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 317-318:
[76] **Խորիկեան Յ.**, Նոտարտա եւ Շիրական երկրների տեղադրության շուրջ, *ՀԱ*, 2011, թիվ 1-12 (յունուար-դեկտեմբեր), էջ 266:
[77] **Հարությունյան Բ.**, Հայ Արշակունիների ձեռական իշխանության կալվածքների հարցի շուրջ, *ՊԲՀ*, 1988, թիվ 4, էջ 47:
[78] **Petrus Patricius**, Fragm. 14.
[79] **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 346:

տության պայմանագրով Հռոմը թեև Սասանյաններից խլեց անդրտիգրիսյան գավառները, սակայն դրանք նախկին տիրոջը՝ Հայաստանին, վերադարձնելու փոխարեն միացվեցին Կայսրությանը: Դա, բնականաբար, չէր կարող չհարուցել հայկական կողմի դժգոհությունը: Այս տեսանկյունից, Մարաստանի կողմերում Մեծ Հայքի սահմանների ընդարձակումը ներկայանում է ոչ թե հաղթողի կողմից պարտվածին պարտադրված ինքնանպատակ մի զիջում, այլ հայկական կողմի հուսախաբության փոխհատուցում, որը, նվազագույնը ստրատեգիական առումով, պետք է համարժեք լիներ անդրտիգրիսյան գավառներին: Մյուս կողմից, մեր կարծիքի օգտին են խոսում IV դ. Պարսկահայքի գավառների ռազմավարչական կառավարման ոլորտում դիտարկվող տարբերությունները[80], որոնք արտացոլում են պատմական տարբեր դարաշրջաններում հայկական պետականության ռազմավարչական համակարգի մեջ դրանց ներգրավված լինելու իրողությունը:

Վերջապես, խոսուն է և այն փաստը, որ «Գալլերիուս կեսարի ապօրինաբար խլածը վերադարձնելու» կարգախոսով առաջնորդվող Սասանյան արքունիքը 387 թ. Արշակունիների արևելահայկական թագավորությունից բռնակցեց ոչ միայն Մահկերտ-տունն, Դասն և Նիհորական գավառները, այլև «Աշխարհացոյց»-յան Պարսկահայքի հարավային Արիսի (Ովէա), Մարի, Թրաբի գավառները[81], որոնց ռազմաքաղաքական և հոգևոր-մշակութային կյանքն այդուհետ անշրջելիորեն շաղկապվեց Ատրպատականի հետ: Թերևս այս հանգամանքն է, որ արաբապարսկական հեղինակներ Աբուլ-Ֆիդային, Իբն Հաքալին, ալ-Համավիին, Մոստովֆիին և այլոց առիթ է տվել Պարսկահայքը հիշատակել Ատրպատականի կազմում[82]: Անշուշտ, եթե Պարսկահայքի հյուսիսային գավառները պարսիկների կողմից նվաճված լինեին Արտաշիր I-ի օրոք և Մեծ Հայքից անջատ ու իրանական վարչամիավորի հետ միաձույլ կյանքի փորձ ունենային, ապա «նախամաքսիմիանոսյան արդարության» վերականգնման պաշտոնական կարգախոսով գործող պարսից արքունիքը առանց վարանելու Ատրպատականին կմիացներ նաև դրանք: Մինչդեռ, Պարսկահայքի հյուսիսային գավառները ոչ միայն 387 թ. թողնվեցին Ար-

[80] Նույն տեղում:
[81] Վերոնշյալ բաժանքի ժամանակ Այլի կամ Կուռիճան գավառը թողնվեց Հայաստանի կազմում՝ հավանաբար հաշվի առնելով ժամանակի ընթացքում նրա բնակչության մեջ հայկական տարրի ստացած գերակշռությունը:
[82] Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին (Յակուտ ալ-Համավի, Աբուլ-Ֆիդա, Իբն Շադդադ), կազմեց **Ա. Թ. Նալբանդյան**, Երևան, 1965, էջ 10, 77, 79, 131, 163, 176, 231:



շակունիների արևելահայկական թագավորության կազմում, այլև 428 թ. նրա անկումից հետո էլ մտան նախ Հայաստանի մարզպանության, ապա և VII դ. վերջին կազմավորված արաբական Արմինիա փոխարքայության կազմի մեջ: Բնավ պատահական չէ, որ V-X դ.դ. հայ մատենագիրները Պարսկահայքի վերոնշյալ գավառները, ներառյալ և խնդրահարույց Զարեհավանը, հիշատակում են Հայաստանի վարչաքաղաքական և եկեղեցական կյանքի ծիրում[83]: Նմանապես և արաբ մատենագիրներ Իդրիսին[84], Մուքադասին[85]և «Հուդուդ ալ-Ալամ» երկի անհայտ հեղինակը[86] նշում են, որ Արմինիան իր մեջ էր ներառում Ուրմիան, Սաղամասը և Հերը (Խոյ):

Անգամ այն բանից հետո, երբ Պարսկահայքի հիշյալ գավառներում հաստատվում էին արաբ իշխանավորները և հիմնում իրենց ավատատիրական իշխանությունները, վարչականորեն նրանք ենթարկվում էին Արմինիայի ոստիկանին, իսկ ավելի ուշ հայոց թագավորներն իրենց իրավունքն էին համարում դրանք իրենց ենթարկեցնելը: Համաձայն Կոստանդին Ծիրանածնի՝ Աշոտ I Բագրատունուն էին ենթարկվում Հերի (Խերտ) և Սաղամասի արաբ իշխանավորները[87]: Հետագայում, Պարսկահայքի խնդրո առարկա մասերում Ատրպատականի իշխողների տիրապետության հաստատումից հետո արաբապարսկական սկզբնաղբյուրներն այդ տարածքներն արդեն համարում են Ատրպատականի մաս[88]:

Սալմաստի ժայռաքանդակի «ատրպատականյան» ծագումնաբանության վարկածը սկզբունքային անհամաձայնությունից չի ձերբազատ-

[83] **Ագաթանգեղոս**, 795: Եղիշե, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, թարգմանութ. և ծանոթագր. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1989, էջ 150, 151, 212, 213, 268, 269, 425, 428, 428, 105: **Ուխտանես եպիսկոպոս**, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 100: «**Գիրք թղթոց**», Թիֆլիս, 1901, էջ 42, 73, 149: **Յովհաննու Դրասխանակերտցւոյ** Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 289, 290:
[84] **Idrisi**, Opus Geographicum, Fasc. VII, Neapoli-Romae, 1977, p. 820, 829.
[85] **Muqaddasī M.**, The Best Divisions for Knowledge of the Regions *(Aḥsan al-Taqāsīm fī Ma'rifat al-Aqālīm)*, tr. B. A. Collins, Reading: Garnet, 2001, p. 331.
[86] **"Hudūd al-'Ālam"**, The Regions of the World, a Persian Geography 372 A.H.-982 A.D., translated and explained by V. Minorsky, 2nd ed. Pref. V.V. Barthold, ed. C.E. Bosworth, London, 1970, p. 143.
[87] **Կոստանդին Ծիրանածին**, Կայսրության կառավարման մասին, Գլ. 44, տե՛ս Բյուզանդական աղբյուրներ, Բ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Հր. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 10:
[88] **Իբն ալ Ասիր**, Լիակատար պատմություն, թարգման. բնագրից, առաջաբանը և ծանոթագր. Ա. Տեր-Ղևոնդյանի, տե՛ս Արաբական աղբյուրներ, Բ, Երևան, 1981, էջ 185, 189, 193, 207, 217, 221, 233 և ուրիշներ: **Յակուտ ալ-Համավի**, Աշխարհագրական բառգիրք, տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 10, 15, 20, 32, 70, 76, 77 և ուրիշներ:

վում անգամ այն դեպքում, եթե զուտ տեսականորեն ընդունենք, որ Զարեհավան գավառը պարսիկների կողմից ռազմակալվել է դեռևս Արտաշիրի օրոք և միացվել է Ատրպատականին: Այս դեպքում էլ անհասկանալի է մնում այն հարցը, թե ինչու է Սասանյան արքայից արքան Ատրպատականի կառավարչի նկատմամբ իր վեհապետական իրավունքն ազդարարող այդ «տեղեկատվական վահանակը» ստեղծել պատմականորեն և էթնոմշակութային առումով Ատրպատականին խորթ հայկական Սալմաստում, այլ ոչ թե հասցեատիրոջ մոտ՝ բուն Ատրպատականում՝ Գանձակ Շահաստանում կամ Գիշում:

Վերոշարադրյալից պարզ է, որ քննարկվող պատմական ժամանակաշրջանում Պարսկահայքի հյուսիսային գավառները կազմել են Մեծ Հայքի, այլ ոչ թե Ատրպատականի մասերը և Սասանյանների տիրապետության տակ են անցել ոչ թե Արտաշիրի, այլ Շապուհ I-ի կառավարման օրոք՝ 252/3 թ.: Այս հանգամանքը ինքնին հիմնազրկում է Սալմաստի ժայռաքանդակի ատրպատականյան հեղինակության վերաբերյալ Գ. Վիդենգրենի, Է. Շավարեբիի և այլոց մեկնաբանությունը:



## 3
## ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԸ «ՀԱՂԹԱԿԱՆ» ԺԱՆՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի և ժանրային պատկանելության վերաբերյալ «ավանդական» մեկնաբանության քննադատությունն ամբողջացնելու համար անհրաժեշտ ենք համարում այս հուշարձանը դիտարկել ոչ միայն վաղ սասանյան արվեստում հաղթանակի թեմայի քաղաքական-քարոզչական նշանակության, այլև այս թեմայով ստեղծված իրանական հուշարձանների հետ նրա կառուցվածքային համեմատության լույսի ներքո:

Ինչպես հայտնի է, Աքեմենյան և պարթևական ժայռաքանդակային արվեստում հաղթանակի թեման լայն կիրառություն չէր ստացել, մինչդեռ Սասանյան կերպարվեստում այն ի սկզբանե դարձավ կենտրոնական մոտիվներից մեկը: Դա առաջին հերթին պայմանավորված էր Իրանում Սասանյանների իշխանության գալու ձևով և հին իրանական միջավայրում արքայական իշխանության ուժային, ռազմական բնույթի, ինչպես նաև հաղթանակի՝ որպես այդ իշխանության իրական նախապայմանի մասին պատկերացումների գոյությամբ: Նոր հարստության հաղթականության քարոզչությունը բխում էր նաև այն քաղաքական ծրագրից, որի շնորհիվ Սասանյանները կարողացել էին իրենց շուրջը համախմբել վերջին Արշակունիների անփառունակ գահակալությունից դժգոհ իրանական բարձր ազնվականությանը:

Իրենց գահակալությունը կայունացնելուց հետո Իրանի նոր տիրակալներին անհրաժեշտ էր ցույց տալ, որ Արշակունիների կառավարման վերջին երկու հարյուրամյակների տնտեսական, ներքին և արտաքին քաղաքական անկայունությունից հետո Իրանի կյանքում բացվել է նոր դարաշրջան, և իրենք ամենաարժանավոր և օրինական տիրակալներն են, ի զորու՝ վերականգնելու Իրանի փառքը *(airiianəm xvarənah)*: Քաղաքական այդ հայտարարություններն ուղղված էին ողջ իրանական հանրությանը, բայց առաջին հերթին՝ պարսիկներին: Այս առումով, պատահական չէ, որ Արտաշիր Պապականի ստեղծած բոլոր չորս ժայռաքանդակները ստեղծվել են նոր տերության սիրտը կազմող Պարսքում: Տեղագրորեն առնչվելով Աքեմենյան հուշարձաններին՝ դրանք մի կողմից ընդգծում են Սասանյանների ազգային-ծագումնաբանական ընդհանրությունը Աքեմենյանների հետ, իսկ մյուս կողմից էլ իրենց կոթողայնությամբ ստվերում են Արշակունիների ժամանակաշրջանի անհրապույր քանդակները՝ հաստատելով Արշակունիների հանդեպ Իրանի նոր տիրակալների գերազան-

ցությունը:

Ինչպես նկատում է Մ. Կանեպան, իր սկզբնավորման փուլում Սասանյան պաշտոնական կերպարվեստը ոճակատարողական սեփական ձևերի ընտրության գործում ազդվել է ոչ այնքան տարածապես հեռու հունահռոմեական, որքան հին առաջավորասիական և Աքեմենյան գլանակնիքների, որմնաքանդակների և ժայռաքանդակների վրա կենցաղված նախատիպերից[89]:

Հին առաջավորասիական արվեստում հաղթանակի գաղափարը կերպավորված է նկատելի բազմազանությամբ՝ պայմանավորված ներկայացված իրադարձության բնույթով, նկարիչ-քանդակագործների գեղագիտական և կատարողական մակարդակով, գոյություն ունեցած պատկերագրական ավանդություններով և այլ նմանատիպ գործոններով: Այդուհանդերձ, դրանց համեմատական ուսումնասիրության միջոցով վաղուց է բացահայտվել հաղթողի ու պարտվածի պատկերների դիրքային և չափական հարաբերությունների ընդհանրության մի ողջ համալիր, որը, շնորհիվ իր պարզության և դյուրընթեռնելիության, հավասարապես հասկանալի է եղել թե՛ առաջավորասիացուն, թե՛ օտարականին: Ակնհայտ է, որ իրանական նոր հարստությունը հաճությամբ է գնացել հին առաջավորասիական պատկերագրական սխեմաների յուրացման ուղով, սակայն փորձել է դրանք հարմարեցնել նոր իրանական արքունիքի քաղաքական-գաղափարական նպատակներին ու գեղարվեստական ճաշակին: Ընդ որում, յուրացումն ու տեղայնացումը կատարվել է աստիճանաբար՝ ձևավորված կոմպոզիցիոն ձևերի ընդհանուր վերարտադրության և մասնակի վերափոխության ճանապարհով:

Ինչպես հայտնի է, Հայաստանը Սասանյան հարստության նվաճողական հավակնությունների շրջանակի մեջ էր հայտնվել տակավին Արտաշիրի գործունեության վաղ շրջանից: Եվ եթե այս երկրի տարածքում Սասանյան առաջին տիրակալի հեծյալ և նրա դիմաց կանգնած հետիոտնի պատկերներով ժայռաքանդակի գոյությունը դիտարկենք Հին Առաջավոր Ասիայում հաղթական ռազմարշավի վերջնակետին արձանագրություն կամ ժայռաքանդակ թողնելու հազարամյա ավանդակարգի[90]

[89] **Canepa M. P.**, The Two Eyes of the Earth, p. 38.

[90] Այս նշանակությամբ են ստեղծվել Շեյխանի, Դարբանդ-ի Գավուրի, Բիթվատի աքքադա-շումերական և Սարպոլ-ի Զահաբի լուլուբյան ժայռաքանդակները (**Postage N. and Roaf M.D.**, The Shaikhan Relief, in *Al-Rāfidān*, Vol. XVIII (1997), p. 149, Fig. 4; p. 151, Figs. 5, 6, 7, 8): Պարթևական դարաշրջանի իրանական արվեստում այս ավանդակարգն արտահայտված է Միհրդատ I-ի Հոնգ-ի Աշդարի ժայռաքանդակի վրա (**Vanden Berghe L.**, Le Relief Parthe de Hung-i Nauruzi, *IrAn* 3, 1963, p. 167;



տեսանկյունից, ապա, իսկապես, հարմար կլինի Սալմաստի ժայռաքանդակը հայոց դեմ Արտաշիրի ինչ-որ հաղթարշավի ընթացքում պարսկական զորքերի՝ Մեծ Հայքի Զարեհավան գավառի Սալմաստի շրջան հասնելու ժայռակերտ վկայություն համարելը: Սակայն, ինչպես վերը տեսանք, այս մեկնաբանությունը չի պաշտպանվում գրավոր աղբյուրների կողմից: Ավելին, այն հակասում է նաև Սասանյան առաջին արքայի կողմից սեփական հաղթանակների (փառքի) գովազդի ու քարոզչության բովանդակությանն ու մասշտաբներին:

Գրավոր աղբյուրները վկայում են Արշակունիների տապալմանը նախորդած և հաջորդող տարիներին Վերին Միջագետքում[91], Մարաստանում[92] և Հյուսիսարևելյան Իրանում[93] Արտաշիրի տարած նշանակալից հաջողությունների մասին: Այնուամենայնիվ, իր հաղթական հայտարարություններում Արտաշիր I-ը հեռու է մնացել մանրապատումներից և նախընտրել է ժայռի վրա հավերժացնել իր ամենանշանակալից ռազմական հաջողությունը՝ Արտավան V Արշակունու դեմ բախտորոշ հաղթանակը: Անգամ Ալեքսանդր Սևերուսի (222-235 թ.թ.) ու նրա մերձավորագույն հաջորդների դեմ ձեռք բերված հաջողությունները Արտաշիր I-ի կողմից առանձին ժայռաքանդակների միջոցով մեծարվելու արժանի չեն համարվել[94]: Մեր համոզմամբ, հաղթական փառքի քարոզչության ժամանակ

**Idem**,Oud-Iraanse Rotsreliefs…, pp. 120-121; **Vanden Bergh L. and Schippman K.**, Les relief rupestres d’Elyumaïde (Iran) de l’e poque parthe, Gent, 1985, p. 36, pl. 2; **Schmitt R.**, Parthische Sparach-und Namenüberlieferung aus arsakidischer Zeit, see J. Wiesehöfer (ed.), Das Parherreich und seine Zeugnisse, Stuttgart, 1998, p. 168. **Յազդանփանահ Մ.**, Սարփոլ Զահաբի Արշակունյաց վիմանկարների վերածանաչում, *Գարուն*, հունվար-փետրվար 2011, էջ 123):

[91] **Աղիաբենեի եկեղեցու պատմություն**, էջ 82-83: **Debevoise N.**, A Political History of Parthia, Chicagho, 1938, p. 268-269.

[92] Dio’s Roman History in Nine Volumes, with an English Translation by Earnest Cary on the Basis of the Version of Herbert Baldwin Foster London-Cambridge, Massachusetts, MCMXIV – MCMLV (այսուհետ՝ **Dio Cass.**,) LXXX, 3.3.

[93] **Nöldeke Th.**, Geschichte der Perser und Araber zur Zeit der Sassaniden - Aus der arabischen Chronik des Tabari, Leiden, 1879, S. 17-18.

[94] Ժամանակակից որոշ ուսումնասիրողներ Արտաշիր I-ին են վերագրում նաև Դարաբգիրդի ժայռաքանդակը: Առաջինն այս հիպոթեզը առաջադրել է Բ. Կ. ՄակԴերմոտը, որի կարծիքով Դարաբգիրդի ժայռաքանդակը լուսաբանում է Արտաշիր I-ի հռոմեական հաղթահանդեսը (**MacDermot B. C.**, Roman Emperors on the Sassanian Reliefs, *JRS* 44, 1954, pp. 76-80): Գ. Հերմաննի կարծիքով, Դարաբգիրդի հաղթական բարձրաքանդակը ստեղծվել է ոչ ուշ քան 230-246 թ.թ. և ներկայացնում է տարբեր ժամանակներում երեք տարբեր արքայիկների դեմ Արտաշիր I-ի տարած հաղթանակները (**Herrmann G.**, The Dārābgird Relief – Ardashīr or Shāhpūr?..., p. 86): Սակայն հետիոտն պատկերների ակնհայտ հռոմեական հագուստն ու հարդարանքը կատարելապես հիմնազրկում են այս վարկածը: Դ. Լևիտ--

կարևորագույն իրադարձությունների վրա կենտրոնանալու վաղ սասանյան արվեստի այս բնավորությունն իսկ բացառում է Սալմաստի բարձրաքանդակի նշանակության վերաբերյալ Ֆ. Յուստիի, Վ. էնսլինի և այլոց մեկնաբանությունը. Մեծ Հայքի նկատմամբ տարած ենթադրյալ մասնակի հաջողությունը (ասենք՝ Սասանյանների կողմից անդրտիգրիսյան գավառների կամ Պարսկահայքի նվաճումը) հազիվ թե պաշտոնական տեսանկյունից համարժեք դիտվեր Որմիզդականի, Միհիխիսի կամ Եդեսիայի հաղթանակներին և առանձին պաշտոնական հուշարձանի ստեղծման առիթ դառնար: Բացի այդ, կարևոր է նաև նկատել, որ մոնումենտալ ժայռաքանդակները՝ որպես պաշտոնական քարոզչության միջոց, կոչված էին արձանագրելու ոչ թե ընթացիկ, այլ ավարտուն պատմական իրողությունները: Իսկ քանի որ Արտաշիրի օրոք Հայաստանը մեծամասամբ աննվաճ էր մնում, հայոց արքայի անձնատվությունը ներկայացնող կոմպոզիցիայի արարումը չէր համապատասխանի իրերի իրական դրությանը:

Ինչպես կտեսնենք ստորև, Սալմաստի ժայռաքանդակի վերաբերյալ ներկայացված մեկնաբանությունը սկզբունքորեն հակասում է նաև

Թավիլը Դարաբգիրդի բարձրաքանդակի հեծյալ արքայի ինքնության հարցում պաշտպանում է Գ. Հերմաննին, բայց արքայի դիմացի անձանց նույնականացնում է հռոմեական կառավարչակից կայսրեր Գորդիանուս III-ի, Բալբինուսի ու Պուպիենուսի հետ՝ համարելով, որ Դարաբգիրդի տեսարանը ներկայացնում է ոչ թե իրապես տեղի ունեցած պատմական իրադարձություն, այլ Սասանյան քաղաքական և կրոնական գաղափարների, մասնավորապես, Արևմուտքի նկատմամբ Արևելքի գերազանցության մետաֆոր (**Levit-Tawil D.**, The Sasanian Rock Relief at Darabgird-A: Re-Evaluation, *JNES* 51, No. 3 (Jul., 1992), pp. 161-180). Չնայած իր ուշագրավությանը՝ այս մեկնաբանությունը ևս հարուցում է սկզբունքային առարկություն: Մասնավորապես հայտնի է, որ Գորդիանուս III-ը զոհվել է ոչ թե Արտաշիրի, այլ Շապուհի միանձնյա կառավարման օրոք՝ 244թ. փետրվարի 11-ին (**Dodgeon M.H. & Lieu S.N.C.**, The Roman Eastern Frontier and the Persian Wars (AD 226-363): a documentary history, London & New York, Routledge, 1991, p. 35): Ինքնըստինքյան հասկանալի է, որ Արտաշիրը չէր կարող կռահելով իր ժայռաքանդակի վրա կերպավորել մի իրադարձություն, որը տեղի էր ունենալու իր մահվանից տարիներ անց: Ուստի, Դարաբգիրդի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի հարցում Գորդիանուս III-ի նահատակությունը համարելով յուրօրինակ terminus non ante quam՝ մենք համերաշխում ենք ընդունված կարծիքին, ըստ որի՝ վիճահարույց հուշարձանը ստեղծվել է Շապուհ I-ի կողմից և ներկայացնում է հռոմեական երեք կայսրերի՝ Գորդիանուս III-ի, Ֆիլիպպ Արաբի և Վալերիանուսի դեմ պարսից այս արքայի հաղթանակները (**Herzfeld E.**, Iran in the Ancient East, p. 313; **Ghirshman R.**, Persian Art: The Parthian and Sassanian Dynasties: 249 B.C.-A.D. 651, New York, 1962, pp. 160-161; **Hinz W.**, Das sasanidische Felsrelief von Salmas, S. 148-160, Taf. 44-51; **Idem**, Altiranische Funde und Forschungen, S. 145-153, Taf. 75-99; **Vanden Berghe L.**, L'Archdologie de l'Iran ancient, Leiden, 1966, pp. 160-161; **Idem**, La Découverte d'une sculpture rupestre à Darabgird, *IrAn* 13, 1978, pp. 135-147, pls. 1-3):



Սասանյանների կողմից հաղթանակի ներկայացման կոմպոզիցիոն-կատարողական օրինաչափություններին:

Առաջին հուշարձանը, որը հավերժացրել է Արշակունիների դեմ Արտաշիր I-ի հաղթանակը, պարթևական մոդելով ստեղծված Փիրուզաբադ I ժայռաքանդակն է[95], որի կոմպոզիցիան բաղկացած է միմյանց դեմ մարտնչող երեք զույգ հեծյալներից (նկ. 8):

Ուսումնասիրողների մեծամասնությունը համերաշխում է, որ Փիրուզաբադ I-ի վրա խորհրդանշական ձևով ներկայացված է Որմիզդականի բախտորոշ ճակատամարտում Արտաշիրի տարած հաղթանակը: Կ. Ֆարրոխը, Մ. Գրաբովսկին և այլք հնարավոր են համարում, որ այստեղ ներկայացված են ոչ թե Որմիզդականի, այլ Արշակունիների դեմ պայքարի ընթացքում Արտաշիրի մղած երեք խոշոր ճակատամարտերում իրապես տեղի ունեցած մենամարտերի վճռական դրվագները[96]: Պակաս ուշագրավ չէ նաև Աբոլալա Սուդավարի կարծիքը. հեղինակը պարսիկ հեծյալներին նույնականացնում է Արտաշիր I-ի, նրա որդի Շապուհի և թոռան՝ Որմիզդ-Արտաշիրի հետ, հավանական համարելով, որ ժայռաքանդակը ստեղծվել է ոչ թե Արտաշիր I-ի, այլ Շապուհ I-ի օրոք[97]:

Չեռնպահ մնալով վերը նշված կարծիքներից մեկի կամ մյուսի նախապատվությունից՝ մենք հարկ ենք համարում ուշադրությունը բևեռել ընդհանուր կոմպոզիցիայում հաղթողների և պարտվածների դիրքային հարաբերություններին, քանի որ, ինչպես մարտական սյուժեով ստեղծված այլևայլ ստեղծագործություններում, Արտաշիրի այս ժայռաքանդակի վրա ևս «հաղթանակ»-ի գաղափարի արտահայտությունը պետք է որոնել հենց այստեղ:

Մ. Կանեպայի և այլոց կարծիքով Փիրուզաբադ I-ի կոմպոզիցիայի համար նախօրինակ է ծառայել Գոթարզ Գևորդու կողմից Բեհիսթունում կերտած հեծելամարտի տեսարանով քանդակը[98]: Սակայն Պարթևական

[95] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 187. Նախկինում Փիրուզաբադ I ժայռաքանդակը համարվել է Արտաշիր I-ի ստեղծած անդրանիկ հուշարձանը (**Ghirshman R.**, Iran: Partheset Sasanides, p.125; **Hinz W.**, Altiranische Funde und Fourschungen, S. 115):

[96] **Фаррох К.**, Персы, с. 198-199. **Grabowski M.**, Ardašīr's Struggle against the Parthians: Towards a Reinterpretation of the Fīrūzābād I Relief, *IrAn* 46, 2011, pp. 207-233):

[97] **Soudavar A.**, The Vocabulary and Syntax of Iconography in Sasanian Iran, *IrAn* 44, 2009, p. 427, Footnot 30.

[98] **Canepa M. P.**, The Two Eyes of the Earth, p. 38. Հեղինակի առաջարկած համեմատության ձևաչափով որոշակի ընդհանրություն կարելի է տեսնել նաև Փիրուզաբադ IV-ի և Տանգ-ի Սերվակ III-ի էլյումայիսյան ժայռաքանդակի միջև (See **Potts**

դարաշրջանի այս հուշարձանի հետ Փիրուզաբադ I-ի համեմատությունը ցույց է տալիս, որ ընդհանուր է միայն սյուժեն, մինչդեռ կոմպոզիցիան սկզբունքորեն տարբեր է: Գոթարզի վերոնշյալ ժայռաքանդակի վրա ներկայացված է մարտը՝ իր ընթացքի մեջ. կատաֆրակտարները (հասկանալի է, որ առաջի պլանում պատկերված հեծյալը մարմնավորում է արքային) սլանում են առաջ՝ երկար նիզակները առաջ պարզած: Եվ պարթևական արվեստում ընդունված ձևով, արքայի հաղթանակի գաղափարն այստեղ ներկայացված է ոչ թե պատկերագրորեն՝ խոցված կամ զգետնված հակառակորդի պատկերաձևերի միջոցով, այլ յուրօրինակ ինտելեկտուալ սկզբունքով. արքայի գլխավերևում պատկերված է թևածող Նիկեն, որը պսակ է պահել նրա գլխին: Դիտորդը այս տեսարանից պետք է հանգեր արքայի նկատմամբ աստվածային հովանավորության առկայության գաղափարին, որից էլ, ինքնաբերաբար, պետք է ծնվեր մարտի հաղթական ելքի մասին պատկերացումը:

Ի տարբերություն վերոնշյալի՝ Փիրուզաբադ I-ի վրա մարտը (մենամարտերը) ներկայացված է պարսիկների և նրանց ախոյանների այնպիսի դիրքային հակադրության մեթոդով, որ բացառվի դրա ելքի վերաբերյալ որևէ տարակուսանք. Արտաշիրը նիզակի մահացու հարվածով ձիուց ցած է գլորում Արտավան V-ին, արքայազն Շապուհը նմանապես տապալում է մեծ վեզիր Դարբանդանին, իսկ երրորդ պարսիկ հեծյալը, որին Էհսան Շավարեբին նույնականացնում է Շապուհ I-ի Քաաբա-ի Զարդուշտի արձանագրությունում[99] «Արտաշիր-ֆառն» և «մեծ Ֆրամադար» տիտղոսներով հիշատակված Աբարսամի (Abarsām) հետ[100], հակառակորդին պոկում է ձիուց՝ աջ ձեռքով սեղմելով նրա պարանոցը: Ժայռաքանդակի կազմությունը պարզորոշ ցույց է տալիս, որ մարտական թեմայով այս անդրանիկ ժայռաքանդակի ստեղծման ժամանակ Արտաշիրը առաջնորդվել է ոչ թե պարթևական, այլ հին առաջավորասիական նախատիպերով, որոնց հատկանշական կողմը պատմողականությունն էր՝ հաղթողների ու պարտվածների դիրքերի խիստ զանազանությամբ: Փիրուզաբադ I-ի կոմպոզիցիան հետագայում այս կամ այն չափով ընդօրինակվել է Վարահրան II-ի Նախշ-ի Ռուստամ III և VII, ինչպես նաև, Որմիզդ

**D.**, The Archaeology of Elam, p. 403, Fig. 10.15):

99 Շապուհ I-ի Քաաբա-ի Զարդուշտի արձանագրությունը (այսուհետ՝ ŠKZ) տե՛ս **Sprengling M.**, Third Century Iran, Sapor and Kartir, Chicago, 1953, pp. 14-20:

100 **Shavarebi E.**, To Identify a Sasanian Nobleman on the Reliefs of Ardashir I (Abstract), см. «Локальное наследие и глобальная перспектива: “традиционализм” и “революционизм” на Востоке». Тезисы докладов XXVII международного научного конференции по источниковедению и историографии стран Азии и Африки. Санкт-Петербург, 2013, с. 36-37.



II-ի Նախշ-ի Ռուստամ IV ժայռաքանդակների[101] ու սասանյան դեկորատիվ սպասքի վրա (նկ. 9):

230-ական թ.թ. վերջերին հռոմեական քաղաքներից գերեվարված բարձրարվեստ քանդակագործների ներգրավումը ժայռաքանդակային գործի մեջ էապես փոխեց Սասանյան վիմաքանդակի ոչ միայն կազմությունը, այլև ներքին բովանդակությունը: Նախշ-ի Ռուստամ I ժայռաքանդակի վրա հռոմեական ազդեցությունը դրսևորված է դեռևս կատարողական պլանում, մինչդեռ ժանրային և գաղափարական առումներով այն խարսխված է հին առաջավորասիական պատկերագրության ավանդույթներին: Այստեղ հեծյալի կերպարանքով ներկայացված է զրադաշտականության գերագույն աստվածություն Ահուրամազդան[102], որն իշխանության օղակ է մեկնել հեծյալ արքայից արքային, իսկ վերջինս էլ մի ձեռքը պարզել է՝ ստանալու իշխանության խորհրդանիշը, իսկ մյուս ձեռքը արմունկից վեր է բարձրացրել՝ ի նշան մեծարանքի ու հնազանդության (նկ. 10): Ժայռաքանդակի ընդհանուր կազմության մեջ Արտավան V-ի դեմ Արտաշիրի հաղթանակի պատկերագրական շերտն ասես հենք է ծառայեցվել կոմպոզիցիայի կենտրոնական գաղափարի պատկերագրության համար. թե՛ աստվածության, թե՛ արքայի ձիերը կանգնած են նրանց տապալված հակառակորդների վրա: Արտաշիրի ձիու սմբակների տակ երեսնիվար պատկերված է Արտավան V Արշակունին, իսկ Ահուրամազդայի ձիու սմբակների տակ նույն դիրքով չարի աստվածություն Անգրո Մանյուն (Ահրիման) է: Նախշ-ի Ռուստամ I-ի ընդհանուր կազմության մեջ ինվեստիտուրայի և հաղթանակի պատկերագրական այս համակցությունը հազիվ թե կարելի է պատվիրատուի կամ ճարտարագետի գեղարվեստական ճաշակի կամ քմահաճույքի արտա-

101 **Vanden Berghe L.**, Reliefs rupestres…, pp. 82, 85, 139, 140, 141.

102 Բրունո Օվերլեթը, փաստարկելով Նախշ-ի Ռուստամ I-ի վրա Արտաշիրին իշխանությամբ օժտող հեծյալի ձեռքին Բարսման խրձի առկայությունը, գտնում է, որ այդ պատկերը կերպավորել է ոչ թե Ահուրամազդային, այլ զրադաշտական մոգպետին: Հեղինակի կարծիքով՝ հեծյալներին նույնականացնող արձանագրությունները, որոնք առկա են ձիերի մարմիններին, ստեղծվել են Արտաշիրի կառավարման վերջերին կամ Շապուհի կառավարման սկզբում, ինչի արդյունքում էլ հեծյալ մոգպետի պատկերը վերանույնականացվել է Ահուրամազդայի հետ (**Overlaet B.**, And Man Created God?: Kings, Priestsand Godson Sasanian Investiture Reliefs, *IrAn* 48, 2013, pp. 318): Սակայն Բ. Օվերլեթի վերոնշյալ փաստարկը միանգամայն անհիմն է, քանի որ Բարսման խուրձ առկա է նաև Տանգ-ի Բոստան I ժայռաքանդակի ձախակողմյան պատկերի ձեռքին, պատկեր, որի նույնականացումը Միթրա աստվածության հետ, դատելով պատկերագրական դետալներից (մորուք, տիարա, ժապավենազարդ դիադեմա, պերճաշուք թիկնոց և, հատկապես, գլխից ճաճանչող ճառագայթներ), անվիճարկելի է:

հայտություն համարել, քանի որ նախորդ դարաշրջանների առաջավորասիական արվեստում այդպիսի միացությունները առավել քան սովորական երևույթ էին: Այսօրինակ սխեմայով են ստեղծված Զաբազունա արքայի Բիթվատի[103], լուլուբյան արքա Անուբանինիի Սարպոլ-ի Զահաբի (նկ. 11)[104]և մի շարք այլ ժայռաքանդակներ: Սկզբունքորեն, նույն կազմությունն ունի և Դարեհ I-ի Բեհիսթունի ժայռաքանդակը[105]:

Հին առաջավորասիական կերպարվեստում հաղթանակի և ինվեստիտուրայի կոմպոզիցիոն համակցությունները արքայական իշխանության ուժային բնույթն ու աստվածային ծագումն ազդարարող յուրօրինակ «գովազդային վահանակներ» էին: Դրանց լայն տարածումը պայմանավորված էր հին առաջավորասիական մարդու աշխարհընկալման մեջ արքայի կայացման փուլային շարժընթացի վերաբերյալ գաղափարական դրույթի կայունությամբ: Դրա համաձայն՝ արքայական իշխանության հավակնորդ հերոսն իր արժանավորությունը պետք է ապացուցեր (աստծո համակրանքով և հովանավորությամբ) տարած հաղթանակի միջոցով: Գաղափարական այդ դրույթի պարտադրանքով է, որ հին առաջավորասիական, այդ թվում և հին իրանական բանավոր և գրավոր ավանդության մեջ նոր հարստությունների հիմնադիրների իբրև արքա կայացումը պարտադիր կարգով կապվում է իրենց նախորդների դեմ տարած հաղթանակի հետ: Ինչպես երևում է, արքայի աստվածային ինվեստիտուրայի և նախօրոք տարած հաղթանակի պատկերագրական շերտերի կոմպոզիցիոն համադրության հնարքը հաջողությամբ յուրացրել են նաև անցյալի մեծազոր արքաների փառքը գերազանցել տենչող Սասանյան առաջին տիրակալները: Պատկերագրական այս սխեման հետագայում կրկնվել է Շապուհ I-ի Բիշապուհ I (նկ. 12) և Բիշապուհ II (նկ. 13) Բիշապուհ III (նկ. 14) (ինվեստիտուրան Ապամ Նապատի կողմից[106]), ինչպես նաև Վարահրան I-ի Բիշապուհ V, Շապուհ II-ի (կամ

[103] **Postgate N. and Roaf M.**, The Shaikhan Relief, *Al-Rāfidān*, vol. XVIII, p. 153, Fig. 8.

[104] **Ibid.**, p. 151, Fig. 7.

[105] Դ. Լուշեի, Մ. Ռութի և այլոց կարծիքով Դարեհ I-ի Բեհիսթունի ժայռաքանդակի կոմպոզիցիան ստեղծվել է Անուբանինիի Սարպոլ-ի Զահաբի ժայռաքանդակի ներշնչանքով (**Luschey H.**, Studien zu dem Darius-Relief in Bisutun, *AMI* 1, 1968, S. 68); **Root M. C.**, King and Kingship in Achaemenid Art: Essays on the Creation of an Iconography of Empire, *AI* 19*, 1979,* p.196-201; **Feldman M. H.**, Darius I and the Hiroes of Akkad: Affect and Agency in the Bisitun Relief, in *Ancient Near Eastern Art in Context, Studies in Honor of Irene J. Winter byher students*, edited by J. Cheng and M. H. Feldman, Vol. 26, Leiden-Boston, 2007, p. 268.

[106] **Soudavar A.**, Looking through The Two Eyes of the Earth: A Reassessment of Sasanian Rock Reliefs, *Iranian Studies*, vol. 45, number 1, Jan. 2012, p. 32, Fig. 1.



Արտաշիր II-ի) Տաք-ի Բոստան I[107] ինվեստիտուրային ժայռաքանդակների վրա: Բացի վերը նշվածից՝ վաղ սասանյան ժայռաքանդակային արվեստը յուրացրել է նաև հինարևելյան կերպարվեստի հաղթական ժանրի շրջանակներում տակավին Ք.ա. III հազարամյակում մշակված պարզ, բայց և խիստ ռացիոնալ բանաձևը, որի հիմնական բնութագրիչը հաղթանակած արքայի և պարտված հակառակորդի պատկերների ծայրահեղ հակադրությունն էր:

Նախշ-ի Ռուստամ I-ի վրա Արտաշիրի պատկերը ստեղծված է նրա հատած վերջին դրամների երեսին ձև առած պաշտոնական դիմանկարի հիման վրա: Սակայն զրադաշտական աստվածության հետ նրա դիմահար դիրքը, կոռոմբոսով վերջացող թագը, օղակի միջով անցկացված մորուքը, արքայական հանդերձանքը և ընդհանրապես, պատկերի պարունակած հանդիսավորությունը հուշում են, որ ինչպես դրամների երեսին, այստեղ ևս խնդիր է դրված եղել ներկայացնելու ոչ թե պարզապես արքայի, այլ իդեալական արքայի, ողջ իրանական հանրության ներկայացուցչի քաղաքական պատկեր: Իսկ քանի որ նա պաշտոնապես «սերված էր աստվածների զարմից», նրա մարմինը, հետևաբար, միավորում էր քաղաքացետի ու աստվածայինի մարմինները:

Նախշ-ի Ռուստամ I-ի կարևորագույն նորամուծություններից մեկը արքայի և Աhուրամազդայի հեծյալ դիրքերն են: Հայտնի է, որ հելլենիստական դարաշրջանի վեհապետական արքունիքներում հեծյալ-հետիոտն դիրքային հակադրությունը ունեցել է հստակ սոցիալական նշանակություն և հանդիսացել է վեհապետի և վասալ արքաների սուբորդինացիայի արտահայտման կարևորագույն միջոցներից մեկը[108]: Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ հեծյալ դիրքով պատկերվելու իրավունքը եղել է վեհապետի կամ առնվազը սուվերեն արքայի մենաշնորհը[109]: Սրանից

[107] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 121, рис. 19.

[108] **Plutarchus**, Vitae Parallelae, Vol. 1-2, Lipsiae, Ed. Teubneri, 1964, Lucull, XXX, 6. **Flavius Josephus**, Opera (with an Engl. translation), v. 4-9, De Antiquitatibus Iudaicum, Cambridge/London, 1961-1963, XX, 60. Պարթևական արվեստում այդօրինակ տարբերակման եզակի նմուշ է Հոնգ-ի Աշդարի ժայռաքանդակը, մինչդեռ Սասանյան ժայռաքանդակային արվեստում այն դրսևորված է Նախշ-ի Ռուստամ I, Նախշ-ի Ռաջափ I, Բիշապուհ I հուշարձանների վրա:

[109] Այս առումով միանգամայն իրավացի է Վ. Գ. Լուկոնինը, ով պերսեպոլիսյան գրաֆիտների վրա Արտաշիրի հոր՝ Պապակի հեծյալ դիրքը գնահատում է իբրև պարթև Արշակունիների գերիշխանությանը ուղղված (**Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 156-157, Рис. 25 (1,2)): Ամենայն հավանականությամբ նման քաղաքական ենթատեքստ է պարունակում նաև Հոնգ-ի Յար Կամալվանդի էլյումայիսյան ժայռաքանդակը, որի վրա հեծյալ դիրքով ներկայացված է էլյումայիսի արքա Հրահատը՝ արքայական իշխանության խորհրդանիշներով (**Kawami T. S.**,

բխող տրամաբանությամբ կարելի էր կարծել, որ Նախշ-ի Ռուստամ I-ի վրա Արտաշիրը պատկերվել է ձիուն նստած՝ իրանական հանրությանն ի տես դնելով իր նոր՝ վեհապետական կարգավիճակը: Ինչ վերաբերում է գրադաշտական գերագույն աստվածության հեծյալ դիրքին, ապա իրանական կերպարվեստի համար աննախադեպ այդ պատկերաձևի երևան գալը պետք է բացատրել հին առաջավորասիական աշխարհընկալումներում գերագույն աստվածության՝ որպես յուրօրինակ վեհապետի մասին պատկերացման, գոյությամբ: Բնական է, որ այս գաղափարի հարկադրանքով կատարելապես անթրոպոմորֆացված Ահուրամազդան իր ընտրյալի և երկրային գործընկերոջ կողքին պատկերման պարագայում պետք է ներկայացվեր նվազագույնը դիրքով և չափով նրան համազոր, մի կանոն, որը կիրառված է նաև հետագայի Սասանյան բոլոր ինվեստիտուրային ժայռաքանդակների վրա:

Համաչափ և դիրքով նույնական են նաև Արտաշիրի ու Ահուրամազդայի հակառակորդները՝ Արտավանը և Ահրիմանը, որոնք ներկայացվել են հաղթողների երիվարների ոտքերի տակ: Հաղթողների և պարտվածների չափական տարբերություններն այստեղ ավելի թույլ են արտահայտված, քան ընդունված էր հին առաջավորասիական կերպարվեստում: Ավելին, Արտավանը պատկերվել է ոչ միայն տիարայով, որի վրա հստակորեն ընդգծվում է Արշակունիների արքայատան խորհրդանիշը, այլ նաև լայն ծալքազարդ ժապավեններով դիադեմայով[110], ինչպիսին որ կրում է Արտաշիր I-ը:

Անկասկած, հաղթողի ու պարտվածի դիրքային հակադրության վերոնշյալ կոմպոզիցիոն սխեման ևս սերում էր հին արևելյան պատկերային նախատիպերից: Հին միջագետքյան միֆամտածողության մեջ և կերպարվեստում գետնաթավալ հակառակորդի վրա ոտքը դրած արքայի պատկերաձևը համարվում էր նրա կատարյալ հաղթանակի յուրօրինակ մետաֆորը, նրա իշխանության ռազմական բնույթի արտահայտչամիջոցը: Հին արևելյան արվեստում առաջին անգամ այն երևան է գալիս Ք. ա. III հազարամյակի վերջին քառորդին՝ Նարամ Սինի հաղթական ստելայի

Monumental Art of the Parthian Period in Iran, *AI* 26, (Textes et Mémoires XIII), Leiden 1987, pp. 72-73):

110 Արտավան V-ը մեզ հասած դրամների ու Հվասակի ստելայի վրա երբեք նման ապարոշով ներկայացված չէ (**Sellwood D.**, An Intrduction to the Coinage of Parthia, 2 nd ed., London, 1980, Types 89, 90): Ամենայն հավանականությամբ պատկերագրական այդ դետալի հավելմամբ քանդակագործը ձգտել է առավել հասկանալի դարձնել այն, որ Արտաշիրի ձիու ոտքերի տակ պատկերված է ոչ այլ ոք, քան Իրանի տապալված հարստության վերջին արքան:



վրա[111]: Հավանաբար հենց նրա ներշնչանքով պատկերագրական այդ ֆորմուլը դրսևորվել է նաև Շեյխանի, Դարբանդ-ի Գավուրի, Բիթվատի աքքադա-շումերական, Սարպոլ-ի Զահաբի լուլուբյան[112] և մի շարք այլ ժայռաքանդակների, ինչպես նաև, թրծակավե պատկերասալիկների[113] և գլանակնիքների[114] վրա: Խնդրո առարկա մետաֆորը արտահայտված է նաև աքքադաբաբելոնյան «Երբ վերևում» արարչագործական էպոսում[115], ինչպես նաև շումերական արքաներ Շուլգիի, Ուտու-Հեգալի և այլոց հիմներում ու վիմագրերում[116]: Ավելի ուշ այն մշակութային ժառանգականության կամ յուրացման ճանապարհով տարածվում է ողջ Առաջավոր Ասիայում[117]: Դարեհ I-ի Բեհիսթունի ժայռաքանդակը ցույց են տալիս, որ այդ պատկերագրական սխեման վաղաքեմենյան ժամանակաշրջանի Պարսքում արդեն ընտանի էր:

Պարթևական դարաշրջանի իրանական արվեստում դիրքային ծայրահեղ հակադրության այս սխեման դրսևորվել է միայն Կուհ-ի Թինայի ժայռաքանդակի վրա[118]: Սակայն, դա էլ բավական է վստահանալու համար, որ կատարյալ հաղթանակի վերոնշյալ փոխաբերությունը հելլենիստական դարաշրջանի Իրանում եղել է կիրառական: Իսկ I-V դ.դ. հռոմեական դրամների վրա նույնպիսի կոմպոզիցիաների կիրառությունը խոսում է նրա համընդհանուր ճանաչման մասին:

Իհարկե, Նախշ-ի Ռուստամ I-ի վրա պարտվածների պատկերները դիրքային առումով մի փոքր տարբերվում են հին միջագետքյան և աքե-

111 **Westenholz J.**, The King, the Emperor, and the Empire. Continuity and Discontinuity of Royal Representation in Text and Image, in *The Heirs of Assyria*. Ed. by Sanno Aro and R. M. Whiting, Helsinki, 2000, p. 103-104, Fig. 1; **Nadali D.**, When Ritual Meets Art. Rituals in the Visual Arts Versus the Visual Arts in Rituals: The Case of Ancient Mesopotamia, *RSOS* 2, 2013, pp. 209-226.

112 **Postage N. and Roaf M.D.**, The Shaikhan Relief, p. 149, Fig. 4; P. 151, Figs. 5, 6, 7, 8.

113 **Opificius R.**, Das altbabylonische Terrakottarelief. Berlin, 1961, Nr. 480-483, 489.

114 **al-Gailani-Werr L.**, Studies in the chronology and regional style of Old Babylonian cylinder seals, *BM* 23, 1988, 20a, 147, 152b, 182e, 183, 185b, 157b, 209a, 231.

115 **Когда вверху**, табл. IV. См. Мифы и легенды народов мира, т. 3, Египет, Месопотамиа, М., 2004, с. 241.

116 **Cooper J.**, Mesopotamian historical consciousness and the production of monumental art in the third millennium B.C., *in* A. Gunter (ed.), Investigating artistic environments in the ancient Near East, Washington, 1990, p. 50, note 35.

117 **Westenholz J.**, The King, the Emperor..., p. 108-109, Fig. 3, p. 121, Fig. 7; **Uehlinger C.**, Gott oder König? Bild und Text auf der altbabylonischen Siegesstele des Königs Dāduša von Ešnunna, *in* Bauks M. [et al.], Was ist der Mensch, dass du seiner gedenkst? (Psalm 8,6). Aspekte einer theologischen Anthropologie. Neukirchen-Vluyn, 2008, S. 515-536, Abb. 1, 2):

118 **Vanden Berghe L.**, On the Track of the Civilizations of Ancient Iran: A Belgian Contribution to Knowledge of the Iranian Historical Heritage, Brussels, 1968, p. 19.

մենյան նախատիպերից. նրանք գետնաթավալ են, սակայն ոչ թե դեմքով առ հաղթողը և ձեռքերը նրան կարկառած, այլ երեսն ի վար: Բացի այդ՝ բացառությամբ Շապուհ II-ի Տանգ-ի Բոստանի ժայռաքանդակի, նրանք ոտնակոխ են լինում ոչ թե արքաների, այլ արքայական երիվարների կողմից: Սակայն կարծում ենք, որ այս տարբերությունները ընդամենը գեղարվեստական ճաշակի զարգացման արդյունք են և իմաստային շեղում չեն պարունակում:

Ժայռաքանդակի վրա մի կողմից հեծյալ աստվածության և հեծյալ արքայի, մյուս կողմից տապալված Աhրիմանի ու Արտավան V-ի պատկերների սիմետրիայից հետևում է, որ Արտավանի նկատմամբ Արտաշիրի հաղթանակը հավասարեցվել է խավարի աստվածության նկատմամբ լույսի աստվածության հաղթանակին, իսկ Իրանի նկատմամբ Արտաշիրի իշխանությունը նմանակել է զրադաշտական գերագույն աստծո տիեզերական իշխանությանը[119]: Վ. Լուկոնինի և այլոց կողմից առաջարկված այս մեկնաբանության տեսանկյունից դժվար չէ նկատել, որ Նախշ-ի Ռուստամի ժայռաքանդակի կոմպոզիցիան հանգում է Զյուստասպեսի գուշակության մեջ և Բահման Յաշտում ներկայացված ապոկալիպտական «Տիեզերական հաղթանակի» այլաբանական մոտիվին: Համաձայն այդ երկու մարգարեական ստեղծագործությունների՝ պարսիկ ժողովուրդը պետք է ազատագրվի աստծուց ուղարկված փրկիչ արքայի կողմից, որը պետք է հաղթի չարիքին, վերականգնի հավատքն ու Պարսից թագավորությունը: Երկրի վրա նոր «Ոսկե դար» պետք է հաստատվի, և պարսից իրականությունը պետք է հատկանշվի ընդհանուր միապետով և միասնական միապետությամբ[120]:

Վերոնշյալ մեծադղորդ հայտարարությունը կատարելապես համապատասխանում էր Իրանի նոր հարստության կրոնաքաղաքական հավակնություններին: Այդուհանդերձ, Արտաշիր I-ի Նախշ-ի Ռուստամի ժայռաքանդակի, ինչպես նաև նրա հատած վերջին դրամների վրա առկա «mzdysn bgy ʻlhštr MLKAn MLKA ʻyl’n MNW ctry MN yzd’n = Աստվածային Մազդային երկրպագող Արտաշիր, Իրանի արքայից արքա, որի պատկերը/սերմը աստվածներից է» տիտղոսից[121] հասկանալի է, որ Սասանյան հարստության հիմնադրի «տիեզերական հաղթանակ»-ի նշանակությունն ու քարոզչությունը պարփակված է մնացել իրանական սոցիումի շրջանակներում:

[119] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 24.

[120] **Eddy S. K.**, The King is Dead, Linkoln, Nebraska, 1961, pp. 18 and 32.

[121] **Daryaee T.**, Kingship in Early Sasanian Iran, in *The Idea of Iran: The Sasanian Era,* ed. by V.S. Curtis and S. Stewart, London, 2008, p. 61.



Այսպիսով, վերոշարադրյալից կարելի է անել մի քանի ընդհանրացումներ.

– Արտաշիրի հաղթական փառքի քարոզչությունը տեղայնացել է Պարսքի սահմաններում:

– Ժայռաքանդակային արվեստում ներկայացվել է բացառապես Արշակունիների վերջին տիրակալ Արտավան V-ի դեմ նրա տարած հաղթանակը:

– Արտաշիրի օրոք հաղթանակի ժանրը դեռևս չէր առանձնացել, և մի դեպքում (Փիրուզաբադ I) այդ գաղափարն արտահայտված է հեծելամարտի ժանրի համապատկերում, մյուս դեպքում (Նախշ-ի Ռուստամ I) այն ներկայացված է որպես պատկերագրական (գաղափարական) հենք՝ Իրանի նոր տիրակալի աստվածային ինվեստիտուրայի պատկերագրության համար:

– Մեծապես ազդվելով հին առաջավորասիական արվեստի հաղթական ժանրի պատկերագրական ավանդույթներից՝ Սասանյան կերպարվեստն իր սկզբնավորման փուլում փորձել է դրանք հարմարեցնել սեփական գեղարվեստական ճաշակին և գաղափարախոսությանը: Սրանով են պայմանավորված վաղ սասանյան պատկերաքանդակների վրա առկա այնպիսի ձևափոխությունները, ինչպիսիք են հեծյալ արքայի պատկերաձևը, հաղթողի և պարտվածի չափական անհամամասնության նվազումը, պարտվածների պատկերների անհատականացումը և այլն:

– Սասանյան կերպարվեստի հաղթական ժանրի պատկերագրական համակարգում անփոփոխ է մնացել հաղթողի և պարտվածի դիրքային հակադրության հնամենի սկզբունքը: Վերջինս, շնորհիվ իր պարզության և արտահայտչականության, չնչին ձևափոխությամբ (պատմողական տարրի մեծացմամբ) հետագայում գործածվել է նաև Շապուհ I-ի Բիշապուհ I, Բիշապուհ II, Բիշապուհ III, Դարաբգիրդի[122], Նախշ-ի Ռուստամ VI (նկ. 15)[123], Վարահրան I-ի Բիշապուհ V[124], Արտաշիր II-ի (կամ Շապուհ II-ի) Տանգ-ի Բոստան I ժայռաքանդակների վրա, ինչպես նաև Շապուհ I-ի ոսկյա դինարի դարձերեսին[125]: Վերոնշյալ բոլոր դեպքերում առաջին պլանում են ներկայացված հաղթողի (հեծյալ կամ հետիոտն արքայի) ու պարտվածների (ծնկաչոք աղերսողի կամ գետնաթավալ հակառակորդի) կոնտրաստը:

[122] **Hinz W.**, Altiranische Funde und Fourschungen, S. 150-151, Tafel 76, 77.

[123] **Ibid.**, S. 181, Tafel 106.

[124] **Vanden Berghe L.**, Reliefs rupestres…, p.62.

[125] **Alram M.**, Early Sasanian Coinage, p. 23, Fig. 15; **Canepa M. P.**,Two Eyes of the Earth: p. 70, Fig. 8.

Սալմաստի բարձրաքանդակի ժանրային պատկանելության և հետիոտն պատկերների նույնականացման վերաբերյալ Ֆ. Յուստիի, Վ. Էնսլինի, Մ.-Լ. Շոմոնի և այլոց կարծիքն էլ կռվան կունենար, եթե այստեղ նույնպես հեծյալների դիմաց տեսնեինք զգետնված, ծնկաչոք կամ աղերսողի կեցվածքով անձանց: Մինչդեռ հետիոտների ուղղաձիգ դիրքը, մազերի ճոխ հարդարանքը (ըստ էության, այն կրկնում է աջակողմյան պատկերախմբի հեծյալ արքայի մազերի հարդարանքը) և իրանական պատվանշանների մեջ կարևոր տեղ զբաղեցնող գոտին (камар), որը զարդարում է հետիոտն պատկերների պարեգոտները, վկայում են նրանց պատվավոր դիրքի, այլ ոչ թե պարտվածի նվաստ կացության մասին: Այս անհամապատասխանությունը նկատում է նաև Մ.-Լ. Շոմոնը: Անվանի հետազոտողը Սալմաստի ժայռաքանդակի վրա «անձնատվության եկած պարտված հայերի» արժանապատիվ կեցվածքը փորձում է բացատրել նրանով, թե իբր «Արտաշիրի նպատակը ոչ թե Հայաստանի ավերելը, այլ հպատակեցումն է եղել»[126]: Սակայն այս մեկնաբանությունը բացարձակապես չի համապատասխանում գրավոր աղբյուրների հաղորդումներին, որոնց համաձայն Հայաստանը նվաճվել է պարսիկների կողմից[127], այլ ոչ թե կամովին հպատակվել է նրանց[128]:

Բացի վերը նշվածից՝ ուշադրություն է գրավում պատկերագրական մի կարևոր մանրամաս ևս. Նախշ-ի Ռուստամի և Բիշապուրի հաղթական ժայռաքանդակներում Իրանի արքայից արքայի և նրա դիմաց ծնկաչոք հռոմեական կայսեր (հաղթողի և պարտվածի) կոնտրաստը լրացված է նաև նրանով, որ արքան աջ ձեռքով բռնել է սրի կոթը՝ կարծես դիտորդին ի ցույց դնելով, թե որն է իր հաղթանակի միջոցը: Սալմաստի բարձրաքանդակի վրա ևս արքաները պատկերված են սրերով: Սակայն նրանք

[126] **Chaumont M-L.**, Recherches sur L'Histoire D'Arménie, p. 175.
[127] **Ագաթանգեղոս**, 35: **Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց**, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913 (այսուհետ՝ Մ. Խորենացի), II. ՅՉ: **Zonaras Ioannes**, Annales, ex recensione Mauricii Pinderi, Bonnae, Bonnae impensis ed. Weberi, t. I-II, 1841-1844, XII, 21.
[128] Զոնարասը հաղորդում է, որ Հայաստանի վերջնական նվաճումից և հայոց Տրդատ II-ի փախուստից հետո վերջինիս «որդիներն ընկան պարսից տիրապետության տակ» (**Zonaras Ioannes**, XII, 21): Սակայն սրանից բնավ էլ չի բխում, որ նրանք պարսից իշխանությունն ընդունելու դիմաց արքայական իշխանություն են ստացել: Համաձայն Մ. Խորենացու վկայության, «Նա (Արտաշիրը) և զԱրշակունիսն, զմեկուսացեալսն ի թագէն և յԱյրարատն բնակելոյ, կարգէ ի նոյն տեղիս մտիք և ռոճկօք որպէս էինն» (**Խորենացի Մ.**, II, Յէ): , պարզորոշ երևում է, որ խոսքը թե՛ այստեղ, թե՛ Զոնարասի վերոնշյալ վկայության մեջ գահից հրաժարեցված և Հաշտյանք ու Առբերանի գավառներում բնակեցված Արշակունի սեպուհների մասին է:



աջ ձեռքով ոչ թե սուրը, այլ ձիու սանձերն են բռնել (նկ. 16 ա, բ, գ)՝ հուշելով դիտորդին, որ պատկերագրված հարաբերությունը վարչապետական բնույթ ունի: Առաջին հայացքից մանրուք թվացող այս դետալը ևս պատկերագրության լեզվով խոսում է այն մասին, որ արքաների ու նրանց դիմաց կանգնած անձանց հարաբերությունները հաղթողի ու պարտվածի հարաբերություններ չեն եղել: Հետևաբար՝ անհիմն է խնդրո առարկա կոթողը Սասանյանների «հաղթական ժայռաքանդակների» շարքին դասելը կամ նրա մեջ Արտաշիր I-ի կողմից հայ Արշակունիների մասնակի կամ ամբողջական հպատակեցման արտահայտությունը փնտրելը:

# 4
# ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԸ «ԿԱՌԱՎԱՐՉԱԿՑՈՒԹՅԱՆ» ԵՐԵՎՈՒՅԹԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Ինչպես արդեն նշել ենք, Մ. Մեյերը, Շ. Շահբազին, Մ. Կանեպան, Մ. Գրաբովսկին, Է. Շավարեբին և այլք, փաստարկելով Սալմաստի ժայռաքանդակի հեծյալների թագերի միօրինակությունը, այս հուշարձանը վերագրում են Արտաշիրի ու նրա որդի Շապուհի կառավարչակցության շրջանին (240-242 թ.թ.)։ Սակայն, հուշարձանի թվագրության այս մեթոդաբանությունը ընդունելի է միայն առաջին հայացքից, քանի որ նրանում կատարելապես անտեսվել են քաղաքական, ժամանակագրական և պատկերագրական բնույթի մի շարք իրողություններ, որոնց կարևորման դեպքում ժայռաքանդակի վերոնշյալ թվագրությունն ու նրա վրա ներկայացված տեսարանի մեկնաբանությունը դադարում է համոզիչ լինել։

Նախ և առաջ, քննության առարկա մեկնաբանության մեջ անտեսվել է այն պարզ իրողությունը, որ III դ. առաջին կեսին Մեծ Հայքը կենտրոնացված միապետություն էր, որտեղ բարձրագույն իշխանությունը, ներառյալ և պատերազմի, խաղաղության և արտաքին հարաբերությունների իրավունքը, պատկանում էր միայն «արքա Հայոց Մեծաց» կամ «Մեծ Հայքի արքա» տիտղոսը կրող Արշակունի գահակալին[129]։ Հետևաբար, եթե Սալմաստի ժայռաքանդակը ստեղծված լիներ Հայաստանի հպատակեցման առիթով, ապա պարսից կառավարչակից արքաներին թագավորական սուվերենության սիմվոլը հանձնողի դերում պետք է տեսնեինք միայն հայոց արքային։ Ենթադրվող արարողությանը ներկա մյուս անձինք՝ «հայոց արքայի մեծ վեզիր»-ը կամ, ասենք, գահաժառանգը, որքան էլ որ բարձր լինեին նրանց աստիճանները, այդ գործողությանը կարող էին հաղորդակցվել միայն անուղղակիորեն։ Այս հանգամանքը, բացառելով Սալմաստի ժայռաքանդակի աջակողմյան պատկերախմբի հետիոտն պատկերին իբրև «Հայաստանի մեծ վեզիր» նույնականացման հնարավորությունը, լրջորեն սասանում է ողջ հուշարձանի նշանակության վերաբերյալ Ֆ. Յուստիի, Վ. Էնսլինի և այլոց տեսակետը։

Վերոնշյալ մեկնաբանության մեջ սկզբունքային առարկություններ է հարուցում նաև կոմպոզիցիայում կառավարչակից արքաների թե՛ միմյանց, թե՛ երրորդ կողմի նկատմամբ ունեցած դիրքային հարաբերութ-

[129] **Կրկյաշարյան Ս. Մ.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (Մ. թ. ա. VI – Մ. թ. IV դ.դ.), Երևան, 2005, էջ 217-257։



յունը։ Եթե Սալմաստի ժայռաքանդակի վրա ներկայացված իրադարձությունը իսկապես վերաբերեր Արտաշիր I-ի ու Շապուհի համատեղ կառավարման շրջանին, ապա, կառավարչակցության փաստը, իբրև տերության քաղաքական կյանքի գերակա իրողություն, պետք է պատկերագրված լիներ նրա կոմպոզիցիայի կենտրոնում։ Ընդ որում, պայմանավորված պարսից արքաների իրավահարաբերություններով՝ սպասելի էր քանդակային մակերեսին նրանց պատկերների տեղաբաշխման երկու ձև։

Առաջին դեպքում, եթե համարենք, որ արքայազն Շապուհը 240 թվականից օժտված է եղել արքայական լիակատար իշխանությամբ, Սալմաստի բարձրաքանդակի վրա հայոց տիրակալի անձնատվությունն ընդունող պարսից արքաները պետք ներկայացվեին չափերով համազոր, դիրքով՝ երկուսն էլ հեծյալ (ինչպես որ կա), բայց դեմ դիմաց, իսկ պարտված հայոց արքան՝ նրանց միջև՝ ճակատային դիրքով կամ էլ դեմքով դեպի պարսից ավագ գահակալը դարձած։

Արտաշիրի պատկերը կրող վերջին դրամների կոմպոզիցիայի[130] քննությունը առաջադրում է Սասանյան կառավարչակից արքաների իրավահարաբերությունների այլ մեկնաբանություն։ Սրանց վրա Արտաշիրի վեհապետական «Իրանի արքայից արքա» տիտղոսի փոխարեն որդու կրած ավելի համեստ «արքա» տիղոսը, ինչպես նաև, հիշյալ դրամների վրա Շապուհի և նրա անձնական ատրուշանի պատկերների բացակայությունը[131] հաստատում է, որ ինչպես նախորդ դարաշրջաններից հայտնի կառավարչակցության տասնյակ դեպքերում, Արտաշիրի ու Շապուհի կառավարչակցության պարագայում ևս կրտսեր գահակալը պատվո, հեղինակության և իրավունքի հարաբերություններում ավագ գահակալին հավասար չի դիտվել։ Հետևաբար, եթե Սալմաստի ժայռաքանդակի ներկայացված իրադարձությունը կատարված լիներ նրանց կառավարչակ-

[130] **CNG Auction** 66 (19 May 2004), lot 853. Խնդրո առարկա դրամների դիմերեսին առկա լեգենդում ներկայացված է ոչ թե Արտաշիրի, այլ նրա կառավարչակից որդու անունը՝ šhpwhry MLK’ ’ry’n MNW čtry MN yzd’n = «Շապուհ, Իրանի արքա, ում տոհմը սերում է աստվածներից»։ Սակայն, նախկինի պես, այնտեղ վեհապետական բոլոր պատվանշաններով ներկայացված է Արտաշիրի աջ դարձած կիսադեմը, որի դիմաց՝ Անահիդի ձախ դարձած կիսադեմն է։ Նույն դրամների դարձերեսին ավանդական ձևով պատկերված է ատրուշան, իսկ կողքին զետեղված է հատկանշական լեգենդը՝ NWR['] [Z]Y ['r]t[x]štr = «Արտաշիրի կրակ», ինչը պարզորոշ վկայում է, որ դրամը հատվել է դեռևս Արտաշիրի կենդանության օրոք։

[131] Վ. Լուկոնինը և այլք, խնդրո առարկա դրամների երեսին Արտաշիրի պատկերի դիմացի պատկերը նույնականացնում են Շապուհի հետ (**Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 55. **Wiesehöfer J.**, Ardašir I i. History, *EIr,* Vol. II, Fasc. 4, pp. 371-376)՝ աչքաթող անելով մի կարևոր հանգամանք, այն, որ հասուն տարիքի հասած պարսից գահաժառանգը չէր կարող անմորուս պատկերվել։

ցության օրոք, Արտաշիրի նկատմամբ Շապուհի de jure ստորադասությունը պետք է ընդգծված ձևով արտահայտված լիներ կոմպոզիցիայի մեջ:

Կառավարչակցության իրողության՝ հռոմեական արվեստում հայտնի դրսևորումների քննությունը վեր է հանում պատկերագրական սխեմաների մի քանի օրինակներ, որոնք ավել կամ պակաս չափով պետք է արտահայտվեին նաև իրանական կերպարվեստում՝ Արտաշիր I-ի ու Շապուհի կառավարչակցության փաստն արտահայտելու ժամանակ: Մի դեպքում, ինչպես որ Մյունխենի Ստաատլիչ թանգարանում 2459 համարի տակ պահվող այսպես կոչված «Քաղքեդոնի հեմմ»-ի[132] կամ Սեպտիմիուս Սևերուսի և նրա՝ տակավին 198 թ. կառավարչակից Օգոստոս հռչակված որդու՝ Անտոնինուս Կարակալլայի պատկերներով ոսկյա դրամի[133] (նկ. 17) վրա են, Արտաշիր I-ն ու Շապուհն էլ պետք է ներկայացվեին կողք կողքի՝ բայց Արտաշիրն առաջին պլանում, հնարավոր է, չափերով մի քիչ ավելի մեծ[134]:

Ավելի ուսանելի են Հռոմում Սեպտիմիուս Սևերուսի թողարկած 204 թ. արծաթե և 209 թ. ոսկե դրամների դարձերեսների կոմպոզիցիաները (նկ. 18 ա, բ): Առաջինի վրա աջ դարձած դիրքով ներկայացված են ուղանկյուն հարթակին դրված կուրուլային բազկաթոռներին նստած Սեպտիմիոս Սևերոս կայսրն ու իր կառավարչակից որդիները՝ Անտոնինուս Կարակալլան ու Գետան, իսկ նրանց առջևում՝ սափոր ու մի

132 «Քաղքեդոնի հեմմ»-ի վրա ներկայացված են հռոմեական կառավարչակից կայսրեր Կալիուս Կալվինուս Բալբինուսի (22.04.238 թ. – 29.07.238 թ.), Մարկուս Կլոդիուս Պուպիենուս Ավագի (22.04.238 թ. – 29.07.238 թ.) և Գորդիանուս III-ի (22.04.238 թ. – 11.02.244 թ.) կիսանդրիները (Տե՛ս **Levit-Tawil D.**, The Rock Relief at Darabgird…, p. 173, Fig. 8): Առաջին երկուսը, որոնք կայսերական աստիճանից զատ կրում էին նաև «Pontifex Maximus»-«Գերագույն քուրմ» տիտղոսը, որպես լիովին իրավահավասար կայսրեր, պատկերված են դիմահայաց դիրքով և կայսերական պսակներով զարդարված: Մինչդեռ երիտասարդ Գորդիանուսը, որը կառավարչակից հայտարարվելուց հետո ստացել էր միայն Կեսար տիտղոսը, ներկայացված է Բալբինոսից հետո՝ երկրորդ պլանում:

133 Տե՛ս **RIC** 4A, 305; **Triton Auction** VI, lot 929, lot 931.

134 Սալմաստի ժայռաքանդակի վրա ձախակողմյան հեծյալի պատկերը 27 սմ-ով մեծ է աջակողմյան հեծյալի պատկերից: Առաջին հայացքից այս տարբերությունը կարելի է համարել հին առաջավորասիական պատկերագրության «ոսկե կանոնի»՝ «աստիճանակարգության» սկզբունքի արտահայտություն: Սակայն, նշված տարբերությունը միջին հեռավորությունից (ասենք՝ Խան Թախտ ժայռի ստորոտից) նայելու դեպքում դժվար նշմարելի էր և հազիվ թե բավարարեր հուշարձանի «պատմողական» նշանակությանը: Արաբ մատենագիրների վկայությամբ՝ Արտաշիր I-ը եղել է հաղթահասակ անձնավորություն: Չի բացառվում, որ նրան ավելի մեծ պատկերելով՝ հուշարձանի հեղինակը փորձել է այդ կերպ հավատարիմ մնալ պատմականության սկզբունքին:



լիկտոր: Պատվանդանից ցած պատկերված է մի քաղաքացի, որը աջ ձեռքը մեկնել է դեպի կայսրերը: 209 թ. դրամի դարձերեսին կառավարչակիցները ներկայացվել են նույնպիսի հարթակի վրա՝ դարձյալ բազկաթոռներին բազմած, միայն թե ձախ դարձած դիրքով: Նրանց ետևում պատկերված է մի սպա, իսկ առջևում՝ Ազատության դիցուհին (Libertas)՝ աբակա և ազատության եղջյուր բռնած: Այստեղ էլ պատվանդանից ցած պատկերված է մի քաղաքացի, որը աստիճանասանդուղքով բարձրանում է դեպի կայսրերը: 204 թ. դրամի «FELICITAS SAECVLI = Դարի բարեբախտություն» և երկրորդի «LIBERALITAS AVGGVI = Օգոստոսների առատաձեռնությունը» լեգենդներն ու հորինվածքների ընդհանուր հանդիսավորությունը հուշում են, որ ներկայացված են գործողություններ, որտեղ երեք կառավարչակիցները հանդես են եկել միասնաբար: Եվ որ հատկանշական է, պատվանդանից ցած պատկերված քաղաքացու կերպարով մարմնավորված հռոմեական հասարակության պատասխան գործողությունն էլ ուղղված է ոչ թե կայսրերին առանձին-առանձին, այլ երեքին համատեղ:

Մեր տեսանկյունից վերոնշյալ դրամների դարձերեսների պատկերագրությունը շատ կարևոր է Սալմաստի ժայռաքանդակի մասին հնչեցված մեկնաբանության քննության համար: Մի կողմից այն թույլ է տալիս ընդունելու Արտաշիր I-ի և Շապուհի կառավարչակցության փաստը գծային դասավորությամբ ներկայացնելու հնարավորությունը: Բայց մյուս տեսանկյունից էլ բացառում է միևնույն քանդակային մակերեսի վրա կառավարչակիցների կողմից պարտված «հայոց արքայի անձնատվություն»-ն առանձին-առանձին ընդունելու տեսարանների ստեղծման հավանականությունը, քանի որ դա կհակասեր կառավարչակցության երևույթի պատկերագրության տարածված սխեմային: **Ինքը՝ պատվիրատուն չէր կարող չգիտակցել, որ այդ ձևով արմատապես խեղաթյուրում է ներկայացվող պատմական իրադարձության ժամանակային և քաղաքական մթնոլորտը և դրանով իսկ դիտորդին անհաս ու անընթեռնելի էր դարձնում այն գաղափարը, որի ազդարարման համար կյանքի էր կոչում քննության առարկա ժայռակերտ հուշարձանը:** Այս տեսանկյունից Սալմաստի ժայռաքանդակի պատկերների միջև առկա դիրքային հարաբերությունները հուշարձանի «գավառական բնույթով», «պարթևական արվեստի գծային ոճի ազդեցությամբ» և կամ քանդակագործների կատարողական հմտությունների ցածր մակարդակով պայմանավորելը դառնում է խնդրահարույց կոմպոզիցիան ինչ-որ կերպ մեկնաբանելու և այն պատմագիտության մեջ կարծրացած տեսություններին հարմարեց-

նելու փորձ և ոչնչով չի նպաստում Սալմաստի ժայռաքանդակի իրատեսական մեկնաբանությանը:

Վերջապես, քննարկվող մեկնաբանությունը հարուցում է նաև ժամանակագրական բնույթի առարկություններ: Այսպես, Սալմաստի ժայռաքանդակի վրա երկու հեծյալների միօրինակ թագերով պատկերվելու իրողությունից բնավ էլ անառարկելորեն չի հետևում, թե ներկայացված իրադարձությունը կատարվել է հենց Արտաշիրի ու նրա գահաժառանգ որդու կառավարչակցության ժամանակաշրջանում: Տվյալ դեպքում անտեսված այն փաստը, որ Շապուհը Արտաշիր I-ի թասակաձև-կոռոմբոսավոր թագը կրել է ոչ միայն կառավարչակցության շրջանում (240 թ. ապրիլի 12-ից մինչև Արտաշիր I-ի վախճանը՝ 242 թ. փետրվարի սկիզբներ[135]), այլ նաև Արտաշիրի վախճանից մինչև իր պաշտոնական ինվեստիտուրան ընկած ժամանակահատվածում (242 թ. փետրվարի սկզբներից մինչև 242 թ. ապրիլի 12), երբ որ նա Իրանի միահեծան տիրակալն էր[136]: Դրա վառ ապացույցը Շապուհ I-ի ամենավաղ՝ Դարաբգիրդի ժայռաքանդակն է, որտեղ Սասանյան նոր տիրակալը պատկերված է հոր թասակավոր թագով: Ի հավելումն դրա՝ Ն. Շինդելը ներկայացնում է նաև Շապուհի նորահայտ պղնձե դրամներ, որոնց երեսին պատկերված է Շապուհ I-ը՝ թասակավոր-կոռոբոսավոր թագով և ծածանվող դիադեմայով[137]:

Արտաշիր I-ի թագով Շապուհի միանձնյա կառավարման փաստի կարևորումը թույլ է տալիս առաջադրելու Սալմաստի ժայռաքանդակի

[135] Արտաշիրի կառավարման վերջին տարվա և նրա մահվան թվականի հարցերը ցայսօր գիտական բանավեճի առարկա են մնում: «Մանիի Քյոլնյան կոդեքս»-ի տվյալների հիման վրա ներկայումս ընդունված է համարել, որ Արտաշիրն ապրել է մինչև 242 թ. փետրվարի սկզբները (**Henrichs A. & Koenen L.**, Der Kölner Mani-Kodex (P. Colon. inv. nr. 4780), *ZPE* 48, 1982, S. 4ff., 44; **Wiesehöfer J.**, Ardašir I i. History, *EIr*, Vol. II, Fasc. 4, pp. 371-376 ):

[136] Այս պարադոքսը նկատել է նաև Մ. Մեյերը, որը, զուգահեռ անցկացնելով Սալմաստի և Դարաբգիրդի ժայռաքանդակների միջև և փաստելով սրանց վրա Շապուհի թագի ձևը, անում է երկու հարցադրում. «Առաջին՝ եթե երկու ժայռաքանդակներն էլ ստեղծվել են Շապուհի կառավարման օրոք, ինչու՞ նա չի կրում իր սեփական թագը, որը հայտնի է նրա դրամներից: Երկրորդ՝ եթե նրանք կերտվել են մինչև Շապուհի 240 թ. թագադրությունը, ինչու՞ նա չի կրում գլխի այն նույն պատիվը, որով նա ներկայացված է Արտաշիրի ժայռաքանդակների վրա» (**Meyer M.**, Die Felsbilder Shapurs I, *JDAI* 105, 1990, S. 269 ff..

[137] See **Schindel N.**, Sylloge Nummorum Sasanidarum Israel, Wien, 2009, p. 13, 48, nos. 22-23; **Idem.** The 3rd Century "Marw Shah" Bronze Coins Reconsidered, in *Commutatio et Contentio. Studies in the Late Roman, Sasanian, and Early Islamic Near East in Memory of Zeev Rubin*, H. Börm, J. Wiesehöfer (eds.), Düsseldorf, 2010, p. 30, Pl. III no. 12 and Pl. IV no. 13; See also **Savarebi E.**, Some Remarks on a Newly-Discovered Coin Type of Shāpūr I, *SI* 43, (2014), p. 115, n. 33.



կոմպոզիցիայի նոր՝ Շ. Շահբազիի, Մ. Կանեպայի և այլոց առաջարկած մեկնաբանությունից սկզբունքորեն տարբեր և տեսականորեն ավելի ընդունելի մեկնաբանություն. **Խան Թախտ ժայռի միևնույն քանդակային մակերեսի վրա ներկայացվել են ոչ թե մեկ, այլ Արտաշիր I-ի միանձնյա կառավարման վերջին ժամանակներում և Շապուհ I-ի միահեծան գահակալության ամենավաղ շրջանում տեղի ունեցած երկու միանման իրադարձություններ:**

Թվում է՝ վերոնշյալ վարկածի դեմ է խոսում այն փաստը, որ ժայռաքանդակի երկու պատկերախմբերն իրարից տարանջատված չեն, որի պատճառով էլ դիտողի մոտ դրանք մեկ ամբողջական կոմպոզիցիայի տպավորություն են ստեղծում: Անշուշտ, 17 դարերի հեռավորությունից մենք չենք կարող հաստատապես կռահել այդ բաժանարար դետալի բացթողման պատճառները: Տեսականորեն, կարելի է կարծել, որ քանդակային մակերեսի անձուկության պատճառով քանդակագործները պարզապես շռայլություն են համարել սահմանաբաժան գծի անցկացումը: Չի բացառվում, որ այդ դետալի բացակայության պատճառը ժայռաքանդակի անավարտությունն է: Եվ վերջապես, հնարավոր է, որ հուշարձանի ստեղծողն ինքն է կանխամտածված ձևով հոգացել, որ դիտողը նմանօրինակ երկու պատկերախմբերում կատարվող միօրինակ գործողությունները ընկալի ոչ թե որպես առանձին-առանձին եղելություններ, այլ որպես մեկ ամբողջական երևույթի անքակտելի բաղադրիչներ և հանգի մի ընդհանուր գաղափարի…: Վերջապես, պետք է նկատի առնել և այն, որ Սալմաստի ժայռաքանդակի կոմպոզիցիայում երկու պատկերախմբերի չտարանջատման հանգամանքը միանգամայն հարիր է հաջորդող դեպքերը, ինչպես նաև ժամանակագրորեն իրարից ոչ հեռու իրադրածությունները միևնույն տեսարանում համակցված ցուցադրելու հին արևելյան գեղարվեստական սովորությանը[138]:

Այն, որ Սալմաստի ժայռաքանդակի երկու պատկերախմբերում ներկայացված են տարաժամանակյա իրադարձություններ, հաստատում են նաև պատկերագրական իրողությունները: Քանի որ երկու հեծյալների արքայական գլխավոր պատվանշանները՝ թագերը, միօրինակ են, սպա-

[138] **Overlaet B.**, A Roman Emperor at Bishapur and Darabgird: Uranius Antoninus and the Black Stone of Emesa, *IrAn* 44, 2009, p. 470. Վերոնշյալ գեղարվեստական սկզբունքը հստակորեն արտահայտված է նաև Արտաշիր I-ի Նախշ-ի Ռուստամ I, Շապուհ I-ի Նախշ-ի Ռուստամ IV, Բիշապուհ I, Բիշապուհ II, Բիշապուհ III, Դարաբգիրդի, Վարահրան I-ի Բիշապուհ V, Շապուհ II-ի (կամ Արտաշիր II-ի) Տանգ-ի Բոստան I ժայռաքանդակների և Խոսրով II-ի Տանգ-ի Բոստանի որսի տեսարանով որմնաքանդակի վրա:

սելի կլիներ, որ նրանց արքայական հանդերձանքի մյուս տարրերը նույնպես կլինեն միանման: Մինչդեռ, հեծյալների հագուստի ու զարդարանքի, ինչպես նաև նրանց ձիերի հարդարանքի մեջ առկա են տարբերություններ, որոնք ցայսօր հուշարձանի թվագրության գործում պատշաճ ուշադրության չեն արժանացել: Այսպես օրինակ, ձախակողմյան հեծյալի տաբատի փողքերը լայնանում են ծանր, ուղղաձիգ ծալքերով (նկ. 16 բ): Մինչդեռ կարևոր է նկատել, որ արքայական նորաձևության այս տարրը երևան է գալիս միայն Արտաշիրի կերտած վերջին ժայռաքանդակի՝ Նախշ-ի Ռուստամ I-ի վրա և մեկընդմիշտ դուրս է մղվում Շապուհ I-ի գահակալության հետ: Ի տարբերություն առաջինի, աջակողմյան հեծյալի տաբատն ավելի թեթև է, վերից վար ժանեկազարդ (նկ. 16 գ) և պատճենում է Շապուհ I-ի կերտած վիմաքանդակների վրա առկա ոճը (նկ. 16 ա): Տարբեր են նաև արքաների մանյակները. Արտաշիրի մանյակն ավելի ծանր ու կոպիտ է, քան Շապուհի մանյակը: Վերջապես, զանազան են նաև արքաների ձիերի սանձասարքերը:

Քանի որ մենք գործ ունենք պաշտոնական պատկերաքանդակի հետ, հազիվ թե հիմնավոր կլինի համարելը, թե Արտաշիրի արքունիքում կառավարչակից արքա Շապուհը հագուստի ձևի և ոճի ընտրության ազատություն է վայելել և այդպիսով, զուգահեռաբար գործածվել են արքայական նորաձևության երկու առանձին ոճեր: Այլ խոսքով՝ խնդրո առարկա պատկերագրական տարրերին պետք է տալ ***terminus non post quam***-ի նշանակություն, իսկ Սալմաստի ժայռաքանդակի վրա սրանց համադրությունը պետք է համարել պատկերագրական ապացույցն առ այն, որ հուշարձանի երկու պատկերախմբերում ներկայացված են իրար մոտ, բայց և տարբեր ժամանակներում կատարված իրադարձություններ: Այս տեսանկյունից շատ հավանական է, որ Սալմաստի ժայռաքանդակի նախագծող նկարիչը, Արտաշիրին ու Շապուհին ներկայացնելով նրանց հատկանշական տաբատներով ու մանյակներով, պարզապես ցանկացել է բավարարել իր ժայռակերտ հուշարձանի պատմողականության պահանջը՝ դիտողին հուշելով, որ Սալմաստի ժայռաքանդակի ձախակողմյան պատկերախումբը ներկայացնում է Արտաշիր I-ի կառավարման վերջերին, իսկ աջակողմյան պատկերախումբը՝ Շապուհ I-ի միահեծան գահակալության սկզբին կատարված իրադարձություններ:



## 5
## ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԻ ՆՈՐ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գերմանացի մշակութաբան Վ. Հինցն առաջինն էր, որ Սալմաստի հուշակոթողը դարձրեց առանձին ուսումնասիրության առարկա՝ հրապարակելով նաև հուշարձանի մեծապլան լուսանկարը: Խնդրին նվիրված ուշագրավ հոդվածի մեջ հեղինակը ժայռաքանդակի ստեղծման ժամանակի և նրա պատկերների նույնականացման հարցերում հավատարիմ է մնում «ավանդական» կարծիքին[139]: Ընդունելով, որ հեծյալ և հետիոտն անձանց միջև փոխանակության առարկան «կամ օղակ է, կամ գլխադիր»՝ նա ևս Սալմաստի ժայռաքանդակի մեկնաբանությունը կատարում է հայ-պարսկական պայքարի մասին ընդհանուր պատկերացումների հենքի վրա: Վ. Հինցի կարծիքով ձախակողմյան հետիոտն պատկերը մարմնավորում է հայոց արքային, ով, ջախջախվելով Արտաշիրի կողմից, հանձնվել է նրա ողորմածությանը և, ներում ստանալով, վերստին նշանակվել է Հայաստանի կառավարիչ[140]: Դրան համապատասխան էլ նա առարկում է Ֆ. Յուստիին. «Ինձ ավելի հավանական է թվում հակառակ միտքը. հաղթողները պարտվածներին օժտում են Հայաստանի սատրապի իշխանությամբ»[141]: Այս մեկնաբանությունը Վ. Հինցը կրկնում է 1969 թ. հրատարակած իր մենագրության մեջ, սակայն էապես սրբագրում է Արտաշիրից շնորհ ստացող պատկերի կարգավիճակը. «Այս գործողության նպատակը հավանաբար կանգնած մարդուն Հայաստանում թագավոր նշանակելն է»[142]: Վ. Հինցի կարծիքով «Արտաշիրի կողմից պաշտոն ստացող մարդը կարող է լինել պարթևական ծագում ունեցող Խոսրով I-ը (ըստ Վ. Հինցի՝ մոտավորապես 225-250 թ.թ.), որը կոչվում էր նաև Արշակ II, իսկ նրա մեծ վեզիրին հավանաբար պարգևատրում է թագաժառանգ Շապուհը»[143]:

Վ. Հինցի մեկնաբանությունը զգալի ազդեցություն է թողել Սալմաստի ժայռաքանդակի հետագա ուսումնասիրությունների վրա: Ռ. Գիրշմանը[144], Պ. Կելմեյերը[145], Լ. Վանդեն Բերգը[146], Հ. Լուշեն[147], Հ. ֆոն Գալլը[148],

[139] **Hinz W.**, Das Sassanidische Felsreliefs von Salmas, *IrAn* 5, 1965, S. 148 ff.; **Idem** Altiranische Funde und Fourschungen, S. 135.
[140] **Ibid.**, S. 158 ff.
[141] **Ibid.**, S. 156.
[142] **Hinz W.**, Altiranische Funde und Furschungen, S. 135, Tafel 63-71.
[143] **Ibid.**, S. 135.
[144] **Ghirshman R.**, Bîchâpour, Vol 1, Paris, 1971, S. 97ff.
[145] **Calmeyer P.**, Zur Genese altiranischer Motive: V. Synarchie, *AMI* 9, 1976, S. 63 ff..
[146] **Vanden Berghe L., Haerinck E. and Smekens E.**, Reliefs rupestres…, 67.

Դ. Լևիտ-Թավիլը[149] պաշտպանել են Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի և հետիոտն պատկերների նույնականացման նրա վարկածը: Նմանապես և Է. Շավարեբին, իր արդեն հիշատակված հոդվածի երկրորդ մասում աստիճանաբար հեռանալով Գ. Վիդենգրենի հիպոթեզից, հետիոտն պատկերների նույնականացման և հուշարձանի նշանակության հարցերում հակվում է դեպի Վ. Հինցի մեկնաբանությունը: Ընդ որում, հեղինակն ի հավելումն այլոց կողմից արդեն հնչեցված փաստարկներին, վկայակոչում է նախ Տաբարիի, ալ-Յակուբիի, Բալամիի, Իբն-ի Ատիրի հպանցիկ վկայություններն այն մասին, որ Հայաստանը հպատակեցվել է դեռևս Արտաշիր I-ի օրոք[150], ապա մեջբերում է ալ-Նուվայրիի (1272-1332 թ.թ.) «Նիհայաթ ալ Արաբի» *(Nihāyat al-Ārab fī funūn al adab)* հանրագիտարանից քաղած հստակ, բայց, ըստ էության, ʽαπαχ λήγομενον հաղորդումը Ատրպատականում հայոց դեմ Արտաշիր I-ի տարած հաղթության վերաբերյալ[151]: Ըստ այդմ էլ Է. Շավարեբին եզրակացնում է, որ Սալմաստի ժայռաքանդակի վրա ներկայացված է Արտաշիրի ու Շապուհի կառավարչակցության ժամանակաշրջանում պարտված հայերի հետ պարսիկների կնքած խաղաղությունը,[152] որը պատկերագրորեն արտահայտվել է հաղթողների կողմից իշխանության նշանները պարտվածներին վերադարձնելով[153]:

Անշուշտ, Սալմաստի ժայռաքանդակի արտահայտած պատմական իրողության բացահայտման առումով Վ. Հինցի առաջադրած և այլոց կողմից զարգացված վերոնշյալ մեկնաբանությունը պարունակում է նկատելի առաջընթաց: Այդուհանդերձ, նրանում մի կողմից անչափ շատ են ներքին հակասությունները, մյուս կողմից խիստ անբավարար է փաստարկվածությունը, որպեսզի մենք այն համարենք ընդունելի:

Այսպես, հայոց Արշակունիների ցուցակում Խոսրով անունով առաջին արքան Վաղարշ II-ի որդին էր, որի գահակալությունն ընդունված է

[147] **Luschey H.**, Ardašīr I: ii. Rock Reliefs, *EIr*, Vol. 2 (1986), p. 379.
[148] **Von Gall H.**, Das Reiterkampfbild in der iranischen und iranich beeinflussten Kunst parthischer und sasanidischer Zeit, Berlin, 1990, S. 100.
[149] **Levit-Tawil D.**, The Sasanian Rock Relief at Darabgird A Re-evaluation, p. 161.
[150] **Shavarebi E.**, A Reinterpretation of the Sasanian Relief at Salmas, p. 126.
[151] «Նրանց (հայերի) բոլոր արքաները հավաքվեցին մարտնչելու նրա (Արտաշիրի) դեմ և նրանք միաբանվեցին ճակատամարտելու այնտեղ՝ Ատրպատականի և Հայաստանի միջև: Եվ մղեցին կատաղի կռիվ, մինչև որ երկու կողմերից շատերը սպանվեցին: Սակայն հաղթանակը մնաց Արտաշիրի հետ, և նրանք դիմեցին նրա ողորմածությանը: Եվ նա (Արտաշիրը) տվեց նրանց ապահովություն և...» (տե՛ս **Shavarebi E.**, A Reinterpretation of the Sasanian Relief at Salmas, p. 126):
[152] **Ibid.**, p. 129.
[153] **Шавареби Э.**, К Датировке рельефных изображений Ардашира I, с. 62.



թվագրել 198-215 թ.թ.: Սակայն, ինքնին պարզ է, որ Անտոնինոս Կարակալլայի կողմից 215 թ. դավադրորեն ձերբակալված և բանտում վախճանված հայոց Խոսրով I արքան երբեք չէր կարող Արտաշիրի ժամանակիցն ու ախոյանը լինել: Դիոն Կասսիոսի համաձայն Խոսրովին Մեծ Հայքի գահի վրա հաջորդել է սրա որդի Տրդատը II-ը, որը 217 թ. թագ է ստացել Օպիլիուս Մակրինուս կայսրից[154]: Հայկական պատմական ավանդության մեջ որպես Արտաշիր Պապականի ժամանակակից ու հակառակորդ հայոց արքա հիշատակվում է ոմն Խոսրով (Խոսրով Մեծ): Սակայն, ինչպես իրավացիորեն նշում է Հ. Մանանդյանը, «Հայ պատմիչների մոտ վիպական Խոսրովին վերագրված պարսիկների դեմ պատերազմները հիշողություն են, իրապես այն երկարատև ու համառ կռիվների, որ պատմական այս Տրդատ II-ն՝ իբրև հռոմեացիների դաշնակից ու վասալ, վարել էր Արտաշիր I-ի և Շապուհ I-ի դեմ»[155]: Հետևաբար, կարելի է ավել կամ պակաս վստահությամբ Դիոնի հիշատակած Տրդատին նույնացնել Զոնարասի հիշատակած Տրդատի հետ, որի օրոք հայ-պարսկական հակամարտությունը հասել է իր հանգուցալուծմանը[156]:

Վ. Հինցի մեկնաբանության քննադատության առումով կարևոր է նկատել, որ հայկական ավանդության մեջ Տրդատ II-Խոսրով Մեծի հակապարսկական պայքարը ներկայացված է իբրև անհաշտ մի հակամարտություն, որը բացառել է Սասանյանների հետ ամեն տեսակի համաձայնության, զինադադարի կամ հաշտության, առավել ևս, եթե դատենք Սալմաստի ժայռաքանդակի վրա ներկայացված իշխանության օղակի շնորհման փաստի տեսանկյունից, հպատակության հավանականությունը: Իհարկե, կարելի է առարկել՝ ասելով, որ հայկական վաղ միջնադարյան այսպես կոչված «Պարսից պատերազմ» ավանդազրույցը իր էպիկական բնույթի պատճառով չէր կարող իր մեջ տեղ տալ նման հաշտության կամ հպատակության փաստին: Սակայն այդ դեպքում ինչպե՞ս հասկանալ հունա-հռոմեական աղբյուրների լռությունը ենթադրվող հայ-պարսկական սեպարատ հաշտության, առավել ևս, հռոմեական պրոտեկտորատից Հայաստանի դուրս գալու և պարսից հպատակության տակ անցնելու մասին: Այդ իրադարձությունը, եթե այն իրապես տեղի ունեցած լիներ, հռոմեական իրականության վրա պետք է որ ավելի ծանր և ավելի ցնցող տպավորություն թողներ, քան, ասենք Մծբինի և Խառանի անկումը: Եվ այս դեպքում սպասելի կլիներ, որ հռոմեական պատմագրությունը հերթական

[154] **Dio Cass.**, LIIIX, 27. 4.
[155] **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մաս Ա, Երևան, 1957, էջ 85:
[156] **Zonaras**, XII, 21.

անգամ Արևելքում Հռոմի ձախողումների քավության նոխազը կդարձնի Հայաստանն ու հայոց արքային: Մինչդեռ, հունահռոմեական պատմագիրները, որոնք ուղղակի թե անուղակի օգտվել են III դ. հեղինակ Դեկսիպոս Աթենացու մեզ չհասած երկից[157], միաբերան փաստում են հակառակ իրողությունը: Այսպես, Էվագրիոսը գրում է. «Մեծ Հայաստանը (Մեծ Հայքը) առաջներում հռոմեացիների հպատակն էր: Բայց Փիլիպպոսը, հաջորդելով Գորդիանոսին, տվեց այն Շապուհին, որով Փոքր Հայքը[158] մնաց հռոմեացիների ձեռքում, իսկ բոլոր մնացածը՝ պարսիկների»[159]:

Նույնի վերաբերյալ Զոնարասը պատմում է, թե Գորդիանուսին հաջորդած Փիլիպպոսը «հաշտություն կնքելով պարսից թագավոր Շապուհի հետ, դադարեցրեց պատերազմը պարսիկների հետ և զիջեց նրանց Միջագետքը և Հայաստանը...»[160]:

Վերջապես՝ Զոսիմոսն այդ առթիվ գրում է. «Շատ ժամանակ անցնելուց հետո Գորդիանուսը պատերազմեց Պարսից թագավորի դեմ և պատերազմի ընթացքում սպանվեց: Սակայն նաև այս հաղթանակից հետո պարսիկները ոչ մի բան չգրավեցին հռոմեացիների հպատակության տակ եղածներից: Բայց երբ Փիլիպպը իշխանության գլուխ անցավ, նա պարսիկների հետ կնքեց ամենաամոթաբեր հաշտությունը»[161]:

Մեր մի հոդվածում ցույց ենք տվել, որ, Զոսիմոսի «εἰρήνην αἰσχίστην – ամենաամոթաբեր հաշտություն» արտայատությունն ուղղակիորեն ածանցված է 363 թ. պարսկա-հռոմեական հաշտության պայմանագրին Ամմիանոս Մարկելլինոսի տված «*inpium* – ուխտազանց, ամոթալի» որա-

[157] **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն..., h. Բ, մաս Ա, էջ 82, ծան. 5:
[158] Էվագրիոսի «Փոքր Հայք» արտահայտության տակ պետք է հասկանալ «Մեծ Հայքի փոքր մասը», քանի որ, նախ՝ նախադասության սկզբնամասում խոսքը հենց Մեծ Հայքին է վերաբերում և, բացի այդ, III դ. կեսերին Փոքր Հայքը վաղուց արդեն հռոմեական պրովինցիական տարածք էր, այլ ոչ թե հռոմեահպատակ վարչաքաղաքական միավոր (**Մելիքյան Ա.**, Պարսկա-հռոմեական հակամարտության և Միսիխիսի պայմանագրով Հայաստանի դե յուրե բաժանման հարցի շուրջ, *ՎՄ*, 1 (56), 2006, էջ 51):
[159] **Evagres**, Historiae Ecclesiasticae, V. 7, ed Bidez-Parmentier, Londres, 1898, p. 203: "...τῆς πάλαι μὲν μεγάλης 'Αρμενίας, ὕστερον δέ Περσαρμενίας ἐπονομασθείσης - ἥ πρώην 'Ρωμαίοις κατήκοος ἦν, Φιλίππου δὲ τοῦ μετὰ Γορδιανὸν καταπροδόντος αὐτὴν τῷ Σαπώρῃ, ἡ μὲν κληθεῖσα μικρα 'Αρμενία πρὸς 'Ρωμαίων ἐκρατήθη ἡ δέ γε λοιπὴ πᾶσα πρὸς Περσῶν".
[160] **Zonaras**, XII, 19: "… σπονδὰς δὲ πρὸς Σαπώρην θεμένος τὸν τῶν Περσῶν βασιλευόντα, τὸν πρὸς Πέρσας κατέλυσε πόλεμον,παραχωρήσας αὐτῖς Μεσοποταμίας καὶ 'Αρμενίας ".
[161] **Zosimi** comitis et exadvocati fisci historia nova, edidit Ludvicus Mendelssohn, Lipsiae, in aedibus B. G. Teubneri, 1887. Lib. III. 32, "… χρόνοις δὲ πολλοῖς ὕστερον Γορδιανοῦ τοῦ βασιλέως Πέρσαις ἐπιστρατεύσαντος καὶ ἐν μέσῃ τῇ πολεμία πεσόντος, οὐδὲ μετὰ ταύτην τὴν νίκην οἱ Περσαί παρεσπάσαντό τι τῶν ἤδη 'Ρωμαίοις ὑπηκόων γεγενημένων, καὶ ταῦτα Φιλίππου διαδεξαμένου τὴν ἀρχὴν καὶ εἰρήνην αἰσχίστην πρὸς Πέρσας θεμένου".



կումից[162]: Այն ունի իրավաքաղաքական բովանդակություն[163] և, ինչպես Հովիանոսի պարագայում, այստեղ ևս «ամոթանք»-ը վերաբերում է ոչ թե Հռոմի ունեցած տարածքային կորստին, այլ իր դաշնակից Հայաստանի նկատմամբ ունեցած պարտավորություններից Փիլիպպի Արաբի միակողմանիորեն հրաժարվելուն: Դա պարզորոշ է դարձնում, որ մինչև 244 թ. Փիլիպպ Արաբ կայսեր ու Շապուհ I-ի կնքած հաշտության պայմանագիրը Հայաստանը de jure գտնվել է հռոմեական հովանավորության տակ: Ի հավելումն դրա՝ Զոնարասը նույնիսկ հստակեցնում է, որ մինչև Գալլոս կայսեր գահակալությունը (251-253 թ.թ.) հայոց արքա Տրդատն աննկուն է մնացել պարսից դեմ պայքարում[164]:

Վերոնշյալ իրողությունները ամբողջովին հիմնազրկում են 240-242 թ.թ. Հայաստանի կրած խորտակիչ պարտության, հայոց արքայի՝ Սասանյան տիրակալներին անձնատուր լինելու և, պարսից գերիշխանությունը ընդունելու պայմանով նրանցից իշխանությունը հետ ստանալու մասին Վ. Հինցի առաջադրած և պատմագիտության մեջ բավականին տարածված մեկնաբանությունը:

Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի, հետիոտն պատկերների նույնականացման և հուշարձանի նշանակության հիմնախնդիրներին միանգամայն այլ մեկնաբանություն է առաջարկել Ս. Երեմյանը: Նրա կարծիքով այս հուշարձանը ստեղծվել է 261 թ., իսկ առիթը եղել է արքայից արքա Շապուհ I-ի կողմից իր թագաժառանգ որդի Որմիզդ-Արտաշիրին Հայաստանի գահին նստեցնելը[165]:

Ս. Երեմյանի կողմից 1966 թ. առաջարկված այս մեկնաբանությունը հետագայում ոչ միայն ամրագրվեց «Հայ ժողովրդի պատմություն» ՀՍՍՀ ԳԱ հրատարակության II-րդ հատորում[166], այլև պաշտպանվեց մի շարք հայ[167] և օտարազգի ուսումնասիրողների կողմից[168]: Ցավոք, ո՛չ անվանի

[162] **Ammiani Marcellini** Rerum gestarum libri qui supersunt. Rec. V. Gardthausen, Vol. 1-2, Lipsiae, 1874-1875. Lib. XXV, 7. 12: "Quibus exitiale aliud accessit et inpium, ne post haec ita conposita Arsaci poscenti contra Perses ferretur auxilium, amico nobis semper et fido".
[163] **Մելիքյան Ա.**, Պարսկա-հռոմեական հակամարտության և Միսիխիսի պայմանագրով Հայաստանի դե յուրե բաժանման հարցի շուրջ, էջ 52-53:
[164] **Zonaras**, XII, 21.«Սրա (Գալլուսի-Ա. Մ.) օրոք նորից աշխուժացան պարսիկները, որոնք հասան ու գրավեցին Հայաստանը: Այդ պատճառով էլ, [հայոց] արքա Տրդատը փախավ, իսկ նրա որդիները ընկան պարսիկների ձեռքը»:
[165] **Երեմյան Ս.**, Նախշ-ի Ռուստամի «Քաաբա ի Զարդուշտ» հուշարձանի վկայությունները Հայաստանի մասին, *ՊԲՀ*, 1966, N 2, էջ 65-66:
[166] Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., h. II, Երևան, 1984, էջ 51:
[167] **Մարտիրոսյան Ա.**, Հայաստանը և առաջին Սասանյանները, *ՊԲՀ*, 1975, թիվ 3, էջ 153:
[168] Ռ. Ֆրայը (**Frye R. N.**, The Political History of Iran Under The Sasanians, p. 126) և Թ.

հայագետը, ո՛չ այլ ոք չեն մասնավորեցնում, թե բարձրաքանդակի երկու պատկերախմբերից ո՞րն է ներկայացնում Որմիզդ-Արտաշրի թագադրությունը: Միայն Բ. Հարությունյանն է, որ, հպանցիկ անդրադառնալով խնդրին, գտնում է, որ Սալմաստի վիմաքանդակի ձախ պատկերախումբն է կերպավորում Որմիզդ-Արտաշիրի ինվեստիտուրան[169]: Սակայն, նա նույնպես անպատասխան է թողնում այն հարցը, թե ու՞մ կամ ի՞նչ է ներկայացված ժայռաքանդակի աջակողմյան պատկերախմբում:

Ս. Երեմյանի մեկնաբանության հիմնական աղբյուրագիտական հենքը նախ «Օգոստոսների պատմությունն» է, որի՝ Վալերանուս կայսեր կենսագրության մեջ խոսվում է «հայոց արքա Արտավազդի» մասին[170]: Մյուսը Շապուհ I-ի՝ մոտավորապես 260/261 թ. ստեղծված ŠKZ արձանագրությունն է, որտեղ պարսից թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրը հիշատակվում է «մեծ թագավոր Հայոց» տիտղոսով[171]:

Երկու աղբյուրների հաշտեցման փորձը հեղինակին հանգեցրել է այն կարծիքին, որ 259 թ. Եդեսիայի մոտ Հռոմի դեմ տարած հաղթանակից և Վալերիանուս կայսեր գերեվարությունից հետո պարսիկները, ազատ զգալով իրենց, Հայաստանի գահից հեռացրել են իրենց նախկին դրածո Արտավազդին, որը, համաձայն «Օգոստոսների պատմության», համարձակվել էր բողոքել նրանց վարած պատերազմի դեմ, և գահին են հաստատել Որմիզդ-Արտաշիրին[172]:

Ընդհանուր առմամբ վերոնշյալ կարծիքը պաշտպանում է նաև Ա. Մարտիրոսյանը: Վերջինս բերում է նույն փաստարկները, ինչ որ Ս. Երեմյանը, բայց 261 թ. հիմնավոր է համարում նաև նրանով, որ այն համապատասխանում է Մ. Խորենացու հաղորդմանը, ըստ որի Հայաստանում «անիշխանության ժամանակը» տևել է «ամս քսան և վեց և ... ամ մի»՝ քսանյոթ տարի՝ մինչև «ցթագաւորելն Տրդատայ»[173], որը «մանրախուզիւ քննեալ՝ գտաք... յերրորդ ամի Դիոկղետիանոսի»[174]:

Իսկապես, Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի մեզ հասած բոլոր ձեռագրերում Տրդատ III-ի թագադրությունը թվագրված է Դիոկղետիանուսի գահակալության երրորդ տարով: Գայուս Ավրելիուս Վալերիուս Դիոկղետիանուսը կայսր է հռչակվել 284 թ. հոկտեմբերի 17-ին[175], հետևաբար, Տրդատի թագադրության թվականը պետք է համարել 286/287 թ.: Եվ եթե սրանից հետ գնանք քսանյոթ տարի, իսկապես կստացվի 260/261 թ.:

Թվում է, թե վերոնշյալ իրողությունը, լավագույնս համապատասխանելով հայ-պարսկական հարաբերությունների մասին առկա պատկերացումներին, լուրջ կռվան է տալիս Ս. Երեմյանի մեկնաբանությանը: Սակայն, մի շարք իրողություններ ստիպում են մեզ չհամաձայնելու հուշարձանի ստեղծման թվականի և նշանակության վերաբերյալ նաև այս վարկածին:

Նախևառաջ, անդրադառնանք Ս. Երեմյանի առաջին կռվանին՝ «Արտավազդ հայոց արքա»-ի պատմականության հարցին: Ուսումնասիրողներից ոմանք այս Արտավազդին նույնացրել են Մ. Խորենացու հիշատակած Արտավազդ Մանդակունու[176], այլք՝ Արտավազդ Մամիկոնյանի հետ[177]: Ինքը՝ Ս. Երեմյանն այս Արտավազդին նախ համարում է ոչ Արշակունի[178], ապա՝ հայ Արշակունի սեպուհ՝ նույնացնելով նրան Մ. Խորենացու վիպական «շղթայված Արտավազդի» հետ[179], իսկ վերջում՝ հեղինակը նրան համարում է Տրդատ II–ի որդին կամ եղբայրը[180]: Մինչդեռ եվրոպական պատմագրության կողմից հիմնավորապես ցույց է տրվել, որ նախ՝ «Օգոստոսների պատմություն» կենսագրական ժողովածուն ոչ թե նրանում ներկայացված կայսրերի ժամանակակիցների, այլ վեց կեղծանունների տակ թաքնված մի հեթանոս հեղինակի կողմից 390-400 թ.թ. ստեղծված երկ է, որի մեջ ոչ միայն «Արտավազդ հայոց արքան», այլև 200-ից ավել այլ կերպարներ մտացածին են[181]:

Դարյաին (**Daryaee T.**, Sasanian Persia: The Rise and Fall of an Empire, London, New York, 2009, p. 8) ևս Հայաստանում Որմիզդ-Արտաշիրի գահակալության սկզբնատարին համարում են 262 թ.:

169 **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական..., էջ 345:

170 **SHA**, Valeriani duo, III, 1-3.

171 **Sprengling M.**, Third Century Iran. Sapor and Kartir, Chicago, 1953, p. 17.

172 **Երեմյան Ս.**, Հայաստանի քաղաքական կացությունը 253-273 թ.թ.: Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., h. II, Երևան, 1984, էջ 51:

173 **Խորենացի Մ.**, Պատմութիւն Հայոց, II, ՀԷ:

174 Նույն տեղում, II, Բ-ՁԲ:

175 **Aurelius Victor**, De Caesaribus, Translated with an Introduction and commentary by H. W. Bird, Liverpool, 1994, XXXIX. 14. **Князкин И. О.**, Император Диоклетиан и конец Античного мира, М., 1999, с. 7.

176 **Ալիշան Ղ.**, Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեաց, Վենետիկ – Սբ. Ղազար, 1890, էջ 374: **Մարտիրոսյան Ա.**, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 153:

177 **Աստուրյան Հ.**, Քաղաքական վերաբերութիւններ ընդ մեջ Հայաստանի և Հռովմայ 190-էն ն. Ք. մինչեւ 428 յ-Ք., Վիեննա, 1912, էջ 245-246:

178 **Երեմյան Ս.**, Նախշ-ի Ռուստամի «Քաաբա-ի Զարդուշտ» հուշարձանի արձանագրության վկայությունները..., էջ 65-66:

179 **Երեմյան Ս.**, Հայաստանի քաղաքական վիճակը Արտավազդ V-ի ժամանակ, *ԼՀԳ*, 1975, թիվ 1, էջ 15:

180 **Երեմյան Ս.**, Մեծ Հայքի թագավորության բաժանումը Սասանյան Իրանի և Հռոմեական կայսրության միջև (244-253 թթ.), *ՊԲՀ*, 1976, N 1, էջ 81:

181 Տե՛ս **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, Երևան, 1997, էջ 129, ծան. 1: Հայ պատմագրության մեջ Արտավազդ V-ի պատմականութ-

Ինչպես նշվեց, Ս. Երեմյանի մյուս կռվանը Եդեսիայի մոտ Վալերիանոս կայսեր հռոմեական բանակի դեմ Շապուհ I-ի տպավորիչ հաղթանակի փաստն է.

«Երրորդ պատերազմի ժամանակ, երբ մենք հարձակվեցինք Խառանի և Եդեսիայի վրա և պաշարում էինք Խառանն ու Եդեսիան, Վալերիանուս Կեսարը շարժվեց մեր դեմ: Նա ուներ իր հետ մոտ 70 հազարանոց բանակ Գերմանիայից, Ռետիայից, Նորիկից, Դակիայից, Պանոնիայից, Մյոզիայից, Իստրիայից, Իսպանիայից, Աֆրիկայից, Թրակիայից, Բյութանիայից, Ասիայից, Պամփյուլիայից, Իսավրիայից, Լիկաոնիայից, Գալաթիայից, Լիկիայից, Կիլիկիայից, Կապադովկիայից, Փռյուգիայից, Սիրիայից, Փյունիկիայից, Հրեաստանից, Արաբիայից, Մավրիտանիայից, Հռոդոսից [Լիդիայից], Օսրոենեից, Միջագետքից: Եվ Խառանից ու Եդեսիայից այն կողմ մենք մեծ ճակատամարտ ունեցանք Վալերիանուս Կեսարի դեմ: Մենք անձամբ գերեցինք Վալերիանուս Կեսարին ու այդ բանակի մնացած հրամանատարներին՝ պրետորիականների պրեֆեկտին ու սենատորներին, ու բոլոր սպաներին մենք գերեցինք և տարանք Պարսք: Եվ Սիրիան, Կիլիկիան ու Կապադովկիան մենք կրակին մատնեցինք, ավերեցինք ու թալանեցինք: Այդ պատերազմում մենք Հռոմեական կայսրությունում նվաճեցինք Սամոսատ ավանը, Իսսոսի վրայի Ալեքսանդրիան, Կատաբոլոսը, Էգեան, Մոփսուեստիան, Մալլոսը, Ադանան, Տարսոնը, Ավգուստինան, Զեփյուռիոնը, Սեբաստեն, Կոռիկոսը, Անազարբան, [Ագրիպասը], Կաստաբալան, Ներոնեասը, Ֆլավիասը, Նիկոպոլիսը, Եպիփանեան, Կելենդերիսը, Անեմուրիոնը, Սելինունսը, Մզդուն (Մյոնոպոլիսը), Անտիոքը, Սելևկիան, Դոմետիոպոլիսը, Տիանան, Կեսարիան, Կոմանան, Կիբեստրիան, Սեբաստիան, Բիրթան, Ռակունդիան, Լարանդան, Իկոնիան, ընդամենը 36 քաղաքներ՝ իրենց շրջակայքերով: Եվ այլևայլ ավարի հետ մենք Հռոմեական կայսրությունից՝ Անիրանից (Anērān) տեղափոխեցինք տղամարդկանց: Մենք նրանց բնակեցրինք Իրանական տերությունում՝ Պարսքում, Պարթևստանում, Խուժիստանում, Ասորեստանում (Բաբելոնիայում), և այլ երկրներում, որտեղ որ մեր հոր, պապերի ու մեր նախահայրերի տիրույթներն էին»[182]:

ŠKZ-ում գրավյալ քաղաքների թվարկությունները, ինչպես նկատում է Մ. Ռոստովցևը, վերցված են պարսկա-հռոմեական պատերազմների ամփոփիչ արձանագրությունից[183], ուստի նրանց հավաստիության մեջ կասկածելու որևէ առիթ չունենք: Եվ, ինչ խոսք, դրանք ավելի քան տպավորիչ են և ստվերում են անգամ Խառանի մոտ Ք.ա. 53 թ. Կրասուսի դեմ պարթևների տարած հաղթանակի փայլը: Բրիտանական սպա և պատմաբան սըր Պերսի Սայքսն այս առթիվ նկատում է. «Հազիվ թե մի որևէ այլ պատմական իրադարձություն ավելի մեծ բարոյական ներգործություն ունենար, քան երիտասարդ հարստության միապետի կողմից հռոմեական կայսեր ձերբակալությունը: Այդ լուրը, անկասկած, ամպրոպի պես դղրդացել է ողջ Եվրոպայում ու Ասիայում և թողել խիստ ճնշող տպավորություն»[184]:

Անկասկած, վերոնշյալ աննախադեպ հաջողությունը մեծապես բավարարել է արքայից արքա Շապուհ I-ի արևելյան փառասիրությունը: Պատահական չէ, որ այն գեղարվեստորեն արտահայտվել է ոչ միայն նրա ժայռաքանդակների վրա, այլև դրամահատության մեջ ու մանրաքանդակում[185]: Այդ իրադարձության մասին հիշողությունը այլևայլ ձևերով փոխանցվել է հաջորդ դարաշրջանների իրանական սերունդներին, և, անգամ, շոշափելի ներգործություն ունեցել գիտական ուսումնասիրությունների վրա: Դրանով պետք է բացատրել Ս. Երեմյանի և այլոց կողմից Եդեսիայի ճակատամարտի դերի ակնհայտ գերագնահատանքը: Մինչդեռ աղբյուրների քննական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Եդեսիայի մոտ տարած հաղթանակը բեկումնային նշանակություն է ունեցել միայն պարսկա-հռոմեական երրորդ պատերազմի առաջին փուլի, այլ ոչ թե ամբողջ պատերազմի համար:

Երկրորդ և Երրորդ պատերազմների ընթացքում պարսիկների ասպատակած պրովինցիաների ու գրաված քաղաքների վերաբերյալ ŠKZ-ի տվյալների համեմատությունը ակնհայտ է դարձնում, որ Վալերիանուսի բանակի ջախջախումից հետո պարսկական այրուձին,

---

յունը առաջինը կասկածի է ենթարկել Հայկ Պերպերյանը, որի կարծիքով, Արտավազդը նույն ինքը Սասանյան թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրն է, որին «Օգոստոսների պատմությունը» հիշատակում է Օդոմաստես անվամբ (**Պերպերյան Հ.**, Որմիզդ-Արտաշիր մեծ արքա Հայաստանի, «Զվարթնոց», II, 1944, էջ 167-173): Մ. Լ. Շոմոնի կարծիքով, Odomastes-ը իրական Oromastes (պահլավ. Ohrmazd/Hormizd) անվան գրչական վրիպակի արդյունք է (**Chaumont M.-L.**, Recherches sur L'Histoire D'Arménie, p. 64): Կ. Թումանովը Արտավազդի նամակը համարում է գրական կեղծիք՝ կազմված Թուկիդիդեսի ճառերի օրինակով (**Toumanoff C.**, Thethird century Armenian Arshacids. A Cronlogical commentary. *REA* No. VI, 1969, p 355-356): Ռ. Մանասերյանն իր հերթին, մատնացույց անելով Արտավազդի նամակում առկա հակասությունները, եզրակացնում է, որ Արտավազդը ոչ պատմական, մտացածին կերպար է (**Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 129):

[182] **Sprengling M.**, Third Century Iran…, p. 16.
[183] **Rostovtzeff M. L.**, Res Gestae Divi Saporis And Dura, *Beryutus*, Vol. VIII (1943), I, p. 26, 42.
[184] **Sykes P.**, A History of Persia, 2nd ed., I, London, 1921, p. 401.
[185] **Фаррох К.**, Персы, с. 208.

ըստ էության, կրկնել է Բարբալիսուսի մոտ 253 թ. Գալլուսի 60 հազարանոց բանակի պարտությունից հետո իր անցած ռազմուղին: Կայսեր և բարձր ազնվականության գերեվարությունն է, ահա, երրորդ պատերազմի ընթացքում իրենց հին ռազմական փառքին պարսիկների կատարած հիմնական հավելումը: Եվ թեպետ Ա. Ֆերրիլը Եդեսիայի ճակատամարտը համարում է «հռոմեական պատմության մեջ մեծագույն խայտառակություն»[186], վերջին հաշվով, պատերազմի ելքի վրա այդ «խայտառակ» իրադարձությունը որևէ ազդեցություն չունեցավ. Հռոմի արևելյան պրովինցիաների հաջող ասպատակություններից հետո պարսիկները նախ պարտություն կրեցին Կիլիկիայի Սոլե Պոմպեուպոլիս քաղաքի մոտ[187], ապա՝ Եփրատի գետանցի ժամանակ, 264 թ. կորցրին Մծբինն ու Խառանը[188] և, վերջապես, ստիպված էին Միջագետքի սեփական տիրույթներն ու անգամ մայրաքաղաք Տիզբոնը պաշտպանել Հռոմի դաշնակցից՝ Պալմիրայի իշխան Սեպտիմիուս Օդենատուսից[189]:

267 թ. Օդենատուսը նոր հարձակում իրականացրեց ընդդեմ պարսիկների՝ կրկին հասնելով մինչև Տիզբոն[190]: Դրանից հետո նա իր ավագ որդի Հերոդի հետ ընդունեց «արքաների արքա» տիտղոսը, որով և բացեիբաց սկսեց հավակնել Սասանյան տիրակալներին հավասար դրության[191]:

Անհրաժեշտ է նաև կարևորել այն փաստը, որ ŠKZ-ում, որին հղում է Ս. Երեմյանը, Որմիզդ-Արտաշիրը հիշատակված է որպես «մեծ թագավոր Հայոց», բայց առանց չնչին ակնարկի, որ նա այդ պաշտոնում նշանակվել

[186] **Ferrill A.**, The Fall of the Roman Empire: The Military Explanation, London: Thames & Hudson, 1988, p. 38.

[187] **Момзен Т.**, История Рима, т. V, М., 1949, с. 389.

[188] **Ibid.**, c. 391.

[189] **Eutropius**, Breviarum ab urbe condita, edited by F. Ruehl, Leipzig: Teubner, 1887, 9. 10 "... in Oriente per Odenathum Persae victi sunt. Defensa Syria, recepta Mesopotamia usque ad Ctesiphontem Odenathus penetravit"; **SHA**, Vita Gallieni, 10; **Idem.**, Tyrani Triginta, 15. 4. Համաձայն «Օգոստոսների պատմության», Օդենատուսը հասել է մինչև Տիզբոն և հրկիզել նրա շրջակա տարածքները (**SHA**, Gall. duo, X. 20; IX. 10; VII. 22, 12):

[190] **Petit P.**, Historie generale de l'Empire Romani, Paris, 1974, p. 192. Զոսիմոսը (**Zosimos**, I. 39) խոսում է պարսից դեմ Օդենատուսի երկու արշավանքի մասին: Իսկ Գէորգ Սինկելլոսն այդ մասին հաղորդում է. "... ἀλλὰ πάλιν Ὠδένατος κατα Περσῶν ἀριστευσας καὶ Κτησιφῶντα πολιορκία παραστησάμενος..." (**Georgius Syncellus**, Chronographiae, see *Corpus Scriptorum Historiae Byuzantinae,* Volumen 1, Impensis ed. Weber I., Bonnae, MDCCCXXIX (1829), p. 716): «Πολιορκία παραστησάμενος» (լատին. Obsidione receptam – «պաշարումով վերագրաված» արտահայտությունը դրդում է ենթադրել Օդենատուսի կողմից Տիզբոնի մի նախընթաց գրավում ևս:

[191] **Шифман И.**, Сирийкое общество эпохи Принципата (I-III вв. н. э.), М., 1977, с. 288.



է հենց Եդեսիայի մոտ հռոմեացիների դեմ տարած հաղթանակից հետո: Ընդհակառակը, առաջարկված մեկնաբանության տրամաբանությամբ Որմիզդ-Արտաշիրը կարող էր Հայաստանի մեծ թագավոր նշանակված լինել դրանից մոտ տասը տարի առաջ՝ Գալլուսի հռոմեական բանակի ջախջախումից, պարսիկների կողմից Հայաստանի նվաճումից և Տրդատ արքայի փախուստից հետո՝ 252/3 թ.:

Գրավոր աղբյուրների վկայություններից ծնվող վերոնշյալ կարծիքը ներդաշնակում է նաև իրադարձությունների հայտնի ընթացքին. Սասանյանների մեծապետական ծրագրերը, որոնք էապես չէին տարբերվում պարթև Արշակունիների զավթողական հավակնություններից,[192] պահանջում էին ամուր վերահսկողություն սահմանել Հայաստանի նկատմամբ: Այդ կերպ նրանք հնարավորություն կունենային հարվածի տակ պահել ողջ Հռոմեական Արևելքը: Եվ այս տեսանկյունից բացառվում էր, որ Սասանյանները 252/3 թ. Հայաստանը նվաճելուց հետո այս երկրում ճանաչեին մի ուրիշի, առավել ևս, տեղական տապալված արքայատան ներկայացուցչի իշխանությունը: Հայաստանում Որմիզդ-Արտաշիրի գահակալության սկզբնատարին հենց այս թվականն են ընդունում Վ. Լուկոնինն[193] ու Կ. Թումանովը[194]: Նմանապես և Հ. Պերպերյանը գտնում է, որ «Հայաստանի գրաւումէն վերջ (253 թ.) է որ Շապուհ իր որդին Որմիզդ-Արտաշիրը կրնայ Հայաստանի թագւոր նշանակած ըլլալ»[195]:

Ինչ վերաբերում է Հայաստանում Որմիզդ-Արտաշիրի գահակալության սկզբնատարվա, հետևաբար, և ŠKZ-ի ու Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի վերաբերյալ Ա. Մարտիրոսյանի բերած հավելյալ փաստարկին, ապա օբյեկտիվ հարց է առաջանում, թե որքանո՞վ է հիմնավոր Մ. Խորենացու հաղորդած ժամանակագրական տվյալը, կամ որքանո՞վ է այն հարիր Պատմահոր «Հայոց պատմության» բնագրի տառին: Ավանդական հայեցակետից, թվում է, որևէ կասկածի առիթ չկա: Սակայն նորօրյա ուսումնասիրությունները, մասնավորապես X դ. հեղինակ Ուխտանեսի «Պատմութիւն» աշխատության միջոցով Մ. Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ի նախնական բնագրի վերականգնման Բ. Հարությունյա-

[192] **Tacitus Publius Cornelius**, Annales (with an Eng. Translation), v. 1-2, Cambridge/London, Harvard University Press, 1931-1937, VI, 6. 31. «Նա (Արտավան III-ը-ծ.հ.) պահանջում էր պարսից ու մակեդոնացիների հին սահմանները և սպառնում էր սնապարծորեն, որ մտադիր է արշավել այն երկրները, որոնք պատկանել էին Կյուրոսին և ապա Ալեքսանդրին»: Համմտ. **Dio Cass.**, LVIII, 26, 1-2.

[193] **Луконин В. Г.**, Завоевание Сасанидов на Востоке и проблема абсолютной кушанской хронологии, *ВДИ,* 1969, N 1-2, с. 33.

[194] **Toumanoff C.**, The Third Century Armenian Arshacids, p. 254.

[195] **Պերպերյան Հ.**, Որմիզդ-Արտաշիր մեծ արքա Հայաստանի, էջ 171:

նի փորձերը ցույց են տվել, որ «Պատմության» բնագրում Դիոկղետիանուսի կողմից Տրդատի թագադրությունը թվագրված է եղել կայսեր գահակալության ««յԵ-րորդ ամի», այսինքն՝ V տարով (288/289 թ.թ. – Ա. Մ.), սակայն հետագայում գրիչները, այն ընկալելով որպես «յԵրրորդ ամի»-ի սխալ գրութիւն, «յԵ-րորդ»-ը սկզբում դարձրել են «յերորդ», ինչպես հանդիպում է Ուխտանէսի երկում, իսկ ապա նաեւ «յերրորդ» (286/287 թ.թ. – Ա. Մ.)»[196]:

Ինքնըստինքյան հասկանալի է, որ «անիշխանության ժամանակի» վերին սահմանը 286/7 թվականից 288/9 թվականն առաջ բերելու դեպքում առաջ է գալիս նաև նրա ստորին սահմանը՝ դառնալով 263/264 թ.: Այս հանգամանքը Ս. Երեմյանի և Ա. Մարտիրոսյանի «261 թ.»-ի վարկածը զրկում է լուրջ կռվանից, քանի որ ինքը՝ Ա. Մարտիրոսյանը, նշում է, որ Որմիզդ-Արտաշրին Հայաստանի մեծ թագավոր հիշատակող Քաաբա-ի Զարդուշտի արձանագրությունը «չէր կարող 262 թ. ավելի ուշ գրվել: Այն ուղղակի Շապուհի հաղթանակի մասին հրովարտակ է, որ պետք է հետևեր հաղթանակին»[197]:

Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի և նշանակության վերաբերյալ Ս. Երեմյանի առաջարկած մեկնաբանության քննադատությունը ամբողջացնելու նպատակով ավելորդ չենք համարում նկատել, որ այն հակասում է նաև Է. Հերցֆելդի հայտնի աքսիոմային. 261 կամ 262 թվականին ստեղծված լինելու դեպքում Որմիզդ-Արտաշիրին թագադրող Շապուհ I-ը պետք է պսակված լիներ ոչ թե Արտաշիր I-ի, այլ իր անձնական պարսպազարդ (corona muralis) թագով: Այս վերջին անհամապատասխանությունը, լրացնելով մեր վերոնշյալ հակափաստարկներին, ցույց է տալիս, որ Սալմաստի հուշակոթողի ստեղծման ժամանակի մասին Ս. Երեմյանի առաջարկած մեկնաբանությունը պետք է մերժվի անվերապահորեն:

[196] **Հարությունյան Բ.**, Ե՞րբ է քրիստոնեութիւնը Հայաստանում հռչակուել պետական կրօն, *ՀԱ*, 2006, էջ 162-164:
[197] **Մարտիրոսյան Ա.**, Հայաստանը և առաջին Սասանյանները, էջ 153:



## 6
## ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԸ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԻՆՎԵՍՏԻՏՈՒՐԱՅԻ ԵՆԹԱԺԱՆՐԻ ՊԱՏԿԵՐԱԳՐԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

Վ. Հինցը, Հ. վոն Գալլը, Ս. Երեմյանն ու այլք, որոնք Սալմաստի ժայռաքանդակի վրա ներկայացված տեսարանը համարել են պարսից վեհապետի կողմից Հայաստանի կառավարչին (ըստ Ս. Երեմյանի և Բ. Հարությունյանի՝ պարսից գահաժառանգ Որմիզդ-Արտաշիրին) իշխանությամբ օժտելու գործողության պատկերավորում, չեն փաստարկել իրենց մեկնաբանությունները: Դրանով իսկ նրանք ակամայից հարկադրում են հետագայի ուսումնասիրողներին յուրովի անցնելու հետազոտական ճանապարհը: Ուսումնասիրության շահեկանությունից ելնելով՝ Վ. Հինցի վարկածի պատմագիտական քննությունը մենք թողնում ենք հետագա շարադրանքին: Սույն բաժնում մենք կներկայացնենք սովորական ինվեստիտուրայի գաղափարաքաղաքական նշանակությունն ու այդ քաղաքական ծեսի պատկերագրական դրսևորումները՝ պարզելու համար, թե Սալմաստի ժայռաքանդակի հորինվածքը որքանով է ներդաշնակում այս ենթաժանրում դիտարկվող օրինաչափություններին, այլ խոսքով՝ որքանով է Վ. Հինցի և այլոց մեկնաբանությունը ընդունելի:

Սովորաբար վեհապետ-վասալներ ուղղածիգ հարաբերությունը ձևավորվում էր գերազանցապես ուժի և հարկադրանքի միջոցով: Սակայն համեմատաբար ընդարձակ տերությունների ներքաղաքական ինտեգրացիայի ցածր մակարդակը և կենտրոնական (վեհապետական) իշխանության՝ հպատակ էթնիկ և ենթաէթնիկ հանրությունների քաղաքական և մշակութային ինքնաբավությունը հաղթահարելու անկարողությունը տակավին նախադինաստիական դարաշրջանում առաջադրեցին ուղղածիգ հարաբերությունների հիմնավորման խնդիր: Արդեն Ք.ա. III հազարամյակի միջագետքյան արձանագրություններում ծնվեցին և հին առաջավորասիական տերություններին ավանդվեցին այդ հարաբերությունների ծիսաիրավական հիմնավորման դրույթներ ու տեսություններ, որոնք սահմանում էին ինչպես վեհապետի՝ իբրև երկրային գերագույն իշխանության սրբազան և ռազմաքաղաքական գործառույթները, նույնպես և դրանց իրականացման ժամանակ հպատակ սուբյեկտների դերն ու չափը[198]: Հին

[198] **Magid G.**, Sumerian Early Dynastic Royal Inscriptions, in *The Ancient Near East: Historical Sources in Translation*, ed. by Mark W. Chavalas, p. 5; **Cooper J. S.**, Sumerian and Akkadian Royal Inscriptions, 1986, p. 54; **Gadd C. J.**, The Cities of Babylonia, *CAH*, Vol. 1, Part 2, ed. by I. E. S. Edwards, C. J. Gadd, N. G. Hammond, 1971, p. 117; **Kramer**

աշխարհի քաղաքական մշակույթում ծնված այդօրինակ իրողությունների շարքում հնագույններից մեկը արքայական կամ սովորական ինվեստիտուրայի (վեհապետի կողմից հպատակ երկրի կառավարիչներին իշխանությամբ օժտելու) ծեսն էր[199]: Վեհապետի ու նրա հպատակ սուբյեկտների նվիրապետական հարաբերությունների իրավական և գաղափարական հիմնավորման յուրօրինակ այս միջոցը դարձավ նաև բոլոր ժամանակների ամենաերկարակյաց քաղաքական ծեսերից մեկը:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ ավել կամ պակաս չափով դաշնային կառուցվածք ունեցած ցանկացած տերության քաղաքական ազդեցության սահմաններ գծվում էին վեհապետի արքայաստեղծ գործունեության շառավղով: Ուստի, բնական կլիներ, որ դեռևս հին արևելյան պաշտոնական արվեստում վեհապետի անձի և իշխանության փառաբանության մոտիվներով ստեղծագործությունների շարքում տեսնեինք նաև սովորական ինվեստիտուրայի ժանրով ստեղծագործություններ, որոնցում ի տես կդրվեր հպատակ էթնոքաղաքական միավորների նկատմամբ վեհապետի գերագույն և իշխանաստեղծ իրավունքը: Մինչդեռ, միայն պարթևական դարաշրջանում է, որ սովորական ինվեստիտուրայի ծեսը դարձավ պաշտոնական արվեստի առանձին ենթաժանր:

Անշուշտ, սովորական ինվեստիտուրայի ծիսական և պատկերագրական համալիրները ստեղծվել են աստվածային ինվեստիտուրայի ժանրի շրջանակներում նախապես ձևավորված հորինվածքային կաղապարներից ածանցվելով: Դա միանգամայն հասկանալի է, քանզի վեհապետական իշխանության տեսանկյունից անչափ կարևոր էր, որ սովորական ինվեստիտուրայի արարողության ժամանակ, ինչպես նաև այդ թեմայով ստեղծված ժայռաքանդակի կամ որմնանկարի դիտարկման պարագայում դիտողը ճիշտ գնահատի վեհապետի արքայաստեղծ ակտն ու դրանից բխող հարաբերությունները: Այդ է պատճառը, որ սովորական ինվեստիտուրայի թեմայով ստեղծագործություններում թեև անփոփոխ թողնվեցին իշխանության շնորհելու գործողության պատկերագրական սխեման, այնուամենայնիվ, նրանում կատարվեցին որոշակի փոփոխություններ: Նախևառաջ, սովորական ինվեստիտուրայի ժանրի կազմություն-

**S. N.**, The Sumerians, Their History, Culture and Character, Chikago & London, 1963, p. 318; **Емельянов В. В.**, Ритуал в Древней Месопотамии, СПб, 2003. с. 64.

199 Օգտագործել ենք «սովորական ինվեստիտուրա» եզրույթը ի տարբերություն վեհապետների թագադրության, որը ընդունված է կոչել «աստվածային ինվեստիտուրա»: Այս ծեսի իրավագաղափարական բովանդակության մասին տե՛ս **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 75-135: **Bround D.**, Rome and the Friendly King. The Character of Client Kingship, London, 1984.



ներում իշխանություն շնորհող ատյանի տեղը ուղղակի կամ միջնորդավորված ձևով զբաղեցրեց աստվածընտրյալ վեհապետը, իսկ վերջինիս տեղում հայտնվեց հպատակ արքան[200]: Իսկ քանի որ վերջիններիս իշխանության աղբյուրը ոչ թե աստվածություն էր, այլ վեհապետը, ուստի սովորական ինվեստիտուրայի հորինվածքներում «աստվածության հովանավորությամբ տարած նախընթաց հաղթանակի» պատկերագրական շերտը փոխարինվեց իշխանություն ստացողի խոնարհությունը, հնազանդությունն ու հավատարմությունը ցուցող պատկերագրական տարրերով, ինչպիսք են վեհապետի նկատմամբ խոնարհ դիրքը, չափական և դիրքային տարբերությունները և այլն: Սասանյան արվեստում ինվեստիտուրայի երկու ենթաժանրերի միջև պատկերագրական տարբերությունները դրսևորված են նաև իշխանության խորհրդանշանների բնագավառում:

Քննարկվող ենթաժանրի հին իրանական և հռոմեական ոչ մեծաթիվ ստեղծագործությունների քննությունը թույլ է տալիս իշխանությամբ օժտելու տեսարանները դասակարգել ըստ վեհապետի և իշխանությամբ օժտվող հպատակ արքայի դիրքային հարաբերության և ըստ իշխանությամբ օժտելու պատկերագրական ձևի: Տարբերակման հիմքում այն հանգամանքն է, թե աստվածային ինվեստիտուրայի կոնկրետ որ պատկերագրական հիմնաձևից են նրանք ածանցված:

Սովորական ինվեստիտուրայի թեմայով տեսարանները լոկ գեղարվեստական մետաֆորներ կամ բարդ քաղաքական հարաբերությունների տեսողական համառոտագրություններ չէին: Հին Առաջավոր Ասիայում տակավին վաղ դինաստիական դարաշրջանից, իսկ Հռոմեական կայսրությունում Օգոստոսի պրինցիպատից ի վեր այդպիսի թագադրությունները տեղի էին ունենում իրականում և հանդիսանում էին երկկողմ պայմանավորվածության եզրափակիչ գործողությունը[201]: «Նա (կայսրը) դրեց դիադեման (ինչ-որ մեկի) գլխին և նրան հռչակեց (ինչ-որ երկրի) թագավոր»,– այս հատկանշական ֆորմուլը մենք հաճախակի ենք հանդիպում հռոմեական գրավոր սկզբնաղբյուրներում[202]: Ընդ որում, հռոմեա-

200 Այս առումով բացառություն են կազմում պարթևական դրամահատության մեջ տարածված աստվածային ինվեստիտուրայի կոմպոզիցիոն կաղապարները, որոնց պարագայում արքաները նստած են գահին, օմփղոսին կամ նժույգին, իսկ նրանց իշխանության նշաններ մեկնած դիցերը հոտնկայս են:

201 **Kropp A. J. M.**, Crowning the Emperor - An Unorthodox Image of Claudius, Agrippa I and Herod of Chalkis, *Syria* 90 (2013), p. 384.

202 **Flavius Josephus**, De Antiquitatibus Iudaicum, XVIII, 7.10. **Tacitus**, Annales. II. 56; XV. 2; **The Geography of Strabo** in Eight Volumes, with an English Translation by Horace Leonard Jones, Vol. V, London-New York, MCMLXI, 12.3.20; **Dio Cass.**, LXIII, 5. 3.

կան հեղինակները վեհապետից ստացած արքայական իշխանությունը բնութագրում են իբրև հռոմեական ժողովրդի նվեր (*donum populi Romani*)[203] կամ իբրև կայսեր տված փոխառություն, որը ցանկացած պահի կարելի էր հետ վերցնել[204]:

Իրանական արվեստում սովորական ինվեստիտուրայի տեսարանները շատ չեն: Հռոմեական կերպարվեստում դրանք, իրենց փոքրաթիվության հանդերձ, արտահայտված են բացառապես դրամահատության ասպարեզում[205]: Սովորական ինվեստիտուրայի տեսարաններով դրամների թողարկումը պայմանավորված է եղել կոնկրետ քաղաքական իրավիճակով և թագադիր կողմի պաշտոնական քարոզչության նպատակադրումներով[206]: Այդուհանդերձ, կարևոր է նկատել, որ վեհապետների կամ էլ նրանց ներկայացուցիչների կողմից իրականացված ոչ բոլոր թագադրություններն են, որ պատկերագրվել են դրամների վրա կամ արվեստի այս կամ այն տեսակներում: Անգամ Ներոնի կողմից 66 թ. Տրդատ I-ի թագադրությունը, որի համար Հռոմը տասնամյա պատերազմ էր վարել Պարթևստանի դեմ[207], և որի մանրամասները շատ գունեղ ձևով ներկայացրել են հռոմեական մատենագիրներ, դրամների վրա չի ներկայացվել:

Սովորական ինվեստիտուրայի պատկերագրության առավել տարածված ձևը, որը, ստեղծվելով հին առաջավորասիական կերպարվեստում, հետագայում ներմուծվել է կայսերական դարաշրջանի հռոմեական դրամահատության մեջ, այն է, երբ իշխանությամբ օժտելու ակտը ներկայացվում է թեկնածուի մարմնին վեհապետի հպվելու գործողությամբ: Գաղափարական և պատկերագրական առումներով այն սերում է նախադինաստիական դարաշրջանի շումերական հեգեմոնների արձանագրություններում գործածված արքետիպից, ըստ որի՝ աստվածության կողմից արքայի ընտրությունը կատարվել է թեկնածուի ձեռքը բռնելու միջո-

[203] **Tacitus**, Annales, IV. 5; **Dio Cass**., XXXVIII, 4. «... Երկրներ, որոնց անունները անգամ մենք նախկինում ճիշտ չգիտեինք, իսկ այժմ նրանց մի մասին ինքներս ենք տիրում, մյուս մասը շնորհել ենք ուրիշներին...»:
[204] **Kropp A. J. M.**, Crowning the Emperor..., p. 383.
[205] Սովորաբար այդպիսի դրամները ունեցել են հիշատակության նշանակություն և թողարկվում էին փոքր քանակությամբ՝ ոսկուց և արծաթից, երբեմն էլ՝ բրոնզից: Դրանք հատկանշվում են դարձերեսին կայսեր կամ նրա ներկայացուցչի կողմից արքայաստեղծ գործողության պատկերագրությամբ: Հնարավոր է, որ այս դրամները նախատեսված են եղել ինվեստիտուրայի ծեսի ժամանակ հանդիսատեսների մեջ «շաղ տալու» համար (**Abramzon M. G.**, The “Coronation” Coin of the Tracian King Rhoemetalces III, *TALANTA*. Proceedings of the Dutch Archaeological and Historical Society. Vol. XXXII-XXXIII (2000-2001), Amsterdam, 2002, p. 241).
[206] **Ibid.**, p. 242.
[207] **Tacitus**, Annales, XIII. 34.



ցով[208]: Աստծո կողմից արքայի ընտրության, նրան իշխանությամբ օժտելու և հովանավորելու այս արխաիկ, բայց և դյուրընկալելի մտապատկերը գեղարվեստորեն վերարտադրվել է Աքքադի հարստության չորրորդ արքա Նարամ Սինի (Ք. ա. 2254-2218 թ.թ.) ինվեստիտուրային քարակոթողի վրա (նկ. 19)[209]:

Ամենայն հավանականությամբ, շումերական արքետիպին էր աղերսվում նաև Ամանորյա տոնակատարության ժամանակ Բաբելոնում իրականացվող աստվածային ինվեստիտուրայի ծեսը, որի ժամանակ արքան էզագիլի տաճարում բռնում էր Մարդուկի կուռքի ձեռքը՝ հաստատելով իր և աստվածության միջև ուղղակի կապն ու իր իշխանության աստվածատուր բնույթը[210]: Կոմպոզիցիոն այս ձևը շարունակել է գործածվել նաև հետագա դարաշրջաններում: Մասնավորապես, այս սխեմայով է ստեղծվել Տանգ-ի Բուտանի Ք. ա. I-Ք. հ. III դ.դ. թվագրվող էլյումայիսյան ժայռաքանդակը, որի հինգ պատկերախմբերից չորսում ներկայացված են տեղական կառավարիչները՝ իրենց աջ ձեռքը Հերակլես-Բելի ձեռքին, ուսին կամ ազդրին հպած[211]:

[208] Որքան մեզ հայտնի է, առաջինը Լագաշի կառավարիչ էնմետենան էր (Ք. ա. XXVI դ.), որ ալեբաստրե սափորի վրա թողած արձանագրության մեջ հայտարարում է. «3600 մարդկանց մեջ նա (աստված – Ա. Մ.) նրա (էնմետենայի) ձեռքը բռնեց....» (**Gadd C. J.**, The Cities of Babylonia, p. 117): Նմանատիպ ֆորմուլա է պարունակում Ուրուինիմգինայի (Ք. ա. 2350 թ.) արձանագրությունը, որտեղ հայտարարվում է. «Նինգիրսուն, էնլիլի ռազմիկը Ուրուինիմգինային տվեց Լագաշի «լուգալությունը» (և) 36000 մարդու մեջ իր ձեռքը բռնեց» (**Kramer S. N.**, The Sumerians..., p. 318): Ավելի ուշ այսպիսի բանաձևի հանդիպում ենք նաև Գուդեայի արձանագրության վրա (**Емельянов В. В.**, Ритуал в Древней Месопотамии, с. 64):
[209] **Selz G. J.**, The Divine Prototypes, in *Religion and Power: Divine Kingship in the Ancient World and Beyond,* ed. by N. Brisch, Oriental Institute Seminars N 4, Chicago-Illinois, 2008, p. 26. Այս ստելայի վրա Նարամ Սինը ներկայացված է Իշտար աստվածուհու կողքին նստած՝ ձախ ձեռքով օղակ բռնած: Աքքադի տիրակալի եղջերազարդ թագը պարզորոշ է դարձնում, որ սալաքանդակը ստեղծվել է նրա աստվածարկումից հետո: Այնուամենայնիվ, կասկած չի կարող լինել, որ ողջ կոմպոզիցիան արտահայտում է Աքքադի տիրակալի ինվեստիտուրայի գաղափարը, քանզի Իշտարը պատկերվել է Նարամ Սինի ձեռքը բռնած, իբրև հավաստում այն բանի, որ անգամ աստվածարկված արքան աստվածընտրյալ է:
[210] **Brinkman J. A.**, Political History of Post-Cassite Babylonia 1158-722 BC, Roma, 1968, p. 241, footnote 1547, p. 354; **Millard A.**, The Eponyms of the Assyrian Empire 910-612 BC, *SAAS* II, Helsinki, 1994, p. 59-60
[211] **Salaris D.**, Space and Rite in Elymais: Considerations on Elymaean Religious Architecture and Rock Reliefs during the Arsacid Period, Sydney, 2014, pp. 159-161. Տարածված կարծիքի համաձայն Տանգ-ի Բուտանի ժայռաքանդակի վրա ներկայացված են տեղական կառավարիչների ուխտի արարողության տեսարաններ, որոնք իրականացվում են Հերակլես-Բել աստվածության ներկայությամբ: Սակայն անուշադրության է մատնվել այն հանգամանքը, որ մարդկային կերպարանքները,

Աստվածային ինվեստիտուրայի վերոնշյալ արխաիկ ձևից սերող սովորական ինվեստիտուրայի օրինակ է պարունակում 116 թ. հատված հռոմեական հուշադրամը (նկ. 20)[212]: Նրա դարձերեսի «REX PARTHIS DATUS = Պարթևներին թագավոր տրված» լեգենդը պարզորոշ ցույց է տալիս, որ ներկայացված է ինվեստիտուրայի գործողություն: Դրամի դարձերեսին՝ աջ կողմում, պատկերված է բարձր պատվանդանի վրա դրված գահավորակին բազմած Տրայանուս կայսրը, որն իր աջ ձեռքը, ափը դեպի ներքև պահած, դրել է պատվանդանից ցած՝ իր դիմաց կանգնած պարթև արքայազն Պարթամասպատեսի գլխին: Վերջինս էլ իր աջ ձեռքը արմունկից վեր է բարձրացրել՝ ի նշան հարգանքի և հավատարմության[213]: Պարթամապատեսից ձախ ներկայացված է ծնկած տղամարդու պատկեր, որին հավանաբար պետք է նույնականացնել Հայաստանի արքա Պարթամասիրի հետ, որը կայսրից անհաջող կերպով թագ և ճանաչում էր խնդրել[214]:

Մ. Աբրամզոնը քննարկվող ենթաժանրին է վերագրում Տրայանուսի արծաթե սեստերցիումի մի թողարկման դարձերեսի կոմպոզիցիան (նկ. 21), որտեղ ներկայացված է կուրուլային բազկաթոռին բազմած կայսրը՝ աջ և ահյակ կողմերում կանգնած երկու բարձրաստիճան սպաների հետ: Նա աջ ձեռքով բռնել է գայիսոն, իսկ ձախ ձեռքը մոտեցրել է գծային դասավորությամբ իր դիմաց կանգնած երեք անձանցից առաջինի՝ իրեն պարզած ձեռքին[215]: Վերջիններիս Մ. Աբրամզոնը նույնացնում է «արևելյան երեք պետությունների, այդ թվում և Օսրոենեի տիրակալների» հետ, որոնք, նրա կարծիքով, 115 թ. իշխանություն են ստացել Տրայանուսից[216]:

---

որոնք անկասկած մարմնավորում են տեղական արքաներին, իրենց աջ ձեռքը մեկնել են ոչ թե զոհասեղանին, այլ նրանից անդին կանգնած Հերակլես-Բելի մարմնին (**Vanden Berghe L.**, **Schippmann K.**, Les reliefs rupestres d'Elymaïde (Iran)…, p. 50; **Mathiesen H. E.**, Sculpture in the Parthian Empire, A Study in Chronlgy, II, Aarhus, 1992, p. 125-128): Այս պատկերագրական սխեմայի կրկնությունը առիթ է տալիս մտածելու, որ խնդրո առարկա ժայռաքանդակի վրա ներկայացված են աստվածային ինվեստիտուրայի տեսարաններ, որոնք իրարից չեն առանձնացվել բաժանարար քանդակածո երիզների միջոցով:

[212] **CNG Auction** 55, lot 1217; **CNG Auction** 58, lot 119; **Peus Auction** 374, lot 695; **Fritz Rudolf Künker Auction** 133, lot 8791-8792.

[213] Պարթամասպատեսի թագադրության պատկերագրության մեկ այլ տարբերակը տե՛ս Арсенијевић М., *REX DATUS* као мотив на римском царском новцу, *JSAS 23, 2007,* c. 270, I/2.

[214] **Dio Cass.**, LXVIII, 19-20.

[215] **CNG Auction** 61, lot 1781; **Peus Auction** 378, Lot 568.

[216] **Абрамзон М. Г.**, Осроена в римской восточной политике в I в. до н. э. – III в. н. э., *ПИФК* XV, 2006, c. 117.



Պատկերների հագուստն ու գլխի հարդարանքներն իսկապես արևելյան են: Կոմպոզիցիայում նրանց գրաված ձախակողմյան դիրքը ևս համա-պատասխանում է սովորական ինվեստիտուրայի ժանրում իշխանություն ստացողների կանոնական դիրքին: Մ. Աբրամզոնը քննության առարկա կոմպոզիցիայի իմաստը լուսաբանելու գործում շեշտը դնում է դրամի դարձերեսի REGNA ADSIGNATA լեգենդի վրա: Մի իմաստով այն իս-կապես նշանակում է «տիրույթները տրված», ինչն էլ, թվում է, առաջարկված մեկնաբանությունը դարձնում է ընդունելի: Սակայն մի քանի պատկերագրական իրողություններ սկզբունքորեն բացառում են դրա հավանականությունը: Այսպես, խնդրո առարկա հորինվածքում կայսրից բացի, նրա աջ կողմում ներկայացված պատկերը (հավանաբար Տրայանուսի պրետորիական գվարդիայի հրամանատար Պուբլիուս Ացիլիուս Ատտիանուսը) նույնպես իր ձախ ձեռքը մեկնել է «արքայական իշխանության թեկնածուի» գլխին: Մինչդեռ, եթե խնդրո առարկա տեսարանն իսկապես ինվեստիտուրային թեմայով լիներ, ապա իշխանությամբ օժտողի դերում պետք է տեսնեինք միայն կայսրին: Բացի այդ՝ չի կարելի անտեսել, որ հռոմեական կերպարվեստին ևս հատուկ էին աստիճանակարգության և պատմողականության սկզբունքները: Սրանց պահանջները բավարարելու համար կոմպոզիցիայում ենթադրվող «երեք արքաների» պատկերները պետք է կայսերական պատվանդանի դիմաց ներկայացվեին կողք կողքի (եռապլան հորիզոնական շարքով), այլ ոչ թե իրար ետևից: Այս դեպքում, ինչպես որ խնդրո առարկա տեսարանում է, վերջին երկու պատկերները անխուսափելիորեն պետք է նույնականացվեին թագադրվող արքայի շքախմբի անդամների հետ, այլ ոչ թե ընկալվեին իբրև թագադրության «իրենց հերթին» սպասող արևելյան արքաներ: Վերջապես, վերադառնալով դրամի լեգենդին, հարկ ենք համարում նկատել, որ REGNA ADSIGNATA արտահայտությունը վերոնշյալից բացի, կարող է ունենալ նաև «տիրույթները զատված» իմաստը, և հետևաբար, կոմպոզիցիան կարելի է մեկնաբանել որպես կայսերական ընդունելության տեսարան, ընդունելություն, որի ժամանակ կայսրը լուծել է արևելյան հպատակ արքաների միջև ծագած ինչ-ինչ սահմանային վեճեր:

Քննարկվող պատկերագրական սխեմայով և համանման «REX ARMENIIS DATUS = Հայերին թագավոր տրված» լեգենդով, բայց ընդհանուր կոմպոզիցիայի էական փոփոխությամբ է ստեղծվել նաև 140 թ. Անտոնինուս Պիուսի կողմից Սոհեմոսին Մեծ Հայքի գահին հաստատելու առթիվ թողարկված հռոմեական դրամների վրայի ինվեստիտուրային

տեսարանը (նկ. 22)[217]: Երկու պատկերներն էլ ներկայացված են երեք քառորդ դիրքով, իսկ նրանց հայացքներն ուղղված են դեպի աջ՝ դեպի ենթադրվող հանդիսատեսը: Կայսրը, ի նշան Սոհեմոսին իշխանությամբ օժտելու և հովանավորելու, իր աջ ձեռքը դրել է նրա գլխին, իսկ վերջինս էլ աջ արմունկից բարձրացրել է՝ ի նշան հավատարմության ուխտի: Նույն առթիվ հատված մեկ այլ պղնձե շքադրամի վրա ցույց է տրված այն պահը, երբ Անտոնինուս Պիուսը ձեռքը դրել է հայոց թագավորի ոչ թե գլխին, այլ ուսին[218]: Վերջապես, մի երրորդ, լավ պահպանված օրինակի վրա կայսրը պատկերվել է աջ ձեռքով ոչ թե Սոհեմոսի գլխին հպվելիս, այլ նրա գլխավերևում փոքրիկ գլանափաթեթ (հավանաբար՝ Սոհեմոսի նշանակման վերաբերյալ կայսերական էդիկտը) պահած[219]:

Վերը նշված բոլոր տարբերակներում կայսեր և նրա վասալի իրավաքաղաքական տարբերությունը ընդգծված է ոչ միայն պատկերագրական դետալների միջոցով (կայսրը ներկայացված է հռոմեական տոգայով, իսկ Սոհեմոսը, թեպետ և հռոմեական սենատի անդամ էր, պատկերվել է կարճ տունիկայով և թիկնոցով), այլև չափական առումով. կայսեր պատկերը Սոհեմոսի պատկերից անհամեմատ մեծ է:

Հայտնի է, որ 161 թ. Մեծ Հայք ներխուժած պարթևական զորքը, գահընկեց անելով Սոհեմոսին, նրա փոխարեն հայոց գահ էր բարձրացրել Բակուր Արշակունուն: Հռոմը միայն 163 թ. կարողացավ շտկել իրավիճակը՝ գերեվարելով Բակուրին և գահին վերահաստատելով Սոհեմոսին: Եվ քանի որ վերջինիս գահակալությունը ընդհատվել էր արտաքին գործոնի պատճառով, ինքնին ուժը կորցրել էր նաև Անտոնինուս Պիուսի թագադիր ծեսը:

Սոհեմոսի վերաթագադրության ծեսն է պատկերագրվել 164 թ. Լուկիուս Վերուսի թողարկած ոսկե սեստերցիումների և բրոնզե դուպոնդիուսների դարձերեսի կոմպոզիցիաներում (նկ. 23)[220]: Այս դրամների հատման առիթը դարձյալ բացահայտվում է նրանց վրայի «REX ARMENIIS DATUS» լեգենդով, որը կրկին անառարկելի է դարձնում, որ դրանց վրա դրոշմված է արքայական իշխանությամբ օժտելու գործողություն:

---

[217] **Mattingly H.**, Coins of the Roman Empire in the British Museum, vol. IV, London, 1940, pl. 29, N 2; **Sear D. R.**, Roman Coins and their Values, Vol. II, London, 2002, p. 43.

[218] **Մուշեղյան Խ.Ա.**, Դրամական շրջանառությունը Հայաստանում (Մ. թ. ա. V դ. – մ. թ. XIV դ.), Երևան, 1983, էջ 99-100:

[219] **Kropp A. J. M.**, Crowning the Emperor …, p. 384.Fig. 7.

[220] **Mattingly H., Sydenham E.**, Roman Imperial Coinage (RIC), Vol. 3, Antoninus Pius to Commodus, AD 138-192, London, 1930, coin N° 512.



Հորինվածքի կենտրոնում պատվանդանի վրա դրված ճամբարային աթոռին բազմած է Լուկիուս Վերուսը, իսկ նրա կող-քին՝ երկու-երեք անձինք, որոնցից ձախ կողմինը ձեռքին սուր է պահել: Կայսրը, ափը ներքև շրջած աջ ձեռքը մեկնել է Սոհեմոսի գլխին՝ «ձեռնադրությամբ» նրան իշխանությամբ վերաօժտելու համար: Սոհեմոսը, ինչպես Անտոնինուս Պիուսի դրամի վրա, պատկերվել է կարճ տունիկայով, բայց առանց թիկնոցի: Նա կանգնած է դեմքով դեպի ենթադրյալ հանդիսատեսը և բարձրացրել է աջ ձեռքը՝ ի նշան երդման կամ ողջույնի[221]:

Իրանական արվեստում սովորական ինվեստիտուրայի վերոնշյալ կոմպոզիցիոն ձևը այնքան էլ տարածված չէ[222]: Դրա նմուշ է Լ. Վանդեն Բերգի կողմից 1963 թ. հայտնաբերված և հավանաբար Ք. հ. I դ. վերաբերող Հոնգ-ի Յար Ալիվանդի (Ḵong-e Yār ʿAlīvand) էլյումայիսյան ժայռաքանդակը: Ուղղաձիգ ժայռի վրա կերտված և համեմատաբար փոքր չափերով հատկանշվող այս հուշարձանը ներկայացնում է իրար մոտ կանգնած երկու տղամարդու, որոնք կրում են պարթևական ոճի վերարկուներ ու տաբատներ: Սրանցից համեմատաբար հաղթ հասակով կերպարը, աջ ձեռքը դնելով իր ձախ կողմում կանգնած անձնավորության ազդրին, նրան օժտում է իշխանությամբ[223]:

Նույնպիսի կազմություն ունի նաև Տանգ-ի Սերվակի հուշարձանախմբի առաջին քարաբեկորի արևելահայաց կողմի այսպես կոչված BN ժայռաքանդակը (նկ. 24): Այն ճակատային դիրքով ներկայացնում է երկու տղամարդային կերպարանքներ, որոնցից ձախակողմյան կերպարը, հավանաբար ի նշան մեծարանքի կամ երկրպագության, ձեռքերը կարկառել է դեպի աջակողմյան կերպարը, իսկ վերջինս էլ աջ ձեռքը դրել է նրա արմունկին[224]: Թեև հուշարձանի հողմահարվածության պատճառով անհնարին է հանգամանորեն զանազանել պատկերների հագուկապի բոլոր տարբերությունները, այնուամենայնիվ, ակնհայտ է, որ աջակողմյան մեծ

---

[221] Հորինվածքային տարբերակները տե՛ս **Վարդանյան Ռ.**, Լուկիոս Վերոսի օրոք Հայաստանում թողարկված պղնձե դրամներ, *ՊԲՀ*, 2004, թիվ 2, էջ 243-245:

[222] Մ. Նոգարեն ինվեստիտուրային ժանրին է վերագրում նաև պարթևական դարաշրջանին վերաբերող Ֆինիկի ժայռաքանդակը (**Nogaret M.**, Le Relief Parthe De Finik, *Syria*, 61, 3 (1984), p. 257-266): Նրա կոմպոզիցիան բաղկացած է երկու՝ մեծ և փոքր պատկերներից, որոնք ներկայացված են աջ ձեռքերը արմունկներից վեր բարձրացրած: Իսկապես, աջից կամ ձախից ժայռաքանդակին նայելու դեպքում տպավորություն է ստեղծվում, թե «փոքր» պատկերն իր աջը դրել է «մեծ պատկերի» ուսին (**Ibid.**, p. 261, Fig. 4): Սակայն դիմահայաց դիրքից (**Ibid.,** p. 261, Fig. 3) ակնհայտ է, որ պատկերները ներկայացված են առանց հպվելու՝ ողջույնի հատկանշական ժեստով:

[223] **Mathiesen H. E.**, Sculpture in the Parthian Empire…, pp. 123-124.

[224] **Salaris D.**, Space and Rite in Elymais…, pp. 102-103, Fig. 6.5

պատկերը թիկնոց է կրում, իսկ ձախակողմյանը՝ ոչ: Առաջին հայացքից մանրուք թվացող այս իրողությունը պատկերների չափական տարբերության (աջակողմյան պատկերի հասակը 2 մ է, իսկ ձախակողմյան պատկերինը՝ 1,90 մ) հետ համատեղ կարևորելու դեպքում պարզորոշ է դառնում նրանց միջև սոցիալական տարբերությունը:

Վ. Հենինգը, Ջ. Հանսմանը և այլք տարբերակված են պատկերացնում նաև պատկերների գլխի հարդարանքները: Նրանց կարծիքով ավագ պատկերի գլխի պատիվը եղել է ատամնավոր թագ (*corona muralis*),[225] մինչդեռ ձախակողմյան պատկերը կրել է սովորական տիարա: Հ. Մաթիեսեն թեև հերքում է այդ վարկածը[226], բայց միանգամայն արդարացիորեն ամբողջ հորինվածքը մեկնաբանում է որպես ինվեստիտուրային[227], որտեղ աջակողմյան մեծ պատկերը (ամենայն հավանականությամբ պարթևական արքայից արքան) իշխանությամբ է օժտում Էլյումայիսի կառավարչին:

Ինվեստիտուրայի պատկերագրության կառուցվածքային մյուս ձևը՝ առարկայական ինվեստիտուրան, նույնպես հազարամյակների վաղեմություն ուներ: Սրա երևան գալը պայմանավորված էր հին առաջավորասիական միջավայրում ձևավորված այն պատկերացմամբ, թե արքայականությունը (այդ թվում և աստվածների արքայի արքայականությանը) կրում է «իրային բնույթ» և գործնականում առարկայանում է արքայական իշխանության ատրիբուտներում՝ **հագուստ, անխ, թագ, գուրզ, գավազան, գահ, օղակ** և այլն[228]: Սրանով պայմանավորված՝ պաշտոնական արվեստում աստվածության կողմից մահկանացուին իշխանության խորհրդանիշ հանձնելու մոտիվը դառնում է արքայի աստվածընտրյալության և օրինականության գաղափարների պատկերավորման ամենահասկանալի և տարածված հորինվածքային միջոցը: Բնավ պատահական չէ, որ այն հարատևեց պատմական ժամանակի հարափոփոխում, թեև յուրաքանչյուր քաղաքական մշակույթ իր խորհրդանիշերն էր հրամցնում ինչպես ծեսին, նույնպես և պատկերագրությանը:

Առարկայական ինվեստիտուրայի մոտիվը ևս առաջին անգամ երևան է գալիս Էնմետենայի վերոնշյալ արձանագրության մեջ. «Ճակատագրի որոշման **բարձր գայիսոնը**, Էնլիլը Նիպուրից Էնմետենային

[225] **Henning W.**, The Monuments and Inscriptions of Tang-I Servak, in *AM*, 2:2, 1952, p. 160; **Hansman J. F.**, The Great Gods of Elymais. Papers in Honour of Professor Mary Boyce, *AI* 24, Paris, 1985, p. 238.
[226] **Mathiesen H. E.**, Sculpture in the Parthian Empire, footnote 73.
[227] **Ibid.**, p. 138 and footnote 77.
[228] **Вейнберг И. П.**, Человек в культуре древнего Ближнего Востока, М., 1986, 117.



հանձնեց»[229]: Էնմետենայի գայիսոնը հատկանշող «բարձր» մակդիրը թույլ է տալիս կռահել, որ տակավին նախադինաստիական դարաշրջանի Շումերում տարբերակվել են հեգեմոնների աստվածատուր և հպատակ էնսիների ու լուգալների արքայաշնորհ իշխանությունները, որոնք, ամենայն հավանականությամբ, առարկայացվել են «ցածր», «փոքր» կամ «կրտսեր» գայիսոններով: Նմանատիպ տարբերակում ենթադրվում է նաև Իսինի արքա Իշմի-Դագանի (Ք. ա. 1889-1871 թ.թ.) թագադրության առթիվ ստեղծված հիմնում, որտեղ վեհապետական գահը դարձյալ բնութագրվում է «բարձր» մակդիրով՝[230] հասկանալի դարձնելով նրան ստորադաս «ցածր» գահերի գոյությունը: Իշխանության խորհրդանշանների «բարձր» և «ցածր», «մեծ» և «փոքր» և այլ նմանատիպ հակադրումները լիովին համապատասխանում են տակավին Ք.ա. III հազարամյակում երևան եկած վեհապետական «մեծ արքա», «արքայից արքա», «աշխարհի չորս ծագերի արքա» և սովորական «արքա» տիտղոսների հակադրությանը:

Վերոնշյալ կոմպոզիցիոն շաբլոնով է ստեղծվել Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբավայրի արևելյան սանդղավանդից հայտնաբերված քարակոթողի տեսարանը[231]: Այն ներկայացնում է դեմ դիմաց կանգնած կոմմագենյան երկու արքաների, որոնցից աջակողմյանը (հավանաբար Անտիոքոս Ա-ն (Ք.ա. 69-31 թ.թ.)) դիադեմա է հանձնում դիմացի անձնավորությանը (հավանաբար որդուն և հաջորդին՝ Միհրդատ II-ին[232]): Յ. Հ. Յունգը, ով անուրանալի ներդրում է ունեցել այս ստելայի հորինվածքի վերականգնման գործում, նրա ներկայացրած տեսարանը համարում է «հնագույն իրանական ինվեստիտուրային տեսարանը»: Անշուշտ, իրավացի չէ հեղինակը, երբ Կոմմագենեի արքայատունը համարում է իրանական: Այդուհանդերձ, հուշարձանի ժանրային պատկանելիության վերաբերյալ նրա կարծիքը միանգամայն հիմնավոր է[233]: Տվյալ դեպքում մեզ առավելապես հետաքրքրում է պատկերների

[229] **Gadd C. J.**, The Cities of Babylonia, p. 117.
[230] **Емельянов В. В.**, Ритуалв Древней Месопотамии, с. 65.
[231] **von Gall H.**, The Figural Capitals at Taq-e Bostan and the Question of the so-called Investiture in Parthian and Sasanian Art, *SRAA* I, 1990, pp. 108-109, Fig. 6.
[232] **Kropp A. J. M.**, King without Diadems-How the Laurel Wreath Becoame the Insignia of Nabatean Kings, *ArAn* 2. Halbband, 2013, VI (246), p. 30.
[233] Անտիոքոս I-ն իր արձանագրության մեջ իրեն կոչում է «ο Αντίοχος Θεός Δίκαιος Επιφαιος Φιλορωμαίος Φιλέλλην... Մեծ արքա Անտիոքոս Աստված Արդար Հայտնված Հռոմեասեր Հելլենասեր...» (**Մարգարյան Ե.**, Հելլենիստական դարաշրջանի Կոմմագենեի և Ծոփքի պատմությունից, *ԼՀԳ*, 2009, № 1, էջ 30), իսկ Ք. ա. 64 թ, նա նույնիսկ Պոմպեոսից ստացել էր «Սելևկիան և Միջագետքի որոշ

դիրքային և չափական հարաբերություններն ու իշխանությամբ օժտելու գործողության պատկերագրական ձևը: Ինչպես երևում է, պատկերներն այստեղ համաչափ են, նույնական են նրանց թե՛ կանգնվածքն ու հանդերձանքը, թե՛ գոտիները, որոնցից կախված են սրեր: Թեև ստելայի վնասվածքի պատճառով ձախակողմյան պատկերի գլխի հարդարանքը պարզ չէ, այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ այն ևս նույնական է եղել աջակողմյան պատկերների գլխի հարդարանքին: Այս ընդհանուր սիմետիրան խախտված է նրանով, որ աջակողմյան պատկերը ձախ ձեռքով նիզակ կամ երկար գայիսոն է բռնել: Պատկերագրական այս դետալի միջոցով քանդակագործը զանազանել է ավագին կրտսերից, պսակ շնորհողին` այն ստացողից:

Իշխանության նշան հանձնելու միջոցով սովորական ինվեստիտուրայի տեսարանով անդրանիկ դրամները Հռոմում թողարկվել են Ք. ա. 61 թ.` Մարկուս Էմիլիուս Լեպիդուսի կողմից[234]: Դինարի դիմերեսին պատկերված է կանացի գլուխ, որը կից գրությամբ նույնականացվում է անձնավորված Ալեքսանդրիայի հետ: Դարձերեսին ճակատային դիրքով ներկայացված են երկու տղամարդկային պատկերներ: Աջակողմյանը տոգա հագած Մ. Է. Լեպիդուսի նույնանուն նախնին է, որը գլուխը շրջել է դեպի ձախ և աջ ձեռքով դիադեմա[235] է մեկնել ձախակողմյան պատկերի գլխին: Համեմատաբար փոքր չափերով հատկանշվող ձախակողմյան պատկերը, որը նույնացվում է Եգիպտոսի Պտղոմեոս V արքայի հետ, ներկայացված է հունական քիտոնով, աջ ձեռքին թագազարդ գավազան բռնած: Կոմպոզիցիայի ձախ կողմում ընթերցվում է “TUTOR REG[IS]” – «արքայի պահապան» մակագրությունը:

մարզեր» (**Appian's Roman History** with an English Translation, by H. Whiter, Harvard University Press, 1912-1913, Mithrd.Wars, 114): Այդուհանդերձ, Ք. ա. I դ. պարթևահռոմեական սահմանին Կոմմագենեի թագավորության բուֆերային կարգավիճակը բացառում է խնդրո առարկա տեսարանն իբրև Անտիոքոս I-ի կողմից որևէ ենթակա կառավարչի իշխանությամբ օժտելու արարողություն մեկնաբանելու հնարավորությունը: Տեսականորեն հնարավոր է, որ այս հորինվածքը պատմական հիմք չունի, այլ պատկերագրորեն արտահայտել է Կոմմագենեի արքայական իշխանության ուղղակի ժառանգումը Անտիոքոս I-ից Միհրդատ II-ին: Իսկ եթե, այնուամենայնիվ, համարենք, որ ստելայի վրա ներկայացված է իշխանությամբ օժտելու իրապես տեղի ունեցած արարողություն, ապա, պատկերների համաչափության և նրանց հագուկապի և պատվանշանների նույնականության փաստերի ազդեցությամբ ստիպված պետք է ընդունենք, որ քանդակը ներկայացնում է Կոմմագենեի արքայի կողմից կառավարչակից նշանակելու արարողություն, մի բան, որի մասին աղբյուրագիտական վկայություններ չկան:

[234] **Kropp A. J. M.**, King without Diadems…, p. 31.

[235] **Ibid.**, Fig. 7.



Խնդրո առարկա տեսարանում ներկայացված է Մ. Է. Լեպիդուսի նախնու մեծագործությունը Ք. ա. 200 թ., երբ նա, իբր հռոմեական պատվիրակության կազմում, մեկնել է Եգիպտոս: Անդրեաս Կրոպը դրամի ողջ հորինվածքն ու նրա ստեղծման առիթը համա-րում է հնարածո: Նրա կարծիքով, եթե անգամ Լեպիդուս Ավագը եղել է հռոմեական պատվիրակության կազմում, ապա «նա պետք է որ սենատի կրտսեր անդամներից լիներ, հետևաբար չէր կարող այնքան ազդեցիկ լինել, որպեսզի տեղ գրավի արքայի թիկնազորում, առավել ևս, չէր կարող թագադիր դեր իրականացնել»[236]: Սակայն տվյալ դեպքում կարևորը ոչ այնքան հռոմեական դինարի վրայի տեսարանի պատմա-կանությունն է, որքան այն, թե ինչպես էր Ք. ա. I դ. պատկերացվում Հռոմի քաղաքական ազդեցության տակ գտնվող արքայի թագադրության ծեսը: Քանզի կասկածից վեր է, որ այս դրամի հորինվածքը ոչ թե սոսկ Մ. Է. Լեպիդուսի երևակայության արգասիքն է, այլ արտահայտում է հռոմեա-կան հասարակական գիտակցության մեջ hպատակ արքայի կայացման մասին տարածված կարծրատիպը:

Նմանատիպ պատկերագրական սխեմայով է ստեղծվել նաև Կալիգուլայի կողմից Կապադովկիական Կեսարիայում թողարկված հազվադեպ դրամի (հայտնի է ընդամենը հինգ օրինակ) կոմպոզիցիան (նկ. 25): Դրամի երեսին Կալիգուլայի հոր` Գերմանիկուսի պատկերն է, իսկ դարձերեսին ներկայացված է վերջինիս կողմից 18 թ. պոնտական արքայազն Զենոնին Մեծ Հայքի թագավոր կարգելու տեսարանը:

Ուշագրավ է, որ Մեծ Հայքի գահի թեկնածուն պսակված է ավանդական արևելյան խույրով (*θιάρα*) (դատելով որոշ դրամների վրա առկա ձևից` այն պետք է նույնացնել Արտաշեսյան ավանդական թագի հետ), որն արտահայտում էր այն կրողի իշխանության հեղինակությունը ներհանրութային միջա-վայրում` ըստ սովորութային իրավունքի[237] և «խորհրդանշում էր աստ-վածների աշխարհի հետ նրա ունեցած միջնորդական, այսինքն` սրբա-զան, կրոնական ֆունկցիաները»[238]: Այստեղ ևս թագադրողի և թա-գադրվողի պատկերների քաղաքական կարգավիճակները դիրքային ու չափական սկզբունքներից զատ տարբերակված են նաև պատկերագրա-կան դետալների միջոցով: Գերմանիկուսը, որպես իշխանություն շնորհող կողմի ներկայացուցիչ, պատկերված է կոմպոզիցիայի աջ կողմում` ձախ ձեռքով երկար նիզակ

[236] **Ibid.**

[237] **Ստեփանյան Ա.**, Պատմության կերպափոխությունները Մեծ Հայքում, Գիրք Ա, Երևան, 2012, էջ 47:

[238] **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 113:

բռնած, իսկ ձախ կողմում ներկայացված Զենոնն անզեն է և աջ ձեռքը արմունկից վեր է բարձրացրել՝ ի նշան ողջույնի, մեծարանքի (*adoratio/proskynēsis*) կամ հավատարմության ուխտի:

Դրամի վրա ներկայացված է այն կուլմինացիոն պահը, երբ Գերմանիկուսը նախապես հանգուցված դիադեման մեկնել է Զենոնի գլխին՝ նրան արքայական արժանավորությամբ օժտելու համար[239]:

Ուշագրավ է նաև Կալիգուլայի կողմից մ. թ. 38 թ. Թրակիայում թողարկված մեկ այլ դրամը, որը պահվում է Սոֆիայում՝ Բուլղարիայի ԳԱ Հնագիտության ինստիտուտի թանգարանում (գույքահամ. 6801) (նկ. 26): Դրամի երեսին Կալիգուլայի դիմապատկերն է՝ դափնեպսակով և ΓΑΙΩΚΑΙΣΑΡΙΓΕΡΜΑΝΙ[...] եզրագրով: Իսկ դարձերեսին ներկայացված է Թրակիայի կառավարիչ Ռյոմետալկես III-ի թագադրության տեսարանը: Պատկերների չափական հարաբերությունն այստեղ նույնպիսին է, ինչ որ Լեպիդուսի և Կալիգուլայի վերոնշյալ դրամների տեսարաններում: Սակայն այլ է նրանց դիրքային հարաբերությունն ու իշխանությամբ օժտելու գործողության ձևը: Ինչպես նախորդ հուշադրամների վրա, այստեղ էլ արքայականությամբ օժտվող Ռյոմետալկեսին տեղ է հատկացվել կոմպոզիցիայի ձախ կողմում: Նա ներկայացված է հոտնկայս, մինչդեռ հռոմեական կայսրը պատկերվել է նրա դիմաց՝ կուրուլային բազկաթոռին բազմած: Նա աջ ձեռքին գայիսոն է կրում, իսկ ձախով Ռյոմետալկեսին է մեկնել արդեն հանգուցված դիադեման: Կոմպոզիցիան շրջանաձև եզերված է ΒΑΣΙΛΕ/ΥΣ ΡΟΙ/ΜΗΤΑΛΚΑΣ/ ΚΟΤΙΩΣ գրությամբ[240]:

Սովորական ինվեստիտուրայի՝ վերը նշվածներին նման, բայց և նրանցից նկատելիորեն տարբեր մի տեսարան է պարունակում Անտոնինուս Պիուսի մեկ այլ դրամը (նկ. 27), որի դարձերեսի «REX QUADIS DATUS» լեգենդը նշանավորում է Հռոմի կողմից քվադների նոր արքայի նշանակումը[241]: Դրամի դարձերեսի հորինվածքը շատ հետաքրքիր է. այն ներկայացնում է Անտոնինուս Պիուսին և քվադների ցեղառաջնորդին՝ դեմ դիմաց կանգնած: Կայսրը աջ ձեռքով քվադների առաջնորդին է մեկնել դիադեմա, որի ժապավենները թեքությամբ կախված են հանգույցից, իսկ ձախ ձեռքով բռնել է ինչ-որ գալար: Քվադների առաջնորդն էլ աջ ձեռքը մեկնել է՝ ստանալու արքայականության խորհրդանշանը, իսկ մի փոքր առաջ մեկնած ձախ ձեռքով կարծես թե ինչ-որ գունդ է բռնել: Չափական առումով երկու պատկերները հավասար

[239] Համեմատի՛ր **Tacitus**, Annales, II, 56. 2-3.
[240] **Abramzon M. G.**, The "Coronation" Coin…, p. 240, Fig. 1.
[241] **Mattingly H.**, Coins of the Roman Empire in the British Museum, Vol. IV: p. 204-205, N° 1274-1275.



են՝ ի տարբերություն արևելյան արքաների ինվեստիտուրայի առիթներով Տրայանուսի, Անտոնինուս Պիուսի և Լուկիուս Վերուսի թողարկած դրամների, որոնց վրա արքաներն ավելի փոքր են պատկեր-ված, քան կայսրերը: Լ. Ֆ. Պիտցի կարծիքով «Դա կարող է պայմանա-վորված լինել II դ. Արևմուտքում և Արևելքում «բարեկամ» արքաների նկատմամբ Հռոմի վարած տարբերակված քաղաքականությամբ»[242]: Սակայն կարծում ենք, որ նշված տարբերության պատճառը ոչ թե քաղա-քական, այլ քաղաքակրթական է. Հռոմեական կայսրության հյուսիս-արևմտյան հարևան բարբարոսական հանրությունների համար, որոնք պետականության և նրա որպիսիությունն արտահայտող պաշտոնական մշակույթի փորձ չունեին, հռոմեական դրամի «քվադներին թագավոր (է) տրված» լեգենդը միանգամայն բավարար էր խնդրո առարկա հորինվածքը ճիշտ մեկնաբանելու և կայսեր գերագահությունը հասկանալու համար: Մինչդեռ արևելյան քաղաքակրթության ծիրում իշխանություն շնորհող կայսեր և այն ստացող վասալ արքայի համաչափությամբ ստեղծված այսօրինակ ցանկացած հորինվածք կհակասեր իշխանության աստիճանակարգության արտահայտման արևելյան պատկերագրության «ոսկե կանոն»-ին: Քաղաքակրթական անջրպետն արտահայտված է պատկերների արտաքին հարդարանքի միջոցով. կայսրը ներկայացված է տոգայով, մինչդեռ քվադների արքան մորթե թիկնոցից բացի այլ հագուստ չի կրում:

Մ. Աբրամզոնն ու Կ. Դեհմենը սովորական ինվետիտուրայի ենթաժանրին են վերագրում նաև Գորդիանուս III-ի օրոք Եդեսիայում թողարկված երկու տիպի բրոնզե դրամների դարձերեսի կոմպոզիցաները (նկ. 28)[243]: Այստեղ աջ դարձած դիրքով ներկայացված է պատվանդանի վրա դրված կուրուլային բազկաթոռին բազմած Գորդիանուս կայսրը՝ զինվորական թիկնոցով և դափնեպսակով: Կայսրը ձախ ձեռքին գայիսոն (մեկ այլ տարբերակում՝ գունդ) է բռնել, իսկ աջը՝ ափը դեպի վեր, մի փոքր մեկնել է առաջ: Նրա դիմաց՝ դեմքով դեպի կայսրը պատկերված է Օսրոենեի արքա Աբգար X-ը՝ երկար վերնազգեստով, տիարայով և դիադեմայով: Օսրոենի արքան աջ ձեռքը դրել է գոտուց կախված կարճ սրի բռնակին, իսկ ձախով կայսրին է մեկնել մի դեպքում Նիկե աստվածու-

[242] **Pitts L. F.**, Relations between Rome and the German "Kings" on the Middle Danube in the First to Fourth Centuries A.D. *JRS* 79, 1989, p. 49.
[243] **Абрамзон М. Г.**, Осроена в римской восточной политике…, с. 117. **Dahmen K.**, With Rome in Mind? Case Studies in the Coinage of Client Kings, in Kingdoms and Principalities in the Roman Near East, ed. By Ted Keizer and Margherita Facella, Stuttgart, 2010, p. 100, Footnote 9.

հուն, մյուս դեպքում՝ արմավենու ճյուղ:

Անշուշտ, անառարկելի փաստ է, որ 242 թ. Օսրոենեն պարսիկներից ազատագրելուց հետո Գորդիանուսը Եդեսիայում գահ է բարձրացրել Մանու IX-ի որդուն՝ Աբգար X-ին: Ակնհայտ է նաև, որ այս հորինվածքում, ինչպես ինվեստիտուրային թեմայով կազմություններում, խստագույնս պահպանված է աստիճանակարգության սկզբունքը: Այդուհանդերձ, Գորդիանուսի վերոնշյալ դրամի դարձերեսի պատկերագրական սխեման բոլորովին էլ չի համապատասխանում արքայական ինվեստիտուրայի օրինաչափություններին: Նախ, դրամի մակերեսին կայսեր պատկերը տեղադրված է ձախակողմյան, իսկ արքայինը՝ աջակողմյան մասերում, մինչդեռ, ընդունված կանոնի համաձայն, դրանք պետք է տեղադրված լինեին տրամագծորեն հակառակ ձևով: Պակաս կարևոր չէ և այն փաստը, որ քննության առարկա կոմպոզիցիայում շարժումն ուղղված է ոչ թե կայսրից արքային, այլ ընդհակառակը, արքան է հաղթանակի դիցուհուն մատուցում կայսրին: Եվ վերջապես, դրամի դարձերեսի AYTOK. ΓΟΡΔΙΑΝΟΣ ΑΒΓΑΡΟΣ ΒΑΣΙΛΕΥΣ – «ինքնակալ Գորդիանոս, Աբգար թագավոր» լեգենդը բնավ չի խոսում հօգուտ Մ. Աբրամզոնի և Կ. Դեհմենի վարկածի: Ուստի, վերը նշված պատկերագրական փաստերի տեսանկյունից միանգամայն իրավացի պետք է համարել Ստիվեն Կ. Ռոսսին, ով եդեսյան դրամների խնդրո առարկա տեսարանները որակում է որպես «Presentation scene»: Այսպիսի տեսարանները պատկանում են կայսերական ընդունելության ժանրին[244], երևույթի, որի արարողակարգային մանրամասները հայտնի են գրավոր աղբյուրներից[245]:

Հին առաջավորասիական արվեստում առարկայական ինվեստիտուրայի պատկերագրության շրջանակներում առավել տարածված են իշխանության օղակի շնորհման տեսարանները: Ընդ որում, մեզ հասած նյութը հնարավորություն է տալիս դիտարկելու այս խորհրդանշանի կիրառության ընթացքն ու ձևական էվոլյուցիան:

«Իշխանության օղակ»-ն իբրև աստծո (աստվածների) կողմից արքաներին շնորհվող բացառիկ որակի՝ արքայականության խորհրդանշան առաջավորասիական արվեստում երևան է եկել տակավին Ք.ա. III հազարամյակի վերջին քառորդից: Մեզ հայտնի հնագույն հուշարձանը, որի

244 **Ross S. K.**, Roman Edessa: Politics and Culture on the Eastern Fringes of the Roman Empire, 114-242 CE, London and New York, Routladge, 2001, p. 145-150.

245 **Plutarchus**, Lucul., XXXI, 6. **Ammianus**, XXIII. 3.8. «Այստեղ նրան (Հուլիանոսին – Ա. Մ.) ներկայացան սարակինոսյան ցեղերի արքայիկները: Նրանք ծնկի եկան նրա դիմաց, մատուցեցին ոսկյա թագը՝ երկրպագելով նրան որպես աշխարհի և իրենց տիրակալ»:



վրա օղակը ներկայացված է այս նշանակությամբ, դա Նարամ Սինի արձակ հիշատակված ինվեստիտուրային քարակոթողն է: Մշակութային փոխառության կամ ժառանգականության ճանապարհով հետագայում այն յուրացվել է լուլուբյան[246], շումերական[247], բաբելոնյան[248], էլամական[249], ասսուրական[250]տիրակալների կողմից:

«Վիդեվդադ»-ում, որի ծագումը վերագրում են իրանական հանրության նախաաքեմենյան դարաշրջանին, աստվածաշնորհ իշխանության խորհրդանշաններ են համարված ոսկյա եղջերվափողն ու ոսկեզարդ մտրակը.

*«....Եվ այդժամ ես՝ Ահուրա Մազդաս, նրան (Յիմին – Ա. Մ.) տվեցի երկու առարկա՝ ոսկե փող[251] և ոսկով զարդարված մտրակ,*

*որոնք խորհրդանշում էին Յիմին պատկանող երկու իշխանությունները»*[252]:

Դարեհ I-ի Բեհիսթունի ժայռաքանդակի վրա, ապա և Աքեմենյան արքաների Նախշ-ի Ռուստամի դամբարանների ճակտոններին թևատարած օղակից հառնող ոգեղեն Ահուրամազդան պարսից արքաներին է մեկնում ոչ թե մտրակ կամ եղջերվափող, այլ «իշխանության օղակ», ինչը պետք է բացատրել ձևավորվող Աքեմենյան պաշտոնական կերպարվեստի վրա ասուրամիջագետքյան պատկերագրության ուժգին ազ-

246 **Herzfeld E.**, Iran in the Ancient East, London, 1941, pp. 183-196; **Potts D.**, The Archaeology of Elam, p. 319, Fig. 9.3.

247 См. **Памятники мирового искуства**. Искусство Древнего Мира, под ред. Е.И. Ротенберга, М., 1968, с. 290, рис. 194 б.

248 **Bahrani Z.**, “The Babylonian Visual Image” in *The Babylonian World,* Edited by Gwendolyn Leick, Routledge, New York, London, 2007, p. 159.

249 **Potts D.**, The Archaeology of Elam, p. 234, Fig. 7. 10.

250 **Ornan T.**, The Godlike Semblance of a King: the Case of Sennacherib’s Rock Reliefs, in *Ancient Near Eastern Art in Context*, Studies in Honor of Irene J. Winter by Her Students, Edited by Jack Cheng, Marian H. Feldman, vol. 26, Leiden, Boston, 2007, p. 176, fig. 1; **Winter I. J.**, Culture and History of the Ancient Near East 34 [1–2]). Vol. 1, *Of the First Millennium B.C.E.* On Art in the Ancient Near East, Leiden, Boston, 2010, p. 121, fig. 2; **Ibid**, p. 122, fig. 3: **Ibid**, p. 180, fig. 5. Page. 561, Figure 22.

251 Ավեստայի՝ Ի. Խ. Բրագինսկու իրականացրած թարգմանության մեջ «ոսկե փող»-ի փոխարեն նշված է «ոսկյա նետ» (См. **Авеста** в русскиь переводах, под ред. И. В. Рака, Изд. Русского христианского гуманитарного института, Санкт Петербург, 1997, с. 85):

252 **Авеста**, «Закон против девов» (Видевдад), Адаптированный перевод, исследование и комментарии Э. В. Ртвеладзе, А. Х. Саидова, Е. В. Абдуллаева, Санкт Петербург, 2008: Миф о Йиме, 6, 7, с. 77. Դրամագիտական նյութերը ցույց են տալիս, որ հին արևելաիրանական հասարակության կիսաքոչվորական կենցաղի հետ ուղղակիորեն կապված այդ խորհրդանշանները իրենց վերոնշյալ իմաստը պահպանել են նաև հետագայում՝ հնդ-սկյութական և քուշանական թագավորություններում:

դեցությամբ:

Վաղ հելլենիզմի դարաշրջանում «իշխանության օղակ»-ը առժամանակ մղվեց հետին պլան՝ տեղը զիջելով հիմնականում հունական սիմվոլիկային՝ դիադեմային, արմավենու ճյուղին և պսակին: Եվ միայն Ք. ա. II դ. Արշակունիների բարձրացրած հակահելլենականության ալիքի հետ խնդրո առարկա խորհրդանշանը վերադարձավ հաղթանակի և արքայական փառքի պատկերագրության ոլորտ:

Ավեստայի որոշ շերտերում, ինչպես և վաղ պարթևական մի շարք դրամների վրա[253] աստվածաշնորհ զորությունը պատկերված է պատերազմի և հաղթության աստված Վերեթրագնայի մարմնավորումը հանդիսացող Վարգան բազեի տեսքով[254]: Միհրդատ I Արշակունու Հոնգ-ի Աշդարի բարձրաքանդակի[255], ինչպես նաև, պարթևական ու էլյումայիսյան արքաների որոշ դրամների[256] վրա բազեները կամ արծիվները արդեն պատկերված են արքաներին կտուցով կամ մագիլներով աստվածաշնորհ զորության միջագետքյան խորհրդանշանը՝ «իշխանության օղակը» մատուցելիս[257]:

---

[253] **Sellwood D.**, An Introduction to the Coinage of Parthia, London, 1980, Tayp 6.1-2.
[254] **Зубов А. Б.**, Харизма власти. От современности к древности: опыт архетипической реконструкции, *Восток*, 1994, но. 4, с. 82. **Shahbazi Sh.**, An Achaemenid Symbol. II. Farnah (God given) Fortune Symbolised, *AMI* 13, 1980, pp. 119-147. **Մանասերյան Ռ.**, Հայաստանը Արտավազդից մինչև Տրդատ Մեծ, էջ 95-96: Համեմատե՛լ **Периханяан А. Г.**, Материалы к этимологическому словярю древнеармянского языка, Ереван, 1993, с. 6. Ա. Պիռասի կարծիքով, Վարգան բազեի պատկերագրությունն ու խորհրդապաշտությունը սկզբնավորվում է հին միջագետքյան միֆական թռչուն Անզուից և խառնված է «արծվի ծառի» հին հնդ-իրանական կոնցեպցիային: Ըստ այդմ էլ, նա արծվի խորհրդանշանի արեգակնային մոտիվում սեմիտա-իրանական սինկրետիզմը համարում է իրանական արքայական գաղափարախոսության մեջ հավերժականության նկատմամբ հավատի նշան (**Piras A.**, Preliminary Remarks on Melammu Database. The Continuity of Mesopotamian Culture shwed by Iranological Evidenses, in *Ideologies as Intercultural Phenomena.Proceedings of the Third Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellctual Heritage Project.*Held in Chicago, October 27-31, 2000. Milan: Università di Bologna & Islano, 2002, p. 208.
[255] **Potts D.**, The Archaeology of Elam, p. 389, Fig. 10. 9.
[256] **de Morgan Auction** 18, lot 38; **Sellwood D.**, 52. 10-12; 52.37; 53. 5.
[257] Բ. Կեիմը, նկատի ունենալով հին պարսկերենի *Miθra* (պահլ. mihr, Ավեստայում՝ μίϑρα, հայերեն՝ բարեկամություն, համաձայնություն, պայմանագիր) գոյականի բառոյական խիստ գունավորումը և նրա սերտ կապը պայմանագրերը վերահսկող և նրանց անձեռնամխելիությունն երաշխավորող Միթրա աստվածության հետ, գտնում է, որ պարթևական և Սասանյան դարաշրջանների իրանական ինվեստիտուրային քանդակներում «օղակը պետք է մեկնաբանվի որպես արքայի և աստվածության միջև պայմանադրության կամ համաձայնության՝ միթրայի խորհրդանիշ» (**Kaim B.**, Investiture or Mithra: Towards a New Interpretation of So Called Investiture Scenes in Parthian and Sasanian Art, *IrAn* 44, 2009, pp. 405-415): Այս կարծիքը պաշտպանում է նաև Բ. Օվերլեթը, որը սասանյան արվեստում լայնորեն



Պարթևական դարաշրջանի իրանական արվեստում «իշխանության օղակ»-ը որպես արքայականության խորհրդանշան դրամահատության, ժայռաքանդակային և կիրառական արվեստի բնագավառներում գործածվել է երկակի նշանակությամբ: Առաջին դեպքում, ինչպես օրինակ Տանգ-ի Սերվակի երկրորդ քարաբերկորի այսպես կոչված Ana ժայռաքանդակի (նկ. 29)[258] և Բրիտանական թանգարանում պահվող պարթևական գոտեճարմանդի (ցուցադրանմուշ ANE 1981-11-7,1) վրա են (նկ. 30),[259] պատկերները վերև կամ առաջ մեկնած աջ ձեռքով կարծես ի տես են հանում

---

տարածված «երկժապավեն օղակ»-ով տեսարանների մեկնաբանությունը որպես աստվածային ինվեստիտուրա համարում է «անթույլատրելի պարզեցում»: Հեղինակի կարծիքով «Օղակը կարող է ունենալ տարբեր նշանակություններ. ի թիվս այլ մեկնաբանությունների, այն կարող է նշանակել նաև որպես mithra-պայմանագիր, համաձայնություն կամ հավատարմության ուխտ» (**Overleat B.**, And Man Created God? Kings…, p. 315): Իհարկե, վեհապետական իշխանության դեպքում վերոնշյալ մեկնաբանության հետ դեռ կարելի է մասամբ համաձայնել. աստվածության կողմից «իշխանության օղակ»-ի՝ որպես արքայականության խորհրդանիշի շնորհումը արքային, ինքնըստինքյան ենթադրում էր աստվածների հետ արքայի նախօրոք կայացրած համաձայնությունը: Սակայն անվիճելի է, որ արքայի փուլային կայացման հին առաջավորասիական և իրանական պատկերացումներում համաձայնությունն ու իշխանության շնորհումը դիտվել են տարբեր փուլեր: «Համաձայնություն»-ը մշտապես նախորդել է «իշխանությամբ օժտել»-ուն, որը և հանդիսացել արքայի կայացման վերջին՝ եզրափակիչ գործողությունը (См. **Когда вверху**, Таблица I. См. Мифы и легенды народов мира, т. 3, с. 239. **Авеста**, Видевдад, Миф о Йиме, 6, с. 84. **Behistun Inscription** I, 48-61, *in* **King L. W., Tompson R. C.**, The Sculptures and Inscription of Darius the Great on the Rock of Behistun in Persia. London, 1907): Այս առումով ինքնին խոսուն է այն փաստը, որ ինվեստիտուրայի ժանրով ստեղծված հնագույն քանդակների վրա արքաները նույնիսկ չեն հպվում աստվածությունների կողմից իրենց մեկնված օղակներին, իսկ սասանյան պատկերագրության մեջ, եթե անգամ հպվում են, ապա միայն ստացողի ակնհայտ ժեստով: Սրանից դիտորդները ոչ թե արքայի և աստծո պայմանադրության, այլ աստծո կողմից բացառիկ որակի հանձնման տպավորություն կարող էին ստանալ: Այս հանգամանքը նկատի առնելով՝ պետք է համաձայնել Ք. Ահրիմանի կարծիքին, ըստ որի, իրանական ինվեստիտուրային բարձրաքանդակների վրա օղակը հանդիսացել է աստվածությունների կողմից արքաներին շնորհվող ուժի և արժանավորության խորհրդանիշը (**Ahreeman X.**, Persian Mythology, Gods and Goddesses: A Pictorial Research and Guide, *Iran Politics Club*, 2006, (access. Nov. 2008)): Ինչ վերաբերում է սովորական ինվեստիտուրայի պատկերագրության ոլորտում օղակի գործածության վերաբերյալ Բ. Կեյմի և Բ. Օվերլեթի վերապահմանը, ապա այն անընդունելի է, քանի որ վեհապետի և նրան հպատակ սուբյեկտի միջև պայմանադրության մասին խոսք լինել չէր կարող: Հպատակ արքայի իշխանությունը կայանում էր վեհապետի միակողմանի շնորհով և նրա բացարձակ կամքով էլ կարող էր վերանալ, անկախ այն բանից՝ ենթակա սուբյեկտը դրժել է վեհապետի նկատմամբ իր հավատարմության ուխտը թե ոչ:
[258] **Salaris D.**, Space and Rite in Elymais…, p. 104, Fig. 6.6.
[259] **Curtis V. S.**, Parthian Belts and Belt Plaques, *IrAn 36*, 2001, p. 325, Pl. XII a, b..

արքայականության այս խորհրդանշանը: Ուստի, որոշակի վերապահությամբ այսպիսի հորինվածքները կարելի է համարել արքայական սուվերենության հռչակագրեր:

«Օղակի» գործածությամբ մյուս տիպի հորինվածքների կենտրոնում պատկերագրված է «օղակ»-ի տալու-ստանալու հարաբերությունը, որով և պարզաբանվում է ամբողջ հորինվածքի իմաստը: Օղակն այս նշանակությամբ է պատկերված է Միհրդատ I-ի Հոնգ-ի Աշդարի (նկ. 31) և Գոթարզ Գևարրդու Սարպոլ-ի Զահաբի աստվածային ինվեստիտուրայի թեմայով ստեղծված ժայռաքանդակների վրա[260]: Մինչդեռ, պարթևական դարաշրջանից մեզ հասած միակ հուշարձանը, որն անառարկելիորեն պատկանում է սովորական ինվեստիտուրայի ժանրին, Հվասակի քարակոթողն է (նկ. 32): Այն թվագրված է պարթևական դարաշրջանի 462 թ. Սպանդարամատ ամսի Միհր օրով (Ք. հ. 215 թ. սեպտեմբերի 14)[261] և ներկայացնում է պարթևաց արքա Արտավան V-ին, որն իշխանության օղակ է հանձնում իր դեմ կանգնած Շոշի կառավարչին: Քարակոթողի վրայի արձանագրության մեջ ընթերցում են «Արտավանը, արքայից արքան, արքայից արքա Վաղարշի որդին կառուցեց այս [կոթողը] որի վրա [պատկերված է] Հվասակը՝ Շոշի սատրապը»[262]:

Կոմպոզիցիայի առումով Հվասակի քարակոթողը բավականին ընդհանրանում է աստվածային ինվեստիտուրայի հին միջագետքյան բարձրաքանդակների հետ. այստեղ ևս հօգուտ իշխանություն շնորհող կողմի

[260] Ուսումնասիրողներից ոմանք Հոնգ-ի Աշդարի և Սարպոլ-ի Զահաբի ժայռաքանդակները վերագրել են սովորական ինվեստիտուրայի ենթաժանրին: Սրանցում իշխանություն շնորհող կողմ են համարվել հեծյալները, որոնց այդ դիրքը դիտվել է իբրև հետիոտների նկատմամբ նրանց գերազահության արտահայտություն: Կարևոր փաստարկ է համարվել և այն, որ հեծյալների պատկերները զարդարված են արքայական դիադեմայով, մինչդեռ նրանց դիմաց կանգնած հետիոտները զուրկ են դրանից: Սակայն այս մեկնաբանությունը հիմնված է սոսկ կերպարների դիրքային հարաբերության վրա, մինչդեռ կատարելապես անտեսվել է չափի և կարևորության ուղիղ համեմատականության հին առաջավորասիական պատկերագրական սկզբունքը: Մեր կարծիքով, հիշյալ հուշարձանների հետիոտն կերպարներին, նկատի ունենալով նրանց չափական ակնհայտ առավելությունը հեծյալների համեմատ, պետք է նույնացնել դիցերի հետ և ըստ այդմ էլ, շարժումը պատկերացնելով հետիոտներից դեպի հեծյալները, այդ հուշարձանները վերագրել աստվածային ինվեստիտուրայի ժանրին:

[261] **Ghirshman R.**, Iran, Parthies et Sassanides, Paris, 1962, pp. 56-57, fig. 70; **Potts D.**, The Archaeology of Elam, pp. 401- 402; **Colledge M. A. R.**, The Parthian Period *(Iconography of Religions* XIV, ser. No. 3), Leiden, 1986, p. 16, pl. XVIII. Մ. Քոլիջի կարծիքով առկա արձանագրության մեջ նշված թվականը (14. 09. 215 թ.) վերաբերում է ոչ թե կոթողի ստեղծմանը, այլ նրա վրա պատկերված թագադրությանը:

[262] **Potts D.**, The Archaeology of Elam, p. 401.



են լուծված դիրքային և չափական հարաբերությունները. Արտավան V-ը պատկերվել է թիկնակավոր գահին բազմած, իսկ Հվասակը կանգնած է նրա դիմաց: Դրանով հանդերձ՝ Շոշի կառավարչի պատկերն ավելի մեծ չէ, քան Արշակունի վեհապետինը՝ նստած դիրքով: Բացի սրանից՝ Արտավանի և Հվասակի ուղղաձիգ հարաբերությունն ընդգծված է նաև այնպիսի պատկերագրական տարրերով, ինչպիսիք որ նրանց գլխի հարդարանքներն են. Արտավանը պատկերված է սաղավարտաձև տիարայով և դիադեմայով, որի ժապավենները կախված են թիկունքից, մինչդեռ Հվասակը գոտուց բացի այլ պատվանշան չի կրում:

Սասանյանները ինվեստիտուրայի պատկերագրության ոլորտում կատարեցին իրենց քաղաքական հավակնություններից բխող մի քանի նորամուծություններ: Այսպես, ինվեստիտուրայի մոտիվներով ստեղծված հին առաջավորասիական հորինվածքներում արքայաստեղծ աստվածությունները չափական և դիրքային առավելություն ունեն արքաների համեմատ: Նույն ժանրի կոմմագենյան և պարթևական ստեղծագործություններում այդ հարաբերությունները դրսևորված են տարբեր կերպ[263]: Սասանյան պաշտոնական կերպարվեստում, արդեն իսկ Արտաշիր I-ի օրոք, մտցվեց արքայի և նրան իշխանություն շնորհող անթրոպոմորֆ աստվածության համաչափության և դիրքային համազորության սկզբունքը: Այս փոփոխությունները խիստ համահունչ էին Սասանյանների հրապարակած քաղաքական հռչակագրերին և կոչված էին պատկերագրորեն հաստատելու Իրանի նոր տիրակալների և զրադաշտական աստվածությունների ազգակցությունն ու սերտ համագործակցությունը:

Դիցաբանական և սոցիոգոնիական պատկերացումներում արքան համարվում էր նյութական աշխարհի առանցքն ու սոցիալական տիեզերքի կենտրոնը, և նրա՝ որպես աստվածների ընտրյալի մեջ միաձուլվում էին տիեզերական և սոցիալական ոլորտները[264]: Նա գերագույն աստվածության՝ Ահուրամազդայի մահկանացու տեղապահն

[263] Կոմմագենեի Նեմրութ լեռան սրբարանի ստելաների վրա արքաներն ու աստվածությունները պատկերված են համաչափ, բայց վերջիններիս մերկությունը ծառայում է իբրև յուրօրինակ դետերմինանտ՝ պատկերներին դիֆերենցելու համար: Պարթևական դրամական պատկերագրության մեջ չափական և դիրքային հարաբերությունը լուծված է հօգուտ արքաների, իսկ աստվածությունների գերմարդկային էությունը հասկացվում է նրանց դիցական ատրիբուտներից (թևեր, առատության եղջյուր և այլն) և արքաներին իշխանության կամ հաղթանակի խորհրդանշան (դիադեմա, պսակ, օղակ, արմավենու ճյուղ) շնորհելու փաստից: Մինչդեռ ժայռաքանդակային արվեստում դիցերն ավելի մեծ են պատկերված, քան արքաները:

[264] **Брагинский Н. В.**, Царь. См Мифы народов мира, т. 2, М., 1988, с. 614.

ու գործընկերն էր երկրի վրա: Իբրև Իրանի և ողջ նյութական աշխարհի պատասխանատու տիրակալ, նա աստծո կողմից օժտված էր աշխարհիկ և հոգևոր իշխանությամբ և նյութական աշխարհում կատարում էր այն նույն դերը, ինչ որ գերագույն տիրակալ Ահուրամազդան համայն տիեզերքում[265]: **Այսպիսով, արքան կապ ու միջնորդ էր մարդկայինի (միկրոաշխարհի) և աստծո (մակրոաշխարհի) միջև: Հպատակ արքաների թագադրության արարողության՝ արքայաստեղծ ծիսակատարության ընթացքում վեհապետը ընդգծում էր աստվածների աշխարհի հետ իր ուղղակի կապը: Եվ քանի որ մյուս երկրային կառավարիչները հաղորդակից չէին աստվածների աշխարհին, նրանց $x^{w}$arrah-ը կարող էր ծագել միայն Իրանի վեհապետից և հետևաբար՝ պետք է ստորադասվեր նրա փառքին:** Գաղափարական այս մտայնությամբ էր, որ իր իշխանության ներքո Իրանի վերամիավորումից հետո Արտաշիրը վերացրեց վասալ արքայիկների՝ տաճարներում վառվող դինաստիական կրակները և արքունիս գրավեց այդ տաճարների ունեցվածքը: Իրանի տարածքում վառվող բոլոր արքայական կրակներից այդուհետ պետք է մնար միայն արքայից արքայի կրակը, որը սակրալ առումով դառնալու էր ողջ տերության ծիսագաղափարական և քաղաքական կյանքի կենտրոնը, և, միաժամանակ, նաև նրա կենսառիթմի (ժամանակի) չափման միավորը: Այդուհանդերձ, **հպատակ արքաներին արմատական դեր էր վերապահվում զրադաշտական էսխատոլոգիայում, քանի որ Չարի և Խավարի ուժերի դեմ արքայից արքայի պայքարի ժամանակ նրանք պարտավոր էին իրենց ֆառնը միավորել Ահուրամազդայի ընտրյալի շուրջը՝ մասնակից դառնալու տիեզերքի վերջնական վերածնության գործին:** Այս նոր մեկնաբանության ծիրում սովորական ինվեստիտուրայի ծեսը դադարում էր պարզապես վեհապետ–վասալ ուղղաձիգ հարաբերության ձևակերպման միջոց, իսկ նրա պատկերագրական դրսևորումները՝ վեհապետի ուժի և հեղինակության արտահայտչաձև լինելուց: Այն վերաիմաստավորվում է իբրև սոցիալական կոսմոսի ներդաշնակությանն ու բարօրությանն ուղղված վեհապետի հոգատարության ակտ[266]:

[265] Համաձայն Ավեստայի՝ առասպելական Յիմը Ահուրամազդայի առջև հանձն էր առել. «Ես կնուցեմ քո աշխարհը, ես կմեծացնեմ քո աշխարհը, ես պատրաստ կլինեմ դառնալու պաշտպանը, պահապանն ու վերակացուն աշխարհի: Եվ իմ տիրապետության տակ ո՛չ սառը, ո՛չ էլ տաք քամի, ո՛չ հիվանդություններ, ո՛չ էլ մահ չի լինի» (**Авеста**, Видевдад, Миф о Йиме, 5):

[266] Մ. Խորենացու համաձայն՝ 385 թ. հայ նախարարներին հղած ուղերձում Շապուհ III-ը նշել է. «.... Ըստ տիրաբար խնամոց գթացաք ի ձեզ և յաշխարհդ ձեր. զմտաւ ածեալ, եթէ ոչ կարեն հօտք առանց հովուաց լինել, և հովիւք առանց բա-



Սկզբունքային փոփոխություններ կատարվեցին նաև իշխանության խորհրդանշանի բնագավառում: Պարթևական արվեստում «իշխանության օղակ»-ը ինվեստիտուրայի երկու ենթաժանրերում էլ պատկերվում էր միօրինակ: Մինչդեռ հավանոտ Սասանյանները դեռևս նախքան Արշակունիներին տապալելը իրենց սուվերեն (աստվածատուր) իշխանությունը խորհրդանշեցին երկժապավեն օղակով *(yāreh)*: Պատկերագրական այս նորույթն ամենավաղը տեսնում ենք Պապակի որդի Շապուհի ինվեստիտուրայի պերսեպոլիսյան գրավիտի վրա (նկ. 33)[267]: Ըստ երևույթին, Սասանյանները, ինվեստիտուրային պատկերագրության ոլորտում ետին պլան մղելով օտարամուտ պսակն ու դիադեման, իրենց ֆառնի արտահայտման համար ավանդական «օղակն» էլ համարել են չափազանց անշուք: Վերոնշյալ պերսեպոլիսյան գրավիտների վրա նոր խորհրդանշանի ձևական առանձնահատկություններից (օղակին հավելված ժապավենների կարճ, ծոպանման տեսքից) կարելի է ենթադրել, որ այն ստեղծվել է հին առաջավորասիական «օղակ»-ի և հելլենիստական դիադեմայի պարզ միացությամբ: Սակայն Արտաշիր I-ի Նախշ-ի Ռաջաբի և հետագայում Սասանյանների աստվածային ինվեստիտուրայի թեմայով ստեղծած բոլոր ժայռաքանդակների վրա օղակներն արդեն զարդարված են ոճավորված, վերից վար իջնող և դեպի ծայրերը լայնացող ծալքավոր ժապավեններով: Մինչև Սասանյան հարստության կառավարման վերջերը իրանական արվեստում այն մնաց իբրև անթրոպոմորֆ աստվածությունների կողմից վեհապետներին տրվող սուվերեն իշխանության հիմնական խորհրդանշանը՝ նախկին ժապավենազուրկ օղակին թողնելով Իրանի վեհապետի շնորհով կայացող հպատակ արքայական իշխանության խորհրդանշումը:

Որոշ դեպքերում, ինչպես օրինակ Շապուհ I-ի Բիշապուհ II և Բիշապուհ III հաղթական ժայռաքանդակների վրա են, Իրանի վեհապետին ժապավենազուրկ օղակի հանձնումը խորհրդանշում էր այն հանձնողի անձնատվությունը[268]: Սակայն այս խորհրդանշանը հաճախ գործածված

րիոք վերակացուի, վասն որոյ թագաւորցուցաք ձեզ զԽոսրով ոմն ի դէնէ ձերմէ, և յազգէ բնիկ ձերոյ տէրութեանդ» (**Մ. Խորենացի**, III, ԽԲ):

[267] **Gallieri P.**, At the Roots of the Sasanian Royal Imagery: The Persepolis Graffiti, figs. 2, 3, 4, 10; **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 156, рис. 25.

[268] Դատելով Բիշապուր II-ի վրա Շապուհին օղակ մեկնած պատկերի հագուստից ու գլխի հարդարանքից (Տե՛ս **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 73, рис. 11)՝ նրան պետք է նույնականացնել պարսկա-հռոմեական շփման գծի որևէ երկրի կամ քաղաքապետության արքայիկի հետ: Բիշապուհ III-ի վրա արքայից արքա Շապուհին օղակ մեկնած պատկերներն արդեն առնվազն չորսն են (Տե՛ս **Hinz W.**, Altiranishe Funde und Fourschungen, S. 180, Tafel 105): Ա. Սուդավարը նրան-

է նաև այնպիսի կազմություններում, որտեղ պարսից արքայի կողմից ինվեստիտուրայի, հաղթանակի կամ հպատակեցման մասին խոսք լինել չի կարող: Նման հորինվածքներում օղակավոր պատկերները ներկայացված են կամ «վեհապետից հետո» (նկ. 34),[269] կամ նրան դիմահայաց դիրքով (նկ. 35)[270]: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ Սասանյան դարաշրջանի իրանական կերպարվեստում վեհապետից հետո օղակով պատկերվելու մենաշնորհը պատկանել է գահաժառանգներին և, տվյալ դեպքերում, ժապավենազուրկ օղակը խորհրդանշել է ոչ թե սովորական կախյալ արքայի, այլ «մեծ արքայի» իշխանությունը:

Ժապավենազուրկ օղակի գործադրությամբ սովորական ինվեստիտուրայի մի օրինակ է Սեիստանի (սակերի) Սասանյան կառավարիչ Արտաշիրի[271] (մոտ 240-260 թ.թ.) պղնձե դրամի դարձերեսի հորինվածքը: Այն բավականին ընդհանրանում է սելևկյան և պարթևական դրամների՝ անուղղակի ինվեստիտուրայի թեմայով հորինվածքներին: Սրա երեսին ներկայացված է արքայի աջ դարձած դիմապատկերը՝ կարճ մորուքով և գլխի ինքնատիպ պատվով՝ քյուլահով: Իսկ դարձերեսին, որտեղ սովորաբար ներկայացվում էին Տյուխե կամ Նիկե աստվածուհիները՝ իշխանության խորհրդանիշեր (օղակ, պսակ, դիադեմա կամ արմավենու ճյուղ) առաջ մեկնած, պատկերված է Արտաշիրի իշխանության աղբյուրը՝ արքայից արքա Շապուհ I-ը՝ հեծյալ դիրքով՝ աջ ձեռքով իշխանության օղակ մեկնած: Դրամի փոքր մակերեսին հեծյալ արքայի պատկերը լա-

ցից առաջինին, որը ներկայացված է կոմպոզիցիայի կենտրոնական մասում՝ Ֆիլիպ Արաբի թիկունքում, նույնացնում է քուշանների արքայի հետ (**SoudavarA.**, Looking trough the Two Eyes of the Eart, p. 32): Բիշապուհ III–ի մյուս երեք օղակավոր պատկերները տեղաբաշխված են Աներանը ներկայացնող աջակողմյան մասի վերևից առաջին և երկրորդ բաժիններում և, անկասկած, կերպավորում են պակաս նշանակալից կառավարիչների:

[269] Տե՛ս **Vandāee M.**, The Tang-e Qandil Bas-Relief: A Reconsideration, *Sasanika Archaeology* 15, (2013), p. 18, Image 2, p. 22, Image 8, p. 23, Image 9; **Kawami T. S.**, Kuh-e Khwaja, Iran, and its Wall Paintings: The Records of Ernst Herzfeld, *MMJ* 22, 1987, p. 39, Fig. 18):

[270] Տե՛ս **Herper P. O.**, Silver Vessels of Sasanian Period, Published in associacion with Princeton University Press, New York, 1981, p. 203, Pl. 2

[271] Վ. Գ. Լուկոնինը, ով անձամբ ուսումնասիրել է այս դրամների առավել լավ պահպանված օրինակները, նրանց վրա ընթերցում է «*bgy ʼrtʼšyry skʼn MLKʼ BRY ʼrtʼ* - տեր Արտաշիր, սակերի արքա, [որդին] Արտա...» լեգենդը: Ըստ այդմ, նա գտնում է, որ խնդրո առարկա դրամները պատկանում են Շապուհ I-ի արձանագրության մեջ հիշատակված «սակերի արքա» Արտաշիրին (**Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 40. **Его же**, Завоевание Сасанидов но Востоке и проблема абсолютной кушанской хронологии, *ВДИ*, 1969, но. 1-2, с. 25. **Никитин А.**, Парфянские драхмы, *СМ* 1988, но. 2, с. 63.



վագույնս տեղաբաշխելու անհրաժեշտությամբ արքայի տիարան կորցրել է իր իրական ձևը և սիմվոլիկ բնույթ է ստացել: Սակայն նրա հագուստը, մազերի ինքնատիպ հարդարանքը (անձնորոշիչ այդ տարրի մասին կխոսվի ավելի ուշ), հեծյալ դիրքը և, հատկապես, նրա ծոծրակին ծածանվող ժապավենները աներկբա են դարձնում, որ պատկերված է Սասանյան արքայից արքան: Ակնհայտ է, որ խնդրո առարկա դրամի վրա վերարտադրված է Սասանյան արքաների պաշտոնական պատկերաքանդակի՝ ժայռաքանդակային արվեստում ստեղծված պատկերաձևը: Միայն թե Իրանի վեհապետն այստեղ ներկայացված է արքայաստեղծ այն գործառույթով, ինչ որ Աhուրամազդան՝ աստվածային ինվեստիտուրայի ժանրով ստեղծված Սասանյան քանդակների վրա[272]:

Վեհապետի և նրա շնորհին արժանացող արքայի դիրքային նույն հարաբերությամբ է ստեղծվել Ռավալփանդում (Պակիստան) հայտնաբերված և Բրիտանական թանգարանում (ցուցադրանմուշ թիվ 124093) պահվող IV դ.[273] քուշանա-սասանյան արծաթե ափսեի կենտրոնական պատկերաքանդակի վերին մասի կոմպոզիցիան (նկ. 36)[274]: Այստեղ վեհապետը ներկայացված է ճակատային դիրքով՝ նստած անթիկնակ նստարանին, որի ոտքերը ոճավորված են գրիֆոնների տեսքով: Նրա գլխի հարդարանքը բաղկացած է բացառապես դիադեմայից, որի երկար ծալքազարդ ժապավենները կախ են ընկած թիկունքից: Մազերի հարդարանքը նման է III-IV դ.դ. Սասանյան արքաների մազերի հարդարանքին: Վեհապետը ձախ ձեռքը դրել է գոտկատեղին, իսկ աջով օղակ է մեկնել իր դիմաց կանգնած տղամարդուն: Վերջինս ձախ ձեռքը դրել է գոտուց կախված սրի բռնակին, իսկ աջը մեկնել է առաջ՝ արքայական իշխանության խորհրդանշանը ստանալու համար: Երկու կերպարների միջև պատկերված թռչող մերկամանուկը, որին Ա. Սուդավարը նույնականացնում է Ապամ Նապատի հետ, երկու ձեռքով վեհապետի գլխին է մեկնել գլխակա-

[272] Վ. Գ. Լուկոնինը ենթադրաբար (հենվելով Է. Հերցֆելդի վերականգնման վրա) սովորական ինվեստիտուրայի ենթաժանրին է վերագրում նաև Կուհ-ի Խվաջի արքայական պալատի ճակտոնը զարդարող որմնանկարներից մեկի կոմպոզիցիան: Ըստ այդմ նա հավանական է համարում, որ այդտեղ նույնպես պատկերված է սակերի արքա Արտաշիրը՝ Իրանի վեհապետից իշխանության օղակ ստանալիս (**Луконин В. Г.**, Култура Сасанидского Ирана, с. 40-41, прим. 14): Սակայն հիշյալ որմնանկարի մեջ բացակայում են իրանական ինվեստիտուրայի պատկերագրությանը հատկանշական «տալու-ստանալու» կամ վասալին վեհապետի հպման պատկերագրական տարրերը: Ուստի, չկիսելով անվանի իրանագետի կարծիքը, գտնում ենք, որ խնդրո առարկա որմնանկարի վրա ներկայացված է ոչ թե արքայական իշխանությամբ օժտելու, այլ ծիսական երթի տեսարան:

[273] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 148 и сл.

[274] **Herper P. O.**, Silver Vessels of Sasanian Period, p. 109, Fig. 35.

պի ժապավեն (dastār), որը ուղղակիորեն աղերսվում էր $x^{w}$arreh-ի հետ[275]:

Ընդհանուր առմամբ, այս հորինվածքում իշխանությամբ օժտողի և այն ստացողի չափական և դիրքային հարաբերությունները բավականին նման են Չվասակի ստելայի վրա ներկայացված հարաբերություններին: Սակայն էապես տարբեր է գործողության ներկայացման կոմպոզիցիոն ձևը. ի տարբերություն Չվասակի, որը պատկերվել է իշխանության օղակը բռնած, բայց դեռևս չստացած, խնդրո առարկա զարդանկարի վրա իշխանության թեկնածուն ներկայացվել է աջ ձեռքը օղակին թեթևակի հպած, բայց առանց այն բռնելու: Այս պատկերագրական դետալը սասանյան ինվեստիտուրային քանդակի նորամուծություններից էր, որով կոմպոզիցիայի կենտրոնում ներկայացվող գործողությունը դարձվում էր ավելի դինամիկ՝ հնարավորություն տալով դիտորդին հստակորեն զանազանելու իշխանություն շնորհող և այն ստացող կողմերին (նկ. 37):

Այսպիսով, սովորական ինվեստիտուրային տեսարաններով հռոմեական դրամների և նույն մոտիվով ստեղծված իրանական հուշարձանների հորինվածքների զուգադրությունը պարզորոշ է դարձնում հորինվածքային-պատկերագրական մի քանի կանոններ, որոնք, իրապես վերարտադրելով թագադրության իրական արարողությունների ժամանակ[276] և պալատական էտիկետի ոլորտում[277] դրսևորվող տարբերությունները, այս ենթաժանրի ստեղծագործությունները դիտորդի համար դարձնում էին ավելի դյուրըմբռնելի:

1. Ի տարբերություն աստվածային ինվեստիտուրայի ենթաժանրով ստեղծագործությունների, որոնցում աստվածություններից իշխանություն ստացող վեհապետները կարող էին ունենալ իրենց հպատակ սոցիումը խորհրդանշող ուղեկից պերսոնաժ, սովորական ինվեստիտուրայի ժանրով պատկերաքանդակների վրա վեհապետից իշխանություն ստացող անձինք մշտապես ներկայացված են միայնակ: Այս կերպ ընդգծվում էր վեհապետի հետ վասալ արքայի կապի անձնական բնույթը և նրա ստացած իշխանության սահմանափակ բովանդակությունը:

2. Հորինվածքային առումով ինվեստիտուրայի գործողությունն արտահայտված է կամ վեհապետի կողմից իշխանության թեկնածուի մարմնին հպվելու, կամ էլ նրան իշխանության նշան հանձնելու եղանակով:



Առաջին դեպքում իշխանությամբ օժտվող անձինք պասսիվ դիրքով են, և շարժումը (իշխանություն շնորհելու գործողությունը) բխում է միայն վեհապետից: Առարկայական ինվեստիտուրայի պատկերագրության մեջ իշխանություն հանձնելու գործողությունը կայանում է երկու կողմից՝ «տալու-ստանալու» հարաբերակցությամբ:

3. Սովորական ինվեստիտուրայի ժանրով պատկերաքանդակների վրա իշխանությամբ օժտողի և այն ստացողի աստիճանների տարբերություններն արտահայտված են կոմպոզիցիայում նրանց ստատիկ տեղաբաշխմամբ. իշխանությամբ օժտող կողմը մշտապես ներկայացված է աջ կողմում, մինչդեռ իշխանություն ստացողը պատկերված է նրանից ձախ:

4. Վեհապետի և նրա կողմից թագադրվողի քաղաքական կարգավիճակները զանազանված են այդ երկուսի դիրքային և չափական կոնտրաստի միջոցով, որի տեսողական էֆեկտը մեծացվում է նրանց իշխանության նշանների, հագուստի, զարդարանքի, գլխի հարդարանքի տարբերություններով:

Վերոնշյալ իրողությունները նկատելի լույս են սփռում նաև Սալմաստի ժայռաքանդակի բնույթի և նշանակության վրա: Սրա երկու պատկերախմբերում էլ հեծյալ արքաներին վերապահված է քանդակային մակերեսի աջակողմյան, իսկ հետիոտներին՝ ձախակողմյան մասը: Այստեղ նույնպես աչք է զարնում արքաների հեծյալ և նրանց դիմացի անձանց հետիոտն դիրքերի հակադրությունը: Ընդ որում, ինվեստիտուրայի տեսարաններում հեծյալ արքայի պատկերաձևի նորամուծությամբ տառացիորեն վերարտադրված է վեհապետ-վասալ ուղղաձիգ հարաբերության այն սխեման, որը, համաձայն Հովսեպոսի ու Պլուտարքոսի, արևելյան արքունիքներում կանոնական նշանակություն ուներ[278]: Հետևաբար, միանգամայն արդարացված է արքաների հեծյալ դիրքը վեհապետների գահակալ դիրքի պատկերագրական համարժեք համարելը:

Ինչ վերաբերում է հետիոտն պատկերներին, ապա, ինչպես նշել ենք, նրանց կեցվածքը բնավ էլ չի համապատասխանում անտիկ պատկերագրության մեջ մշակված «պարտված»-ի կամ «հպատակեցված»-ի կանոնական պատկերաձևերին: Ընդհակառակը, նրանց ազատ և անկաշկանդ կանգնվածքը, իրանական հագուկապը, դեպի հեծյալ վեհապետները նրանց ձգված կեցվածքը, բայց հատկապես, հեծյալ արքաների նկատմամբ նրանց դիրքային և չափական անհամապատասխանությունները ապացու-

---

[275] **Soudavar A.**, The Aura of Kings…, pp. 19-23; **Idem** The Significanse f Av. Čithra…, pp. 173-174.

[276] **Dio Cass.**, LXIII, 5.3. «…. և երբ (Տիրիդատեսին) նստեցրին նրա ոտքերի առաջ, նա (Ներոնը) խույրը դրեց նրա գլխին»:

[277] **Plutarchus**, Lucul., XXXI, 6; **Flavius Josephus**, Opera, v. 2-3 (Bellum Iudaicum), XX, 60; **Ammianus**, XXIII. 3.8.

[278] **Flavius Josephus**, Opera, v. 4-9 (Bellum Iudaicum), XX, 60. «…. Նա (Ադիաբենեի արքա Իզատեսը – Ա. Մ.) Արտաբանեսին ձի նստեցրեց, իսկ ինքը հետիոտն հետևում էր, այդ պատիվը մատուցելով նրան, քանի որ նա ավելի մեծ թագավոր էր»: **Plutarchus**, Lucul., XXXI, 6.

ցում են Վ. Հինցի վարկածն առ այն, որ **Սալմաստի ժայռաքանդակի տեսարանը վերաբերում է սովորական ինվեստիտուրայի ենթաժանրին:**

Ժայռաքանդակի կատարողական ցածր մակարդակի, քանդակի ֆոնից պատկերների ոչ հստակ տարանջատման, էրոզիայի կամ, որ հավանական է, բարձրաքանդակի անավարտության պատճառով այնքան էլ հստակ չի երևում, թե ինչ են փոխանցում արքաները հետիոտն անձանց: Սակայն նրանց ձեռքերի «տալ-ստանալու» կանոնացված ժեստը (նկ.8) աներկբա է դարձնում, որ այստեղ ևս փոխանցման առարկան իրանական ինվեստիտուրայի ժանրին խիստ ընտանի իշխանության օղակն է:

Բացի այդ՝ հետիոտն պատկերների գոտիների, հագուստի և մազերի հարդարանքի հարևնմանությունը, ինչպես նաև հեծյալ արքաների հետ նրանց հարաբերությունների միօրինակությունը պարզորոշ են դարձնում, որ ժայռաքանդակի հետիոտն պատկերները մարմնավորում են ոչ թե տիրոջ ու վասալի (հայոց արքային և նրա վեզիրին), ինչպես ենթադրում են Վ. Էնսլինը, Մ.-Լ. Շոմոնը, Վ. Հինցը և այլք, այլ պատվո նույն աստիճանի տեր անձանց: Դրանից բխող հետևությունը միանշանակ է. **Սալմաստի հուշակոթողի վրա պատկերված են իշխանությամբ օժտելու ոչ թե մեկ, այլ երկու՝ իրար խիստ նման տեսարաններ, որոնք, սակայն, ինչպես Տանգ-ի Բուտանի էլյումայիսյան ժայռաքանդակի վրա, որոշակի նկատառումներով իրարից չեն տարանջատվել և դիտորդի մոտ հեշտությամբ մեկ կոմպոզիցիոն ամբողջականության պատրանք են ստեղծում:**



## 7
## ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԻ ՁԱԽԱԿՈՂՄՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԽՄԲԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Սալմաստի ժայռաքանդակի պատկերների նույնականացման հարցում ամենակարևոր դետալները ցայսօր համարվել են հեծյալ արքաների թագերը: Դրանց զննությունը, իսկապես, աներկբա է դարձնում Արտաշիր I-ի թագի հետ նրանց ձևական նմանությունը: Ավելին, դրամների և բարձրաքանդակների վրա պարսից այս արքայի թագերի հետ նրանց համեմատության միջոցով կարելի է ճշտել, թե Սալմաստի ժայռաքանդակի վրա արձանագրված իրադարձությունը Սասանյան տերության պատմության որ շրջանին է վերաբերում:

Արտաշիր I-ի դրամների վրա ներկայացված են պարսից այս արքայի գլխի հարդարանքի առնվազն յոթից ութ տիպեր[279], որոնք ընդհանրանում են միայն խույրի և ապարոշի համադրությամբ: Դրամների առաջին վաղ թողարկումների վրա խույրերը պարզ կիսագնդաձև են (նկ. 38 ա, բ, գ, դ, ե, զ)՝ նման նրանց, որ կրում էին Միհրդատ II Արշակունին[280], Պարսքի որոշ տիրակալներ[281] ու Արտաշիրի հայր Պապակը[282]: Մնացած հինգ տիպերում արքայի խույրը աստիճանաբար ձևափոխվում է: Արծաթե դրահմաների թողարկումներից մեկում արքան պատկերված է թասակավոր թագով, որն ունի համեմատաբար փոքր գնդաձև վերջավորություն[283]: Հետագա թողարկումներում թասակը համադրված է պարսպաձև խույրի հետ, իսկ նրա գնդաձև վերջավորությունն էլ վերածած է ծվաձև կորոմբոսի[284]: Սասանյան հարստության հիմնադրի անձնական թագի վերջնական՝ զարգացված տարբերակը մենք տեսնում ենք նրա կառավարման վերջին շրջանում հատված ոսկյա ու արծաթե դրամների (նկ. 39 ա, բ, գ, դ, ե, զ), Նախշ-ի Ռուստամ I-ի փառահեղ ժայռաքանդակի և մեր քննության առարկա հուշարձանի վրա (նկ. 40):

[279] **CNG Auction** 58, lot 803, 806 -812; **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 221-222, табл. I-II.
[280] **Sellwood D.**, An Introduction…, Type 28.
[281] **Peus Auction** 371, lot 273.
[282] **Triton Auction** VII, lot 548-549.
[283] **CNG Auction** 58, lot 811.
[284] **Peus Auction** 371, lot 274; **CNG Auction** 58, lot 810; **Alram M.**, Nomine proprio Iranica in Nummis: Materialgrundlagen zu den iranischen Personennamen auf antiken Münzen, Iranisches Personennamenbuch Band 4, Vien, 1986, coin no. 684.

Բացի թագից՝ առկա են նաև այլ պատկերագրական դետալներ, որոնք հիմնավորում են Արտաշիր I-ի հետ Սալմաստի ժայռաքանդակի ձախակողմյան հեծյալի նույնացումը: Այդպիսին է օրինակ ձախակողմյան հեծյալի տաբատը, որի փողքերը լայնանում են ծանր, ուղղաձիգ ծալքերով: Արքայական հանդերձանքի այս տարրի ինդիվիդուալ և այն էլ կարճատև կիրառության փաստը հաստատում է, որ Սալմաստի ժայռաքանդակի ձախակողմյան պատկերախմբում ներկայացված գործողությունը տեղի է ունեցել Արտաշիր I-ի կառավարման վերջին շրջանում:

Սալմաստի ժայռաքանդակի պատկերների, մասնավորապես ձախակողմյան հեծյալի նույնացման գործում կարևոր, բայց զարմանալիորեն ցայսօր բավարար ուշադրության չարժանացած դետալը նրանց մազերի հարդարանքն է: Արտաշիր I-ի համեմատաբար վաղ շրջանում հատած դրամների (նկ. 38 ա, բ, գ, դ, ե, զ), ինչպես նաև Նախշ-ի Ռաջափ III (նկ. 41) և Փիրուզաբադ II (նկ. 42) ինվեստիտուրային ժայռաքանդակների վրա արքան պատկերված է մազերը տիարայի տակ հավաքած: Բայց արդեն համեմատաբար ուշ շրջանում հատած դրամների երեսին (նկ. 39 ա, բ, գ, դ, ե, զ), ինչպես նա Փիրուզաբադ I և Նախշ-ի Ռուստամ I ժայռաքանդակների վրա Արտաշիր I-ի երկար մազերը իջնում են ուսերին ու մեջքին: Այնքան էլ հստակ չէ Սալմաստի ժայռաքանդակի վրա Արտաշիր I-ի մազերի հարդարանքի «հնեցման» պատճառը: Տեսականորեն՝ հնարավոր է, որ քանդակագործը իբրև բնօրինակ ձեռքին ունեցել է Արտաշիր I-ի համեմատաբար վաղ շրջանի դրամ, որից էլ վերարտադրել է ձախակողմյան հեծյալի դիմապատկերը: Սակայն չի բացառվում հակառակը, որ Սալմաստի ժայռաքանդակը ճշտորեն վերարտադրել է պատմական մի այնպիսի ժամանակահատվածի իրողություն, երբ Արտաշիր I-ի մազերի հարդարանքի ձևը դեռևս չէր փոփոխվել, կամ էլ փոխվել էր դրամական պատկերագրության մեջ, բայց Պարսքում դեռևս չէին ստեղծվել Փիրուզաբադի և Նախշ-ի Ռուստամի հուշարձանները, որոնց վրա կամբողջանար պաշտոնական պատկերաքանդակի այդ փոփոխությունը: Սալմաստի ժայռաքանդակի՝ ստորև ներկայացվելիք պատկերագրական որոշ իրողություններ այս երկրորդ վարկածը դարձնում են միանգամայն ընդունելի: Ամեն դեպքում՝ **Սալմաստի ժայռաքանդակի ձախակողմյան հեծյալի գլխի հարդարանքի այս ձևը լրացուցիչ հիմնավորում է Արտաշիր I-ի հետ նրա նույնացումը, քանզի, նրանից բացի, Սասանյան և ոչ մի արքա մազերը տիարայի տակ հավաքած չի պատկերվել**[285]:

[285] Ռ. Կեր Պորտերի գրաֆիկական նկարն այս առումով իրապաշտական է, մինչդեռ, Շ. Տեքսիեն շեղվել է բնօրինակից՝ ձախ հեծյալի մազերի հարդարանքը ներ-



Շատ ավելի խնդրահարույց է Արտաշիրի դիմաց ներկայացված հետիոտն պատկերի նույնականացումը: Ինչպես նշվել է առաջին բաժնում, ուսումնասիրողների մեծամասնության կողմից այն նույնականացվել է Հայաստանի Արշակունի արքայի հետ: Մ.-Լ. Շոմոնն այս վարկածը հիմնավոր է համարում՝ մատնացույց անելով այս և աջակողմյան պատկերախմբի հետիոտնի «պարթևական» հագուստը: Սակայն Մ.-Լ. Շոմոնի փաստարկը հազիվ թե լուրջ կռվան հանդիսանա ավանդական կարծիքի օգտին, քանի որ վաղ միջնադարից մեզ հասած հայկական արքայական պատկերներ չկան, որոնք թույլ կտային օբյեկտիվ պատկերացում կազմել հայկական արքունի հանդերձանքի մասին: Մյուս կողմից, II-III դ.դ. պարթևաէլյումայիսյան նյութերի (Բարդ-ի Նեշանդ, Տանգ-ի Սերվակ) հետ III դ. առաջին կեսի սասանյան պատկերաքանդակների համեմատությունը պարզորոշ ցույց է տալիս, որ արագ ձևափոխության ենթարկվել է Սասանյան արքայական հանդերձանքը, մինչդեռ պալատական էլիտայի հագուկապն այս շրջանում դեռևս հստակորեն չի զանազանվել պարթևականից:

Սալմաստի ժայռաքանդակի ձախակողմյան պատկերախմբի հետիոտնի, ինչպես և աջակողմյան պատկերախմբի հեծյալ և հետիոտն պատկերների նույնականացման գործում ևս սկզբունքային նշանակություն պետք է տրվի մազերի հարդարանքին: Արտաշիր I-ի դիմացի հետիոտնի մազերի խոպոպները աջ և ձախ կողմերից հավաքված են գնդաձև *(hair bunched at sides)* (նկ. 5 ա): Հարդարանքի այս ձևը, որքանով որ կարելի է դատել Բեհիսթունի, Պերսեպոլիսի, Շոշի և Նախշ-ի Ռուստամի վիմաքանդակներից, իր արմատներով հասնում էր մինչև Աքեմենյան դարաշրջան[286]: Ընդ որում, Աքեմենյանների օրոք հարդարանքի այս ձևը, ավելի ճիշտ, նրա նախօրինակը, Աhուրամազդայի պատկերի կանոնական տարրը լինելուց զատ, գործածական էր նաև արքայական ընտանիքի և պարսկական ազնվականության շրջանում՝ առանց սոցիալական հստակ սահմանազատումների:

Դրամագիտական նյութերը ցույց են տալիս, որ հելլենիստական դարաշրջանի իրանական արքունիքներում մազերի ուռուցիկ հարդարանքը թեև խիստ սպորադիկ, շարունակել է գործածական մնալ[287]: Մա-

կայացնելով հարևնման աջ հեծյալի մազերի հարդարանքին:

[286] **Hinz W.**, Altiranische Fund und Fourschungen, S. 80-94, Tafel 28-39

[287] Մազերի հարդարանքի այս ձևն առկա է I դ. սկզբներին և II դ. կեսերին Պարսքում կառավարած Բակուր I (**Peus Auction** 320, lot 1259-1260), Նամբեդ (**Ibid.**, lot 1261 -1263), Մինուչեթրի IV (**Ibid.**, lot 1279) և I դ. վերջերի Սակաստանի պարթևական սատրապ Բակուրի (**Alram M.**, Nomine proprio Iranica in Nummis…, coin no. 1189; **Triton Auction V**, lot 1684; **CNG Auction** 66, lot 826), Արաքոսիայի պարթևա-

զերի այսպիսի հարդարանքով պատկերներ, դրամներից բացի, հայտնի են նաև պարթևական դարաշրջանին վերաբերող գոտեճարմանդների, Տանգ-ի Սերվակի էլյումայիսյան ժայռաքանդակների[288] և Միհրդատ I-ի Հոնգ-ի Աշդարի հուշարձանի վրա: Պարսքի Նապադ և Մինուչեթրի I արքաների որոշ դրամների դարձերեսին այս հարդարանքով է ներկայացված նաև Միթրա աստվածությունը[289]: III դ. կեսերին, երբ Սասանյան կերպարվեստը կանոնականացնում էր զրադաշտական աստվածությունների անթրոպոմորֆ պատկերները, մազերի ուռուցիկ հարդարանքը (ամենայն հավանականությամբ Հոնգ-ի Աշդարի ժայռաքանդակի տպավորությամբ) մնաց Ահուրամազդայի արտաքին հատկանիշներից մեկը: «Աստվածներից սերված լինելու» հավակնությամբ Սասանյանները խնդրո առարկա հարդարանքը կիրառեցին նաև արքունիքում: Բայց, ի տարբերություն Աքեմենյանների, այն կրելու իրավունքը վերապահվեց միայն արքային, նրա թագաժառանգին, առանձին դեպքերում՝ նաև կառավարող արքայատան արքայազններին: Մազերի վերոնշյալ հարդարանքն առաջին անգամ երևան է գալիս Արտաշիր I-ի Նախշ-ի Ռաջաբի ժայռաքանդակի՝ գահաժառանգ Շապուհի պատկերի վրա՝ (նկ. 43): Այն նույն «նեղ ընտանեկան» նշանակությունն ունի նաև Շապուհ I-ի Նախշ-ի Ռաջաբի ժայռաքանդակի վրա, որտեղ արքայի ետևում ներկայացված ինը պատկերներից մազերի այսօրինակ հարդարարնք կրում են առնվազը երկուսը (նկ. 44): Պատկերագրական այս դետալը «լայն ընտանեկան» նշանակությամբ է կիրառվել Շապուհ I-ի Բիշապուհ II, Բիշապուհ III և Շապուհ II-ի Բիշապուհ IV ժայռաքանդակների վրա, ամենայն հավանականությամբ, պարսիկներին ներկայացնող պատկերախմբերի մեջ Սասանյան արքայազներին զանազանելու համար: Այլ խոսքով՝ մազերի ուռուցիկ հարդարանքի

---

կան սատրապ Բակուրի (**Alram M.**, Nomine proprio Iranica in Nummis..., coin no.1190; **Corny and Mosch** Auction 130, lot 1717-1721. **CNG Auction** 66, lot 827; **Peus Auction** 386, lot 442), Հյուսիսային Հնդկաստանի, Գանդհարայի և Սինդի քուշան տիրակալներ Աբդագասես II-ի (մոտ. 90 թ.) և Բակուրի (մոտ. 100 թ.) դրահմաների, Իրանի արքայից արքա Խոսրով I Արշակունու (**Sellwood D.**, An Introduction ..., 80.1, 80. 8-9, 80.11, 80.29; **Walker A.**, Forgeries and Inventions of Parthian Coins, *Bulletin on Conterfeits*, vol. 19, no. 2 (1994/5), p. 14), II դ. սկզբներին էլյումայիսմում իշխած Կամնասկիրես-Օրոդես II (**Alram M.**, Nomine proprio Iranica in Nummis..., 480) և Օրոդես III (**CNG Auction** 63, lot 885) արքաների, Գոնդոփարյան հարստության արքա Բակուրի (**CNG Auction** 75, lot 672), Իրանի արքայից արքա Վաղարշ V Արշակունու և Թուրանի սատրապ Արդամիթրայի (**Corny and Mosch Auction** 130, lot 1722-1723) և դրամների վրա (**Walker A.**, Forgeries and Inventions of Parthian Coins, p. 15-20):

288 **Potts D.**, The Archaeology of Elam, pp. 403-405, figures 10.15-10.17.

289 **Peus Auction** 404, lot. 2351; 2358.



նեղ սոցիալական նշանակության ընդունումը բանալի է Սալմաստի բարձրաքանդակի վրա այս հարդարանքը կրող երեք պատկերների անձնորոշման համար:

Ինչպես վերը նշվեց, Արտաշիր I-ի արքունիքում միայն թագաժառանգ Շապուհն ունի մազերի ուռուցիկ հարդարանք: Նրա այս «մենաշնորհը» պարզորոշ է դարձնում, որ Սալմաստի ժայռաքանդակի վրա **Իրանի նոր հարստության հիմնադրից արքայականության խորհրդանշան ստացողը ոչ այլ ոք է, եթե ոչ նրա թագաժառանգ որդին:**

Անշուշտ, առաջարկվող մեկնաբանությունը տեղիք է տալիս մի շարք հարցադրումների, ասենք, մինչև 240 թ. Շապուհի կրած արքայական իշխանությունը ի՞նչ տարածական ընդգրկում է ունեցել, կամ որքանո՞վ և ինչպե՞ս է այն ներդաշնակել տերության գահաժառանգի կարգավիճակի և իրականացրած համապետական գործառույթների հետ և այլն: Սասանյան վիմագրերը սրանց մասին, ցավոք, ոչինչ չեն հաղորդում: Ուստի, այս և սրանց հարակից հարցերի պատասխանները կարող ենք ստանալ միայն գրավոր աղբյուրների ցաք ու ցրիվ և մեծի մասամբ անուղղակի տվյալները Իրանական տերության III դ. առաջին կեսի ռազմաքաղաքական իրադարձությունների համատեքստում վերարժևորելու միջոցով:

## 8
## ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ՇԱՊՈՒՀԸ «ԵՐԿՐՈՐԴԸ ԱՐՔԱՅԻՑ ՀԵՏՈ». ՀՂՈՒՄ ՀԻՆ ԱՎԱՆԴԱԿԱՐԳԻՆ

Բոլոր հինարևելյան միապետություններում էլ գահաժառանգի հաստատության քաղաքական նշանակությունը նույն էր՝ համընդհանուր ճանաչում տալ կառավարող արքայի հավանական իրավահաջորդին՝ ապագայում սահուն իշխանափոխության միջոցով երկրի ներքին կայունությունն ապահովելու համար[290]: Այս հարցը խիստ հրատապ էր նաև վաղ Սասանյան տերության կյանքում:

Սասանյանները Իրանի գահին տիրացել էին որպես տոհմ, որի միասնությունը նրանք մշտապես ընդգծում էին: Այդ պատճառով էլ, թվում է, գահաժառանգության գործում տիրապետող պետք է դառնար նահապետական սկզբունքը: Սակայն արդեն իսկ Արտաշիր I-ի օրոք ծնվեց գահաժառանգության կարգի այլ մեկնաբանություն, այն է՝ գահը կարող էր փոխանցվել կամայաբար՝ հորից որդի: Սրանում դրսևորվում էր Արտաշրի կողմից Պարսքի, ապա և ողջ Իրանի զավթման ձևը և, դրանով պայմանավորված, Իրանի ու հենց արքայական իշխանության նկատմամբ նրա «նիզակի նվաճման» իրավունքը: Այս բացարձակ իրավունքով էլ Արտաշիրը դեռևս Արշակունիների դեմ պայքարի շրջանում (հնարավոր է, որ նույնիսկ նախքան դա) գահաժառանգ հայտարարեց Արշակունիներից սերող Միրոդ թագուհուց ունեցած որդուն՝ Շապուհին:

Սակայն գահի փոխանցման հաստատագրված մեխանիզմների բացակայության[291] պայմաններում այս կամ այն սկզբունքին նախապատվություն տալը դեռևս բավարար չէր: Անհրաժեշտ էր նաև տեսականորեն հիմնավորել և գործնականում հաստատագրել կայացրած վճիռը:

Ինչպես երևում է, Արտաշիր I-ն իր գահաժառանգ որդու համար բարենպաստ քաղաքական մթնոլորտ ստեղծելու նկատառումով հենվել է

[290] **Меликян А.**, Институт «второй после царя» в иранской государственной системе Ахеменидской эпохи, *МИ* 4, 2013, с. 89.

[291] Այսպես կոչված «Թանսարի նամակում» Իրանի նոր գահակալի ընտրության իրավունքը վերապահված է զրադաշտական քահայանապետի (mowbedān mowbed), դպրապետի (dabīrbed, dibīruft) և սպարապետի (spāhbed) խորհրդին՝ քահանայապետի կարծիքի գերապատվության պայմանով: Սակայն վաղուց է ցույց տրվել, որ պետության կառավարման համար զանազան տեսական և գործնական խորհուրդներ, ինչպես նաև բարոյական կանոններ պարունակող այս ստեղծագործությունը գրվել է Խոսրով I-ի օրոք՝ 557-570 թ.թ., և միտումնավոր վերագրվել է Արտաշիր I-ի նշանավոր մոգպետ Թանսարին (**Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 104-106. “**The Letter of Tansar**”, translated by M. Boyse, Roma, 1968):



նախորդ իրանական հարստությունների փորձի վրա՝ վերակենդանացնելով այսպես կոչված *pasāgrīw*-ի հաստատությունը[292]:

Պերսեպոլիսից, Հաթրայից, Եդեսիայից, Պարթևստանից հասած վիմագրերն ու գրավոր պատմողական նյութերը ցույց են տալիս, որ աքեմենյան և հելլենիստական դարաշրջաններում *pasāgrīw* հասկացությունը գործածվել է երկակի իմաստներով՝ կախված այն բանից, թե «*pasā*» (հետո) նախդիրը ստատիկ թե՞ դինամիկ իմաստով է արտահայտվել[293]: Առաջին դեպքում *pasāgrīw*-ը ցույց է տալիս որոշակի կայուն աստիճանակարգության մեջ այս տիտղոսը կրողի հաստատուն դրությունը՝ նշանակելով «արքայից հետո երկրորդ», «երկրորդ (անձնավորություն) ըստ աստիճանի», «փոխարքա», «տեղապահ»: Այս դեպքում այն նույնանում է հին պարսկ. **dvitiyaxšaya* -«երկրորդ կառավարիչ», միջ. պարսկ. *bidaxš*-բդեշխ, «փոխարքա» հասկացություններին[294]: Երկրորդ դեպքում, երբ «*pasā*» մակբային տրված է զուտ ժամանակային իմաստ, *pasāgrīw* նշանակում է իրավահաջորդ, գահաժառանգ[295]:

Վաղ սասանյան դարաշրջանում «արքայից հետո երկրորդ»-ի գործառնության մասին գրավոր վկայությունները գալիս են մանիքեական միջին պարսկերեն տեքստերից, որոնցում այն կոչված է *ps'gryw*[296]:

[292] Երկու՝ *pasā* և *grīw* մասնիկներից բարդված այս բառը, ըստ Բ. Հեննինգի դասական մեկնաբանության, բառացի նշանակում է «իրենից հետո» (**Henning W. B.**, Ein manichäisches Bet-und Beichtbuch, *APAW* 10, 1936, S. 512-513):

[293] **Sanches M. G.**, The Second after the King and Achaemenid Bactria on Classical Sources, in Antela-Bernardes B., Vidal L., eds, *Central Asia in Antiquity. Interdisciplinary approaches*, Oxford, 2014, pp. 53-63; **Gnoli T.**,‘Pasgribā’ at Hatra and Edessa // Ideologies as Intercultural Phenomena. Proceedings of the Third Annual Symposium of the Assyrian and Babylonian Intellectual Heritage Project. Held in Chicago, USA, October 27–31, 2000 / Ed. by A. Panaino and G. Pettinato. Milano, 2002, p. 79.

[294] **Hinz W.**, Altiranische Funde und Forschungen, S. 149-153. **Хуршудян Эд.**, Парфянские и сасанидские административные институты (По данным нарративных источников и эпиграфики). Афтореферат диссертации по соискание степени кандидата исторических наук, Ленинград, 1990, с. 9.

[295] Իրանական էպիգրաֆիկայի բնագավառում խնդրո առարկա հասկացությունը *'passâ tanūm* – «իրենից հետո» հոմանիշով առաջին անգամ երևան է գալիս Քսերքսես I-ի պերսեպոլիսյան երկլեզու արձանագրության մեջ՝ որպես Դարեh I-ի կողմից գահաժառանգ ճանաչված Քսերքսեսի յուրօրինակ մակդիր (**Herzfeld E.**, A New Inscription of Xerxes from Persepolis. *SAOC* Vol. 5, Ed. by J. H. Breasted and T. G. Allen. Chicago, 1932. p. 4-5): Տե ՛ս նաև **Меликян А.**, Институт «второй после царя»..., с. 88-118. **Gnoli T.**,‘Pasgribā’ at Hatra and Edessa, p. 79.

[296] Ֆ. Ժինյուն վավերական է համարում այդ վկայությունները, սակայն, մանիքեական տեքստերի *ps'gryw*-ը համարելով պաշտոնի անվանում, գտնում է. «Այդ պաշտոնի էությունը մնում է անորոշ: Այն հավանաբար պատկանել է գահերեց իշխանին կամ թագաժառանգին: Հնարավոր է, որ նրա պարտականությունները

Անշուշտ, սասանյան *pasāgrīw*-ին միայն ստատիկ իմաստով, այսինքն իբրև պետական պաշտոն դիտարկելու դեպքում պետք է նույնացնենք բդեշխի հետ: ŠKZ-ում Արտաշիրի (միջ. պարսկ. l. 29, պարթև. l. 23, հուն. l. 56), և Շապուհի (միջ. պարսկ. l. 31, պարթ. l. 25, հուն. l. 61) արքունի ցուցակներում էլ բդեշխը հիշատակված է Սասանյան արքայատան անդամներից հետո, բայց առաջ քան ամենաանվանի տոհմերի ներկայացուցիչները: Դրանով իսկ պետական համակարգում նրանց գրաված դիրքը բառացիորեն համապատասխանում է «արքայից հետո երկրորդ» հասկացությանը:

Արշակունյաց և Վաղ Սասանյան դարաշրջանների պետական համակարգերում հին պարսկ. *Pasāgrīw* և պահլավ. *bidaxš* պաշտոնների նույնականությունը հաստատում է V-VI դդ. հեղինակ Իսիքիոսը, որը պարսկերեն *bístaxš* բառը թարգմանում է որպես «արքայից հետո երկրորդ»: Նմանապես և *Ayādgār ī Zarērān* պահլավերեն ավանդապատումում Վշնասպ արքայի տեղապահ Ջամասպը կոչված է *bidaxš*[297]: Մյուս կողմից էլ փաստ է, որ Արտաշիր I-ի և Շապուհ I-ի ժայռաքանդակների վրա «արքայից հետո երկրորդ»-ի դիրքում պատկերված են ոչ թե Սասանյան արքայատնից սերող բդեշխները, այլ Սասանյան գահաժառանգները: Այս ակնհայտ երկվությունից թերևս կարելի է գալ մի եզրակացության. ավել կամ պակաս չափով գահնամակի նշանակություն ունեցող վաղ սասանյան վիմագիր ցուցակներում «արքայից հետո երկրորդ»-ի դիրքը հաստատագրվել է բդեշխներին, մինչդեռ **պատկերագրական տեքստերում, ինչպիսիք հանդիսանում են սասանյան ժայռաքանդակները, «արքայից հետո երկրորդ»-ի դիրքը արժևորվել է դինամիկ իմաստով և վերապահվել է գահաժառանգներին:**

Ինչպես երևում է, Արտաշիրն իր հարազատ եղբայրների և որդիների մեջ Շապուհի իբրև *ps'gryw* բարձրացման գործում ևս առաջնորդվել է Աքեմենյանների փորձով:

Արաբ մատենագիր Մասուդիի վկայությամբ՝ Արտաշիրը «գնահատում էր նրան (Շապուհին – Ա. Մ.) որպես իր բոլոր որդիների մեջ ամենաազնվազարմը, ամենախոհեմը, ամենաքաջը և ամենահաջողակը»

սահմանափակված են եղել Միջագետքի կառավարմամբ» (**Gignoux Ph.**, Courts and Courtiers II. In the Parthian and Sasanian periods, *EIr*, Vol. VI, Fasc. 4, pp. 359-361): Հետագա շարադրանքի ընթացքում հեղինակն ավելացնում է. «Շատ հավանական է, որ *pasāgrīw*-ը կամ գահաժառանգն էր, կամ էլ տեղապահը և գրավել է պարթևական դարաշրջանի *bidaxš*-ի՝ «ըստ կարգի երկրորդ»-ի դիրքը» (**Ibid.**, p. 360):

[297] **Sundermann W.**, Bidaxš, *EIr* Vol. IV, Fasc. 3, p. 243



և մեծամեծերի մի հավաքի ժամանակ հայտարարել է իր հաջորդը[298]: Սրանից ակնհայտ է, որ 1. Շապուհի՝ իբրև գահաժառանգի ընտրության գործում վճռորոշ են եղել վերջինիս անձնական որակները, 2. Արտաշիրը փորձել է կատարված ընտրությունն օրինականացնել՝ գահաժառանգին հանդիսավորապես ներկայացնելու *(ἀνάδειξις)*-ի հին աքեմենյան կարգը[299] վերակենդանացնելու միջոցով: Թերևս, դա պետք է բացատրել Իրանի նոր հարստության հիմնադրի վրա Պերսեպոլիսի պալատական որմնաքանդակների ուժեղ տպավորությամբ: Սրանցում գահին բազմած Աքեմենյան արքաների ու նրանց թիկունքում (արքայից հետո) կանգնած գահաժառանգների պատկերի կոմպոզիցիոն միասնութ-յունը, արտահայտելով Աքեմենյան տիրակալների փառքն ու հզորութ-յունը, հասարական կարգերի կայունությունն ու տերության ներքին անդորրը, նաև պատկերագրական լեզվով հայտարարում էր, թե ում հետ է արքան կապում այդ ամենի շարունակականությունը:

Բացի վերոնշյալից՝ Արտաշիրը ընդօրինակել է նաև գահաժառանգի համար քաղաքական խարիզմա ստեղծելու Աքեմենյանների վիզուալքարոզչական մեխանիզմը[300]: Առաջին անգամ դա արտահայտվել է ինվեստիտուրայի թեմայով ստեղծված Նախշ-ի Ռաջափ III և Փիրուզաբադ II ժայռաքանդակների վրա, որտեղ իրենից հետո պատկերվելու պատիվը վերապահելով որդուն՝ Արտաշիր I-ը, ինչպես Սարգոն II-ը Դուր-Շարրուկինի (Խորսաբադ) պալատական որմնանկարի (նկ. 45)[301], իսկ Դարեհ I-ն (նկ. 46) ու Քսերքսես I-ն իրենց պերսեպոլիսյան հարթաքանդակների վրա[302], պարզորոշ և հրապարակավ ազդարարում էր, թե ով է լինելու

[298] **Mas'udi**, Moruj II, p. 159, See **Shahbazi Sh.**, Shapur I. i, History, *EIr*, Originally Published: July 20, 2002.

[299] **Бикерман Э.**, Государство Селевкидов, М., 1985, с. 24.

[300] **Меликян А.**, Институт «второй после царя»…, с. 109.

[301] Թ. Ալթմանը վերոնշյալ որմնանկարի կոմպոզիցիայում պատվանդանի վրա կանգնած աստվածության նույնականացումը Աշշուրի հետ համարում է «հավանական», իսկ արքայական պատկերի նույնացումը Սարգոն II-ի հետ՝ «անվիճելի»: Ինչ վերաբերում է երրորդ պատկերին, հեղինակը ոչ միայն սխալ է ներկայացնում կոմպոզիցիայում նրա գրաված տեղը, այն է՝ «արքայից աջ» «արքայից հետո»-ի փոխարեն, այլև նրա ինքնությունը՝ կոչելով պարզապես «ուղեկից պաշտոնյա» (**Loud G., and Altman Ch. B.**, Khorsabad, Chicago, 1938, p. 85): Մեր համոզմամբ, որմնանկարի խիստ պաշտոնական թեմատիկան, խնդրո առարկա պատկերի «արքայից հետո» դիրքը, չափական համապատասխանությունն արքայի հետ, շքեղ հանդերձանքն ու գլխի հարդարանքը բավարար հիմք են տալիս նրան նույնականացնելու Սարգոն II-ի գահաժառանգ որդի Սինախերիբի հետ, որը, ինչպես հայտնի է, հոր գահակալության օրոք հանդիսանում էր Ասորեստանի հյուսիսային՝ ուրարտամերձ գավառների փոխարքան:

[302] **Меликян А.**, Институт «второй после царя»…, с. 104, рис. 1, с. 107, рис. 2, 3.

Իրանի ապագա տիրակալը: Իսկ համեմատաբար ուշ ստեղծված Փիրուզաբադ I ժայռաքանդակի վրա Արտաշիր I-նն իրենից հետո պատկերել է տվել Շապուհին՝ Արտավանի մեծ վեզիր Դարբանդանին ձիուց գած տապալելիս: Յնարավոր է, որ այս ձևով նա փորձել է իրանական հասարակությանը ի ցույց դնել Արշակունիների տիրապետությունը կործանելու գործում որդու ունեցած անմիջական մասնակցությունը: Իսկ եթե վստահենք հիշյալ ժայռաքանդակի խորհրդանշական համակարգի «պատմողականությանը», ապա Շապուհի սաղավարտը զարդարող կենդանակերպ զինանշանը պետք է համարենք վկայությունն այն բանի, որ Իրանի գահի համար վճռական գոտեմարտի շրջանում նա արդեն Արտաշիրի պաշտոնապես ճանաչված գահաժառանգն էր:

Սակայն հայտնի է նաև, որ գահաժառանգի քաղաքական դիրքերի ամրապնդման վերոնշյալ ինտելեկտուալ-քարոզչական միջոցը Աքեմենյան տերության մեջ ի զորու չեղավ ապահովելու գահի սահուն անցումը[303]: Յավանաբար դրա գիտակցումով է, որ Արտաշիրը «արքայից հետո երկրորդի» քաղաքական դիրքերի ամրապնդման ասսուրաաքեմենյան քարոզչական միջոցը փորձել է լրացնել պարթևական փորձով, որը ենթադրում էր թագաժառանգին ռազմական բնույթի համապետական գործառույթի և տերության կազմում իբրև ոստան ռազմավարական նշանակություն ունեցող երկրամասի տրամադրում[304]:

Առաջին հայացքից գահաժառանգ Շապուհի կրած զորապետական գործառույթի վերաբերյալ առաջադրվող դրույթը հակասում է վաղ սասանյան պետության ռազմական կազմակերպության մասին գոյություն ունեցող պատկերացումներին: Մ. Խորենացու, Թեոփիլակտեսի, Տաբարիի և այլոց հաղորդումների հիման վրա վաղուց ընդունված է այն կարծիքը, որ Իրանի ռազմական կազմակերպությունը ղեկավարել է Իրանի զորապետը (*Ērān-Spāhbed*) և որ այդ պաշտոնը ստեղծվել է տակավին պարթևական և նույնիսկ Աքեմենյան դարաշրջանում[305] և հետագայում

[303] Там же, с. 109-114.
[304] **Մելիքյան Ա.**, Մեծ Յայքի Արշակունի արքաների..., էջ 24-26: Թագաժառանգին երկրի ռազմավարչական կյանքին մասնակից դարձնելու երևույթը շատ ավելի վաղ դրսևորվել էր Նոր ասորեստանյան տերության մեջ: Սակայն, քանի որ Աքեմենյան տերության մեջ այդ երևույթը չի նշմարվում, անհիմն կլինի Արշակունիների պետական համակարգում թագաժառանգի դերի կարևորման խնդրո առարկա մեխանիզմը նորասորեստանյան նախադեպի ազդեցությամբ պայմանավորելը:
[305] Մ. Խորենացին Իրանի սպարապետության ժառանգական իրավունքի վերածումը ներկայացնում է պարթևական պահլավների առաջացման մասին իր պատմության համատեքստում (**Մ. Խորենացի**, II. ԿԸ)՝ անուղղակիորեն փաստելով, որ խնդրո առարկա պաշտոնը գոյություն է ունեցել մինչև այդ: VII դ. բյուզանդացի



ժառանգվել է Սասանյանների կողմից[306]: Այս տիտղոսով անձանց հիշատակությունները Արտաշիր I-ի և Ներսեհի պաշտոնեական ցուցակներում, թվում է, հաստատում են վերոնշյալ կարծիքը՝ իսպառ բացառելով Իրանի գահաժառանգի համապետական զորավարական գործառույթի որևէ հնարավորությունը: Սակայն, նման կտրական մոտեցման հետ համաձայնելը կլինի բավականին apriori, քանի որ այնքան էլ հստակ չէ, թե ինչ է իրենից ներկայացրել *Ērān-Spāhbed*-ի պաշտոնը պարթևական դարաշրջանում և ինչպիսին է այն ժառանգվել վաղ սասանյան պետական համակարգի կողմից:

Ամենայն հավանականությամբ, Իրանի զորապետի պաշտոնն առաջացել է դեռևս Պարթևական պետության արշալույսին և, նույնիսկ, գործառվել է մի առանձին տոհմի շրջանակներում՝ առանց նրա ժառանգական պատվի վերածվելու[307]: Սակայն, վերջիններիս վիճակվել է մնալ

մատենագիր Թեոփիլակտեսը (**Феофилакт Симокатта,** История, III, 18. Памятники Срендневековой Истории народов Центральной и Восточной Европы, пер. С. Кондратьева, прим. К. Осиповой, М., 1957), Տաբարին (**Nöldeke**, Tabari, S. 139, anm. 2), Բալամին և այլք խնդրո առարկա պետական գործակալության առաջացումը հասցնում են մինչև Վշտասպի և սրա որդի Դարեհի ժամանակները: Նմանապես և Մասուդին, գրելով, թե «Արտաշիրը սահմանեց սպահբեդի պաշտոնը, թվով չորս՝ մեկը Խորասանի, մեկը՝ արևմտյան, երրորդը՝ հարավային և չորրորդը՝ հյուսիսային շրջանների համար...» (**ал Масуди,** Золотые Россыпи, II, см. Шмидт А. Н., Материалы по истории Средней Азии и Ирана. *УЗИВАН*, 1958, Т. XVI, с. 472), նախորդ հեղինակների նման բացահայտում է հիմնախնդրի վերաբերյալ իր պատկերացումների սխալականությունը:
[306] **Хуршудян Эд.**, Армения и Сасанидский Иран (историко-культурологическое исследование), Алматы, 2003, с. 164. Էդ. Խուրշուդյանը հավանական է համարում, որ հայերեն **սպարապետ** բառը հանդիսանում է վաղ միջինպարթևերեն (Ք. ա. II - Ք. հ. II դ.դ.) ***spāδpet** բառի ադապտացիան (**Хуршудян Эд.**, Иранская военно-административная деления Сасанидского Ирана, *ՊԲՀ*, 1992, № 1, էջ 178. Того же, Государственные институты Парфянского и Сасанидского Ирана, Алматы, 2015, с. 199): Դա ընդունում է նաև Ա. Մուշեղյանը՝ նկատելով, որ զենդերենից (ավեստերեն) և պահլավերենից փոխառյալ հայերեն բառերում «դ»-ն հաճախ փոխվում է «ր»-ի՝ spāδpet – սպարպետ, spadapati – սպարապետ, pardkn – փառական և այլն (**Մուշեղյան Ա. Վ.**, Մովսես Խորենացու դարը, Երևան, 2007, էջ 266, ծան. 5):
[307] Պարթևական պետության հիմնադիր Արշակ I-ի՝ հավանաբար մինչև Ք.ա. 238 թ. հատած որոշ դրամների վրա առկա է *krny* արամեատառ լեգենդը: Արշակի *krny* տիտղոսի ստուգաբանության գործում սովորաբար շեշտը դրվում է Աքեմենյան տերության խոշոր ռազմական միավորների կառավարիչների *kāranā* տիտղոսի հետ նրա հիմքային (*kāra*-զորք) ընդհանրության վրա (**Olbrycht M. J.**, Titulatura Pierwszych Arshakido'w I Jej Polityczno-Religijne Knotacje, in Gniezno European Studies Monograph Series, Vol. IV. The World of Antiquity, its Polish Researchers and the Cult of the Ruler, podredakcją Leszka Mrozewicza I Katarzyny Balbuzy, Poznań 2011, s. 230): Դ.

ստվերում, քանի որ հելլենիստական դարաշրջանի ավանդակարգով պարթև արքաները մեծամասամբ անձամբ էին առաջնորդում զորքը[308]: Ըստ երևույթին այլ դեպքերում Արշակունիները *«Ērān–Spāhbed»*-ի դերն ու ազդեցությունը պետության ռազմաքաղաքական կյանքում նսեմացնելու

Սելվուդի և այլոց կարծիքով դեռևս Աքեմենյանների օրոք *Krny*-ն արդեն համարժեք էր դարձել հունական *στρατηός-զորավար, կառավարիչ* հասկացությանը (**Sellwood D.**, Parthian Coins, in *CHI* 3(1), p. 280, footnote 4): Իր հերթին Մ. Օլբրեխտը, փաստարկելով Պարսքում Ք.ա. III դ. կեսերին կառավարած Վահբարզի նորահայտ (2008 թ.) դրամների վրա այս տիտղոսի առկայությունը (*whwbrz krny*), նույնիսկ ենթադրում է, որ *kāranā – krny* տիտղոսը կիրառվել է ոչ միայն Արշակի, այլև Իրանի տարածքում հետաքեմենյան դարաշրջանում առաջացած այլ պետական կազմավորումների կառավարիչների կողմից (**Olbrycht M. J.**, Titulatura Pierwszych Arsakidow..., p. 230): Մեր կարծիքով, Արշակ I-ի կողմից *krny* տիտղոսի ընդունումը պայմանավորվել է Սելևկյան արքա Սելևկոս II-ի դեմ վճռական բախման նախօրեին դահերի ցեղային միության մյուս երկու ցեղերի՝ քսանթիների ու պիզուրների շրջանում որպես համամիութենական ռազմառաջնորդ ճանաչում գտնելու մտայնությամբ (**Մելիքյան Ա.**, Անկախության գաղափարի պատկերագրությունը Արշակ Առաջինի դրամների վրա, Միջազգային գիտաժողովի նյութեր, Վանաձոր, 2012, էջ 64): Արշակի հաջորդների դրամների վրա *krny* տիտղոսն այլևս չի դրոշմվել, ինչից ենթադրելի է, որ պետության կայունացման հետ Արշակունիների ռազմառաջնորդական գործառույթը մղվել է ետին պլան: Բայց *«kāranā – krny» – «զորք – զորապետ»* տիտղոսը տեսնում ենք պարթևական «պատվավորագույն» տոհմերից մեկի՝ Կարենյան տոհմի անվան հիմքում: Ավելին, այս տոհմի ներկայացուցիչների զորավարական գործառույթների մասին աղբյուրների վկայությունները առիթ են տալիս կարծելու, որ անկախացումից հետո դահերի ցեղային միության երեք ցեղերի առաջնորդների մեջ կատարվել է գործառույթների բաժանում: Ամենայն հավանականությամբ, անկախության նախաձեռնող պարների ցեղառաջնորդ Արշակն ու նրա տոհմը ստացել են արքայական իշխանություն: Պիզուրների կամ քսանթիների ցեղառաջնորդը, որի տոհմը աղբյուրներում հիշատակված է Սուրենյան անվամբ, ստացել է քրմական գործառույթներ (իբրև փաստարկ կարող է ծառայել այս տոհմի անվան հիմքային ընդհանրությունը Անահիդ աստվածուհու *«Sūrā –ուժեղ»* մակդիրի հետ, ինչպես նաև, պարթևական պետական համակարգում Սուրենյանների կրած թագադիր իրավունքը (**Plutarchus**, Crassus, XXI. 6-7; **Tacitus**, Annales, VI, 42), որը դարձյալ վկայում է նրանց վաղեմի քրմապետական գործառույթի մասին): Վերջապես, երրորդ ցեղի առաջնորդ տոհմը ստացած զորավարական գործառույթի անունով հայտնի է դարձել Կարենյան անվամբ: Մեր կարծիքով, պարթևական Արշավիր արքայի որդիների միջև գժտության և Աբգար թագավորի կողմից նրանց հաշտեցման մասին Մ. Խորենացու հաղորդած ավանդազրույցը (**Մ. Խորենացի**, Բ, կը) թեև ժամանակային մեծ շեղումով և վիպական գունավորմամբ, արտացոլում է դահերի հանրույթի մեջ հին հնդիրանական եռադասության սկզբունքով իշխանության բաժանման իրողությունը:

308 Համաձայն Թեոփիլակտեսի վկայության՝ Խոսրով Անուշիրվանը մի անհաջող ճակատամարտից հետո արձակել է հատուկ հրովարտակ, ըստ որի՝ հետագայում պարսից արքաներից ոչ ոք չպետք է անձամբ ռազմարշավներ իրականացներ (**Феофилакт Симокатта**, III, 14):



մտայնությամբ «անգործության են մատնել» նրանց՝ գործնականում զորավարական գործառույթները փոփոխակի հասցեագրելով իրենց վստահելի անձանց կամ թագաժառանգներին: Թերևս դա է պատճառը, որ Պարթևական պետության ժամանակակից հունահռոմեական աղբյուրները, լռության մատնելով *«Ērān–Spāhbed»*-ներին, իբրև պարթևական զորագլուխներ հիշատակում են Արշակունի արքաներին[309], նրանց մերձավոր անձանց,[310] իսկ ավելի հաճախ՝ արքաների եղբայրներին ու որդիներին[311]:

*«Ērān–Spāhbed»*-ի պաշտոնի «թափառող» բնույթն արտացոլվել է նաև միջին պարսկերեն խմբագրությամբ մեզ հասած *«Ayādgār ī Zarēr»* պարթևական հերոսական ավանդազրույցում, որտեղ ևս *Ērān–Spāhbed*-ի պաշտոնը համարված է ոչ թե տոհմական, այլ արքայի կողմից ըստ իրավիճակի շնորհվող անհատական իրավունք[312]: Ամենայն հավանականությամբ, այսպիսի երկրորդական դերով և անհատական նշանակությամբ էլ սպարապետությունը ներմուծվել է վաղ սասանյան պետական համակարգ: Անուղղակիորեն այդ են վկայում նաև III դ. Սասանյան վիմագրերը:

Այսպես, ŠKZ-ի Պապակի արքունի ցուցակում *«Spāhbed»* պաշտոնյա հիշատակված չէ. «Ահա նրանք, ովքեր ապրել են Պապակ արքայի իշխանության ներքո.

Սասան՝ որդին Օրնուկի,
Պարդիկ՝ որդին Պարդիկի,
Վարթրագնիպատ՝ որդին Խուրի,
Ասպորիկ՝ որդին Ասպորիկի,
Փուխրիկ՝ որդին Մարդինի,
Զիկ՝ արարողապետ,
Շապուհ՝ որդին Վեզանի
Շապուհ՝ որդին Միհրբուզանի»[313]:

Պապակի արքունի ցուցակում *«Spāhbed»* պաշտոնյայի բացակայությունը հավանաբար պետք է բացատրել նրանով, որ նրա օրոք Ստահրը աննշան պետական կազմավորում էր, որի ռազմական կազմա-

309 **Justinus Marcus**, Epitome of the Philippic History of Pompeius Trogus. Transleted, with notes, by the Rev. J. S. Watson, London, 1853, XLII. 1. 4-5; **Ibid.**, XLII. 2. 1-2; **Dio Cass.**, XXXVI. 45.
310 **Justinus.**, XLII. 4. 7; **Plutarch**, Crassus, XXI.7; **Idem.**, Antonius XXVIII; **Idem.**, Antonius XXXVII; **Tacitus**, Annales, XV. 2; **Dio Cass.**, XLVIII. 25.
311 **Flavius Josephus**, De bello Judaico libri VII, ed. by B. Niese, Berlin, 1895, I. 248; **Idem.**, Иудейские древности, 14. 342; **Dio Cass.**, XL. 28; **Tacitus**, Annales, VI. VI, 33
312 **Хуршудян Эд.**, История Зарера (Ayādgār-ī Zarērān). Перевод со среднеперсидского на армянский с комментариями, *Iran-Nameh*, no. 6-1996, no.1-1997, cc. 33-37.
313 **Sprengling M.**, Third Century Iran…, p. 18.

կերպության ղեկավարումը առանձին պաշտոնի անհրաժեշտություն չէր առաջադրում: Նույնիսկ եթե, զուտ տեսականորեն, համարենք, որ վերոնշյալ անձանցից մեկը, այնուամենայնիվ, ղեկավարել է Ստահրի զինուժը, ապա դարձյալ պետք է ընդունենք, որ նրա այս դերն այնքան աննշան կամ երկրորդված է եղել, որ ŠKZ-ի հեղինակը նրա պաշտոնի անունը հիշատակելու հարկ չի համարել:

Արտաշիրի արքունի ցուցակում *Spāhbed* Ռախշը հիշատակված է XVII տեղում՝ ոչ միայն Ապրենակի, Մերվի Կրմանի ու Սակաստանի կախյալ արքաներից, Պապակի մայր Դինակից, Արտաշիր I-ի մայր Ռոդակից, Պապակի դուստր, թագուհիների թագուհի Դինակից, բդեշխ Արտաշիրից ու հազարապետ (միջ. պարսկ. *hazārbed* կամ *hazāruft* հուն. χιλίαρχος) Պապակից, այլև Իրանի հեղինակավոր տոհմերի ներկայացուցիչներից (*wuzurgān*) հետո.

«....Դահեն Վարազյան (տոհմից),
Սասան Սուրենյան (տոհմից),
Սասան Անդիկանի տիրակալ,
Պերոզ Կարենյան (տոհմից),
Գոկ Կարենյան (տոհմից),
Աբարսամ Արտաշիր-Ֆառն,
Գիլման Դմավենդցի,
սպահաբետ Ռախշ (միջ. պարսկ. 29-***Lḥšy ZY sp'ḥpt***, պարթ. 24 -***Rḥš sp'dpty***, հուն. 57- ***Ῥοξ σπαπίτου***)....»:

Էդ. Խուրշուդյանի դիտարկմամբ, ŠKZ և NPi արձանագրությունների արքունի ցուցակներում պաշտոնյայի տեղը պայմանավորված է նրա ազնվազարմությամբ (ազնվական տոհմերի աստիճանակարգության մեջ զբաղեցրած տեղով) և նոր միայն նրա կրած պաշտոնով[314]: Այս տեսանկյունից միանգամայն ակնհայտ է, որ սպահաբետ Ռախշը Սասանյան արքայատանը չի պատկանել: Անգամ եթե համարենք, որ սպահաբետը Ռախշի ոչ թե պաշտոնի, այլ տոհմական անունն է (տես Մ. Խորենացու պատմությունը Ասպահապետի պահլավի առաջացման մասին)[315], դարձյալ չենք կարող չնկատել, որ Իրանի պետական համակարգում նրա զբաղեցրած XVII տեղը ոչնչով չի ներդաշնակում Պարսից տերության ծավալապաշտական ոգուն: Այս առումով հատկանշական է, որ խնդրո առարկա ցուցակում նրանից հետո հիշատակվում են արքունի դպրապետն (***dibīruft***) ու արարողապետը (***adēnīg, aywēnbed***):

[314] **Хуршудян Эд.**, Иранская военно-административная деления…, с. 11.
[315] **Хуршудян Эд.**, Государственные институты Парфянского и Сасанидского Ирана, с. 200.



ŠKZ-ի Շապուհ I-ի արքունի ցուցակում *Ērān–Spāhbed*-ը ընդհանրապես բացակայում է: Նրա փոխարեն ցուցակի XII տեղում հիշատակված է հեծելազորի պետ (միջ. պարսկ.՝ *a'sppt*, պարթ. *a'sppty*)[316] Պերոզը:

*Ērān–Spāhbed*-ը երկրորդ անգամ հիշատակվում է Պայկուլեի արձանագրության մեջ՝ գահակալական պայքարում Ներսեհին աջակից պարսկական ազնվականության ամենաերևելի անձանց շարքում: Յետաքրքիր զուգադիպությամբ, ինչպես Արտաշիրի արքունիքում, այստեղ ևս պետական այս պաշտոնյան կրում է Ռախշ անունը (ŠKZ միջ. պարսկ. 16-րդ տող ***Lhšy ZY sp'hpt***, պարթ. 7-րդ տող ***Rḥš spdpty***)[317]: Ներսեհի կողմնակիցների ցուցակում նա հիշատակվում է V տեղում՝ ֆինանսական վարչության պետ *(hrgwpt)* Շապուհից, Սասանի որդի արքայազն Ներսեհից, բդեշխ Պապակից և հազարապետ Արտաշիրից հետո և առաջ քան իրանական ազնվականության ամենապատվավոր Սուրենյան տոհմի ներկայացուցիչ Արտաշիրը:

NPi-ում *spāhbed* Ռախշը երկրորդ անգամ հիշատակվում է Ներսեհի հետ հանդիպելու նպատակով Պայկուլե եկած ազնվականության թվարկման ժամանակ (միջ. պարսկ. 32-րդ տող ***W Iḥšy sp'ḥpt*** և պարթ. 14-րդ տող ***W rḥš 'sp'dp[ty]***): Արձանագրության այս մասը խիստ վնասված է, և հնարավոր չէ ճշտիվ որոշել Ռախշի իրական տեղը[318]: Պարզ է միայն, որ նախորդ ցուցակի համեմատ նրա տեղը հետ է ընկել՝ հօգուտ արքայազն Պերոզի, Արտաշիր Սուրենյանի, Որմիզդ Վարազյանի, Անդիկանի տեր Վարհանդադի, մոգբեդ Կարտիրի, [...]-զ Կարենյանի և ևս մի անձնավորության, որի անունը, պաշտոնը կամ տոհմանունը արձանագրության վնասվածքի պատճառով հնարավոր չէ ընթերցել:

ŠKZ և NPi արձանագրություններում *Ērān-Spāhbed*-ի տեղի համեմա-

[316] Ա. Մուշեղյանը «A'sppty» բառը թարգմանում է իբրև «սպահապետ» (**Մուշեղյան Ա.**, Մովսես Խորենացու դարը, էջ 266), մինչդեռ, իրավացի պետք է համարել Մ. Սպրինգլինգի թարգմանությունը՝ այն է «Horse-lord», այսինքն՝ հեծելազորի պետ (**Sprengling M.**, Third century Iran, Sapor and Kartir, Chicago, 1953, p. 19)
[317] **Humback H. and Skjaervø P. O.**, The Sasanian Inscription of Paikuli, Restored text and translation, Wiesbaden, 1983, Part 3.1. § 16. ŠKZ-ում և NPi-ում Իրանի զորահրամանատարի պաշտոնը կրող անձանց անունների զուգադիպության հիման վրա որոշ ուսումնասիրողներ ենթադրում են, որ կամ երկու դեպքերում էլ հիշատակված է միևնույն անձնավորությունը, կամ էլ նրանք միևնույն տոհմի երկու տարբեր ներկայացուցիչներ են, թերևս, հայր և որդի (**Хуршудян Эд.**, Армения и Сасанидский Иран, с. 168):
[318] Պ. Սկյարվոյի վերականգնմամբ spāhbed Ռախշը հիշատակված է XII (**Humback H. and Skjaervø P. O.**, The Sasanian Inscription of Paikuli, Part 3.1. § 32), իսկ Վ. Գ. Լուկոնինի վերականգնմամբ՝ XI տեղը (**Луконин В. Г.**, Древний и раннесредневековый Иран: очерки истории культуры, М., 1987, с. 164-165):

տական քննությունը և, հատկապես, այս պաշտոնյայի բացակայությունը Պապակի և Շապուհ I-ի արքունի ցուցակներում և նրա ոչ այնքան պատվավոր դիրքը Արտաշիր I-ի արքունիքում ու Ներսեհի աջակիցների թվարկության մեջ թույլ է տալիս եզրակացնելու, որ վաղ սասանյան պետական համակարգում այդ պաշտոնը համապետական առաջատար գործակալությունների թվին չի պատկանել: Ընդ որում, առիթ չկա կարծելու, որ համեմատած ŠKZ-ում գրաված դիրքի NPi-ում *Ērān–Spāhbed*-ի դիրքի նկատելի առաջխաղացումը պայմանավորված է եղել պետական համակարգում այդ գործակալության դերի բարձրացմամբ: Ավելի շուտ այն պետք է բացատրել կոնկրետ քաղաքական իրողությամբ՝ 293 թ. գահակալական պայքարում spāhbed Ռախշի կողմից Ներսեհին ցուցաբերած անձնական շոշափելի աջակցությամբ[319]: Բացի այդ, պետք է կարևորել և այն փաստը, որ NPi-ում ներկայացված երկու ցուցակները, ի տարբերություն ŠKZ-ի արքունի երեք ցուցակների, «գահնամակ»-ի նշանակություն չունեն, այլ սոսկ ներկայացնում են Ներսեհի կողմնակիցների հիմնական կազմը՝ մեկը գահակալական պայքարի նախօրեին, մյուսը՝ պայքարի վերջում: Մեր համոզմամբ՝ վաղ սասանյան պետական համակարգում *Ērān-Spāhbed*-ի երկրորդական դիրքը ուղղակի արդյունք էր այն բանի, որ պարթևական դարաշրջանից եկող իներցիայով պարսկական բանակի ղեկավարությունը գործնականում իրականացնում էին պարսից արքաներն ու գահաժառանգները:

Արտաշիր I-ի օրոք գահաժառանգ Շապուհի ռազմական դերակատարության մասին Փիրուզաբադ I ժայռաքանդակից բացի, փաստում են նաև գրավոր սկզբնաղբյուրները: Հերոդիանոսը պատմում է, որ Ալեքսանդր Սևերոսի հյուսիսային զորախմբի դեմ ընթացող թեժ կռիվների պահին (232 թ.) «…**եկան պարսիկի (Արտաշիրի – Ա. Մ.) մոտ ինչ-որ գուժկաններ և հաղորդեցին, որ պարթևների արևելյան երկրամասերում երևան է եկել հռոմեացիների մեկ այլ բանակ**[320] **և հարձակվում է**

[319] **Хурщудян Эд.**, Иранская военно-административная деления…, с. 179.

[320] Ռ. Մանասերյանը, իրավացիորեն համարելով, որ Հերոդիանոսի խոսքը վերաբերում է քուշաններին, բնագիրն ուղղում է «հռոմեացիներին դաշնակից մեկ այլ բանակ» ձևով՝ նկատի ունենալով երկու կարևոր հանգամանք. ա) Ալեքսանդր Սևերոսի գլխավորած երրորդ բանակը չէր կարող հարձակվողական գործողություններ ծավալել Պարթևստանի արևելքից, բ) պատերազմում Հռոմի դաշնակիցն էր հայկական զորքը, հանգամանք, որը արդարացնում է Հերոդիանոսի կողմից պարսիկներին հակառակորդ երրորդ ուժի վերաբերյալ «մեկ այլ» արտահայտության գործածումը (**Մանասերյան Ռ.**, Սասանյանների դեմ Հռոմեական կայսրության և Հայաստանի պատերազմին քուշանների մասնակցության հարցի շուրջ (231-232 թ.թ.), տե՛ս *ՄՄԱԵԺ* XXVIII, 2011, էջ 24-26):



**նա հարթավայրերով: Այդ իսկ պատճառով, զգուշանալով, որ նրանք արագ ավերելով պարթևների երկիրը կներխուժեն Պարսք, նա (Արտաշիրը – Ա. Մ.) թողնելով իր ուժերի մի մասը, որը նրա կարծիքով բավարար պիտի լիներ Մարաստանի պաշտպանության համար, ինքը իր զորքերով շտապեց դեպի արևելք»**[321]:

Մարաստանից Արտաշիրի արևելք հեռանալու փաստը, ըստ երևույթին, հայտնի է եղել նաև Ալեքսանդր Սևերոսի կենսագրին, որը, սակայն, այն ներկայացրել է միանգամայն այլ լույսի ներքո: Հղելով հռոմեական սենատին պատերազմի արդյունքների մասին կայսեր տված հաշվետվությանը՝ նա գրում է. «Արտաքսերքսեսին (Արտաշիրին – Ա. Մ.)՝ գործով և անվամբ հզորագույն արքային, մենք ջախջախեցինք ու փախուստի մատնեցինք, այնպես որ ողջ պարսից երկիրը տեսավ նրա փախուստը»[322]: Դրան հակառակ՝ Մարաստանում մղված կռիվների վերաբերյալ Մ. Խորենացու հաղորդումը կատարելապես ներդաշնակում է Հերոդիանոսի վկայությանը. **«Բայց Տրդատայ թէպէտ և զյաղթութիւն ստացեալ էր, այլ ի հարկանելոյ զօրուն և ի բազում անկելոց նախարարացն՝ զանգիտեաց ինքեամբ յատուկ մարտնչել ընդ Շապհոյ, մինչև եհաս բազմութիւն զօրուն Հռոմայեցւոց, որք ընդ Ասորեստան յարձակեցան. և ի փախուստ զՇապուհ դարձուցին, յաւարի զամենայն երկիրն առեալ… տարեկան չուաւորութեամբ…»**[323]:

Վաղուց են հիմնավորապես ցույց տվել, որ Մ. Խորենացին «Պատմության» այս մասում սխալմամբ Տրդատ III-ի հետ է կապել այն անցքերը, որոնք իրապես տեղի են ունեցել Տրդատ II-ի օրոք[324]: Այդուհանդերձ, այն, որ իբրև հայ-հռոմեական զորքին դիմակայող պարսից զորքի ղեկավար հիշատակվում է Շապուհը, պետք է համարել հեղինակի ոչ թե շփոթմունքի արդյունք, այլ ինչ-որ ավանդությունից նրան հասած ճշմարտություն, քանի որ Արտաշիր I-ի քուշանական ճակատ մեկնելու պարագայում պարսից զորագլուխը արևմտյան ռազմաբեմում իսկապես պետք է որ մնար Շապուհը: Անուղղակիորեն դա հաստատում է նաև Հերոդիանոսը, որը, պատմելով Տիգրոնի մոտակայքում 233 թ. սեպտեմբերի 25-ին հռոմեական հարավային զորախմբի ջախջախման մանրամասները,[325] Ար-

[321] **Herodianus**, Ab excessu divi Marci libri octo, London, 1970,V, 5-6.

[322] **SHA**, Alexander Severus, LVI. 7.

[323] **Խորենացի Մ.**, II, ծէ:

[324] **Կոգյան Ս.**, Կամսարականները «տեարք Շիրակայ և Արշարունեաց», պատմական ուսումնասիրություն, Վիեննա, 1926, էջ 1-13: **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն…, հ. Բ, մաս Ա, էջ 89-90:

[325] **Herodianus**,VI, 5.5-10.

տաշիրի մասնակցությունը չի հիշատակում: Փոխարենը, արդեն հռոմեական զորքերի Ասորեստան վերադառնալը նկարագրելիս նա հիշատակում է Պարթևստանում պարսիկների մղած մեկ այլ ճակատամարտ, որտեղ նրանք ծանր կորուստներ են ունեցել: Դա թույլ է տալիս կարծել, որ Արտաշիրի Մարաստանից արևելք մեկնելուց հետո մինչև Ալեքսանդր Սևերոսի նահանջն ընկած ժամանակահատվածում պարսկա-հռոմեական ճակատի ղեկավարությունն իրականացրել է գահաժառանգ Շապուհը:

Հայկական աղբյուրները, այդ թվում և Մ. Խորենացին (բացառությամբ վերոնշյալ շփոթաշատ դրվագի), 220-ական թ.թ. ի վեր Մեծ Հայքի նկատմամբ պարսիկների ծավալած ռազմական գործողությունների վերաբերյալ հաղորդումներում իբրև պարսից զորագլուխ հիշատակում են բացառապես Արտաշիրին: Սակայն դա բնավ չի նշանակում, թե Շապուհն անմասն է մնացել այդ պատերազմներին: Ընդհակառակը, Հայաստանի տարածքում նրա թագադրության տեսարանով ժայռաքանդակի կերտման փաստն իսկ ցույց է տալիս, որ նա եղել է հայ-պարսկական պատերազմների ամենագործուն դեմքերից մեկը:

Կարելի է ենթադրել, որ Արտաշիրի կառավարման վերջերին Շապուհի զորապետական դերակատարությունը ավելի է մեծացել: Վ. Գ. Լուկոնինի կարծիքով՝ սկսած 237 թ. նա անձամբ էր ղեկավարում պարսկական զորքերի գործողությունները, և հենց նրա առաջնորդությամբ են պարսիկները 237-240 թ.թ. գրավել Խառանը, Մծբինը, ապա և Հաթրան, որը մինչ այդ կարողացել էր պաշտպանել իր անկախությունը թե՛ պարթևներից, թե՛ հռոմեացիներից[326]:

Համաձայն «Օգոստոսների պատմության» հեղինակի՝ Գորդիանոս III-ը Սենատին ուղղած նամակում Անտիոքի ազատագրության կապակցությամբ գրել է, թե **«Վտարել ենք պարսիկներին ու պարսից արքաներին՝ իրենց օրենքների հետ»**[327]՝ անուղղակիորեն փաստելով, որ քաղաքի գրավումը կատարվել էր Արտաշիր I-ի ու նրա կառավարչակից որդի Շապուհի կողմից:

Իսկ արդեն Արտաշիրի կառավարման ամենավերջին շրջանում Շապուհը գործնականում միանձնյա էր ղեկավարում պարսկական զորքերի գործողությունները: Վ. Հինցի, Շ. Շահբազիի և այլոց կարծիքով, այդ իրողությունն արտահայտվել է Դարաբգիրդի հաղթական ժայռաքանդակի վրա, որտեղ պարսից այս արքան հրամայել է իրեն պատկերել Արտաշիր

---

[326]**Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 51-52.

[327] **SHA**, Gordiani tres, XXVII. 5



I-ի թասակաձև-կորոմբոսավոր թագով՝ հրապարակելով իր միանձնյա հավակնությունը հոր հետ կառավարչակցության օրոք տարած հաղթանակի նկատմամբ[328]:

Թագաժառանգության և զորահրամանատարության փոխկապակցման պարթևական մեխանիզմը Սասանյան առաջին տիրակալի օրոք հաջող փորձություն ապրեց: Իր վախճանի պահին Արտաշիր I-ը, ի դեմս որդու, ասպարեզում թողեց փորձառու և հեղինակավոր մի գործիչի, որի իրավունքը գահի նկատմամբ ոչ ոք վիճարկել չէր կարող: Դրա տպավորությամբ էր, որ նույնիսկ IV-V դ.դ., երբ Պարսից տերության ավատականացման աստիճանն անհամեմատ բարձր էր, իսկ պետության կյանքում տոհմիկ ազնվականության դերն ու նշանակությունը՝ ավելի մեծ, ռազմական գործողությունների առաջնաբեմում իբրև փաստացի զորագլուխներ առավելապես հանդես էին գալիս ոչ թե *Ērān–Spāhbed*-ները, այլ Սասանյան արքաներն ու նրանց թագաժառանգ որդիները: Հիլեյան դաշտում՝ Սինգարայի մոտ, 345 թ. տեղի ունեցած պարսկա-հռոմեական ճակատամարտում պարսկական բանակը առաջնորդում էր Շապուհ II-ի թագաժառանգ որդի Ներսեհը, որը գերեվարվեց ու սպանվեց[329]: 388 թ. Խոսրով Արշակունու գահընկեցության նպատակով Հայաստան ուղարկված պարսկական բանակի զորագլուխը, համաձայն Մ. Խորենացու, Շապուհի (իմա՝ Վարահրան IV-ի) որդի Արտաշիրն էր[330]: Վարահրան V-ի օրոք պարսկական բանակի առաջնորդությունը վստահված էր նրա որդի Շապուհին, որը, համաձայն Տաբարիի, կրել է ***iṣbahbaδīyat Irānšahr*** տիտղոսը[331]: Եվ թեպետ Խոսրով Անուշիրվանի ռազմա-վարչական ռեֆորմից հետո Իրանի ռազմական կազմակերպությունն ու զորքերի կառավարման կարգը արմատապես փոխվեց, «տերության երկրորդի» որոշարկման վերոնշյալ մեխանիզմը չմոռացվեց և ավել կամ պակաս չափով կիրառվեց նաև հետագա դարերի Իրանում իշխած հարստությունների կողմից: Բավական է հիշել, որ Մուհամմեդ Խուդաբանդայի օրոք՝ 1578-1588 թ.թ. օսմանցիների դեմ պարսկական զորքի հրամանատարությունը վստահված էր նրա որդուն՝

---

[328] **Hinz W.**, Altiranische Fund und Forschungen, S. 145-152; **Shahbazi Sh.**, Shapur I. I, I, History, *EIr*, Originally Published: July 20, 2002.

[329] **Rufi Festi** Breviarum Rerum Gestarum Populi Romani, Recensuit Wendelinus Foerster, Praemititur Disertatio De Rufi Breviaro Eiusque Codicibus, Vindobonae, MDCCCLXXIIII, XXVII, p. 21.

[330] **Խորենացի Մ.**, III, Ծ:

[331] **Nöldeke T.**, Tabari, S. 139. Եղ. Խուրշուդյանն իրավացիորեն *iṣbahbaδīyat Irānšahr*-ը համարում է Ērānšahr spāhbed տիտղոսի մի տարբերակը (**Хуршудян Эд.**, Армения и Сасанидский Иран, с. 169):

գահաժառանգ Համզա Միրզային[332], իսկ 1804-1813 և 1826-1828 թ.թ. ռուս-պարսկական և 1821-1823 թ.թ. Իրանա-թուրքական պատերազմների ժամանակ պարսկական բանակը ղեկավարում էր ոչ այլ ոք, քան Ֆաթ Ալի շահի թագաժառանգ որդին՝ Աբաս Միրզան:

[332] **Farrokh K.**, Iran at War 1500 at 1988, Oxford, 2011, p. 50.



## 9
## ԹԱԳԱԺԱՌԱՆԳ ՇԱՊՈՒՀԸ «ՄԵԾ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈ՞Ց»

Պարթևական իրականության մեջ գահաժառանգի որոշարկումը սովորաբար ուղեկցվում էր տերության ռազմաքաղաքական ակտիվ ճակատային մասում նրան հատուկ ոստանի տրամադրմամբ: Գրավոր աղբյուրների բազմաթիվ փաստերի, պատմական աշխարհագրության տվյալների և Սալմաստի ժայռաքանդակի ընձեռած պատկերագրական նյութի համալիր քննությունը ցույց է տալիս, որ Արտաշիր I-ը որդու բարձրացման նպատակով յուրացրել է նաև վերոնշյալ սկզբունքը:

Հիմնախնդրի լուսաբանության առումով սկզբունքային նշանակություն ունի «Մանիի Քյոլնյան ժողովածու»-ն, որտեղ կարդում ենք. ***«Ես դարձա քսանչորս տարեկան այն տարում, երբ Պարսից արքա Դարի-Արտաշիրը գրավեց Հաթրա քաղաքը (240 թ. – Ա. Մ.), որում Փարմուդի (Նիսան) ամսի 8-րդ օրը (240 թ. ապրիլի 12) արքա Շապուհի՝ իր որդու գլխին դրեց ավագ դիադեման»***[333]:

Միանշանակ է, որ Մանիի վերոնշյալ հաղորդման մեջ խոսքը Արտաշիրի կողմից որդուն կառավարչակից հայտարարելու մասին է: Ուստի և բնական է, որ հեղինակը Շապուհին հանձնված վեհապետական իշխանության խորհրդանշանը կոչում է «ավագ դիադեմա»[334]: Բայց հենց այդ տեսանկյունից հատուկ ուշադրություն է պահանջում Մանիի «(Արտաշիրը) ***արքա Շապուհի՝ իր որդու գլխին դրեց ավագ դիադեման***» ձևակերպումը: Նախադասության կազմության մեջ գահաժառանգի համար իբրև որոշիչ գործածված «**արքա Շապուհ**» արտահայտությունը պարզորոշ փաստում է, որ նախքան հոր կողմից իբրև Իրանի կառավարչակից թագադրվելը Շապուհն արդեն կրել է արքայական տիտղոս, հետևաբար՝ նաև հպատակ արքայի պատվանշան՝ «կրտսեր

[333] **Henrichs A. and Koenen L.**, Ein griechischer Mani-Codex, *ZPE* V, (Bonn, 1970), S. 120; **Henrichs A.**, The Cologne Mani Codex Reconsidered, *HSCPH* 83, 1979, pp. 339-367; **Sundermann W.**, Studien zur kirchengeschichtlichen Literatur der iranischen Manichäer I, *AoF* 13, 1986, S. 49.

[334] Շ. Շահբազին, հետևելով Ա. Հեյնրիխսին ու Լ. Կյոենենին, Մանիի «ավագ (կամ մեծ) դիադեմա» արտահայտության փակագծերում պարզաբանում է իբրև royal - արքայական դիադեմա (**Shahbazi Sh.**, Shapur I i, History, *EIr*, Originally Published: July 20, 2002.), ինչը մեր կարծիքով այնքան էլ ճիշտ չէ: Ի տարբերություն պարթևական իրականության՝ Սասանյան դարաշրջանում դիադեման ուներ կիրառության անհամեմատ նեղ սոցիալական շրջանակ: Այժմ նրա առկայությունը ցուցում էր ոչ թե այն կրողի ազնվազարմությունը կամ պետության վարչական համակարգում ունեցած բարձր դիրքը, այլ արքայական կարգավիճակը:

դիադեմա»: Ըստ այդմ՝ կասկածից վեր է դառնում այն, որ **գոյություն է ունեցել ինչ-որ մի տարածք, որտեղ Շապուհի արքայական տիտղոսը ներդաշնակվել է տերության գահաժառանգի կարգավիճակի և դրա հետ կապված զորապետական գործառույթների հետ:** Նմանապես, անվիճելի է թե՛ այն, որ խնդրո առարկա երկրամասը կարող ենք փնտրել միայն Սասանյան արքայի ոստանի շրջանակներում, թե՛ այն, որ այդ երկրի իշխանության իրավունքը Շապուհը կարող էր ստանալ միայն հորից՝ Իրանի արքայից արքա Արտաշիրից: Սալմաստի ժայռաքանդակի ձախակողմյան պատկերախմբում մի կողմից Արտաշիր I-ի հեծյալ և գահաժառանգ Շապուհի հետիոտն դիրքերի հակադրությունը, որը հատկանշական է վեհապետ-վասալ հարաբերությանը, մյուս կողմից՝ այն, որ երկուսն էլ պատկերված են աջ ձեռքերն իրար մեկնած, մի դիրքով, որը կատարելապես համապատասխանում է վաղ սասանյան ինվեստիտուրային քանդակների «տալու-ստանալու» պատկերագրական սխեմային, հիմք է տալիս եզրակացնելու, որ **Սալմաստի ժայռաքանդակի ձախակողմյան պատկերախումբը ներկայացնում է Արտաշիր I-ի կողմից գահաժառանգ Շապուհին արքայական իշխանությամբ օժտելու ծես:**

Վերոնշյալ մեկնաբանության հիմնավորման առումով խիստ կարևորվում է այն հարցը, թե արքայից արքա Արտաշիրն ինչ խորհրդանշան է հանձնում որդուն: Ինչպես նշել ենք առաջին բաժնում, քանդակագործները փոխանցվող առարկան «թաքցրել են» Արտաշիրի ձիու գլխի ետևում: Բայց Սալմաստի ժայռաքանդակի երկու պատկերախմբերի ընդհանուր սիմետրիայից բխող տրամաբանությամբ կարող ենք համարել, որ, ինչպես աջակողմյան պատկերախմբում, այստեղ ևս փոխանցման առարկան օղակ է: Ընդ որում՝ հատկանշական է, որ այն ժապավենազուրկ է՝ նման Սասանյան վեհապետների կողմից իրենց հպատակ արքաներին շնորհվող կամ էլ Սասանյան գահաժառանգների կողմից ի տես հանվող օղակներին: Իսկ քանի որ օղակը ոչ թե ինվեստիտուրայի ծեսում շնորհվող պատվանշան, այլ այդ ծեսի գեղարվեստական կերպավորման ժամանակ գործածվող պատկերագրական տարր էր,[335] միանգամայն արդարացված կլինի այն շնորհելու տեսարանը Մանիի ինքնակենսագրության մեջ ակնարկված «կրտսեր դիադեմա»-յով թագադրության պատկերագրական համարժեքը համարելը:

Անհամեմատ բարդ են այն հարցերը, թե որքա՞ն են Շապուհի թագաժառանգի դիրքն ու կրած ռազմական գործառույթն առնչվել Հայաս-

[335] **von Gall H.**, The Figural Capitals at Taq-e Bostan…, p. 107.



տանի հետ, եթե նրա արքայական տիտղոսը վերաբերել է Հայաստանին, ապա ե՞րբ է նա նշանակվել Հայաստանի թագավոր, և տարածական ինչպիսի ընդգրկում է ունեցել նրա իշխանությունը: Այս հարցերի շուրջ ŠKZ-ն և հունահռոմեական աղբյուրները լռում են: «Մանիի Քյոլնյան ժողովածու»-ն ևս չի նշում, թե երբ և որ երկրի վրա է տարածվել գահաժառանգ Շապուհի արքայական իշխանությունը: Նմանապես և հայկական պատմական ավանդության մեջ Հայաստանում Արտաշիրի որդի Շապուհի գահակալության մասին ուղղակի տվյալներ չկան[336]:

Սակայն, Հայաստանում գահաժառանգ Շապուհի գահակալության մասին կռվաններ, այնուամենայնիվ, կարելի է գտնել: Նախ, այդ մասին է խոսում Շապուհի թագադրության տեսարանի՝ Մեծ Հայքի Զարեհավան գավառի տարածքում կերտվելու հանգամանքը: Ցանկացած ժայռակերտ հուշարձան բաց նամակ էր, որը պատկերագրության լեզվով որոշակի գաղափար կամ տեղեկություն էր հաղորդում իր դիտորդին: Սովորական ինվեստիտուրայի ժանրով անշարժ հուշարձանների պարագայում նաև անխզելի կապ գոյություն ունի դրանց տեղադրության և դրանց վրա ներկայացված իրադարձության միջև: Այդ կապի սղումը (օրինակ, Շոշի կառավարիչ Հվասակի թագադրության տեսարանը Էլյումայիսի փոխարեն Սակաստանում կերտել) նմանատիպ հուշարձանները կզրկեր պատմողականությունից և կդատապարտեր նրանց սոսկ ինքնանպատակ ու անհասկանալի գեղարվեստական երկ լինելուն:

Սալմաստի ժայռաքանդակի ձախակողմյան պատկերախմբում ներկայացված ինվեստիտուրայի և Հայաստանի կապի մասին անուղղա-

[336] Մ. Խորենացին որպես «անիշխանության ժամանակ»-ի Հայաստանի Սասանյան կառավարիչներ հիշատակում է միայն «Արտաշրին» ու սրա որդի Շապուհին (**Մ. Խորենացի**, II, ՀԶ, ՀԷ), որոնց ուսումնասիրողները նույնականացնում են Շապուհ I-ի գահաժառանգ որդի Որմիզդ-Արտաշիրի և թոռան՝ Որմիզդակի հետ: Ընդհանուր առմամբ համաձայնելով այս նույնականացման հետ՝ հարկ են համարում նկատել երկու կարևոր հանգամանք, որոք կարող են լուսաբանել Հայաստանում Շապուհի գահակալության փաստի մասին հայկական ավանդության լռությունը. ա. Արտաշիրի կերպարը խիստ վիպականացված է, և նրա մեջ Արտաշիր Պապականից ու Որմիզդ-Արտաշիրից բացի վիպական բաղարկման են ենթարկվել նաև Հայաստանում կառավարած Ներսեհի (276-293 թ.թ.), հնարավոր է նաև, հավանաբար մինչև 276 թ., այստեղ իշխած Վարահրան II-ի կերպարները: բ. Հայկական ավանդությունը հերոսական պատումին հատուկ տրամաբանությամբ Մեծ Հայքում պարսից տիրապետությունը հաշվում է՝ սկսած վիպական Խոսրով Մեծի սպանությունից: Եվ եթե մոռացության է տվել նախընթաց ժամանակահատվածում պարսից կողմից Հայաստանից տարածքային բռնակցումների փաստը, ապա պետք է որ մոռացության տրվեր նաև բռնազավթած տարածքներում Արտաշիրի գահաժառանգ որդու կառավարման իրողությունը:

կի տվյալներ կարելի է գտնել նաև III դ. առաջին կեսի պարսկա-հռոմեական պայքարի պատմության համատեքստում ու Հայաստանի պատմական աշխարհագրության տվյալների շտեմարանում: Շարադրանքի շահեկանությունից ելնելով՝ հարկ ենք համարում դրանց անդրադառնալ առանձին-առանձին:

Սասանյանների արտաքին քաղաքականության քննությունը ցույց է տալիս, որ առաջին շրջանում (230-298 թ.թ.՝ Արտաշիրից մինչև Ներսեհ) այն ուղղված է եղել դեպի Արևմուտք՝ պաշտոնական կարգախոս ունենալով Աքեմենյան պարսկական տերության վերականգնումը[337]: Միայն պայքարի ծանրությունը նրանց հարկադրեց մեծ հավակնությունների ծիրում որոշակիացնել իրենց քաղաքական առաջնահերթությունները՝ այն է՝ Միջագետքի տնտեսապես առավել զարգացած շրջանների և, հատկապես, Հայաստանի նվաճումը, ինչը ճանապարհ պիտի բացեր դեպի բաղձալի Էգեյան ծովի ափերը[338]: Սակայն, հակառակ գործադրած մեծ ջանքերին և չնայած Միջագետքի, Ասորիքի ու Կապադովկիայի քաղաքների հաջող ասպատակություններին, պարսիկներն Արտաշիրի գահակալության վերջում Հայաստանի հարավային որոշ տարածքներից բացի դեռևս ոչ մի կայուն նվաճում չունեին[339]:

Ցավոք, հնարավոր չէ հստակորեն որոշել, թե Արտաշիր I-ի օրոք հարավհայկական ինչ տարածքներ են բռնակցվել Սասանյան տերությանը: Բ. Հարությունյանի կարծիքով, որին կատարելապես համամիտ ենք և մենք, դրանք Անգեղտուն *(Ἰγγηλνή)*, Մեծ Ծոփք *(Σοφηνή)*, Արզան *(Ἀρζανηνή)*, Կորդուք *(Καρδουηνή)*, Ծավդեք *(Ζαβδικηνή)* երկրամասերն էին, որոնք հռոմեական աղբյուրներում հիշատակվում են *«regions transtigritianas»* – «անդրտիգրիսյան գավառներ» ընդհանրական անվամբ: Անվանի հայագետի կարծիքով, «Սասանյան Պարսկաստանի այս գործողությունները հավանաբար նպատակ էին հետապնդում իր ձեռքը վերցնելու հին աքեմենյան արքունի ճանապարհի վրա ընկած և ռազմաստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող անդրտիգրիսյան երկրամասերը, որով գալիք պատերազմում նա լուրջ առավելություն էր ստանում ստրատեգիական տեսակետից հռոմեական կայսրության նկատմամբ»[340]:

Իրենք՝ հռոմեացի մատենագիրները, մշտապես ընդգծում են հռոմեա-պարսկական պայքարում Վերին Միջագետքի ու Մեծ Հայքի հարավային երկրամասերի ունեցած ռազմաստրատեգիական դերը: Ավրելիուս Վիկտորն այդ տարածքը բնորոշում է «***մեզ* (հռոմեացիների-Ա.Մ.) *համար կարևոր հողեր*»** արտահայտությամբ՝[341] դրանով իսկ ակնարկելով երկրամասի համազոր նշանակությունը նաև պարսիկների համար: Իսկ Ամմիանուս Մարկելլինուսը, արտահայտելով իր զայրույթը Հովիանուս կայսեր կողմից 363 թ. անդրտիգրիսյան գավառներն ու հարակից շրջանները պարսիկներին հանձնելու կապակցությամբ, գրում է. ***«Հարկ էր, որ մենք տասն անգամ մարտնչեինք՝ նախքան այդ պահանջներից թեկուզ մեկը կատարելը...»***[342]:

Կասկածից վեր է, որ III դ. առաջին կեսին, երբ Սասանյանների նվաճողական ծրագրերն ավելի հավակնոտ էին, իսկ պարսկա-հռոմեական հակամարտությունն էլ՝ ավելի սուր, անդրտիգրիսյան երկրամասերի ռազմավարական նշանակությունը եղել է ավելի մեծ: Այդ երկրամասերին տիրելով՝ պարսիկները ոչ միայն կկարողանային կանխելՀռոմի համար ***«վստահելի հենակետ և հաղթանակի հասնելու հեշտ ճանապարհ»*** Հայաստանի տարածքով հայ-հռոմեական զինական համագործակցությունն ընդդեմ Իրանի, այլև անգնահատելի հենակետ կստանային Հայաստանի աննված մասերի, Վերին Միջագետքի և, առհասարակ, ողջ հռոմեական Արևելքի դեմ հարձակողական գործողությունների ծավալման համար:

Մեր քննությանը ենթակա հիմնախնդրի լուսաբանման առումով կարևոր է նաև այն հարցը, թե երբ են անդրտիգրիսյան հիշյալ երկրամասերը ռազմակալվել Սասանյանների կողմից: Բ. Հարությունյանի համոզմամբ՝ դա տեղի է ունեցել հայոց Խոսրով II արքայի եղերական սպանությունից հետո: Ընդ որում, հեղինակի համոզմամբ, պարսիկների կողմից Մեծ Հայքի հիշյալ երկրամասերի յուրացումը կատարվել է ոչ թե նվաճման, այլ արդեն իսկ պարսից տիրապետության տակ հայտնված հայկական պետականությունից միակողմանի անջատման ճանապարհով[343]: Սակայն Արտաշիր Պապականի գործունեության վերաբերյալ աղբյուր-

[337] **Herodianus**, VI, 2. 1-2; VI, 4.5; **Dio Cass.**, LXXIX, 40. 4: Մանրամասն տե՛ս **Shahbazi Sh.**, Early Sasanians' Claim to Achaemenid Heritage, *Nāme-ye Irān-e Bāstān*, Vol. 1. No. 1, pp. 62-64; **Dignas B.**, and Winter E., Rome and Persia in Late Antiquity: Neighbours and Rivals, Cambridge University Press, 2007, pp. 53-56.

[338] **Луконин В. Г.**, Древний и раннесредневековый Иран, с. 208.

[339] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 52.

[340] **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչաքաղաքական կացությունը..., էջ 83:

[341] **Avrelius Victor,** De Caesaribus, XXXIX.

[342] **Ammianus**., XXV, 7, 10.

[343] **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի թագավորության հարավ-արևմտյան երկրամասերի վարչաքաղաքական կացությունը..., էջ 82:

ների ուղղակի և անուղղակի տվյալները մեզ բերում են այն համոզմունքին, որ խնդրո առարկա տարածքների պարսկական նվաճումը տեղի է ունեցել նկատելիորեն ավելի վաղ և կրել է ոչ թե միանվագ բռնանջատման, այլ փուլային բռնազավթման բնույթ:

Այսպես, համաձայն Մշիխա Զեխայի «Ադիաբենի եկեղեցու պատմության»՝ «Պարսիկներն ու մեդացիները... Ադիաբենեի թագավոր Շարիատի և Քարքա-Սլոխի թագավոր Դոմիտիանի հետ միանալով, գարնանը պարթևների հետ մեծ պատերազմ սկսեցին: ....Սկզբից սրանք (պարսիկները – Ա. Մ.)[344] հարձակվեցին Միջագետքի, Բեյթ-Արամայեի, ապա Բեյթ-Զաբդեյի և Արզուի վրա: Մի տարվա ընթացքում նրանք գրավեցին այս քաղաքները, և պարթևների բոլոր միջոցառումներն արդյունք չտվեցին, որովհետև իրենց օրը հասել էր, երգը՝ երգվել: Ի վերջո, նրանք ամբողջովին փախան բարձր լեռները և պարսիկներին (Սասանյաններին-ընդգծումը Հ. Մելքոնյանի) թողեցին իրենց ամբողջ երկիրն ու քաղաքներում պահված հարստությունները»[345]: Ասորի մատենագրի այս վկայությունը, որը Վ. Լուկոնինը, Ն. Պիգուլևսկայան և այլք համարում են վավերական, մեզ համար ուշագրավ է այն առումով, որ ուղղակիորեն բացահայտում է Վերին Միջագետքում և Մեծ Հայքի հարավարևմտյան գավառներում պարսիկների ծավալած գործողությունների ժամանակը, բնույթն ու տարածական ընդգրկումը:

Նախ, ակնհայտ է, որ վերոնշյալ իրադարձությունները տեղի են ունեցել նախքան Որմիզդականի բախտորոշ ճակատամարտը՝ ամենայն հավանականությամբ 223 թ., և, ապա, պարսիկների գործողություններն ուղղված են եղել ոչ միայն Տիգրիսի աջ ափին տարածվող Արամեայի ու Ծավդեքի[346], այլև գետի ձախ ափին ընկած հայկական Արզանի դեմ, որի տեղագրական նույնականությունը ասորական աղբյուրի հիշատակած

[344] Մեր համոզմամբ, արդարացված չէ Հ. Գ. Մելքոնյանի կողմից «Ադիաբենի եկեղեցու պատմություն» երկի հայերեն թարգմանության մեջ հարձակվող կողմին պարթևներ անվանելը (տե՛ս **Ադիաբենեի եկեղեցու պատմություն**, էջ 83), քանի որ վկայության համատեքստից իսկ ակնհայտ է, որ վերոնշյալ քաղաքներն ու երկրամասերը ենթարկվել են ոչ թե պարթևների, այլ պարսիկների հարձակմանը: Համեմատի՛ր **The Chronicle of Arbela**, 8, English translation by T. Kroll, Corpus Scriptorum Christianorum Orientalium, Scriptores Syri, T. 200, Lovanii, 1985.

[345] **Ադիաբենեի եկեղեցու պատմություն**, էջ 82-83:

[346] Պ. Կավերաուն Բեյթ-Զաբդայը տեղորոշում է «ինչ-որ տեղ Բաբելոնի շրջակայքում» (See **The Chronicle of Arbela**, 8, footnote. 115), ինչը կատարյալ անհեթեթություն է: Աղբյուրում երկրամասի հիշատակությունը Բեյթ-Արամայեի ու Արզուի միջև պարզորոշ ցույց է տալիս, որ խոսքը Տուր-Աբդին լեռների և Տիգրիսի միջև տարածվող Զաբդիկենե (հայ. Ծավդեք) երկրամասի մասին է:



Արզուի հետ հիմնավորապես ապացուցված է[347]: Այլ հարց է, թե տարածական ինչ ընդգրկումով պետք է այն պատկերացվի:

Արզան և Արևելյան Տիգրիս գետերի միջև տարածվող Արզան (Արզու) գավառը Աղձնիքի կարևորագույն և Ադիաբենեին առավել մոտ գավառն էր: Այն Աղձնյաց բդեշխության կենտրոնն էր, և շատ հավանական է, որ ասորի հեղինակը այդ անվամբ կոչեր ողջ երկրամասը: Այս դեպքում պարսկական ռազմակալման սահմանները պետք է պատկերացնել անհամեմատ ավելի լայն՝ ներառյալ Արզանից հյուսիս և հյուսիսարևելք ընկած Սանասուն, Սալնոձոր, Գզեղխ, Կեթիկ, Տատիկ, Ազնվաց ձոր, Երխեթ գավառները:

Ինչպես երևում է, Աղձնիքի կենտրոնական գավառները կորցրած հայ Արշակունիները այս նույն ժամանակամիջոցում կարողացել են իրենց վերահսկողության տակ պահել Աղձնիքի արևելյան՝ Ջերմ (ներկայիս Բոհտանսու) գետի միջին հոսանքի շրջանում տարածվող մասը: Վերջինս, լինելով բավականին ընդարձակ, տնտեսական և բնաշխարհագրական առումներով մեկ ինքնուրույն շրջան, չմիացվեց Տոսպիտիս-Տոսպքին, այլ կազմեց նոր նահանգ՝ Մոկք անվամբ[348]: Ըստ երևույթին Մոկքի տարածքը մինչև 252/3 թ. մնում էր աննված և, բնականաբար, չէր մտնում ռազմակալված հարավհայկական գավառներից ստեղծված պարսկական ռազմա-վարչական միավորի մեջ: Դա էր պատճառը, որ 298 թ. Մծբինի բանակցությունների ժամանակ Մոկքի պատկանելության հարցը չվիճարկվեց, ասել կուզի, թե պարսիկներն այն համարում էին Հայաստանի բաղկացուցիչ տարածք:

Ամենայն հավանականությամբ, Արտաշիրի 223 թ. հիշյալ արշավանքի ժամանակ կամ հաջորդած տարիներին է կատարվել Արզնից արևմուտք ընկած Մեծ Ծոփք (Նփրկերտ) գավառի ռազմակալումը: Դրա մասին անուղղակի ակնարկ է պարունակում Նփրկերտի հունարեն արձանագրությունը, որտեղ խոսվում է հայոց միաբանությունից այդ քաղաքի (իսկ եթե արձանագրության *«‘η πολιτείας ύμῶν* – ձեր համայնքը» արտահայտությունը բացատրենք դասական հելլենիստական «քաղաքապետություն» իմաստով, ուրեմն՝ ամբողջ գավառի) անջատվելու և պարսիկ-

[347] **Հյուբշման Հ.**, Հին Հայոց տեղւոյ անունները. Հայոց աշխարհին պատմական տեղագրութեան մասին ուսումնասիրութիւններով, Վիեննա, 1907, էջ 167-169: **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգը..., էջ 200:

[348] **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի Մոկք աշխարհն ըստ «Աշխարհացոյց»-ի, *ՊԲՀ*, 1988, N 4, էջ 43: **Նույնի**՝ Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 209-210:

ների հետ համագործակցելու վերաբերյալ[349]:

Ինչպես երևում է, պարսիկները ռազմակալել են նաև Անգեղտուն գավառը[350]: Ինչ վերաբերում է նախկինում Աղձնիքի մաս կազմած Անձիտ գավառին, վերջինս ըստ երևույթին III դ. առաջին կեսին Աղձնիքի պարսկական ռազմակալման ժամանակ մնացել էր աննված և իր մասը կազմող Գավրեքի հետ միասին՝ Տրդատ II-ի կողմից մեկընդմիշտ միացվել էր Ծոփքին[351]: Դրանով հանդերձ՝ Սասանյաններն իրենց ձեռքում են պահել Մելիտենեից եկող և Անձիտով Աղձնիք մտնող կարևոր մայրուղին, որն այնուհետև մուտք էր գործում Ասորեստան[352]:

Այսպիսով, Հայաստանի պատմական աշխարհագրության տվյալները հիմք են տալիս կարծելու, որ Արտաշիր I-ի օրոք Մեծ Հայքից պարսիկների ռազմակալած տարածքը ձգվել է Տավրոսյան լեռնաշղթայի երկայնքով՝ Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքի շրջանից հավանաբար մինչև Կոհ-ի Նիհորական լեռնաշղթա[353]: Հատկանշական է, որ 298 թ. Մծբինի բանակցություններում «անդրտիգրիսյան» կոչված հայկական վերոնշյալ գավառների հարցը քննարկվում էր Մեծ Հայքի վերամիավորումից անջատ, և որ Հռոմը դրանք ստացավ ոչ թե հայերից, այլ պատերազմում պարտված պարսիկներից՝ իբրև աներքսիա: Դա խոսում է այն մասին, որ հիշյալ տարածքները՝ Անգեղտունը, Մեծ Ծոփքը, Արզանը՝ հարակից գավառներով, Կորդուքը և Ծավդեքը պարսիկների կողմից նվաճվել են Մեծ Հայքի՝ Տավրոսից հյուսիս ընկած բուն տարածքից վաղ, և որ դրանք պարսից տիրապետության տակ մինչև 252/253 թ.թ. ունեցել են առանձին վարչամիավորի կարգավիճակ:

Հայտնի է, որ Դիոկղետիանոսի վարչական վերափոխությունների արտահայտությունը համարվող Վերոնյան ցուցակում, ինչպես նաև Պոդեմիոս Սիլվանի՝ IV դ. վերջերին ստեղծված «Laterculus»-ում Մեծ Հայքի արևմտյան՝ Հռոմի տիրապետությանն անցած գավառները դրանց բնակչության էթնիկական կազմի, հնարավոր է, նաև Մեծ Հայքի մնացած տարածքների նկատմամբ Հռոմի թաքուցյալ հավակնության պատճառով կոչվում էին «Մեծ Հայք»[354]: Շատ հավանական է, որ պարսիկների տիրապետության տակ անցած հարավհայկական գավառները պարսից վարչական տերմինաբանության մեջ նույն տրամաբանությամբ կոչվել է «Հայաստան» ընդհանրական անվամբ, և այդ հիման վրա է, որ դարեր անց Տաբարին, ալ-Յակուբին, Բալամին ու Իբն-ի Ատիրը Հայաստանի հպատակեցումը վերագրել են Արտաշիր I-ին՝ առանց խորամուխ լինելու, որ ենթադրվող պարսկական «Հայաստանը» բնավ էլ նույնական չէ Մեծ Հայքին:

Այսպիսով՝ Մեծ Հայքի հարավային գավառների պարսկական ռազմակալման ժամանակի և տարածական ընդգրկման վերաբերյալ դիտարկումները թույլ են տալիս կարծելու, որ «արքա» տիտղոսը, որը կրել է պարսից թագաժառանգ Շապուհը նախքան 240 թ. ապրիլին արքայական «մեծ դիադեմայով» թագադրվելը, վերաբերել է հենց հարավհայկական այս երկրամասերին, և **Սալմաստի հուշակոթողի ձախ պատկերախումբն էլ հենց ներկայացնում է Արտաշիր I-ի կողմից պարսից թագաժառանգ-զորահրամանատար Շապուհի թագավորեցման ծեսը:**

Վաղ Սասանյան տերությունը ձևավորվել էր Արշակունիների գահակալությունից դժգոհ իրանական կիսանկախ երկրամասերի հպատակ արքաների, իրանական ազդեցիկ տոհմերի ու քաղաքային ինքնավարությունների՝ Սասանյանների շուրջը համախմբվելու ճանապարհով, ինչը նորաստեղծ տերությանը նկատելի չափով դաշնային բնույթ էր հաղորդում: Ֆ. Ժինյուն տարատեսակ աղբյուրագիտական նյութերի հիման վրա Սասանյան տերության ողջ տարածքում զանազանում է արքայական իշխանության՝ իրավաքաղաքական բովանդակությամբ խիստ տարբեր երեք մակարդակներ. արքայից արքա (*šāhan šāh*), մեծ արքա (*wuzurg šāh*), և հպատակ կամ վասալ արքաներ (*šahrdārān*)[355]: Բնականաբար, հարց է առաջանում, թե հնարավոր երկու աստիճաններից որ մեկում է գտնվել գահաժառանգ Շապուհը. արդյո՞ք նա եղել է Արտաշիրին հպատակ սովորական արքաներից մեկը, թե՞ տերության վարչաիրավական համակարգում ևս նրա դիրքը ընդգծված է եղել պաշտոնական արվեստում առկա ձևերին համահունչ կերպով: Այս հարցերի լուսաբանությանն իր նպաստն է բերում ŠKZ-ն:

[349] **Մելիքյան Ա.**, Տիգրանակերտի հունարեն արձանագրության ժամանակի և նշանակության մասին, *ԲՎՊՄԻ*, h. 3, Վանաձոր, 2008, էջ 134:

[350] Բ. Հարությունյանը Անգեղտուն գավառը նույնացնում է «Աշխարհացոյց»-ի հիշատակած Քաղ կամ Քեղ և Ամմիանոսի հիշատակած Գիմմաթենե գավառների հետ (Հարությունյան Բ., Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 157-161):

[351] Նույն տեղում, էջ 139:

[352] Նույն տեղում:

[353] Բ. Հարությունյանի համոզմամբ՝ Մեծ Հայքի հարավային նահանգների վարչա-քաղաքական սահմանները ձևավորվել են III դ.հայ-պարսկական պատերազմների ժամանակ և պայմանավորվել են դրանց ընթացքով (**Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն..., էջ 139, 174, 208-211):

[354] **Ադոնց Ն.**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 101-104:

[355] **Gignoux Ph.**, Court and Courtiers II. In the Parthian and Sasanian Periods, *EIr,* 1993, Vol. VI, Fasc. 4, p. 360.

ŠKZ-ի Շապուհ I-ի արքունի ցուցակում (միջ. պարսկ. 22/23, պահլ. 17/18, հուն. 39/40 և 41-րդ տողեր) գահաժառանգ Որմիզդ-Արտաշիրը կրում է «մեծ արքա Հայոց» (*RBA MLKA 'rmnyn*) տիտղոսը[356]: Այս տիտղոսի նշանակության շուրջ առաջացել է որոշակի բանավեճ: Վ. Հենինգը դեռևս 1952 թ. հրատարակած մի հոդվածում առաջարկել է ŠKZ-ի միջին պարսկերեն «*wuzurg šāh Arminān*» և պահլավերեն «*wuzurg šāh Arminīn*» վերծանությունները սրբագրել «*Vazurg Armenān šāh*»: Իբրև փաստարկ՝ անվանի արևելագետը մատնացույց է անում Ներսեհի NPi արձանագրությունը, որտեղ Հայաստանի Սասանյան այս կառավարիչը, ըստ Վ. Հենինգի, կոչված է «*Vazurg Armenān šāh*»[357]: Հազիվ թե այս մեկնաբանությունը կարելի է ընդունելի համարել, քանի որ ŠKZ-ի երեք տարբերակներում այս տիտղոսը վիմագրված է ոչ թե եզակի անգամ, ինչը թույլ կտար մտածելու քանդակագրի անփութության կամ անգիտության մասին, այլ նույնությամբ կրկնված է նաև Սասանյան արքայատան անդամների հոգու փրկության համար սահմանված զոհաբերությունների հիշատակության ժամանակ: Ասել կուզի, որ ŠKZ-ի տողերը սրբագրելու խնդիր չկա:

Հենինգի վարկածի դեմ է խոսում նաև արձանագրության հունարեն տարբերակի մեջ գործածված «*μεγάλου βασιλέως Ἀρμενίας*» արտահայտությունը. ինչպես նկատում է Ս. Մ. Կրկյաշարյանը, այստեղ «արական սեռի *του μεγάλου* (մեծի) ածականը ոչ մի դեպքում չի կարող վերաբերել իգական սեռի *Ἀρμενίας* գոյականին. այն կարող վերաբերել բացառապես արական սեռի *βασιλέως* (թագավոր) գոյականին, քանի որ հունարենում գոյականի և ածականի սեռային համապատասխանությունը քերականական պարտադիր օրենք է»[358]: Ինչ վերաբերում է Վ. Հենինգի փաստարկին, ապա այն ևս հիմնավոր չէ. նախ՝ բոլորովին արդարացված չէ Որմիզդ-Արտաշիրի և Ներսեհի տիտղոսների միջև զուգահեռներ անցկացնելը, քանի որ այդ երկուսը Հայաստանում կառավարել են տարբեր ժամանակահատվածներում, երբ միանգամայն այլ էր Սասանյան տերության ռազմավարչական համակարգում Հայաստանին վերապահված դերը: Բացի այդ՝ Ներսեհը Պայկուլեի արձանագրության մեջ իրեն կոչում է ոչ թե «*Vazurg Armenān šāh*», ինչպես Վ. Հենինգն է ուզում տեսնել, կամ էլ «*wuzurg šāh Arminīn*», ինչպես որ կոչվում էր Որմիզդ-Արտաշիրը, այլ պարզապես

[356] Միջին պարսկերեն՝ wuzurg šāh Arminān, պահլավերեն՝ wuzurg šāh Arminīn, հունարեն՝μεγάλυ βασιλέως᾽Αρμενίας:
[357] **Henning W. B.**, A Farewell to the Khagan of the Aq-Aqatärān, *BSOAS,* vol. XIV/3, 1952, p. 517, Footnot. 4.
[358] **Կրկյաշարյան Ս. Մ.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 122:



«*'lmn'n ML[KA]*» = «Հայաստանի թագավոր»[359]:

Դժվար է համաձայնել նաև Դ. Մ. Լանգի կարծիքին, ըստ որի՝ «մեծ թագավոր Հայոց» տիտղոսով պարսից արքունիքը ցանկացել է Հայաստանի Սասանյան կառավարչին ներկայացնել իբրև Արշակունիների իրավահաջորդ[360]: Ակնհայտ է, որ հեղինակն անտեսել է երկու կարևոր իրողություն: Նախ՝ ենթադրյալ մտայնության դեպքում Հայաստանի սասանյան կառավարիչները պետք է կրեին ոչ թե «մեծ արքա Հայոց», այլ «թագավոր Մեծ Հայքի» կամ «թագավոր Հայոց Մեծաց» տիտղոսը, որը քաջ հայտնի է Մեծ Հայքի Արշակունի արքաների վիմագրերից[361]: Երկրորդ՝ Հայաստանին զենքով տիրացած և տեղական արքայատան հեղինակությունն ու փառքը ամեն կերպ խամրեցնելուն, ջնջելուն հետամուտ Սասանյանները բնավ էլ անհրաժեշտություն չպիտի զգային հայ Արշակունիների տիտղոսով կոչվելու:

Դ. Մ. Լանգի կարծիքը մասամբ կիսում է Ս. Երեմյանը, որը գրում է. «Տիզբոնի արքունիքը իրագործում էր իր վաղեմի քաղաքական ծրագիրը՝ Հայաստանում հաստատել Սասանյան դինաստիայի ժառանգական իշխանությունը, ինչպես առաջ Մեծ Հայքը Արշակունիների երկրորդ թագավորությունն էր (*Secundogenitur*), այժմ այդ նույն դերը վերականգնվում էր, սակայն իբրև Սասանյան դինաստիայի երկրորդ թագավորություն»[362]: Այնուհետև նա համերաշխում է Վ. Հենինգի հետ՝ համարելով, որ ŠKZ-ում Որմիզդ-Արտաշիրը պետք է կրեր ոչ թե «մեծ արքա Հայոց», այլ «թագավոր Հայոց Մեծաց» տիտղոսը[363]:

Ինքնատիպ է նաև Որմիզդ-Արտաշիրի «մեծ թագավոր Հայոց» տիտղոսի վերաբերյալ Շ. Շահբազիի մեկնաբանությունը, ըստ որի՝ այն շնորհվել է պարզապես «հպատակեցված հայերի հպարտությունը բավարարելու» նկատառումով[364]:

Ամփոփելով մեր քննադատությունը՝ նշենք, որ վերոնշյալ բոլոր դեպքերում անտեսվել կամ թերագնահատվել է տիտղոսի՝ որպես վարչաիրավական կյանքի իրողության դերն ու նշանակությունը: Տիտղոսը պե-

[359] **Humback H. and Skjaervø P. O.**, The Sasanian Inscription of Paikuli, Part 3.1. §§ 3; 13; 35. Անտեսելով վերոնշյալ փաստը՝ ցայսօր շատ ուսումնասիրողներ Ներսեհին են վերագրում «Հայաստանի մեծ արքա» տիտղոսը ( **Daryaee T.**, Sasanian Persia..., pp. 10-11):
[360] **Lang D. M.**, Iran, Armenia and Georgia,*CHI*, vol. 3(I), p. 517
[361] **Периханян А. Г.**, Арамейская надпись из Гарни, ՊԲՀ, 1964, թիվ 3, էջ 126: **Կրկյաշարյան Ս. Մ.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը..., էջ 121-123:
[362] **Երեմյան Ս.** , Նախշ-ի Ռուստամի..., էջ 66:
[363] Նույն տեղում, էջ 64, ծան. 18:
[364] **Shahbazi Sh.**, Shapur I i, History.

տական համակարգում այն կրող անձի պաշտոնական դիրքի ցուցիչն էր, նրա իրավասությունների շրջանակները որոշող հիմնական գործոնը: Օրինակ, Միհրդատ II-ի Բեհիսթունի ժայռաքանդակի վրա Գոթարզը կոչված է «սատրապաց սատրապ», ինչը Պարթևական տերության բաղադրիչ երկրների կառավարիչների նկատմամբ նրա գերազանցության արտահայտություն է: Նմանապես՝ Ագաթանգեղոսի վկայությունից, թե Մեծ Հայքում Աղձնիքի բդեշխը համարվել է «բդեշխն մեծ»[365], պարզորոշ հասկացվում է, որ «մեծ» տիտղոսով նա նվազագույնը գերապատվություն է ունեցել մյուսների նկատմամբ[366]: Սասանյան վարչաքաղաքական համակարգում նույնպիսի տրամաբանությամբ պետք է ծնվեր «մեծ արքա» տիտղոսը: Այն ստեղծվել էր ոչ թե հայոց դարավոր ավանդույթը շարունակելու ցանկությամբ կամ էլ պարտված հայերին բարոյապես քաջալերելու, նրանց պատվախնդրությունը շոյելու նպատակով, այլ Իրանական տերության վարչաքաղաքական կյանքի պահանջմունքից և արտահայտում էր այն կրող անձի առաջնորդ դիրքը «արքա» տիտղոսը կրող կառավարիչների շարքում: Վաղ Սասանյան տերության վարչական համակարգի՝ ŠKZ-ում ներկայացված պատկերը այլ կարծիքի տեղ չի թողնում.

«Եվ ես (Շապուհ I-ը – Ա. Մ.) տիրում եմ [հետևյալ] երկրներին (միջ. պարսկ. *ḥštr,* պարթ. *khšatr*) Պարսք, Պարթևստան, Սուզիանա, Մեսեն, Ասորեստան, Ադիաբենե, Արաբիա, Ատրպատական, Հայաստան, Իբերիա, Մախելոնիա, Առան (Աղվանք), Բաղասական և ավելի հեռուն, ընդհուպ մինչև Կապ լեռ և Ալանաց դարպասներ և Պարեշխվարի (Էլբրուս) ողջ լեռները, Մարաստան, Գուրգան, Մերվ, Հերաթ, ողջ Ապարշահրը, Կրման, Սակաստան, Թուրան, Մեկրան, Փարադան, Հինդ, Քուշանշահր ընդհուպ մինչև Պաշկաբուր և ավելի հեռու՝ մինչև Կաշագարի լեռները, Սողդ և Չաչ, իսկ ծովի մյուս կողմում՝ Օման: Եվ այդ բոլոր երկրներին, նրանց արքաներին ու կողմերի կառավարիչներին բոլորին դարձրինք մեզ հարկատու և հպատակ»[367]:

Վերոնշյալ ցուցակում հիշատակված երկրամասերն ու նահանգները տարաստիճան կախում ունեին կենտրոնական իշխանությունից: Նրանց մի մասը կառավարվում էին արքայից արքայի տեղապահների կողմից: Բայց մյուս մասում շարունակում էին իշխել տեղական

[365] **Ագաթանգեղոս**, 795: Սրան Փավստոսն ու Մ. Խորենացին կոչում են «մեծ իշխան» (**Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց,** բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթագր. Ստ. Մալխասյանցի, Երևան, 1987, Գ. Թ: Խորենացի Մ., III, դ):
[366] Տես **Կրկյաշարյան Ս.Մ.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը, էջ 187:
[367] **ŠKZ**, MP I-II.



դինաստիաների ներկայացուցիչները, որոնք իրենց արքայական իշխանությունը ստանում էին Սասանյան վեհապետից՝ նրա նկատմամբ ստանձնելով վասալական պարտականություններ: «Մեծ արքա» տիտղոսի քաղաքական նշանակությունը հենց Արտաշիրի գերիշխանության ներքո իրենց ինքնավարությունն ու արքայական տիտղոսը պահպանած տեղական դինաստների ու Սասանյան արքայի ոստանի մեջ մտած առանձին երկրամասերի կառավարիչ-արքաներ նշանակված Սասանյան արքայազների նկատմամբ գահաժառանգի գերագահությունն ապահովելն էր:

Դրամագիտական նյութերը հաստատում են, որ Որմիզդ-Արտաշիրի «մեծ արքա Հայոց» տիտղոսի մեջ իրապես տիտղոսի նշանակություն ունի «մեծ արքա»-ն: Այն կապվում է գերազանցապես գահաժառանգի անձին, իսկ նրա կառավարման ներքո գտնվող երկրին այնքանով, որքանով որ այն իր սահմանային դիրքով հանդիսանում էր գահաժառանգ-զորապետի ոստանն ու պարսկական զորքի կենտրոնատեղին: Հետևաբար, եթե որևէ առիթ կա խոսելու Սասանյան վարչաքաղաքական համակարգում այս կամ այն երկրամասի արտոնյալ դերի մասին, ապա խոսքը պետք է գնա ոչ թե «***secundogenitur***»-ի, այլ «***secundigentum***»-«(արքայից հետո) երկրորդի երկրի» մասին: Այն ոչ թե ստատիկ, այլ տերության արտաքին քաղաքականության առաջնահերթությունների փոփոխություններին ներդաշնակող դեր էր: Բնավ պատահական չէր, որ Սասանյան տերության ռազմավարչական համակարգում Հայաստանն այն պահպանեց մինչև Պրոբուս կայսեր հետ Վարահրան I-ի 276 թ., կնքած հաշտության պայմանագիրը[368]: Տերության արևմտյան սահմաններում խաղաղության վերականգնումից հետո Սասանյանների ռազմաքաղաքական ակտիվության սլաքը թեքվեց դեպի Արևելք և, բնականաբար, գահաժառանգի ոստանի և պարսկական զորակայանի դերն անցավ տերության արևելյան՝ «Սակաստանի, Տուրեստանի և Հինդի մինչև ծով» շահրին[369]: Բնականաբար, Իրանի արտաքին քաղաքականության մեջ կատարված հիշյալ շրջադարձից հետո արքայից արքա Վարահրան I-ի կրտսեր եղբայր Ներսեհը այլևս չէր կարող գահակալել վերոնշյալ արևելյան շահրում և տեղափոխվեց Հայաստան: Հատկանշական է նաև, որ Հայաստանի կառավարչի պաշտոնում նա կրում էր ոչ թե «մեծ արքա Հայոց», այլ «Հայաստանի արքա» համեստ տիտղոսը:

[368] **Մելիքյան Ա.**, Մեծ Հայքի 276 թ. պարսկա-հռոմեական բաժանումը, *ՎԱ*, 2008, թիվ 2-3, էջ 34-35:
[369] Նույն տեղում:

Վարչաքաղաքական այն դրդապատճառները, որոնք երևան էին հանել «մեծ արքա» տիտղոսը, գոյություն ունեին ոչ միայն Շապուհ I-ի օրոք, այլև նրանից առաջ: Արտաշիրի օրոք թեև Սասանյան տերությունը դեռևս էապես դուրս չէր եկել Իրանի սահմաններից, բայց նրա դաշնային բնույթը պետք է որ ավելի զգալի լիներ: ŠKZ-ում (միջ. պարսկ. տող 28) Արտաշիր I-ի արքունի ցուցակը բացում են չորս արքաներ (*šahrdārān*). «Սիա նրանք, որոնք ապրել են արքայից արքա Արտաշիրի իշխանության ներքո.

1. Սատարպ՝ Ապրենակի արքա,
2. Արտաշիր՝ Մերվի արքա,
3. Արտաշիր՝ Կրմանի արքա,
4. Արտաշիր՝ սակերի արքա…»:

Հնարավոր է, որ Արտաշիր I-ին հպատակ տեղական արքաների թիվը իրականում եղել է ավելին, բայց ŠKZ-ում տեղ են գտել նրանցից պատվավորագույնները: Չի բացառվում նաև, որ նրանցից առավել թույլերը ժամանակի ընթացքում կուլ են գնացել Արտաշիր I-ի կենտրոնաձիգ քաղաքականությանը[370], և ŠKZ-ն արձանագրել է նրա գահակալության վերջին գոյություն ունեցած վարչական պատկերը[371]: Ամեն դեպքում՝ դրանից Վաղ Սասանյան տերության վարչաքաղաքական բնույթը չէր փոխվում: Դա հիմք է տալիս կարծելու, որ տերության նվիրապետական համակարգում գահաժառանգի դիրքը, քաղաքական կշիռն ու հարգը «մեծ արքա» տիտղոսով բարձրացնելու միջոցը ձևավորվել է տակավին Արտաշիր I-ի օրոք: Եվ հետևաբար՝ **Հայաստանի բռնազավթված մասերում պարսից գահաժառանգ-զորապետ Շապուհը պետք է որ կրած լինի ոչ թե «արքա», այլ «մեծ արքա» տիտղոսը, որով նա մի աստիճան վեր է կանգնել Սասանյան մյուս արքայազներից ու Արտաշիրին կամովին հպատակված տեղական դինաստներից:**

Իհարկե, որոշ հակասություն է առաջանում այն առումով, որ ŠKZ-ում

[370] Արտաշիրին կամովին հպատակված արքայիկներից Մշիխա Զեխան հիշատակում է երկուսին՝ Քարքա-Սելոխի արքա Դոմիտիանոսին և Ադիաբենեի արքա Շարհատին (Ադիաբենեի եկեղեցու պատմություն, էջ 82-83): Բայց մի փոքր անց նշում է. «Պարսիկների առաջին արքա Արտաշիրը մեր երկիր ուղարկեց մի կառավարիչ, որն Ադորզահադ էր կոչվում» (Նույն տեղում, էջ 84):

[371] Համաձայն ընդունված կարծիքի՝ վերոնշյալ չորս արքաներից միայն երկուսը՝ Ապրենակի արքա Սատարպն ու Կրմանի արքա Արտաշիրն են, որ Արտաշիր I-ի գահակալության վերջերին դեռևս ներկայացնում էին տեղական հարստություններին: Ուսումնասիրողները մյուս երկուսին նույնականացնում են Արտաշիր I-ի համանուն եղբոր և որդու հետ (**Hinz W.**, Altiranishe Fund und Fourschungen, p. 142; **Frye R.N.**, The Political History of Iran…, p. 120):



Արտաշիր I-ի արքունի ցուցակում Շապուհը «մեծ թագավոր Հայոց» տիտղոսով հիշատակված չէ: Տեսականորեն՝ դա կարելի է բացատրել նրանով, որ Հայաստանի մեծագույն մասը Արտաշրի օրոք մնում էր աննված և նշված տիտղոսի արձանագրման դեպքում հեղինակը ոչ միայն կմեղանչեր «ճիշտ խոսքի» գրադաշտական պատգամից, այլև կարող էր ընթերցողին ավելորդ մոլորությունների մեջ գցել: Բավական է հիշել, որ ŠKZ-ից շուրջ 30 տարի անց արքայից արքա Ներսեհը իր Պայկուլեի արձանագրության մեջ, դարձյալ ընթերցողին թյուրիմացության մեջ չգցելու նկատառումով, խախտել է շնորհավորելու եկած կառավարիչների և դեսպանների թվարկման ձևական սկզբունքը և Տրդատ III-ին հիշատակել է միայն «արքա» տիտղոսով՝ առանց նշելու նրա ներկայացրած երկիրը[372]. չէ՞ որ Մեծ Հայքի արևելյան՝ մեծագույն մասն այս դեպքում էլ գտնվում էր պարսից տիրապետության ներքո և Տրդատի՝ Մեծ Հայքի արևմտյան մասում ունեցած «արքա» տիտղոսը նրա վրա չէր տարածվում[373]:

Մեզ ավելի հավանական է թվում երկրորդ բացատրությունը. ŠKZ-ի հեղինակը ինքը՝ Շապուհ I-ն էր, որը կարող էր և չհիշատակել «Հայաստանի արքայի» իր անցյալ կարգավիճակը, մանավանդ, որ այն ստորադասված էր իր համապետական նշանակության կարգավիճակին ու գործառույթներին և այն մեծ փառքին ու հեղինակությանը, որ նա ձեռք էր բերել 230-ական թ.թ. վերջերին և 240-ական թ.թ. սկզբներին Վերին Միջագետքում և Ասորիքում ծավալված ռազմական գործողությունների ընթացքում: Այս վերջին վարկածի օգտին է խոսում այն պարզ փաստը, որ ŠKZ-ում Արտաշիր I-ի արքունի կազմի թվարկության մեջ Շապուհն իրեն ընդհանրապես չի հիշատակում: Բնականաբար, դրանից բնավ էլ չի հետևում, թե գահաժառանգի դերն ու հեղինակությունն այն աստիճան ցածր է եղել, որ դուրս է մնացել պաշտոնական ցուցակից: Ընդհակառակը, դա խոսում է այն մասին, որ արձանագրության հեղինակը, ստորադասված լինելով Իրանի արքայից արքային, միևնույն ժամանակ գերադաս դիրք է գրավել Արտաշիր I-ի տերության մնացած ամբողջ նվիրապետական համակարգի նկատմամբ:

Պարսից նվիրապետական համակարգում թագաժառանգ Շապուհի գերապատիվ դիրքը պարզորոշ արտահայտված է Արտաշիր I-ի Փիրուզաբադ II ժայռաքանդակի վրա: Այստեղ Արտաշիրից անմիջապես հետո պատկերված է արքայի հովհարակիրը[374]: Սակայն քանդակագործը

[372] **Humbach H. and Skjaervø P.O.**, The Sassanian Inscription of Paikuli, Part 3.1, § 92.

[373] **Մելիքյան Ա.**, Տիգրանակերտի հունարեն արձանագրության…, էջ 142:

[374] Դատելով այս պատկերի գլխի պատվի վրա առկա բողբոջանման զինանշանից՝ նրան պետք է նույնացնել «մեծ ֆրամադար» Աբարսամի հետ:

ատիճանակարգվածության հնամենի կանոնից կատարված շեղումը հաջողությամբ շտկել է չափական հարաբերության միջոցով՝ նրան պատկերելով անհամեմատ փոքր, քան հաջորդող երեք կերպարները: Վերջիններս, ինչպես երևում է նրանց հագուստից և հատկապես գլխի հարդարանքից, պատկանում են Սասանյան արքայատանը: Նրանց մեջ գահաժառանգ Շապուհը, որը նույնականացվում է՝ շնորհիվ սաղավարտին քանդակված զինանշանի, ներկայացվել է առաջ, քան մյուս երկուսը, որոնք սովորաբար նույնականացվում են Արտաշիր I-ի համանուն եղբոր և որդու՝ Մերվի և Սակաստանի արքաների հետ: Բացի այդ՝ Շապուհի գերապատվությունն ընդգծված է նաև իշխանության նշանների միջոցով. Շապուհը կրում է երկար ժապավեններով դիադեմ, մինչդեռ մյուս երկու պատկերները ներկայացվել են պարթևական ժամանակների «սատրապական» դիադեմաներով:

Վերջին հարցը, որին հարկ ենք համարում անդրադառնալ, այն է, թե երբ է Շապուհը նշանակվել Հայաստանի բռնազավթված մասերի արքա: Ցավոք, սրա վերաբերյալ մեր պատասխանը հիմնված է բացառապես պատկերագրական նյութի վրա: Սալմաստի ժայռաքանդակի վրա Արտաշիրի թագի ու հանդերձանքի ոճական ընդհանրությունը Նախշ-ի Ռուստամ I-ի արքայական թագի ու հանդերձանքի հետ, թվում է, բավարար հիմք է տալիս համարելու, որ Շապուհի խնդրահարույց թագադրությունը տեղի է ունեցել Արտաշիրի գահակալության վերջերին, բայց առաջ, քան 240 թ. ապրիլ ամիսը, երբ նա հայտարարվեց կառավարչակից արքա: Սակայն Արտաշիր I-ի Նախշ-ի Ռաջափ III և Փիրուզաբադ II ժայռաքանդակների պատկերագրական նյութի համեմատական քննությունն առաջարկում է այլ թվագրություն: Վ. Գ. Լուկոնինն առաջին հուշարձանի ստեղծումը թվագրում է 230-ական թ.թ. սկզբներով[375], իսկ երկրորդինը՝ 235-238 թ.թ.՝ մատնացույց անելով այն իրողությունը, որ նրա վրա Արտաշիրը կրում է այնպիսի թագ, որպիսին նախապես ներկայացվել էր 235-238 թ.թ. թողարկված այսպես կոչված Vb տիպի դրամների վրա[376]: Առաջինի վրա գահաժառանգ Շապուհը թեև ներկայացվել է Արտաշիրից անմիջապես հետո՝ առաջին պլանում, բայց գահաժառանգի խորհրդանշանից բացի այլ պատվանշան չի կրում: Նույն պատվանշանը նա կրում է նաև Արտաշիր I-ի Փիրուզաբադ II ինվեստիտուրային ժայռաքանդակի վրա: Սակայն այստեղ, ինչպես վերը նշվեց, պարսից թագաժառանգը պսակված է երկար, ծոծրակից կախ ընկած ժապավեններով դիադե-

375 **Луконин В. Г.**, Иран в III веке, с. 18-19.
376 **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 48, прим. 26, с. 185.



մայով, արքայական մի պատվանշան, որից զուրկ են Մերվի և Սակաստանի արքաները:

Նախշ-ի Ռաջափ III ժայռաքանդակի վրա գահաժառանգ Շապուհի գլխի հարդարանքի մեջ արքայական դիադեմայի բացակայությունը և այդ պատվանշանի առկայությունը ավելի ուշ ստեղծված Փիրուզաբադ II ժայռաքանդակի վրա թույլ են տալիս նրա՝ իբրև Հայաստանի նվաճված մասերի արքայի թագադրությունը տեղադրել նշված ժայռաքանդակների ստեղծման միջև ընկած ժամանակահատվածում՝ 231-238 թ.թ. միջև:

## 10
## ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԻ ԱՋԱԿՈՂՄՅԱՆ ՊԱՏԿԵՐԱԽՄԲԻ ՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ. ԳԱՀԱԺԱՌԱՆԳ ՈՐՄԻԶԴ-ԱՐՏԱՇԻՐԸ «ՄԵԾ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ»

Սալմաստի ժայռաքանդակի նշանակությունը բացահայտելու առումով հավասարապես կարևոր է նրա աջակողմյան պատկերախմբի կերպարների նույնականացումը: Աջակողմյան հեծյալի երեք քառորդ չափով ձախ դարձած դեմքի (նկ. 47) համեմատությունը Դարաբգիրդի, Նախշ-ի Ռաջափ IV, Նախշ-ի Ռուստամ VI, Բիշապուհ II, Բիշապուհ III ժայռաքանդակների և Շապուհ I-ի թողարկած դրամների պատկերների հետ (նկ. 48 ա, բ, գ, դ, ե, զ) անվիճարկելի են դարձնում, որ այստեղ պատկերված է Սասանյան երկրորդ տիրակալ Շապուհ I-ը: Սակայն քանդակի մի շարք ակնառու դետալներ, հատկապես՝ թագը, հանդերձանքը, հեծյալի թիկունքում ծածանվող ժապավենները և, վերջապես, օղակի միջով անցկացված մորուքը խոսում են պատկերի ոչ թե թագաժառանգի (ինչպես կարծում են Ու. Էնսլինը, Մ.-Լ. Շոմոնը և այլք), այլ Իրանի արքայից արքայի կարգավիճակի մասին: Մյուս կողմից՝ հոր տիարայով Շապուհ I-ի պատկերման փաստը պարզորոշ է դարձնում, որ Սալմաստի ժայռաքանդակի աջ պատկերախմբում ներկայացրած է մի գործողություն, որը կատարվել է Արտաշիր I-ի կողմից Շապուհին «թագավորական ավագ դիադեմայով» թագադրելուց հետո, բայց նախքան անձնական պարսպազարդ տիարայով Շապուհ I-ի պաշտոնական թագադրությունը՝ 240 թ. ապրիլից մինչև 242 թ. ապրիլն[377] ընկած ժամանակամիջոցում:

Ավելի հավանական է, որ խնդրո առարկա թագադրությունը կատարվել է Արտաշիրի վախճանից մինչև Շապուհ I-ի պաշտոնական ինվեստիտուրան ընկած ժամանակահատվածում՝ 242 թ. փետրվարի սկզբներից մինչև նույն թվականի ապրիլի 12-ը: Հակառակ դեպքում՝ անկախ այն բանից, Արտաշիրը դեռ անձամբ մասնակցում էր տերության կառավարմանը, թե գործնական ասպարեզն ամբողջովին տրամադրել էր որդուն, Սալմաստի ժայռաքանդակի աջակողմյան պատկերախմբի հետիոտնին (առհասարակ՝ որևէ հպատակ արքայի) իշխանության խորհրդանշան հանձնողի դերում Շապուհ I-ից բացի պետք է տեսնեինք նաև Արտաշիր I-ին:

Սալմաստի ժայռաքանդակի աջակողմյան հեծյալի և նրա իրավա-

377 **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 55.



կան կարգավիճակի նույնականացմամբ լուծվում է նաև նրա կողմից թագադրվող անձնավորության ինքնության հարցը: Վերջինիս արժանապատիվ կեցվածքը, իրանական հագուստը, երկգալար գոտին, որից, ինչպես երևում է, սուր է կախված և, հատկապես, մազերի հարդարանքը, որը ճշտորեն կրկնում է թագադիր արքայի մազերի հարդարանքը, խոսում են Սասանյան արքայատանը նրա պատկանելության մասին: Իսկ Շապուհ I-ի Նախշ-ի Ռաջափի ժայռաքանդակի վրա հեծյալ արքայից հետո ներկայացված անձանցից այսպիսի հարդարանք են կրում երկուսը, որոնցից թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրը նույնականացվում է առանց որևէ դժվարության՝ շնորհիվ արքայից անմիջապես հետո գրաված դիրքի և սաղավարտին պատկերված զինանշանի (նկ. 49): Ինչպես երևում է, Սալմաստի ժայռաքանդակի աջակողմյան պատկերախմբի հետիոտն պատկերը ներկայացնում է նույն Որմիզդ-Արտաշիրին՝ հորից իշխանության օղակ ստանալիս:

Համաձայն Տաբարիի հաղորդման, Որմիզդ-Արտաշիրի մայրը եղել է Միհրակ արքայի դուստրը և կոչվել է Խուռահ[378]: Իսկ Համզա ալ-Իսպահանին Որմիզդ-Արտաշիրի մորը կոչում է Գարդզատ[379]: Սակայն այս երկու անունները ŠKZ-ում հիշատակված չեն: Պատմագիտության մեջ տարածված կարծիքի համաձայն Որմիզդ-Արտաշիրը Շապուհի և կայսրության թագուհի Խորանզեմից ծնված դստեր՝ թագուհիների թագուհի Ադուր-Անահիդի որդին էր[380]:

Վ. Հինցի հաշվումներով Որմիզդ-Արտաշիրը վախճանվել է 273թ.՝ 42 տարեկանում: Հետևաբար, կստացվի, որ 242 թ. Որմիզդ-Արտաշիրը եղել է ընդամենը 11 տարեկան: Սակայն, Վ. Հինցի հաշվարկն ավելին քան վիճարկելի է, քանի որ Սալմաստի ժայռաքանդակի վրա Շապուհից իշխանության օղակ ստացող Որմիզդ-Արտաշիրի թեթև բեղ-մորուքը և գոտուց կախված սուրը խոսում են այն մասին, որ ներկայացված իրադարձության ժամանակ պարսից գահաժառանգը արդեն հատել է

378 **The History of al-Tabarī** (Ta'rīkh al-rusul wa'l-mulūk): The Sāsānids, the Byzantines, the Lakhmids and Yemen. Transl. and annotated by C. E. Boswarth, Albany, New York, 1999, p. 41.

379 **Hamzah al-Işfahānī**, Annals, Transl. from Arabic by U.M. Daudpota. Bombay, 1932.

380 **Hinz W.**, Altiranische Fund und Forschungen, S. 124, 126; **Chaumont M-L.**, Recherches sur L'Histoire D'Arménie..., p. 67; Ֆ. Ժինյուի կարծիքով, Ադուր-Անահիդի «թագուհիների թագուհի» տիտղոսը ավելի շատ արտահայտում է նրա հասարակական դիրքը, քան նրա ընտանեկան դրությունը (**Gignoux Ph.**, Ādur- Anāhīd: 3-rd Century CE Sasanian "queen of queens", *EIr*, Vol. I, Fasc. 5, p. 472):

պատանեկության վերին սահմանը[381]

Արտաքուստ Որմիզդ-Արտաշիրի երիտասարդական տարիքը հակասում է նրան արված շնորհի և դրանից բխող գործառույթների՝ Հայաստանի թագավորի և պարսից այրուձիու հրամանատարության կարևորությանը: Սակայն այստեղ պետք է հաշվի առնել, որ գործ ունենք գահաժառանգության ասպարեզում տարվող հատուկ քաղաքականության հետ. բավական է հիշել, որ Օրոդես II-ը Կրասուսին ջախջախելուց հետո Ասորիք և Փյունիկիա ուղարկվող պարթևական զորքի հրամանատարությունը պաշտոնապես հանձնել էր թագաժառանգ որդուն՝ «մանուկ» Բակուրին[382], կամ, օրինակ, Սեպտիմիուս Սևերուսը 197 թ. Հրեաստանում ծագած ապստամբության ճնշումը պաշտոնապես հանձնարարել էր 11-ամյա որդուն՝ Սեպտիմիուս Բասսիանին[383]: Երկու դեպքում էլ այդ նշանակումները ոչ թե վեհապետների պատերազմական հոգսը իրապես թեթևացնելու, այլ ապագայում գահի սահուն փոխանցումն ապահովելու նպատակ էին հետապնդում: Ակնհայտ է, որ որդու քաղաքական կարիերան մտահոգել է նաև Շապուհ I-ին, որը, հոր օրինակով, գահաժառանգի դիրքի ամրապնդման նպատակով համադրել է քարոզչության աքեմենյան և պարթևական մեխանիզմները:

Շապուհի լիիրավ չորս որդիներից երրորդի՝ Որմիզդ-Արտաշիրի ընտրության պատճառների շուրջ գիտության մեջ որոշակի տարակարծություն կա: Ռ. Ֆրայը ենթադրում է, որ գահաժառանգության հարցում Շապուհի ավագ որդու՝ Վարահրանի շրջանցման պատճառը եղել է այն, որ նա ծնվել էր համեմատաբար ստորակարգ թագուհուց կամ էլ հարճից[384]: Հեղինակն իբրև փաստարկ նշում է այն, որ Շապուհ I-ի օրոք նա մեծ հեղինակություն չէր վայելել և անվանական կրակի տաճար ունենալու պատվի չէր արժանացել: Մ. Հաթթերի կարծիքով՝ Վարահրանի շրջանցման պատճառը եղել են վերջինիս զրադաշտական հայացքները, որոնք չեն գոհացրել նրա՝ զրվանանական դավանանքի հետևորդ

381 Ռ. Կեր Պորտերը, Շ. Տեքսիեն ու Կ. Ֆ. Լեհման-Հաուպտը Սալմաստի բարձրաքանդակի իրենց արած նկարներում, հեռանալով իրականությունից, աջակողմյան պատկերախմբի հետիոտն պատկերին ներկայացրել են նույնպիսի փարթամ բեղ-մորուքով՝ ինչպիսին որ ունի ձախակողմյան հետիոտնը: Մինչդեռ Պ. Կոստեն այս հարցում հավատարիմ է մնացել բնօրինակին և հետիոտն պատկերներին ներկայացրել է որոշ տարբերությամբ՝ աջակողմյանին՝ փարթամ, իսկ ձախակողմյանին՝ երիտասարդական թեթև մորուքով:

382 **Dio Cass**. XL, 28. 3

383 **SHA**, Sever, XVI, 7.

384 **Frye R. N.,** The Political History of Iran Ander Sasanians, p. 127.



հորը[385]: Թ. Դարյաին Որմիզդ-Արտաշիրին գահաժառանգ ճանաչելու գործում վճռորոշ է համարում զորավարական այն մեծ տաղանդը, որ նա դրսևորել էր 260-ական թ.թ. ռազմական գործողությունների ժամանակ[386]:

Վերը նշված բոլոր վարկածներն էլ հարուցում են բազմաթիվ առարկություններ, որոնցից հատկապես նշելի են երկուսը: Նախ՝ ինչպես արդեն նշել ենք, Վաղ Սասանյան տերության մեջ դեռևս Արտաշիր I-ի կողմից նախապատվություն էր տրվել ոչ թե «ավագության կարգ»-ին, այլ արքայի՝ «նիզակի նվաճման» իրավունքից բխող կամայական ընտրության սկզբունքին[387]: Ուստի, Շապուհ I-ը միանգամայն ազատ էր՝ հենվելու հոր հեղինակավոր նախադեպի վրա և գործադրելու նրանից ժառանգած «կամայական ընտրության» սկզբունքը: Մյուս կողմից՝ հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ եթե անգամ տիրապետող լիներ առաջնածնության սկզբունքը, ապա այս կամ այն պատճառով Վարահրանի թեկնածությունը մերժելու դեպքում գահաժառանգության իրավունքը պետք է անցներ ոչ թե Որմիզդ-Արտաշիրին, այլ Շապուհ I-ի մյուս որդուն՝ Շապուհին:

Ինչ վերաբերում է Թ. Դարյաիի առաջադրած վարկածին, ապա պետք է նշել, որ որևէ առիթ չկա կարծելու, որ III դ. Սասանյան արքաները Աքեմենյանների օրինակով գահաժառանգի ընտրությունը թողել են վերջին պահին[388]: Ընդհակառակը, Սալմաստի ժայռաքանդակի վրա Շապուհ I-ի տիարայի ձևն ու Որմիզդ-Արտաշիրի երիտասարդական տարիքը ցույց են տալիս, որ նրա առաջադրումը «Հայաստանի» արքայի, հետևաբար՝ պարսկական բանակի զորագլխի պաշտոնում կատարվել է Սասանյան երկրորդ արքայի գահակալության սկզբներին, երբ երիտասարդ

385 **Hutter M.**, Manichaeism in the Early Sasanian Empire, *Numen*, Vol. 40, No. 1 (Jan., 1993), p. 11.

386 **Daryaee T.,** Sasanian Persia, p. 10.

387 Հելլենիստական դարաշրջանից եկող իրավական սկզբունքի համաձայն, «նիզակի նվաճման» իրավունքով ձեռք բերված արքայական իշխանությունը, ինչպես մասնավոր սեփականության ցանկացած մի այլ ձև, կարող էր ժառանգվել և նոր տիրոջ կողմից էլ տնօրինվել սեփական հայեցողությամբ (**Бикерман Э.,** Государство Селевкидов, с. 20):

388 Աղբյուրները վկայում են, որ Սասանյան արքունիքներում ընդունված է եղել վաղ պատանեկական տարիքից գահաժառանգների դաստիարակությունը որևէ հեղինակավոր մեծատոհմիկի վստահելու փորձը: Պերոզի այսօրինակ դաստիարակը Ռահամն էր, Վարահրան V-ինը՝ Մոնդարը, Արտաշիր III-ինը՝ Մեհ-Ատրգոշասպը և այլն (**Christensen A.,** L'Iran sous les Sassanides, 2nd ed., Copenhaguen, 1944, pp. 290, 274; **Widengren** G., Der Feudalismus im alten Iran, Cologne and Opladen, 1969, pp. 69-82): Սրա զուգահեռները մենք տեսնում ենք Մեծ Հայքի Արշակունիների մոտ՝ հանձինս գահաժառանգների և մարդպետների հարաբերության:

գահաժառանգն իր տաղանդները գործնականում դրսևորելու հնարավորություն ունենալ դեռ չէր կարող: Այդուհանդերձ, ինչպես երևում է, Որմիզդ-Արտաշիրի ընտրության գործում, իսկապես, կարևորվել են հենց նրա անձնական որակները: Տաբարին Սասանյան այս արքայազնի մասին գրում է. «Նա կոչվել էր «Քաջ» և մարմնի կառուցվածքով և արտաքին տեսքով նման էր Արտաշիրին... Նա ականավոր էր... ատլետիկ կառուցվածքով»[389]: Ֆիզիկական կատարելությունն ու գեղեցկությունը իրանական միջավայրում մշտապես եղել են գահաժառանգի ընտրության վճռորոշ գործոններից[390]: Եվ այս տեսանկյունից եթե մի փոքր ավելի վստահությամբ նայենք հարազատ թոռների մեջ ժրամանուկ Որմիզդ-Արտաշիրի նկատմամբ Արտաշիրի առանձնահատուկ վերաբերմունքի մասին «Կարանամակ»-ի հաղորդմանը[391], ապա նույնիսկ կարելի է մտածել, որ նրա քաղաքական կարիերան կանխորոշվել է ոչ թե հոր, այլ դեռևս պապի գահակալության օրոք:

Ակնհայտ է, որ որդու քաղաքական կարիերան, անգամ նրան պարսկական զորագլխի և «Հայաստան»-ի արքայի փոխկապակցված պաշտոններում նշանակելուց հետո, մտահոգել է Շապուհ I-ին: Դրանով կարելի է բացատրել այն, որ հոր օրինակով, նա ևս դիմել է պատկերագրական քարոզչությանը: 250-ական թ.թ. վերջերին Շապուհ I-ի կերտած Նախշ-ի Ռաջափ IV ժայռաքանդակի վրա Որմիզդ-Արտաշիրը պատկերված է արքաների արքայից անմիջապես հետո, բայց իր բոլոր եղբայրներից առաջ, որով և ընդգծվում էր թագաժառանգի նրա բարձր դիրքը[392]:

Որմիզդ-Արտաշիրը երկիցս հիշատակվում է նաև ŠKZ-ում: Սասանյան արքայատան անդամների պատվին կրակի տաճարներ հիմնելու կապակցությամբ արված թվարկման ընթացքում (միջ. պարսկ. 23, պահլ. 18-րդ տողեր) «մեծ թագավոր Հայոց» Որմիզդ-Արտաշիրի կրակի տաճարը հիշատակվում է Շապուհ I-ի և նրա կնոջ` թագուհիների կրակի տաճարը հիշատակվում է Շապուհ I-ի և նրա կնոջ` թագուհիների թագուհի Ադուր-Անահիդի կրակի տաճարներից անմիջապես հետո[393] և, այսպիսով, նախորդում է իր եղբայրների` Մեսենի արքա Շապուհի և Սակաստանի, Թուրանի և Հնդկաստանի արքա Ներսեհի կրակի տաճարներին: Մինչդեռ ŠKZ-ի այն պարբերության մեջ, որտեղ նշվում են կրակի տաճարներին կատարվելիք զոհաբերությունների մասին, նա հիշատակված է Գիլյանի արքա Վարահրանից և Մեսենի արքա Շապուհից[394] հետո, բայց առաջ, քան Սակաստանի արքա Ներսեհը: Որմիզդ-Արտաշիրի այս երկակի դրությունը բացատրվում է նրանով, որ առաջին դեպքում Սասանյան արքայազները հիշատակված են ըստ Շապուհ I-ի արքունիքում զբաղեցրած պատվո դրության, իսկ երկրորդում` ըստ իրենց տարիքի[395]:

Տաբարին Որմիզդ-Արտաշիրի մասին հաղորդում է. «Երբ Արտաշիրը վախճանվեց, և թագավորական իշխանությունն անցավ Շապուհին, նա Որմիզդին նշանակեց Խորասանի նահանգապետ և ուղարկեց այնտեղ: Որմիզդը վարեց ինքնուրույն քաղաքականություն, իրեն ենթարկեց հարևան երկրամասերի ժողովուրդների կառավարիչներին և իրեն դրսևորեց որպես միանգամայն հպարտ և շնորհալի կառավարիչ»[396]: Իհարկե, ակնհայտ է, որ Տաբարին շփոթել է երկրանունը` Հայաստանի փոխարեն հիշատակելով Խորասանը: Շփոթն ակնհայտ է դառնում նաև նրանով, որ Շապուհի օրոք Խորասանի հարևան երկրամասերն արդեն հպատակեցված էին[397], մինչդեռ Հայաստանում է, որ Որմիզդ-Արտաշիրը ռազմական ակտիվություն պետք է դրսևորեր` Իրանական տերության սահմանները դեպի արևմուտք և հյուսիս-արևմուտք ընդարձակելու համար: Սակայն տվյալ դեպքում էական է այն, որ Տաբարին, հստակորեն նշելով Որմիզդ-Արտաշիրի նշանակման ժամանակը, նաև փոխադարձ կապի մեջ է դնում գահաժառանգի նրա կարգավիճակն ու վարած ռազմավարչական գործառույթները:

Ե՞րբ է Որմիզդ-Արտաշիրը նշանակվել «մեծ արքա Հայոց»: Սալմաստի ժայռաքանդակի աջակողմյան հեծյալի տիարայի ձևը թույլ է տալիս այդ հարցին պատասխանել միանշանակ. հարավհայկական երկրամասերի կառավարումը «մեծ թագավոր Հայոց» տիտղոսով և այստեղ տեղակայված պարսկական զորքի հրամանատարությամբ հանդերձ, Որմիզդ-Արտաշիրին է փոխանցվել Արտաշիր I-ի վախճանից հետո` նախքան Շապուհ I-ի աստվածային ինվեստիտուրան` 242 թ. փետրվարի սկզբներից մինչև ապրիլի 12-ը ընկած ժամանակամիջոցում:

Թագաժառանգի և պարսկական զորահրամանատարի փոխկա-

---

389 **al-Tabarī**, p. 41-42.

390 **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, Երևան, 1986, 7, 187: **Քսենոփոն**, Կյուրոպեդիա, թարգ. բնագրից և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 2000, 1. 2.1:

391 **Книга деяний Ардашира сына Папака**, перевод Чунакова О. М., *ППВ* LXXVIII, 1987, гл. XVIII, 19-20.

392 **Луконин В. Г.**, Иран в III веке, с. 17.

393 **ŠKZ**, MP IV, 2.

394 Վ. Լուկոնինը, ելնելով այն փաստից, որ ŠKZ -ն (պահլ. տարբ., 25) Մեսենի կառավարիչ է հիշատակում Շապուհի կնոջը` Դանեկ թագուհուն, եզրակացնում է, որ արձանագրության ստեղծման պահին Շապուհն արդեն վախճանված էր և հիշատակված է հետմահու:

395 **Weber U.**, Hormezd I, Kung der Kung von Ērān und Anērān, *IrAn* 42, 2007, pp. 387-418; **Shayegan M.R.**, Hormozd I, *EIr,* vol. XII, Fasc.5, p. 462.

396 **al-Tabarī**, p. 41-42.

397 **al-Tabarī**, p. 15.

պակցված կարգավիճակները Որմիզդ-Արտաշիրին կամա թե ակամա դարձնում էին Շապուհի նվաճողական քաղաքականության կենտրոնական դեմքերից մեկը: Դա պայմանավորված էր նաև III դ. 40-ական թվականներին Հռոմի դեմ պարսիկների վարած պայքարի ռազմավարության մեջ կատարված փոփոխությամբ. նախկին միամյա արշավանքների փոխարեն պարսկական զորքերը սկսեցին տարբեր ուղղություններով ծավալել տևական ռազմական գործողություններ: Այս փոփոխությունը նկատելիորեն մեծացնում էր թագաժառանգ-զորահրամանատարի դերը` նրան ընձեռելով նկատելի ինքնուրույնություն և նախաձեռնություն: Ճիշտ է, ŠKZ-ում Որմիզդ-Արտաշրի առանձին գործունեության մասին վկայված չէ, սակայն դա բնավ էլ զարմանալի չէ, քանզի պարսկական բանակները գործում էին Շապուհի հրամանով ու, բնականաբար, նրանց ցանկացած հաջողություն վերագրվում էր բացառապես արքայից արքային: Հետագայում մոգպետ Կարտիրը, ելնելով այս հայեցակետից, Նախշ-ի Ռաջափի արձանագրության մեջ իր վաղ կրոնական գործունեության սահմանները բնութագրում է «....մինչև այնտեղ, ուր հասել է արքայից արքա Շապուհն իր մարդկանցով և ձիերով» արտահայտությամբ[398], թեև ակնհայտ է, որ պարսից արքան ի զորու չէր անձամբ ղեկավարելու Կարտիրի նշած Աներանի երկրների (Ասորիք, Կիլիկիա, Կապադովկիա, Պոնտոս, Հայաստան, Վրաստան, Աղվանք, Բաղասական` մինչև Ալանաց դարպասները) ասպատակությունները ու ŠKZ-ում հիշատակված 73 քաղաքների գրավումը:

Որմիզդ-Արտաշիր թագաժառանգ-զորավարի գործունեությունը որոշակիորեն արտացոլված է «Օգոստոսների պատմության» մեջ: Կյուրիդասի կենսագրության մեջ հաղորդվում է, թե սա «Մերժենալով արքա Շապուհի հետ և դառնալով նրա դաշնակիցը`... հռոմեական երկիր բերեց նախ Օդոմաստեսին, ապա Շապուհին»[399]:

Դեռևս Թ. Նյոլդեքն իրավացիորեն *Odomastes*-ը համարել է *Ōr(o)mazdēs* – Որմիզդ անվան լատինականացված *Oromastes* ձևի աղավաղումը: Այս լուծումը թույլ է տալիս կարծելու, որ Հռոմի դեմ Շապուհ I-ի երկրորդ պատերազմի սկզբներին Որմիզդ-Արտաշիրը ինքնուրույն ռազմական գործողություններ է իրականացրել Կապադովկիայում, իսկ այստեղից ուղղվել է դեպի Ասորիք[400]` հոր հետ միացյալ ուժերով գրոհելու «ողջ Արևելքի քաղաքամայր» Անտիոքը[401]: Դրա անուղղակի

[398] **Kartir's Naqsh-e Rajab inscription**, 18-19, transletion by D.N. MacKenzie.
[399] **SHA**, Tyranni Triginta, II, 2.
[400] **Weber U.**, Hormezd I…, p. 418; **Shayegan M. R.**, Hormozd I, p. 463.
[401] **Zosimos**, I, 28, 32.



արտահայտությունը կարելի է համարել այն, որ ŠKZ-ում Հռոմի դեմ երկրորդ պատերազմի ընթացքում գրավված քաղաքների թվարկման մեջ կապադովկիական քաղաքները հիշատակված են առանձին բաժնով` իբրև ինքնատիպ հավելված[402]: Քաղաքների թվարկման այսպիսի անկանոնությունը բացատրվում է նրանով, որ պարսից արքան անձամբ գրաված սիրիական քաղաքների ցուցակին պարզապես կցել է Որմիզդ-Արտաշիրի հաշվետվությունը` առանց կարևորելու քաղաքների գրավման ժամանակագրական կարգը[403]:

Հռոմի դեմ Շապուհի երկրորդ պատերազմում Որմիզդ-Արտաշիրի ակտիվ մասնակցության յուրօրինակ վկայություն է Դուրա Եվրոպոսի «Պալմիրյան աստվածների տաճար»-ի պատին պահպանված որմնանկարը, որը ներկայացնում է պարսից արքայի և հռոմեական կայսեր մենամարտի տեսարան: Արքային կողքին պատկերված պարսիկ կատաֆրակտարներից մեկի գլխավերևում պահպանվել է Որմիզդ *(whrmzdy)* անունը[404]:

Ուշագրավ է նաև, որ ŠKZ-ն, հաղորդելով, որ Հռոմի դեմ երկրորդ պատերազմի ժամանակ պարսկական զորքերը հասել են մինչև Դոմանա և Սատաղ, գրավված 37 քաղաքների ցուցակում Մեծ Հայքի ոչ մի բնակավայր չի հիշատակում: Մեր համոզմամբ, դա լրացուցիչ անգամ խոսում է այն մասին, որ Հռոմի դեմ մեծ պատերազմից առաջ պարսիկներն արդեն նվաճել էին ողջ Մեծ Հայքը և այն համարում էին պարսկական տիրույթ: ŠKZ-ի և Զոնարասի հաղորդումների այսպիսի ներդաշնակության հիման վրա էլ Վ. Լուկոնինը, Հ. Պերպերյանը, Կ. Թումանովը և այլք հնարավոր են համարում, որ Որմիզդ-Արտաշիրը «Հայաստանի մեծ արքա» տիտղոսով Հայաստանը կառավարել է 252/253 թ. ի վեր[405]:

Վերոնշյալ կարծիքը աղբյուրագիտական և տրամաբանական կուռ հենք ունի և, որ կարևոր է, բնավ չի հակասում Որմիզդ-Արտաշիրի թագադրության մասին Սալմաստի բարձրաքանդակի հիման վրա արված մեր մեկնաբանությանը: Թե՛ հայկական աղբյուրները, թե՛ Զոնարասը Հայաստանի նվաճումը ներկայացնում են որպես մի գործողության

[402] **ŠKZ**, MP III, 2. «....Իսկ Կապադովկիայում` քաղաքներ Սատաղը, Դոմանան, Արտանգիլը, Սուիսան, Սուիդան, Փրեատան»:
[403] **Rostovtzeff M.L.**, Res Gestae Divi Saporis…, p. 26, 42.
[404] **Ibid.**, 57-58. **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 58. **An De Vaele**, Sasanian Wall Painting, *EIr*, July 20, 2009.
[405] **Луконин В. Г.**, Завоевания Сасанидов на Востоке ..., с. 33. **Պերպերյան Հ.**, Որմիզդ-Արտաշիր մեծ արքա Հայաստանի, էջ 171: **Toumanoff C.**, The Third Century Armenian Arshacids. A Cronlogical commentary. Revue des études Arméniennes. N VI, 1969, p. 254.

արդյունք, ինչը լիովին համապատասխանում է նրանց «ընդհանրական
պատում»-ի ոգուն: Մինչդեռ ավելի վաղ աղբյուրները (Փարկինի
հունարեն արձանագրութ-յուն, «Ադիաբենեի եկեղեցու պատմություն»),
Հայաստանի պատմական աշխարհագրության տվյալների համակող-
մանի քննությունը և հենց Սալմաստի ժայռաքանդակի շուրջ մեր
դիտարկումները (իշխանության օղակ ստացող Որմիզդ-Արտաշիրի
երիտասարդ տարիքը և թագադիր արքայի տիարայի ձևը) ցույց են տա-
լիս, որ պարսիկների կողմից Մեծ Հայքի ռազմակալումը կատարվել է եր-
կու փուլով: Առաջին փուլում պարսիկներին հաջողվել է նվաճել երկրի
հարավային երկրամասերը, որտեղ «մեծ թագավոր Հայոց»-ի պաշտոնում
Որմիզդ-Արտաշիրը փոխարինել է հորը: Իսկ երկրորդ փուլում, որը համա-
պատասխանել է Գալլուս կայսեր կառավարման շրջանին՝ 251/253 թ.թ.,
պարսիկներին հաջողվել է վերջնականապես կոտրել հայոց դիմադ-
րական կորովը, դուրս մղել Տրդատ II-ին և ռազմակալել երկրի մնացյալ
մեծագույն մասը: Սրանից հետո Որմիզդ-Արտաշիրի իշխանությունն ու
«մեծ արքա Հայոց» տիտղոսը պետք է տարածվեին ամբողջ Մեծ Հայքի
վրա:

Հայաստանի պարսկական մասում Որմիզդ-Արտաշիրի գահակա-
լության սկզբի մասին մեր եզրահանգման տեսանկյունից միանգամայն
այլ լույսի ներքո է պատկերացվում Արտաշիրի դեմ Հայոց Խոսրով (իմա՝
Տրդատ II) արքայի մղած տասնմեկամյա պատերազմի մասին Ագաթան-
գեղոսի վկայությունը[406]: XX դ. սկզբներին այն համարվում էր «**Օդոյ մեջ
կախուած խոսք մ'ը. Վասնզի չենք գիտեր թէ երբ կը սկսին անոնք և
երբ կը վերջանան**»[407]: Սակայն, այն պահից, երբ հասկացվել է հայկա-
կան պատմական ավանդության մեջ «Արտաշիր» և «հայոց Խոսրով
արքա» կերպարների կոնտամինացիոն բնույթը, Ագաթանգեղոսի հաղոր-
դումն էլ դադարել է «օդի մեջ կախված» լինել: Մեզ հայտնի առանցքային
փաստերի համադրությամբ այժմ մենք կարող ենք վստահ նշել Ագաթան-
գեղոսի հիշատակած 11-ամյա պայքարի ստորին և վերին ժամանակային
սահմանները: Քանի որ Մեծ Հայքից նվաճված մասերում Որմիզդ-Արտա-
շիրի գահակալությունը սկսվում է 242 թ. փետրվար/ապրիլ ամիսներին,
ուստի նրա առաջին տարին ներառում է 242 թ. փետրվար/ապրիլից մինչև
243 թ. փետրվար/ապրիլն ընկած ժամանակահատվածը: Եվ եթե 242/243
թ.-ից հաշվենք 11 տարի, ապա կստացվի 252/253 թ., որը համապա-

[406] Ագաթանգեղոս, 23 Բ:
[407] Աստուրեան Հ., Քաղաքական վերաբերութիւններ…, էջ 242, ծան. 1:



տասխանում է Տրեբոնիանուս Գալլուս[408] կայսեր կառավարման վերջին տարվան: Հետևաբար, կարծելի է, որ «Արտաշրի» դեմ հայոց արքայի մղած տասնմեկամյա պայքարի մասին վկայության մեջ արտացոլված է թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրի դեմ Խոսրով (Տրդատ II) արքայի 242/243-252/253 թ.թ. մղած պայքարի մասին հիշողությունը: Դատելով Ագաթանգեղոսի ու Զոնարասի վկայությունների ներդաշնակությունից՝ 252/253 թ. պետք է համարել և՛ պարսիկների կողմից Հայաստանի վերջնական նվաճման և՛ Հայոց արքա «Խոսրով II»-Տրդատ II-ի կառավարման վերջին տարին:

Անշուշտ, առանձին վերցրած, Արտաշիրի դեմ Խոսրովի 11-ամյա պայքարի մասին Ագաթանգեղոսի հաղորդումը սկզբունքորեն հակասում է նույն հեղինակի ավելի վաղ կատարած հաղորդմանը՝ ըստ որի, հայ-պարսկական պատերազմը սկսել է Արտավան Արշակունու սպանության հաջորդ տարվա (225 թ.) սկզբներին[409]: Սակայն, կարծում ենք, որ շփոթի պատճառն այստեղ հեղինակին հասած բանավոր ավանդությունն է, որտեղ գործող կերպարներն արդեն խորապես վիպականացվել էին, և Արտաշիրի կերպարը, ի թիվս այլոց, իրեն էր հարակցել Որմիզդ-Արտաշիրի կերպարը, ինչպես որ Տրդատ III-ի հոր՝ Խոսրովի կերպարին էր վերագրվել այն հերոսական և համառ պայքարը, որ իրականում մղել էր Տրդատ II-ը: Ամենայն հավանականությամբ Ագաթանգեղոսը, ճիշտ ազդարարելով հայ-պարսկական պայքարի սկիզբը, իր «Պատմութիւն Հայոց»-ի մեջ է ներառել նաև Արտաշիրի (Որմիզդ-Արտաշիրի) դեմ հայոց արքայի 11-ամյա պայքարի մասին ինչ-որ մի վավերական աղբյուրից քաղած փաստը՝ առանց նկատելու, որ Խոսրով II-ի (Տրդատ II) գահակալության վերջին տասնմեկ տարում նրա դեմ պայքարած «Արտաշիրը» չէր կարող նույնական լինել Արտավան V-ին տապալած Արտաշիր Պապականի հետ:

[408] Տրեբոնիանուս Գալլուսը կայսր է հռչակվել 251 թ. հունիսին և սպանվել է գահակալական պայքարում՝ 253 թ. օգոստոսին:
[409] Ագաթանգեղոս, 19:

11

# ՍԱԼՄԱՍՏԻ ԺԱՅՌԱՔԱՆԴԱԿԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍԱՍԱՆՅԱՆ ԻՐԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Տակավին 1943 թ. Կուրտ Էրդմանը նկատել է, որ Սասանյան ժայռաքանդակները, մասնավորապես ինվեստիտուրային հուշարձանները, ստեղծման ժամանակի առումով չեն համապատասխանում դրանց վրա ներկայացված իրադարձություններին[410]: Ընդհանուր առմամբ, Կ. Էրդմանի այս աքսիոմիկ դրույթը հաշվի է առնվել Սասանյան դարաշրջանի մյուս ժայռաքանդակների թվագրության պարագայում: Մինչդեռ բոլոր այն ուսումնասիրողները, ովքեր անդրադարձել են Սալմաստի ժայռաքանդակին, նույնացրել են այս հուշարձանի ստեղծման և նրա վրա ներկայացված իրադարձությունների ժամանակները: Թերևս հետազոտության մեթոդական այս սխալն է պատճառը, որ խնդրո առարկա հուշարձանի ստեղծման ժամանակի և նշանակության վերաբերյալ մինչ օրս առաջադրված մեկնաբանությունները չեն խուսափել ժամանակագրական և պատկերագրական բնույթի անհամաձայնություններից:

Սալմաստի ժայռաքանդակի ժանրային պատկանելության և պատկերների նույնականացման ուղղությամբ մեր դիտարկումները ցույց տվեցին, որ, ի դեմս հուշարձանի աջ և ձախ պատկերախմբերի հեծյալների, ներկայացված են արքայից արքաներ Արտաշիր I-ն ու Շապուհ I-ը, որոնք իշխանության օղակ են հանձնում իրենց թագաժառանգ որդիներին, համապատասխանաբար՝ Շապուհին և Որմիզդ-Արտաշիրին: Պարզվեց նաև, որ ձախ պատկերախմբում ներկայացված ինվեստիտուրան կատարվել է 235-238 թ.թ., իսկ երկրորդը՝ 242 թ. փետրվարից ապրիլն ընկած ժամանակամիջոցներում: Այդ իրողությունը, թվում է, առիթ է տալիս կարծելու, որ ժայռաքանդակի ձախակողմյան պատկերախումբը ստեղծվել է Արտաշիր I-ի կողմից՝ որդուն իբրև «մեծ արքա Հայոց» թագադրելու առթիվ, և հետագայում միայն Շապուհ I-ը իր ինվեստիտուրային քանդակի կողքին և նրա նմանությամբ կերտել է տվել որդու ինվեստիտուրայի տեսարանը: Այս հիպոթեզն առաջինը ներկայացրել է Էրիկ Շմիդտը: Հուշարձանի ընդհանուր մեկնաբանության հարցում հետևելով Ֆ. Յուստիին՝ անվանի հնագետը կարծում է, որ «... Սկզբնապես քանդակված են եղել միայն մի արքայի և մի հետիոտնի պատկերներ և հետագայում է ավելացվել համապատասխան զույգը: .... Կարելի է կռահել, որ տեսարանի երկ-

410 **Erdmann K.**, Die Kunst Irans zur Zeit der Sasaniden, S. 52 ff.



րորդ մասը ավելացվել է Շապուհի կողմից՝ հոր գահին իր բազմելուց հետո»[411]: Թեև ավելի ուշ է. Շմիդտի կարծիքը պաշտպանել է նաև Հ. Լուշին[412], այդուհանդերձ, մի շարք իրողությունների լույսի ներքո պետք է բացառել Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի վերաբերյալ նաև այս վարկածը:

Այսպես, երկու պատկերախմբերի տարաժամանակյա կերտման դեպքում քանդակային մակերեսի վրա նրանց տեղաբաշխման պատկերը միանգամայն այլ պետք է լիներ: Շապուհի ինվեստիտուրան ներկայացնող պատկերախմբի վաղ կերտման պարագայում այն և հատկապես նրա հետիոտն պատկերը ընդհանուր կոմպոզիցիայի մեջ պետք է տեղորոշվեին ոչ թե խիստ եզրային, եթե չասենք՝ ծայրահեղ անհարմար դիրքում, այլ ժայռաքանդակի ձախակողմյան եզրագծից նկատելիորեն ավելի աջ: Հետևաբար՝ առաջին պատկերախմբից դեպի աջ մնացած պիտանի քանդակային մակերեսի վրա երկրորդ պատկերախմբի պատկերները ցանկալի մեծությամբ ներկայացնելու անհարմարությունը պետք է զգացվեր հետո՝ Որմիզդ-Արտաշիրի ինվեստիտուրայի տեսարանի կերտման ժամանակ: Մինչդեռ, ժայռաքանդակի վրա տրամագծորեն հակառակ պատկերն է: Վերոնշյալից հետևությունը կարող է լինել մեկը. **Սալմաստի ժայռաքանդակը ստեղծվել է միասնական նախագծով, որի ստեղծման ժամանակ թույլ տրված չափագրական սխալի հետևանքով ձախակողմյան հետիոտնի պատկերը հայտնվել է խիստ եզրային դիրքում**:

Սալմաստի ժայռաքանդակի երկու պատկերախմբերի ոճական և կատարողական միօրինակությունը ևս պարզորոշ խոսում է այն մասին, որ այն ստեղծվել է քանդակագործների միևնույն խմբի կողմից: Ավելին, քանդակային մակերեսից երկու պատկերախմբերի պատկերների լրիվ կամ մասնակի տարանջատման սիմետրիան, մեր համոզմամբ, արդյունք է այն բանի, որ միասնական նախագծումից հետո երկու պատկերախմբերի ստեղծման աշխատանքները սկսել են միաժամանակ և, անհայտ պատճառներով, միաժամանակ էլ դադարեցվել են:

Բացի նշվածներից, հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել նաև Սալմաստի ժայռաքանդակի հեծյալ արքաների դիադեմաների և թիկնոցների ձևական առանձնահատկությանը: Արտաշիր I-ի Նախշ-ի Ռաջաբ III, Փիրուզաբադ II, Նախշ-ի Ռուստամ I ժայռաքանդակների վրա դիադեմաների ծալքազարդ ժապավենները, արքայի ստատիկ դիրքին ներդաշնակ, ծանրորեն կախված են նրա թիկունքին, իսկ թիկնոց, որպես

411 **Schmidt E.**, Persepolis III, p. 140.
412 **Luschey H.**, Ardašīr I, ii, Rock Reliefs, p. 380.

այդպիսին, արքան ընդհանրապես չի կրում[413]: Շապուհ I-ի գահակալությունից սկսած՝ Սասանյան ժայռաքանդակային արվեստում երևան են գալիս արևմտյան կերպարվեստին խիստ ընտանի պատկերագրական մի շարք տարրեր (քամուց փողփողացող դիադեմայի ժապավեններ, թիկնոցի փեշեր), որոնց նշանակությունը արևմտյան կերպարվեստում պատկերներին ռեալիզմ, իսկ կոմպոզիցիաներին էլ տարածականություն հաղորդելն էր: Անշուշտ, դա պայմանավորված էր կերտողական աշխատանքների մեջ հռոմեացի ռազմագերի վարպետների լայն ներգրավմամբ: Սակայն մյուս կողմից ակնհայտ է, որ խնդրո առարկա պատկերագրական տարրերը սասանյան կերպարվեստում վերաիմաստավորվել են արքայական իշխանության մասին իրանական ընկալումներին համապատասխան: Մասնավորապես դիադեմայի փողփողուն ժապավենները Շապուհ I-ի օրոք Իրանական տերության կյանքում կատարված նշանակալից քաղաքական և գաղափարական տեղաշարժերին համահունչ ստացել են խիստ խորհրդանշական իմաստ: Ավեստայի 18-րդ «Աշտատ յաշտ»-ում ոչ իրանական (Աներանի) ժողովուրդների նկատմամբ հաղթանակը պայմանավորվում է Իրանի փառքով (*Airiianəm* $x^{v}$*arənah*), որի ուղեկիցն էր Ուժեղ Քամին: Այդ պատճառով էլ Շապուհը, դառնալով Իրանի և Աներանի տիրակալ, գաղափարական պլանում պետք է տիրեր ոչ թե ինչ-որ $x^{v}$*arənah*-ի, այլ Իրանի $x^{v}$*arənah*-ին: Այստեղից էլ Ուժեղ Քամուց ծածանվող ժապավենները դառնում են Իրանի $x^{v}$*arənah*-ի պատկերագրական արտահայտությունը[414]: Վերոնշյալ դիտակետից ակնհայտ են դառնում Սալմաստի ժայռաքանդակի վրա առկա պատկերագրական անհամապատասխանությունները: Նախ՝ Արտաշիրը պատկերված է թիկնոցով, պատկերագրական մի տարր, որը, ինչպես նշվեց, բացակայում է անգամ նրա կերտած վերջին՝ Նախշ-ի Ռուստամ I ժայռաքանդակի վրա: Բացի դրանից՝ Արտաշիրի թե՛ դիադեմայի ժապավենները, թե՛ թիկնոցի փեշերը, որոնք դարձյալ կերպավորված են ժապավենների տեսքով, հորիզոնական դիրքով ծածանվում են նրա ծոծրակից ու թիկունքից: Այլ խոսքով՝ Արտաշիրի պատկերի վրա առկա են պատկերագրական տարրեր, որոնք սասանյան արվեստում պետք է երևան գային միայն հաջորդ գահակալի օրոք: Սրանից կարելի է գալ միանշանակ եզրահանգման. **Սալմաստի ժայռաքանդակը ստեղծվել է Արտաշիրի գահակալությունից նկատելիորեն ուշ՝ երբ արևմտյան կերպարվեստից կատարված ներմուծումները արդեն ընտանիացված էին իրանական ժայռաքանդակային արվեստում:** Հուշարձանը նախագծող նկարիչը, ով Արտաշիրի թագի, մազերի հարդարանքի, մանյակի, տաբատի ու ձիու սանձասարքի կերտման ժամանակ հավատարիմ էր մնացել պատմականության սկզբունքին, նրա դիադեմայի և թիկնոցի պատկերման գործում մեղանչել է այդ սկզբունքի դեմ՝ Շապուհի օրոք ձևավորված արքայական փառքի խորհրդանշանները հետադարձորեն վերագրելով նաև Արտաշիր I-ին:

Վերջապես, հուշարձանի՝ Սալմաստի մոտակայքում ստեղծվելու փաստն ինքնին վկայում է, որ այն կերտվել է 252/253 թ. հետո, երբ պարսից իշխանությունը տարածվում էր բովանդակ Մեծ Հայքի՝ ներառյալ և Պարսկահայք նահանգի Զարեհավան գավառի վրա:

Այսպիսով՝ Սալմաստի ժայռաքանդակի պատկերագրական իրողությունները բացառում են այս հուշարձանի նկատմամբ Արտաշիր I-ի ամբողջական կամ մասնակի հեղինակային իրավունքը: Հետևաբար, իբրև այս հուշարձանի հավանական հեղինակներ, ասպարեզում մնում են նրա վրա ներկայացված մյուս երկու անձիք՝ արքայից արքա Շապուհ I-ը և նրա գահաժառանգ որդին՝ «մեծ արքա Հայոց» Որմիզդ-Արտաշիրը:

Սալմաստի ժայռաքանդակի վրա առկա պատկերագրական տարրերը կատարելապես համապատասխանում են Շապուհ I-ի օրոք ստեղծված Սասանյան պատկերագրության նոր կանոնին, ինչը, թվում է, լուրջ փաստարկ է՝ hօգուտ նրա հեղինակային իրավունքի: Առաջին հայացքից դրա օգտին է խոսում նաև այն օրինաչափությունը, որ սովորական ինվեստիտուրայի ժանրով հուշարձանների կերտողներ են հանդիսանում հենց վեհապետները: Այս տեսանկյունից իսկապես տրամաբանական կլիներ խնդրո առարկա ժայռաքանդակի հեղինակությունը Շապուհ I-ին վերագրելը՝ համարելով, որ դրա ստեղծումը հանդիսացել է գահաժառանգ Որմիզդ-Արտաշիրի քաղաքական գովազդի հերթական դրսևորումը, կամ, ինչպես Ս. Երեմյանն է կարծում, «Հայաստանում Որմիզդ-Արտաշիրի գահակալությունը նշանավորելու», նրա նկատմամբ հայ հպատակների օրինապահությունը երաշխավորելու միջոցը[415]:

---

[413] Արտաշիր I-ի ժայռաքանդակներից միայն Փիրուզաբադ I-ի վրա է, որ արքայի և նրա գահաժառանգի դիադեմաների ժապավենները փողփողուն տեսք ունեն: Սակայն դա, ինչպես և նրանց թիկնոցների ծածանքը, ոչ թե վաղ սասանյան ժայռաքանդակային արվեստում կատարված ոճական նորամուծության, այլ նրբազգաց նկարչի կողմից ձիերի սլացքի պարագայում քամու ազդեցությունը կերպավորելու գեղարվեստական հնարքի արդյունք է՝ առանց գաղափարական ենթատեքստի:

[414] **Soudavar A.**, The Significance of Av. Čithra, OPers. čiça, Mpers. čihr, and NPers. Čehr…, pp. 174-175; **Idem**, Farr(ah) ii. Iconography of Farr(ah) $X^{v}$arənah, *EIr* (Originally published August 24, 2010); **Idem**. The Vocabulary and Syntax…, p. 424.

[415] **Երեմյան Ս.**, Հայաստանի քաղաքական կացությունը 253-273 թթ. էջ 51, տե՛ս

Սակայն որոշ իրողություններ բացառում են այս շարժառիթների հնարավորությունը:

Նախ, ինչպես արդեն նշել ենք, Սասանյան գահաժառանգի «մեծ արքա Հայոց»-ի կարգավիճակը ստորադասված էր նրա համապետական դերակատարությանը: Հետևաբար, հոր կողմից որդու թագադրության տեսարանի ստեղծումը հազիվ թե ինչ-որ չափով հավելեր պարսից գահաժառանգ-զորապետի քաղաքական վարկանիշը, մանավանդ որ հուշարձանն իր տեղադրության պատճառով անհասանելի էր իրանական հանրությանը: Այս դեպքում մոնումենտալ հուշարձանը դատապարտվում էր ինքնանպատակ գեղարվեստական ակտ դառնալուն՝ առանց որևէ օգտակարության, ինչը խորթ էր Սասանյան պաշտոնական կերպարվեստին:

Նմանապես առարկելի է Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման նպատակի վերաբերյալ Ս. Երեմյանի վարկածը: III դ. հայոց գաղափարական-քաղաքական արժեհամակարգում տակավին կենսունակ էր արքայական իշխանության աստվածատուր բնույթի մասին պատկերացումը: Հետևաբար, իր կողմից Որմիզդ-Արտաշիրի թագադրության ծեսի պատկերմամբ պարսից արքան հայոց աչքին ոչ թե կբարձրացներ, այլ, ընդհակառակը, կնսեմացներ նրա հեղինակությունը: Բացի այդ՝ աներևակայելի է, որ սովորական ինվեստիտուրայի թեմայով մոնումենտալ հուշարձանների միջոցով չհաստատագրելով Իրանական տերության մյուս երկրամասերի կառավարիչ արքաների նկատմամբ իր վեհապետական իրավունքը՝ Շապուհը դա կատարեր Հայաստանում, որի արքան անվերապահ հավատարիմ էր իրեն[416]:

Վերջապես, եթե անգամ համարենք, որ Սալմաստի ժայռաքանդակը ստեղծվել է Շապուհի կողմից՝ Հայաստանի նկատմամբ իր գերիշխանությունը ցուցադրելու նպատակով, ապա այս դեպքում էլ հնարավոր չէ քիչ թե շատ փաստարկված պատասխան գտնել բնականից հարուցվող այն հարցին, թե ինչու ժայռաքանդակը չի ստեղծվել Բագավանում, որը, ըստ Մ. Խորենացու, եղել է Հայաստանի պարսիկ կառավարիչների կրոնաքաղաքական գործունեության կենտրոնը, կամ էլ, օրինակ, երկրի մայրաքաղաք Վաղարշապատում, ինչի դեպքում հուշարձանի արտահայտած գաղափարի տարածման շառավիղը կներառեր ողջ երկիրը:

**Այսպիսով՝ վերոնշյալ դիտարկումները, բացառելով Սալմաստի ժայռաքանդակի նկատմամբ Շապուհ I-ի հեղինակային իրավունքը՝**

Հայ ժողորդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. II:

[416] Դա մասնավորապես հաստատում է Տաբարին՝ մեջբերելով Շապուհի նկատմամբ Որմիզդ-Արտաշիրի անմնացորդ հավատարմության մասին ուշագրավ և ակնհայտորեն փիպական երանգ ունեցող մի պատմություն (**al-Tabarī**, p. 43):



**որպես այս հուշարձանը կերտող միակ հնարավոր թեկնածուի, թողնում է նրա վրա ներկայացված երրորդ անձնավորությանը՝ «Հայոց մեծ արքա» և Իրանի ու Աներանի գահաժառանգ Որմիզդ-Արտաշիրին:**

Վերը կատարած մեր քննությունից օրինաչափորեն առաջանում են մի քանի հարցեր. օրինակ՝ ի՞նչն է դրդել պարսից թագաժառանգին ստեղծելու Սասանյան մոնումենտալ արվեստի համար այդքան բացառիկ ժանրով (սովորական կամ արքայական ինվեստիտուրա) հուշարձան: Կամ էլ՝ թե, ի՞նչ քաղաքական կամ գաղափարական նպատակներ են դրդել հեղինակին՝ միևնույն ժայռակերտ մակերեսին առանց ձևական տարանջատման, բայց և պատկերագրորեն հստակ հաջորդականությամբ ներկայացնելու նախկինում Արտաշիր I-ի կողմից իր հորը՝ Շապուհին, ապա և արքայից արքա Շապուհի կողմից իրեն արքայական իշխանությամբ օժտելու ծեսերը: Այս հարցերի պատասխանները կարելի է գտնել Շապուհ I-ի գահակալության երկրորդ շրջանում՝ 260-273 թ.թ., պարսից տերության ներքաղաքական կյանքում կատարված տեղաշարժերի համատեքստում:

Պալմիրյան զորքերին հետ մղելուց հետո Սասանյան տերության արևմտյան սահմաններում հաստատվեց տևական անդորր, որը, սակայն, պարսկա-հռոմեական կայուն հաշտության չվերածեց (պայմանագիրը կնքվեց միայն 276 թ. Վարահրան I-ի և Պրոբուս կայսեր միջև[417]): Այդ պատճառով էլ պարսիկները ստիպված էին արևմտյան սահմաններում, մասնավորապես Հայաստանում, նշանակալից ուժեր պահել, մի հանգամանք, որը, թեև ավելի նվազ չափով, քան նախկինում, կարևորում էր Որմիզդ-Արտաշիրի քաղաքական կշիռը տերության կյանքում: Այնուամենայնիվ, տևական խաղաղությունը նախադրյալներ ստեղծեց քաղաքական կյանքի իմպուլսի՝ արքունիք տեղափոխվելու և նրա վրա իրանական ավագանու առանձին խավերի ներգործության համար: Իսկ սրանց վերաբերմունքը տերության հիմնախնդիրների նկատմամբ բնավ էլ միանշանակ չէր: Կարծիքները կիսվում էին հատկապես տերության կրոնական քաղաքականության հարցի շուրջ:

Արաբ մատենագիր Մասուդիի վկայությամբ Արտաշիրն իր որդուն սովորեցրել է. «Ով որդիս, հավատքն ու պետությունը երկու եղբայրներ են, որոնցից մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ: Հավատքը թագավորական իշխանության հիմքն է, իսկ թագավորական իշխանությունը՝ հավատքի պաշտպանը. վերանում է այն, ինչը հիմք չունի, նմա-

[417] **Մելիքյան Ա.**, Մեծ Հայքի 276 թ. պարսկա-հռոմեական բաժանումը, էջ 33-35:

նապես կործանվում է և այն, ինչը չունի պաշտպանություն»[418]: Արտաշիրի օրոք, երբ Սասանյան պետությունը Իրանի էթնոաշխարհագրական սահմաններից դեռևս դուրս չէր եկել, կրոնի հարցը, որպես այդպիսին, առանձնակի մեծ սրություն չուներ: Ինչպես հայտնի է, Անահիդի տաճարը Ստահրում Սասանյանների տոհմական տաճարն էր, և այս տոհմի հիմնադիր Սասանը, նրա որդի Պապակը և, հնարավոր է, առաջին Սասանյան արքաները հանդիսանում էին այդ տաճարի քրմեր[419]: Թագադրության առթիվ Արտաշիրի կողմից հատված դրամների վրա «bgy ... MNWčtry MNyzd'n» – «[Ահուրա]Մազդային երկրպագող տիրակալ, ... աստվածներից սերող» տիտղոսի առկայությունը, Անահիդի այսպես կոչված Քաաբա-ի Զարդուշտի տաճարի կողքին արքայական թագադրության տաճարի հիմնումը, և, վերջապես, ինվեստիտուրայի թեմայով քանդակների վրա Ահուրամազդայի կողմից իշխանության օղակի հանձնելու տեսարանների պատկերումը անվիճելի են դարձնում զրադաշտական ավանդություններին Սասանյան տերության հիմնադրի հավատարմությունն ու նվիրվածությունը: Արքան այդ մասին հավաստում է նաև Նախշ-ի Ռաջափի ժայռաքանդակի արձանագրության միջոցով. «....Զրադաշտական ծեսերը ոչնչացվել էին, իսկ ես, արքայից արքաս, պահպանեցի դրանք...»[420]: «Դենկարդ»-ն ու «Թանսարի նամակ»-ը, պատմելով Արտաշիրի ժամանակակից մոգպետ Թանսարի իրականացրած կրոնական վերափոխումների մասին, Արտաշիրին ներկայացնում են որպես ուղղափառ զրադաշտականության հետևորդ[421]:

Հավանական է, որ III դ. առաջին կեսին, երբ ճգնաժամը պարուրել էր ողջ միջերկրածովյան ավազանը, Սասանյանների կողմից հին հավատքի վերականգնման կարգախոսի հանրածայնումը նշանակալի դեր է կատարել Ապարշահրի, Մերվի, Կրմանի, Սակաստանի արքաների ու հին իրանական ազնվականության՝ Սուրենյան, Կարենյան, Վարազյան և Անդեկանյան տոհմերի համադաշնության ստեղծման գործում: Սակայն, ինչպես իրավացիորեն նկատում է Վ. Գ. Լուկոնինը, հենց այն պատճառով, որ սկզբնապես Սասանյան Իրանն իրենից ներկայացնում էր այդ թագավորությունների ու տիրույթների համադաշնություն, այն փաստի զորությամբ, որ վերջին Արշակունիների պես Արտաշիր I-ը ևս, ըստ էության, լիի-

418 **Ал Масуди**, Золотые россыпи, V. См. Шмидт А.., Материалы по истории Средней Азии и Ирана, с. 474.
419 **Луконин В. Г.**, Картир и Мани, *ВДИ,* 1966, но. 3, с. 68.
420 **Шавареби Э.**, К датировке рельефных изображений Ардашира I, с. 59.
421 **The Letter of Tansar**, p. 6-7, 37ff.; **Ahmadi S.**, A Question of Legitimacy: The Case of Ardašir I (Denkard IV), *IIJ* 46, 2003, pp. 223-230.



րավ տիրակալ էր միայն իր ոստանում «*dstkrty*», տիրող հարստության պաշտամունքը դեռևս չէր կարող պարտադրվել բոլորին ու ամենքին, չէր կարող վերածվել տերության միասնական կրոնի[422]:

Շապուհ I-ի օրոք Սասանյան տերությունը դուրս եկավ Իրանի սահմաններից, ինչը օրինաչափորեն առաջադրեց նրա երկու մասերի՝ «Երանի» ու «Աներանի» կապերն ամրապնդելու խնդիր: Ուստի, արդեն Շապուհ I-ի առջև խնդիր ծառացավ «գտնել» այնպիսի հավատք, որը ժողովրդական լիներ նորանված երկրներում, օժանդակեր արքայից արքայի իշխանությանն ու գաղափարաբանորեն հիմնավորեր այն:

Իրանում և հարակից երկրներում տարածված կրոնական ուսմունքներից Սասանյանների համար հեռանկարային կարող էին համարվել երկուսը՝ ազգային կրոն զրադաշտականությունը, որը, սակայն, Իրանից դուրս՝ հատկապես պարսիկների համար բացառիկ կարևորություն ներկայացնող Միջագետքում տարածում և ժողովրդականություն չուներ, և մանիքեականությունը, որը հավակնում էր միավորել գոյություն ունեցող բոլոր ուսմունքները և դառնալ միասնական «համաշխարհային կրոն»: Տերության պաշտոնական կրոն դառնալու համար այս երկուսի պայքարը III դ. կեսերին անձնավորվում էր կրոնական երկու խոշոր գործիչների՝ Կարտիրի ու Մանիի անձնական մրցակցությամբ: Արտաքուստ այն սոսկ երկու կրոնների պայքար էր: Սակայն **ինչպես ռեֆորմացիայի համար պայքարը ուշ միջնադարյան Եվրոպայում, այն ևս իր քաղաքական ենթատեքստում շոշափում էր Իրանական տերության հասարակական-քաղաքական կյանքի հարցերը:** Այդ պատճառով էլ Մանիի և Կարտիրի, մանիքեականության և զրադաշտականության պայքարի պարզաբանումը դառնում է կարևոր նախապայման III դ. Սասանյան տերության ոչ միայն կրոնական, այլև գաղափարական ու քաղաքական կյանքի բազմաթիվ իրադարձությունների իմաստը բացահայտելու համար[423]:

III դ. Իրանի կրոնաքաղաքական կյանքում Մանիի և Կարտիրի խաղացած դերին, նրանց դավանած կրոնական ուսմունքների բովանդակությանն ու ճակատագրին անդրադարձել են պատկառելի թվով ուսումնասիրողներ: Առանձին հոդվածում առաջինը Վ. Գ. Լուկոնինն է վերոնշյալ երկու անձանց գործունեությունը ենթարկել համեմատական քննության: Նույն մեթեդաբանությամբ նա հիմնախնդրին անդրադարձել է նաև երեք տարի անց լույս ընծայած իր «Սասանյան Իրանի մշակույթը» խորագրով

422 **Луконин В. Г.**, Картир и Мани, с. 69.
423 Там же, с. 65.

մենագրության մեջ՝ դրան նվիրելով աշխատության ողջ IV գլուխը: Մեկ տարի անց Կարտիրի և Մանիի գործունեության զուգադիր քննության ու նրանց հակամարտության մանրամասներին առանձին հոդվածով անդրադարձել է նաև Վ. Հինցը: Այստեղ նա հանգամանորեն ներկայացրել է Մանիի ողջ գործունեությունը՝ սկսած Շապուհ I-ի արքունիքում նրա հայտնվելուց մինչև նրա վախճանը, ինչպես նաև Կարտիրի գաղափարները ու եռանդուն գործունեությունը, որը նա որակում է իբրև «առաքելական»[424]: Համարելով, որ հանուն կրոնի նրա գործունեությունը արագացրել է մանիքեականության տարածումը՝ Վ. Հինցը Մանիի և Կարտիրի պայքարը կոչում է «երկու մարգարեների պայքար»[425]: Այս գնահատականին հազիվ թե կարելի է համաձայնել, քանի որ, ինչպես Պ. Օ. Սկյարվոն է իրավացիորեն նկատում, Կարտիրը, ի տարբերություն Մանիի, իրեն մարգարե չէր համարում բառի իսկական իմաստով, այլորեն՝ նա գոյություն ունեցող զրադաշտական դավանանքի մեջ աստծո որևէ «նոր խոսք» չէր բերում: Կարտիրի նպատակն ընդամենը մեկն էր. ամրապնդել գոյություն ունեցող զրադաշտական ավանդությունը[426]:

Մանիի դավանանքն իրենից ներկայացնում էր քրիստոնեության, զրադաշտականության, միջագետքյան կրոնական պատկերացումների և բուդդայականության մի յուրօրինակ խառնուրդ: Այն, առավել քան մի որևէ այլ կրոն, ի զորու էր միմյանց հետ մրցակցող քրիստոնեությունն ու զրադաշտականությունը բերել կատարյալ սինթեզի, որը ոչ միայն կբավարարեր Սասանյան տերության տարաէթնիկ բնակչության հոգևոր պահանջները, այլև կհամապատասխաներ Իրանի նոր հարստության կրոնաքաղաքական նկրտումներին[427]: Մ. Հաթերի կարծիքով՝ հենց այդ նկատառումով է, որ իրանական առասպելաբանության վրա հենվելիս Մանին օգտվել էր ոչ թե ուղղափառ զրադաշտական, այլ վերջինիս տեսանկյունից «հերձված» համարվող զրվանյան ավանդությունից, քանի որ զրվանիզմը առավել էր համապատասխանում նրա գնոստիկյան ուսմունքին[428]:

Մանիի քարոզչական գործունեությունն Իրանում սկսում է 242 թ..

[424] **Hinz W.**, Mani and Kardēr, in *Atti del convegno internazionale sul tema la Persia nel medioevo (Roma, 31 marzo – 5 aprile 1970)*, Accademia Nazionale dei Lincei, quaderno 160, Rome, 1971, p. 495.
[425] **Ibid.**, p. 499.
[426] **Skjærvø P. O.**, Kartir, in *EIr*, Vol. XV, Fasc. 6, pp. 608-628
[427] Մանիքեականության մասին մանրամասն տե՛ս **Смагина Е. Б.**, Манихейство по ранним источникам, М., 2011, с. 134-397. **Хосроев А. Л.**, История манихейство (Prolegomena), СПб, 2007. Մանիքեականության և մյուս կրոնների գաղափարական աղերսների մասին տե՛ս նաև **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 73-81.
[428] **Hutter M.**, Manichaeism in the Early Sasanian Empire, p. 4.



«....Այն տարին, երբ մահացավ Արտաշիր արքան և արքա դարձավ նրա որդի Շապուհը [և ժառանգեց նրան(?)], հնդիկների երկրից ես նավարկեցի դեպի պարսից երկիրը, իսկ Պարսք երկրից ես անցա Բաբելոնիա երկիրը, Մեշան և Խուժիստան երկիր»[429]: Հնարավոր է, որ Մանիի վերադարձը Իրան պայմանավորվել է նրա նոր և ազատամիտ տիրակալի հետ համաձայնության եզրեր գտնելու ակնկալությամբ: Մինչդեռ քիչ հավանական է Մ. Բոյսի և Մ. Հաթերի կարծիքը, ըստ որի՝ «Շապուհ I-ը թեև իր արձանագրության մեջ հանրածայնում է, թե առաջ է մղել մազդեզական կրոնը, գործնականում պաշտպանել է ոչ թե ուղղափառ զրադաշտականությունը, այլ «հերետիկոսական» զրվանիզմը»[430], և, հետևաբար, Մանին հավակնել է դաշնակցել Սասանյան տիրակալի հետ՝ ընդդեմ երկուսին ատելի «ուղղափառ զրադաշտականության»:

Դեռևս Հնդկաստանում իր շրջագայության ժամանակ Մանիին հաջողվել էր դեպի իր քարոզած հավատքը թեքել Արևելյան Իրանի Սասանյան կառավարիչ Պերոզին, որը, ըստ Գ. Վիդենգրենի, կարող էր լինել Իրանի գահաժառանգի եղբայրը[431]: Մեսենում Մանիի հետևորդը դարձավ արքայից արքա Շապուհի մյուս եղբայրը՝ Մեսենի կառավարիչ Միհրշահը[432]: Վերջինիս աջակցությամբ Մանիին հաջողվեց Տիզբոնում շփման մեջ մտնել Շապուհի հետ և երիցս արժանանալ ընդունելության: Համաձայն մանիքեական մի աղբյուրի՝ դրանցից առաջինը տեղի է ունեցել Շապուհի պաշտոնական թագադրության օրը, «Նիսան ամսվա առաջին օրը, երբ արևը գտնվում էր Խոյի համաստեղությունում»: Առիթից օգտվելով՝ Մանին Իրանի նոր արքային մատուցեց միջին պարսկերենով գրված ***Šābuhragān*** «Շապուհական», այսինքն՝ «Գիրք նվիրված Շապուհին» աշխատությունը, որտեղ ներկայացված էին նրա կոսմոգոնիան, էսխատոլոգիան ու մարգարեությունները[433]:

[429] **Gardner I.**, The Kephalaia of the Theacher: The Edited Coptic Manicheaean Texts In Translation With Commentary, Leiden, 1995, I. 15, 27-31.
[430] **Boyce M.**, Some Further Reflections on Zurvanism", Iranica Varia: papers in honor of Professor Ehsan Yarashter, *AI* 30, Leiden, 1990, p, 20-25; **Hutter M.**, Manichaeism in the Early Sasanian Empire, pp. 2-12.
[431] **Видегрен Г.**, Мани и манихейство, с. 51.
[432] **Ibid.**, 52.
[433] «Շապուհական»-ի՝ Տուրֆանի օազիսում (Հյուսիսարևմտյան Չինաստան) հայտնաբերված ձեռագրերը այժմ պահվում են Բեռլինում և Գյոթինգենում: Դեռևս 1904 թ. Ն. Մյուլլերին հաջողվել է հրատարակել նրա առանձին պատառիկներ: Սակայն միայն Դ. Ն. Մակկենզին է, որ 1979/1980 թ. իրականացրեց նրա ամբողջական տեքստի թարգմանությունը (**MacKenzie D.N.**, Mani's Šābuhragan, I (Text and Translation), *BSOAS* 42/3, 1979, pp. 500-534; Idem. Mani's Šābuhragan, II (Glossary and Plates), *BSOAS* 43/2, 1980, pp. 288-310): Դրանում Մանին ներկայացրել է իր վախճա-

«Շապուհական»-ում նրա ուսմունքը ներկայացված է այնպես, որ Շապուհը, ի դեմս մանիքեականության, տեսներ «Մեծ Իրանին» անհրաժեշտ սինքրետիկ, բայց իրանական կրոն[434]: Թեև ինքը՝ արքան, քաղաքական նկատառումներով բացեիբաց չպաշտպանեց մանիքեականությանը, այնուամենայնիվ, Մանիի ուսմունքը օգտակար գործիք համարեց սեփական կայսերապետական քաղաքականության համար: Այդ պատճառով, կամ էլ, պարզապես, Մանիի գաղափարների թողած տպավորության ազդեցությամբ Շապուհ I-ը բավարարեց իր ուսմունքը ողջ տերության մեջ ազատորեն քարոզելու Մանիի խնդրանքը: Ղպտերեն թարգմանությամբ հայտնաբերված նրա «Կեփալայա»-ում (*Κεφαλαια* – քննախոսություններ) հաղորդվում է. «Ես կանգնեցի արքա Շապուհի առջև: Նա ընդունեց ինձ մեծ պատվով և թույլատրեց ինձ շրջել իր երկրներով և քարոզել կյանքի խոսքը: Ես նրա շքախմբում անցկացրի ևս [...?...] տարի»[435]: Ալեքսանդր Լիկոպոլցին նույնիսկ վկայում է, որ Մանին ուղեկցել է Շապուհին հռոմեացիների դեմ նրա արշավանքների ժամանակ[436]: Արքունի շքախմբում Մանիի գտնվելը *(komitaton)*, նշանակում էր, որ նա պարտավորվել է արքունական ծառայություն իրականացնել: Բայց ի՞նչ բնույթի: Իհարկե, ոչ իբրև արքայի խոստովանահայր: Վ. Սանդերմանը հավանական է համարում, որ Մանին իր բացառիկ գիտելիքների համար նշանակվել է պալատական բժիշկ և աստղաբաշխ:

Հետագայում՝ Վարահրան I-ի մոտ իր վերջին և ճակատագրական ընդունելության ժամանակ, Մանին հաստատում է. «Շապուհ արքան հոգ

նաբանական (էսխատոլոգիական) ուսմունքը: Սակայն դա Մանիի երկի միայն կեսն էր, որովհետև մանիքեական էսխատալոգիան չէր կարող գոյություն ունենալ առանց կոսմոգոնիայի և անթրոպոգոնիայի: «Շապուհական»-ի այդ պակասող մասերը հայտնի էին վաղուց: Մանֆրեդ Հաթերը լեզվաբանական և ոճաբանական քննության հիման վրա կարծում է, որ Տուրֆանի ժողովածուի միջին պարսկերեն M 98/99 I և M 7980-7984 պատառիկները, որոնք ունեն կոսմոգոնիական և անթրոպոգոնիական բովանդակություն, նույնպես կազմում են Մանիի վերոնշյալ աշխատության մասերը (**Hutter M.**, Manichaeism in the Early Sasanian Empire, p. 4):

434 Ուշագրավ է, որ ամբողջության մեջ վերցրած, «Շապուհական»-ում աստրական կամ հրեական անուններ չկան: Մանիքեական բոլոր աստվածությունները կրում են անուններ, որոնք վկայում են զրադաշտական պանթեոնի հետ նրանց նույնականությունը նույնիսկ այն դեպքում, երբ Մանին ներառում էր դրա մեջ ոչ իրանական առասպելական կերպարների՝ Հիսուսին, Ադամին կամ Եվային, նրանք կոչված են Xradešahr, Gēhmurd կամ էլ Murdiyāna: Այս անունների շնորհիվ Մանիի ուսմունքը ի զորու էր խուսափել Սասանյան տերության մեջ օտարածին համարվելու վտանգից:

435 **Kephalaia**, I.15, 33-34.

436 **Alexandre de Lycopolis**, Contra la doctrine de Mani, tr. A Villey, Paris, 1985, sec. 3= 4, 20-22.



էր տանում իմ մասին, նա ինձ համար գրեց նամակներ բոլոր պաշտոնյաներին՝ հետևյալ բովանդակությամբ. «Պաշտպանեցեք և օժանդակեք նրան, որպեսզի ոչ ոք նրա նկատմամբ անարդարություն կամ չարիք չգործի»»[437]:

Շապուհ I-ի բարյացակամությունը հնարավորություն ընձեռեց Մանիին՝ իրականացնելու լավ մտածված և կազմակերպված քարոզչական գործունեություն ինչպես Արևելքում, նույնպես և Արևմուտքում: Այդ առթիվ Մանին գրում է. «Ես անցկացրի ... շատ տարիներ Պարսքում, պարթևների երկրում, հյուսիսում՝ մինչև Ադիաբենե և Հռոմեական պետության սահմանային երկրամասերում»[438]:

Անձամբ կամ իր աշակերտների միջոցով Մանիի քարոզչությունը հասնում է մինչև Եգիպտոս, Կարքա դե բեթ Սելոխ, Սուզիանե, Խորասան, Հայաստան, Ապարշահր[439]: «Նա այնտեղ կազմակերպեց «սուրբ եկեղեցի» և ցանեց «կյանքի սերմը», որի արդյունքում նրա ուսմունքը տարածվեց դեպի երկրի արևելակողմերը ու աշխարհի (***οικουμένη***) բոլոր չորս կողմերում...»[440]:

Անհամեմատ քիչ բան է հայտնի Մանիի կրոնաքաղաքական հակառակորդ Կարտիրի վերաբերյալ: Վերջինիս կրոնական գործունեության մասին տեղեկանում ենք նրա թողած Սար-ի Մաշհադի (KSM) և Նախշ-ի Ռուստամի (KNRm), ինչպես և սրանց համառոտված տարբերակները պարունակող Նախշ-ի Ռաջափի (KNRj) և Քաաբա-ի Զարդուշտի (KKZ) արձանագրություններից[441]: Կարտիրի մասին սակավաթիվ տեղեկություններ են հայտնում նաև միջին պարսկերեն մանիքեական տեքստերը:

Մ. Հաթերի կարծիքով՝ Կարտիրը եղել է նույն տարիքին, ինչ որ Մանին: Սակայն, ըստ երևույթին, նրա կարիերան ավելի դանդաղ է ընթացել: Առաջին անգամ Կարտիրի անունը երևան է գալիս 260-ական թ.թ.

437 **Kephalaia**, I. 16f.

438 **Ibid.**, I,16. Գ. Վիդեգրենի կարծիքով այստեղ հիշատակված սահմանային երկրամասը Բեյթ-Արամեան է՝ Մծբին կենտրոնով (**Видегрен Г.**, Мани и манихейство, с.58):

439 **Видегрен Г.**, Мани и манихейство, с. 59-62.

440 **Kephalaia**, I,. 16. 3-9.

441 Կարտիրի արձանագրությունների ամբողջական բնագրերը՝ թարգմանություններով հանդերձ, տե՛ս **Sprengling M.**, Third Century Iran…, pp. 37-69; **MacKenzie D. N.**, Kerdir’s Inscription (synoptic text in transliteration, transcription, translation and commentary), *in* G. Herrmann, D. N. Mackenzie and R. Howell, The Sasanian Reliefs at Naqsh-i Rustam, Naqsh-i Rustam 6, The Triumph of Shapur I (together with an account of the representations of Kerdir), Description and Commentary, Kerdir’s Inscription (synoptic text in transliteration, transcription, translation and commentary), *Iranische Denkmaler13,* enthaltend Reihe II, Iranische Felsreliefs I, Berlin, 1989, pp. 35-72.

սկզբներին ստեղծված ŠKZ-ում: Շապուհ I-ի արքունի ցուցակում նա հիշատակված է հերպեդ (միջ. պարսկ. 34 <'yhrpt>, պարթ. 28 <'hrpty>, հուն. 66 *μάγου* = հայ. մագ)[442] համեստ տիտղոսով և գրավում է 50-րդ տեղը:

Ի տարբերություն «Մանիի Քյոլնյան կոդեքս»-ի, որը հագեցած է ժամանակագրական տվյալներով, Կարտիրի արձանագրություններում այդպիսիք չկան: Անհամեմատ ուշ՝ Վարահրան II-ի օրոք, ստեղծված KNRm արձանագրության մեջ նա բավականին բուռն է ներկայացնում իր կարիերան ու «աստվածահաճո գործերը» և միաժամանակ պատմում է այնպես, ասես թե այդ կարիերան ընթացել է Շապուհի գահակալությանը համաքայլ:

«Եվ ես, մոգպետ Կարտիրս, իմ բարի ծառայությունները ու հավատարմությունը (*huparistā ud hukāmag*) եմ մատուցել աստվածներին (*Yazad*) և արքայից արքա Շապուհին: Աստվածներին ու արքայից արքա Շապուհին մատուցած իմ ծառայությունների համար Շապուհը արքունիքում ժամասացության հարցերում և թագավորությունից թագավորություն, վայրից վայր ամբողջ տերության մագաստաններում ինձ իշխանություն և ուժ շնորհեց: Եվ Շապուհի՝ արքայից արքայի հրամանով և աստվածների ու արքայից արքայի որոշմամբ թագավորությունից թագավորություն, տեղից տեղ բազմաթիվ հրաշալի աստվածային ծառայություններ և շատ Բահրամ կրակներ հաստատվեցին, և բազմաթիվ մոգեր դարձան երջանիկ և բարեկեցիկ, և բազմաթիվ կրակատներ ու մոգեր դարձան պետականորեն գրանցված: Եվ Ահուրամազդային և աստվածների համար [դրանից] մեծ օգուտ եղավ, իսկ Ահրիմանն ու դևերը մեծ շփոթմունքի մեջ ընկան: Եվ այդ բազմաթիվ կրակատների ու ծառայությունների համար, որոնք ըստ գրության իմ իրավասության ներքո էին... այսպիսով, Շապուհը՝ արքայից արքան ավանդեց իր գահաժառանգին. «Թող այս տունը լինի քո հենքը... և այն, ինչը որ աստվածների ու մեզ համար լավն էր կատարվել, թող շարունակի կատարվել նաև այսուհետ»: Եվ տերության փաստաթղթերում և գրություններում, որ ստեղծվել էին այդ ժամանակ Շապուհի՝ արքայից արքայի հրամանով, արքունիքում և ամբողջ տերության մեջ՝ տեղից տեղ, այդ գրություններում գրված է. «Հերբեդը Կարտիրն է»»[443]:

Փաստորեն, Շապուհ I-ը Կարտիրին, քանի դեռ նա ընդամենը հերպեդ էր, շնորհել է կարևոր կղերական պաշտոններ՝ դարձնելով նրան *pad mowestān kāmgār ud pādixšā*, այսինքն, տալով նրան քրմական միությունների (*mowestān*-հայ. մոգաստան) կամքին համապատասխան գործելու բարձրագույն հեղինակությունն[444]: Կարտիրին շնորհվել է նաև ի փառս աստվածների զանազան արարողություններ (*kerdagān*) իրականացնելու, կրակատներ հիմնելու և հոգևորականության նկատմամբ խնամք տածելու, կրակատներին և մոգերին ուղղված հրովարտակներ (*pādixšahr*) կնքելու և հոգևորականներին «երջանիկ և բարգավաճ» (*urwāhm ud padēx*) դարձնելու իրավունք:

250-ական թ.թ. արևմուտքում պարսկական բանակների գործողությունները հատկանշվեցին մեծ հաջողություններով: Դրանք իրանական հասարակության վրա այն տպավորությունն են թողել, ասես թե Շապուհը վերականգնել է պարսից տիրապետությունը Փոքր Ասիայի նկատմամբ[445]: Պալատական մոգ Կարտիրն Աներանի երկրներում, այդ թվում և Փոքր Ասիայի ռազմակալված մասերում, իր գործունեության մասին վկայում է. «Եվ ես բազմաթիվ կրակի տաճարներ և բազմաթիվ մոգերի դարձրի պետական հաստատություններով [գրանցված]...»[446]: Իրականում կրակի տաճարների (*'twr ZY wrhr'*) հիմնումը կամ վերականգնումը բոլորովին էլ չէր նշանակում կոնկրետ իրանական պաշտամունքի, հատկապես զրադաշտականության հաստատում: Կրակի պաշտամունքը աստվածապաշտության տիպիկ միջոց էր իրանական կրոնի բոլոր ուղղությունների համար: Որպես այդպիսին՝ այն խորթ չէր նաև իր բնույթով սինկրետիկ մանիքեականության համար: Ուստի իրավացի է Գ. Վիդեգրենը, որը նորանված երկրամասերում Կրակի տաճարների վերականգնումը բացատրում է դրանք իրանականացնելու և Իրանական տերությանը տնականորեն վերամիավորելու Շապուհի մտադրությամբ[447]: Կարտիրն իր արձանագրության մեջ փորձում է համոզել, որ զրադաշտականությունը Իրանական տերության մեջ պետական հովանավորություն վայելող պաշտոնական կրոն է դարձել տակավին Շապուհի օրոք. «....Նաև Աներանի երկրներում... հասել էր արքայից արքա Շապուհի այրուձին, Անտիոքում, սիրիական երկրի [մայրաքաղաքում] և Սիրիայի մերձակա շրջաններում,.... հյու-

[442] ŠKZ-ի հունարեն տարբերակում իբրև այդ տիտղոսի հոմանիշ նշված է « μάγου = հայ. մագ»: Վ. Գ. Լուկոնինի ենթադրությամբ՝ հերպետ ('hrpty) տիտղոսը կարող է համապատասխանել «քրմական ուսուցչի» կամ «Ավեստայի մեկնիչի» պաշտոնին (**Луконин В. Г.**, Варахран II и Нарсе с. 52, прим. 25): Սակայն Կարտիրն իր KSM արձանագրության գրում է. «Ես այն Կարտիրն եմ, ով արքայից արքա Շապուհի օրոք կոչվում էր «Կարտիր՝ մոբեդ և հերբեդ...»» (**KSM**, 38, see **MacKenzie D. N.**, Kerdir's Inscription, p. 53.): Ասել կուզի՝ այդ երկու տիտղոսները իրարից զանազան են:

[443] **KNRm**, 1-3.

[444] **Skjærvø P. O.**, Kartir, *EIr*, Vol. XV, Fasc. 6, pp. 608-628.

[445] **Видегрен Г.**, Мани и манихейство, с.54-55.

[446] **KNRj**, 23-24.

[447] **Видегрен Г.**, Мани и манихейство, с. 12, 55.

սիսում՝ մինչև Գալաթիա, Հայաստանում և Իբերիայում և Բաղասականում և ավելի հեռու՝ մինչև Ալանաց դռները.... արքայից արքայի հրամանով ես մոգերին մոգաստաններում կազմակերպեցի...»[448]: «Եվ շահրից շահր, շրջանից շրջան ամբողջ երկրում Ահուրամազդայի և աստվածների գործերը բարգավաճեցին, և մազդայական հավատքն ու մոգերը ամբողջ երկրում մեծ դիրքի հասան.... Եվ Ահրիմանի ու դևերի հավատքը նահանջեց և վտարվեց երկրից: Եվ հուդայականները և բուդդայական քրմերը և բրահմանները և նազարեթցիները և քրիստոնյաները և մանդեաները (հովհանականներ) և զինդիկները (մանիքեականները) ջախջախվեցին, իսկ նրանց աստվածների պատկերները ավերվեցին, և դևերի ապաստարանները (տաճարները) ոչնչացվեցին...»[449]:

Իր անձնական կարիերան հետագա սերունդներին ավելի տպավորիչ ներկայացնելու համար Կարտիրը նույնիսկ դիմել է չարաշահության: Ամենայն հավանականությամբ Վարահրան II-ի օրոք նա Արտաշիր I-ի Նախշ-ի Ռաջափի ժայռաքանդակի ձախակողմյան եզրագծից այն կողմ ավելացրել է իր աջ դարձած պատկերը՝ մեծարանքի ու հպատակության ժեստով աջ ձեռքը դեպի Արտաշիրն ուղղած: Անշուշտ, Արտաշիրի ժայռաքանդակի ձախակողմյան քանդակածո եզրագիծը մոտ հեռավորությունից դիտարկման դեպքում տեսողական սահմանաբաժան էր ստեղծում այս և Կարտիրի ժայռաքանդակների միջև: Բայց միջին և մեծ հեռավորության վրա այդ սահմանագիծը հազիվ թե զանազանվեր, և պարզամիտ դիտողների մոտ, ովքեր սովոր էին անվերապահ վստահել ժայռաքանդակների պատմողականությանը, պետք է ծնվեր այն տպավորությունը, թե Կարտիրը գործել է դեռ Արտաշիրի օրոք և նույնիսկ նշանակալից է եղել այնչափ, որ տեղ է գրավել այդ արքայի ինվեստիտուրայի տեսարանում, մի գաղափար, որը գրագետ և քննախույզ դիտորդին հասցեագրված արձանագրության մեջ հասկանալիորեն բացակայում է:

Հավանաբար նույն ժամանակ Կարտիրը նաև Շապուհ I-ի Նախշ-ի Ռուստամ VI ժայռաքանդակի աջակողմյան մասում՝ հեծյալ արքայից հետո, հավելել է իր ձախ դարձած պատկերն ու ընդարձակ արձանագրությունը (նկ. 50): Արդյունքում՝ պարզամիտ դիտորդին հուշարձանի վերջնական կոմպոզիցիան պետք է հանգեցներ այն մտքին, որ Հռոմի դեմ Շապուհ I-ի հաղթանակները պայմանավորվել են «գահի և զոհասեղանի» դաշինքով, և որ այդ պայքարը Աքեմենյանների տերության վերականգնումից զատ ունեցել է նաև զրադաշտականության տարածման նպա-

[448] **KNRm**, 11-13.
[449] **Ibid.**, 9-10.



տակ: Այդ գաղափարը պետք է որ ավելի ամրապնդվեր Կարտիրի պատկերին կից արձանագրության ընթերցման պարագայում: Սակայն անվիճելի իրողությունն այն է, որ թե՛ Կարտիրի պատկերը, թե՛ նրան կից արձանագրությունը ստեղծվել են նկատելիորեն ուշ, երբ Իրանի կրոնական կյանքում Մանիի ու Կարտիրի միջև մրցակցությունն արդեն ավարտվել էր վերջինի հաղթանակով: Փաստը, որ պարսից արքային նրա արշավանքների ժամանակ ուղեկցել են թե՛ Մանին, թե՛ Կարտիրը, պարզորոշ խոսում է այն մասին, որ Շապուհը երկար ժամանակ չի վճռել մրցակցող կրոններից որևէ մեկին նախապատվությունը տալ և նախընտրել է բաց մնալ երկու հնարավորությունների համար[450]:

Անվիճելի է, որ մանիքեականությունն իր սինկրետիզմով, «տարբեր անունների տակ միասնական աստծո» պաշտամունքի գրավչությամբ առավել էր համապատասխանում Սասանյանների ծավալապաշտական նկրտումներին և, հատկապես, տերության բազմաէթնիկ բնակչությանը միասնական կրոնամշակութային դաշտի մեջ ներառելու ցանկությանը: Փաստ է նաև, որ Մանիի քարոզչությունը լայն արձագանք էր գտնում հասարակության միջին խավերի, իրանական բարձր ազնվականության և անգամ, Սասանյան արքայազների շրջանում: Նույնիսկ, սկզբնապես նրա կողմն էր Իրանի արքայից արքայի անձնական համակրանքը[451]: Դրան հակառակ, մենք չգիտենք, թե արքայից արքա Շապուհի մերձավոր շրջապատից հատկապես ովքեր են հարել Կարտիրի ճամբարին: Մանիքեական տեքստերից մեկում նրանք ընդհանրական ձևով կոչված են «արքայի օգնականներ»[452]: Այս հասկացության տակ, ամենայն հավանականությամբ, պետք է հասկանալ իրանական ռազմավարչական ավագանու վերնախավի ներկայացուցիչներին: Բայց փաստ է, որ Կարտիրը վայելել է նաև արքայից արքա Շապուհի պաշտոնական աջակցությունը: Հարաբերական հավասարակշռությունը հօգուտ Կարտիրի խախտում էր այն հանգամանքը, որ զրադաշտականությունը եղել և III դ. կեսերին շարունակում էր մնալ իրանական ազգային կրոն: Այն Սասանյան տերության սահմաններից դուրս որևէ առաքելական հավակնություններ չուներ: Սակայն ուներ կազմակերպված եկեղեցի և բազմադարյան ավանդականություն, որն էլ ուժ և վճռականություն էր հաղորդում Կարտիրին ու զրադաշտական հոգևորականությանը:

[450] **Видегрен Г.**, Мани и манихейство, с. 55.
[451] **Луконин В. Г.**, Картир и Мани, с. 65.
[452] «Մոգպետ Կարտիրը մտմտում էր «օգնականների» հետ, որոնք ծառայում էին արքայի առջև և նախանձ ու նենգություն [կար նրանց սրտերում ?]»՝ **Видегрен Г.**, Мани и манихейство, с. 65.

Կարտիրի և նրա կուսակցության կրոնաքաղաքական դիրքերի ամրապնդման գործում վճռորոշ նշանակություն ունեցավ մրցակցող երկու քրմական խմբերի՝ մոգերի, որոնց կենտրոնը Շիզն էր, և Պարսքի հերբեդների աստիճանական մերձեցման շարժընթացը, ինչն արագացրեց պաշտոնական զրադաշտական եկեղեցու ձևավորումը: Նրա տեսական-գաղափարական հենքը դարձավ սրբազան հիմների ու կանոնների ժողովածուն՝ Ավեստան: Այն, փաստորեն, կոչված էր հակադրվելու Մանիի կանոնական գրքերին և Իրանական տերության մեջ ամրապնդելու ու պաշտպանելու բնիկ իրանական կրոնի դիրքերն ու իրավունքները:

Մանիքեականության և զրադաշտականության միջև հարաբերական հավասարակշռությունը, որը հատկանշական էր Շապուհ I-ի գահակալության գրեթե ամբողջ ժամանակահատվածին, հօգուտ զրադաշտականության խախտվեց նրա գահակալության վերջին տարիներին: Ցավոք, հայտնի չէ, թե ինչն էր արքայի վերաբերմունքի կտրուկ փոփոխության պատճառը: Գ. Վիդեգրենի համոզմամբ՝ վճռական նշանակություն է ունեցել այն պահպանողական ավանդույթը, որը Շապուհը ժառանգել էր իր նախնիներից՝ Ստահրի Կրակի տաճարի զրադաշտական քրմերից: Հեղինակը ուշադրություն է դարձնում այն իրողությանը, որ իր ŠKZ արձանագրության այն պարբերություններում, որտեղ խոսվում է Սասանյան տոհմի անդամների հոգու փրկության համար կատարվող զոհաբերությունների մասին, Շապուհը իրեն ներկայացրել է որպես հին իրանական զրադաշտական ավանդույթների հովանավոր, թեև «զրադաշտական» բառը նա տվյալ դեպքում առաջարկում է հասկանալ III դ. հատուկ սինկրետիկ իմաստով[453]:

Բավականին հիմնավոր է թվում նաև Մ. Հաթերի կարծիքն այն մասին, որ Սասանյան արքայի և Մանիի հարաբերությունների խզման պատճառը եղել է Մանիի ուսմունքում արքայական իշխանության դերի թերագնահատումը: «Շապուհական»-ում Մանին հայտարարում է. «Իմաստնությունն ու բարի գործերը շարունակաբար մարդկանց են բերվել Աստծո առաքյալների կողմից: Մի անգամ նրանք Հնդկաստան բերվեցին Բուդդա կոչվող առաքյալի կողմից, մյուս անգամ Իրաք՝ Զրադաշտի միջոցով, մյուս անգամ՝ Արևմուտքի երկրներ՝ Հիսուսի միջոցով: Ներկայիս վերջինը՝ գրված ահա այս հայտնությունը, Բաբելոնյան երկրի համար է և հայտնվել է ի դեմս ինձ՝ Մանիի՝ ճշմարտության աստծո պատվիրակի»[454]:

Ղպտական խրատանիում (*homilie*) պատմվում է, որ Սասանյան ար-

[453] **Видегрен Г.**, Мани и манихейство, с. 57.

[454] См. **Шмидт А. Э.**, Материалы по истории Средней Азии и Ирана, с. 478.



քունիքում Մանիի վերջին և ճակատագրական ընդունելության ժամանակ Վարահրանի այն հարցին, թե ինչու է աստվածային գիտելիքները ստացել նա, այլ ոչ թե արքան, Մանին պատասխանել է, թե աստվածներն են ընտրում, թե ում միջոցով ճշմարտությունը հաղորդեն մարդկանց: Աստվածները հոգ չեն տանում քաղաքական նվիրապետության նկատմամբ[455]: Այս պատասխանը ցույց է տալիս Մանիի և Վարահրանի, Մանիի և, առհասարակ, ցանկացած Սասանյան արքայի միջև եղած գաղափարախոսական անջրպետը: Իրանի տիրակալները, որոնք իրենց իշխանությունը ստանում էին Ահուրամազդայից և «սերում էին աստվածներից», չէին կարող հանդուրժել աստվածների հետ ավելի սերտ հարաբերություն ունենալու և նրանց կամքի ու ճշմարտության առաքյալը լինելու Մանիի հավակնությունը: Աստվածաբանության հենց այս կետում էլ խաթարվում էր Մանիի ուսմունքի և Իրանի Սասանյան տիրակալների «քաղաքական կրոն»-ի ընդհանրությունը: Վերջապես, մանիքեականների նկատմամբ Շապուհ I-ի վերաբերմունքի փոփոխության պատճառների մեջ չի կարելի բացառել նաև ծերունական տարիքի հասած վատառողջ արքայի վրա պահպանողական ավագանու և զրադաշտական կղերի ներգործության հավանականությունը:

Վ. Սանդերմանը, հենվելով Կ. Ռ. Կ. Ալբերրիի 1938 թ. հրատարակած ղպտական սաղմոսագրքի 226-րդ սաղմոսում առկա տվյալի վրա[456], եզրակացնում է, որ Շապուհի կառավարման վերջին տարիներին՝ Մանիի մահվանից վեց տարի առաջ, նոր ուսմունքի հետևորդների նկատմամբ իրականացվել են բացահայտ հալածանքներ[457]: Այժմ վերջնականորեն ճշտված է, որ Մանիի վախճանը տեղի է ունեցել Վարահրան I-ի կառավարման վերջին տարում՝ 276/7 թ.: Հետևաբար՝ հալածանքի թվականն ընկնում է 271 թ.:

Մանիքեականների դեմ իրագործված հալածանքի մասին հաղորդում են նաև արաբական աղբյուրները[458]: III-IV դ.դ. նեոպլատոնական հեղինակ Ալեքսանդր Լիկոպոլցին նույնիսկ հավաստում է, թե Մանին ինչ-որ հարցի շուրջ Շապուհի հետ վիճաբանելու պատճառով սպանվել է վեր-

[455] **Hutter M.**, Manichaeism in the Early Sasanian Empire, p. 9.

[456] **A Manichaean Psalm-Book**, Part II. Edited by C. R. C. Allberry. With a Contribution by H. Ibscher. Stuttgart, W. Kohlhammer, 1938, p. 19.12-13: «Մեծ հետապնդման օրվանից (*diōgmós*) մինչև խաչի օրը (*staurós*) վեցտարի է»: Ե. Սմագինան, անառարկելի համարելով, որ Մանին վախճանվել է բանտում, առաջարկում է մանիքեական տեքստի «խաչելություն» բառը մեկնաբանել ընդհանրական իմաստով՝ իբրև Մանիի վախճան (**Смагина Е. Б.**, Манихейство…, с. 52):

[457] **Sundermann W.**, Mani, in *EIr,* Originally Published: July 20, 2009.

[458] **Хосроев А. Л.**, История манихейство, с. 102, прим. 491.

ջինիս հրամանով[459]: Թեև Շապուհի հրամանով Մանիի սպանության մասին հաղորդումը պատմականության որևէ նշույլ չի պարունակում, այնուամենայնիվ, այն, գունազարդելով Մանիի՝ իբրև իրանցի թշնամու մասին հռոմեական պատկերացումը, անուղղակիորեն արտացոլում է Մանիի նկատմամբ արքայից արքայի վերաբերմունքի կտրուկ փոփոխությունը:

Անշուշտ, Կարտիրի և զրադաշտական հոգևորականության, ինչպես նաև սրանց աջակցող իրանական ազնվականության պահպանողական թևի հաղթանակը Մանիի և նրա հետևորդների նկատմամբ կրոնականից զատ ուներ նաև ներքաղաքական կարևոր նշանակություն: Հակամանիքեական դաշինքի երկու հասարակական խավերն էլ պայքարում էին իրանական մեծապետականության դրոշի ներքո և, թեկուզ արտաքուստ, համակիր էին արքայական իշխանության ու հենց Սասանյան տիրակալների աստվածային ծագման վերաբերյալ պաշտոնական քարոզին: Այդուհանդերձ, երկուսն էլ հավասարապես ձգտում էին պետության քաղաքական կյանքում մեծացնել իրենց դերակատարումը, ինչը, բնականաբար, կարող էր տեղի ունենալ միայն ի վնաս արքայական միահեծանության: Սակայն դեռևս Արտաշիր I-ի եռանդուն գործունեության արդյունքում արքայական իշխանությունն արդեն բավական սրբազանացված էր, որպեսզի իրանական ավագանին համարձակվեր բացեիբաց հակադրվել գործող արքային: Ուստի բնական էր, որ նա իր միջամտության սուր ծայրը պետք է ուղղեր գահաժառանգության հաստատության վրա, որը իրանական արքաների կայացման ճանապարհի ամենավճռական, բայց և ամենաթույլ և խոցելի օղակն էր: Ճիշտ է, Արտաշիր I-ի կողմից իշխանությունն ուղիղ գծով որդուն փոխանցելը, իսկ ավելի ուշ՝ Որմիզդ-Արտաշիրին գահաժառանգ հայտարարելու Շապուհի որոշումը ոչ մեկի կողմից չվիճարկվեց: Բայց դա ուներ իր պատճառները: Նախ, անառարկելի էին «ազատարար» հոր և մեծափառ որդու հեղինակությունները: Մյուս կողմից՝ պարսից նորաստեղծ տերության ամրապնդման անհրաժեշտությունն ու պատերազմական իրավիճակն էին հրամայական դարձնում ուժեղ միապետական իշխանության գոյությունը: Սակայն ժամանակները փոխվում էին, և 270-ական թ.թ. սկզբներին ասպարեզում արդեն պարսկական ազնվականության երկրորդ սերունդն էր, որը յուրովի էր նայում պետական կյանքի իրողություններին: Գահաժառանգության հարցում առաջին Սասանյանների միահեծան քաղաքականությունը այլևս չէր կարող համապատասխանել նրանց շահերին, քանի որ նրա այս կամ այն

459 **Alexandre de Lycopolis**, Contra la doctrine de Mani, sec. 3 = 4, 20-22.



սկզբունքի ամրագրման դեպքում ավագանին վերջնականապես զրկվելու էր աստվածատուր իշխանության վրա ներազդելու, այն քիչ թե շատ իր վերահսկողության տակ պահելու հնարավորությունից:

«Թանսարի նամակ»-ում Սասանյան գահի նկատմամբ Իրանի ռազմավարչական և քրմական ավագանու վերահսկողական իրավունքը ներկայացված է իբրև տակավին Արտաշիր I-ի ժամանակներից եկող իրողություն: Եվ թեպետ ակնհայտ է, որ դա կատարվել է Սասանյան տերության գոյության վերջին հարյուրամյակում գոյություն ունեցող հարաբերությունը վաղեմությամբ սրբագործելու նկատառումով, այնուամենայնիվ, փաստը մնում է այն, որ այդ հավակնությունները դրսևորվել են դեռևս այս հարստության կառավարման սկզբներին: Վերջին հաշվով, դեռևս թարմ էր արքայական իշխանության վերաբերյալ պարթևական մոդելի[460] մասին հիշողությունները, որոնք կարող էին և պետք է որ հրապուրեին պարսկա-պարթևական ազնվականությանն ու զրադաշտական քրմությանը՝ հավակնելու գահաժառանգության հարցի լուծման «օրինական կարգ»-ի վերակենդանացմանը: Այլապես Արտաշիրն իր գահաժառանգ որդու քաղաքական դիրքերի ամրապնդման ուղղությամբ այդչափ մեծ ջանքեր չէր գործադրի: Գահաժառանգ Որմիզդ-Արտաշիրի քաղաքական բարձրացման համար Շապուհ I-ի նմանատիպ գործունեությունը դարձյալ ցույց է տալիս, որ Սասանյան երկրորդ գահակալի օրոք նույնպես եղել են մտավախություններ: Նրա գահակալության վերջում, հատկապես արքայի տևական հիվանդության պարագայում, իրանական ռազմավարչական ավագանու և զրադաշտական հոգևորականության ազդեցությունը, հետևաբար և նրանից եկող վտանգը պետք է որ ավելի շոշափելի լիներ:

Բնական է, որ պարսկական ավագանու և հոգևորականության շրջանում սկսված վերոնշյալ խմորումներն առաջին հերթին սպառնում էին թագաժառանգ Որմիզդ-Արտաշիրին, որի գահակալության հարցը հոր վախճանի պարագայում կարող էր դառնալ շահարկման առարկա: Անշուշտ, որպես արքունիքում տիրող մթնոլորտի որպիսությամբ առավել շահագրգիռ կողմ, նա չէր կարող անտեղյակ լինել իր համար խիստ աննպաստ այդ մտայնություններին: Սակայն մյուս կողմից էլ կասկածից վեր է, որ «Հայոց մեծ արքան» Տիգրոնի գործերին անմիջականորեն ներազդելու գործնական լծակներ ունենալ չէր կարող: Մեր խորին համոզմամբ՝

460 **Strabo.** XI. 9, 3 «Պարթևների մոտ լինում են երկու ձևի ժողովներ, հաղորդում է [Պոսիդոնիոսը]. մեկը ավագների, մյուսը՝ իմաստունների ու մոգերի. նրանք երկուսով կարգում են արքաներ»: **Flavius Josephus**, De Antiquitatibus Iudaicum, XVIII, 44; **Justinus Marcus**, LXII, IV, 1.

հակամիջոցներ ձեռնարկելու անհրաժեշտության և անկարողության խորը գիտակցումով է, որ ***Շապուհ I-ի թագաժառանգ որդին դիմել է արքայական գահի նկատմամբ իր օրինական հավակնության հիմնավորման ավանդական, իսկ տվյալ դեպքում, միակ հնարավոր քարոզչաձևին՝ պաշտոնական ժայռաքանդակին, որի արտահայտությունն է դարձել հենց Սալմաստի բարձրաքանդակը: Ներկայացնելով նախ Արտաշիր I-ի կողմից թագաժառանգ Շապուհին, ապա և արքայից արքա Շապուհի կողմից իրեն՝ Որմիզդ-Արտաշիրին «մեծ թագավոր Հայոց» կարգելու ծեսերը՝ հեղինակը դիտողին փորձել է ներշնչել այն միտքը, թե «Երանի ու Աներանի» գահին կարող է նստել միայն նա, ով դեռևս նախորդ տիրակալի կողմից ճանաչվել է որպես «մեծ արքա Հայոց»: Ընդ որում, ժայռաքանդակի երկու պատկերախմբերի միջև որևէ դեկորատիվ տարանջատում չանելով (ինչը հասկանալի կդարձներ երկու իրադարձությունների տարբեր ժամանակային չափումները)՝ պատվիրատուն, փաստորեն, իր գաղափարը ներկայացրել է շարժանկարի սկզբունքով, որպես թե ի սկզբանե եկող և սահուն կերպով դեպի ապագան գնացող մի կարգ, որի մեջ կարող են փոփոխվել միայն անունները, բայց ոչ երբեք գործող անձանց դիրքն ու դրանից բխող հարաբերությունը:***

Թեև Սալմաստի ժայռաքանդակի վրա ներկայացվել են տասնամյակների վաղեմություն ունեցող իրադարձություններ, այնուամենայնիվ, պատվիրատուն փորձել է հնարավորինս հավատարիմ մնալ պատմականության սկզբունքին և Իրանի արքաների զենքը, հանդերձանքը, գլխի հարդարանքը և, հատկապես, թագերը ներկայացրել ճիշտ և ճիշտ այնպես, ինչպես որ դրանք եղել են պատկերագրված իրադարձությունների ժամանակ:

Բնական կլինի կարծել, որ Որմիզդ-Արտաշիրի ծավալած քարոզչությունը առաջին հերթին տարածվել է հայ նախարարական դասի շրջանում, որը, ըստ էության, Սասանյան գահաժառանգի անմիջական սոցիալ-քաղաքական հենարանն էր: Ընդ որում, փաստը, որ Մ. Խորենացու միջոցով մեզ հասած հայկական պատմական ավանդության մեջ Որմիզդ-Արտաշիրը, հակառակ Հայաստանում ծավալած իր գործունեությանը, բավական դրական է հիշատակված[461], հիմք է տալիս եզրակացնելու, որ հայ

[461] **Մ. Խորենացի**, II, Հէ, «Իսկ Արտաշրի գեղեցկապէս յարդարեալ զաշխարհս Հայոց՝ ի կարգ առաջին հաստատէր...»: «Յարդարել» բայը վկայության համատեքստում ունի բարեշինել, բարենորոգել, զարգացնել իմաստը: Այդ իրողությունը, թեև սկզբունքորեն հակասում է Հայաստանում պարսից տիրապետության նկատմամբ Մ. Խորենացու վերաբերմունքին, բայց, Ռ. Մանասերյանի դիտարկմամբ, այն կարող էր արտացոլել պարսից գահաժառանգի մասին հայ ավագանու



ավագանին հավատարմորեն պաշտպանել է պարսից գահի նկատմամբ նրա օրինական հավակնությունները: Ըստ էության դրա ուղղակի արտահայտությունը կարող ենք համարել Ագաթանգեղոսի վկայությունը, թե «Նա, ով Հայոց թագավորն է, նա է երկրորդը Պարսից տերության...»[462]:

Այդուհանդերձ, ժայռաքանդակի նշանակության վերաբերյալ մեր մեկնաբանության համատեքստից ինքնին հասկանալի է դառնում, որ Որմիզդ-Արտաշիրի արտահայտած գաղափարի բուն հասցեատերը եղել է ոչ թե նրա հպատակ հայ բնակչությունը, ինչպես կարծում է Ս. Երեմյանը, այլ իրանցիներն ու առաջին հերթին՝ իրանական պաշտոնեությունը: Սրանով իսկ բացատրություն է ստանում այն հարցը, թե ինչու է հուշարձանը ստեղծվել Հայաստանի ծայրագավառ Զարեհավանում. **«Հայոց մեծ արքան», որքան էլ ցանկանար, չէր կարող անմիջականորեն իր կառավարման ներքո գտնվող երկրի սահմաններից դուրս ժայռաքանդակ ստեղծել:** Ուստի, վերոնշյալ գաղափարի մասսայականացման և, առաջին հերթին, այն իրանական ազնվականությանը մատուցելու համար նա ընտրել է աշխարհագրական տեսանկյունից առավել հարմար վայրը՝ Խան Թախտի ժայռը, որի մոտով էր անցնում Տիզբոն – Կենե – Քալախ (Լարիսա) – Արբելա – Զինթա – Զարեհավան – Նախիջևան – Վաղարշապատ ճանապարհը:

Վերջին խնդիրը, որին հանգում է մեր ուսումնասիրությունը, Սալմաստի ժայռաքանդակի ստեղծման ժամանակի հարցն է: Վերը կատարած մեր դիտարկումների տրամաբանությամբ դա պետք է որ լիներ արքայից արքա Շապուհ I-ի, հետևաբար նաև Հայաստանում Որմիզդ-Արտաշիրի գահակալության վերջին տարում՝ 271/272 թ.: Այդ ժամանակ է, որ տերության կրոնական կյանքում Կարտիրը առաջին անգամ ակնհայտ առավելության հասավ Մանիի նկատմամբ, և արքունիքում էլ իրանական

միջավայրում ձևավորված դրական հիշողությունը:

[462] **Ագաթանգեղոս**, 18: 2002 թ. հրատարակված մի հոդվածում մենք հայ մատենագրի վերոնշյալ հաղորդման մեջ ակնառու անհամաձայնությունների քննությամբ հանգել էինք այն կարծիքին, որ «Պարսից տերության երկրորդ» արտահայտության մեջ Իրանական տերությունը «Պարսից» է կոչված պատմական իներցիայով, իսկ արտահայտությունն էլ արտացոլում է Արշակունի տոհմաճյուղերի պատվո աստիճանակարգության բնագավառում պարթևական ավագ ճյուղի անկումից հետո Մեծ Հայքի արքայատոհմի դրության մեջ կատարված փոփոխությունը (**Մելիքյան Ա.**, Մեծ Հայքի Արշակունի արքաների..., էջ 27-28): Սակայն սույն ուսումնասիրության մեջ բացահայտված իրողությունների լույսի ներքո մենք այժմ կարծում ենք, որ Ագաթանգեղոսին հայտնի է եղել III Հայաստանի Սասանյան գահակալների՝ Պարսից տերության մեջ զբաղեցրած իրավական դրությունը, որը հեղինակը պարզապես հետադարձել է Պարթևական դարաշրջանի հայ-իրանական հարաբերությունների վրա:

ազնվականության պահպանողական և ազատական թևերի միջև հավասարակշռությունը խախտվեց հօգուտ առաջինի: Անուղղակիորեն այս սահմանային ժամանակամիջոցն են ցուցում Սալմաստի ժայռաքանդակի ոճակատարողական յուրահատկությունները: Հուշարձանի «պարթևական ոճ»-ից կարելի է ենթադրել, որ նրա ստեղծման աշխատանքները սկսվել են Տիգրոնից հասած անհանգստացնող լուրն առնելուն պես՝ բավականին հապճեպորեն: Ըստ երևույթին Որմիզդ-Արտաշիրը նույնիսկ չի ցանկացել ժամանակ վատնել Պարսքից կամ Ռեյից հռոմեացի ռազմագերի քանդակագործներ հավաքագրելու համար և աշխատանքները սկսել է տեղացի արհեստավորների միջոցով, որոնց միայն ծանոթացրել են Սասանյան պատկերագրության ընդհանուր սկզբունքներին: Իսկ դրա համար նույնիսկ հարկ չկար նրանց անմիջականորեն հաղորդակցելու Սասանյան հուշարձանների հետ, քանզի պատկերագրական այդ սկզբունքները նույնությամբ արտահայտված էին նաև դրամների ու արծաթե սպասքի վրա:

Մյուս կողմից՝ հուշարձանի ակնհայտ անավարտ վիճակը ենթադրել է տալիս, որ կարճ ժամանակ անց ժայռաքանդակի ստեղծման աշխատանքները դադարեցվել են՝ հավանաբար Շապուհ I-ի մահվան և Որմիզդ-Արտաշիրի՝ Հայաստանից Տիգրոն մեկնելու պատճառով:

272 թ. ապրիլի կեսերին վախճանվեց Շապուհ I-ը[463]: Ղպտական խրատանիում այդ մասին վկայված է. «Շապուհ արքան եկավ Բիշապուհ քաղաքը: Հիվանդությունը հարձակվեց նրա մարմնի վրա: Մեծ վտանգ էր

[463] Պատմագիտության մեջ առ այսօր հստակեցված չէ Շապուհ I-ի վախճանի և հետևաբար՝ Որմիզդ I-ի գահակալության թվականը: Առաջարկված թվագրումները տարբերվում են երեք տարով: Ս. Տագիզադեն Շապուհի մահը թվագրում է 273 թ. ապրիլի կեսերով (**Taqizadeh S. H.**, The Early Sasanians. Some Chronological Points which Possibly Call for Revision, *BSOAS*, vol. 11, 1943—1946, p. 41-42; **Taqizadeh S. H., Henning W. B.**, The Dates of Mani's Life, *Asia Major*, vol. 6, 1958, p. 116); Նրա թվագրումն ընդունում է նաև Գ. Վիդեգրենը (**Widengren G.**, Manichaeism and its Iranian Background, in *CHI,* ed. by E. Yarshater, Vol. 3 (2). p. 970): Հենինգը այդ իրադարձության ժամանակը համարում է 270 թ. մայիսը (**Haloun G. and Hening W. B.**, The Compendium of the Doctrines and Styles of the Teaching of Mani, the Buddha of Light, *Asia Maior*, vol. 3, 1952, pt. 1, p. 199): Հենինգի կարծիքը պաշտպանում են նաև Շ. Շահբազին (**Shahbazi Sh.**, Shapur I), Թ. Դարյաին (**Daryaee T.**, Sasanian Persia..., p. 10): Վ. Հինցը Իրանում կատարված իշխանափոխության թվականը համարում է 272 թ. (**Hinz W.**, Mani and Karder, p. 486). Այս թվականն են ընդունում նաև Մ. Շեյեգանը (**Shayegan M. R.**, Hormozd I, p. 462), Վ. Լուկոնինը (**Луконин В. Г.**, Варахран II и Нарсе, с. 49), Ռ. Ֆրայը (**Фрай Р. Н.**, Наследие Ирана, М., 2002, с. 369, прим. 3), Պ. Կրեյենբրոկը (**Kreyenbroek P.G.**, How Pious Was Shapur I?: Religion, Church and Propaganda under the Early Sasanians, in *The Sasanian Era: The Idea of Iran*, Vol. III, p. 7), Կ. Ֆարրոխը (**Фаррох К.**, Персы, с. 205) և այլք:



սպառնում նրան: Նա հասավ կյանքից իր հեռանալու [ժամանակին]: Վախճանվեց Շապուհ արքան և վերցվեց աշխարհից»[464]:

Հոր մահից հետո Որմիզդ-Արտաշիրը, հակառակ ունեցած բոլոր մտավախություններին, անարգել բազմեց Տիգրոնի գահին. հնարավոր է՝ դեռևս կենդանի էր հիշողությունը Արտաշիրի ու Շապուհի հաղթական փառքի մասին, որպեսզի բացահայտ ոտնձգություն կատարեին նրանց սահմանած կարգերի նկատմամբ: Կամ էլ՝ իրանական ազնվականությունն էր դեռ անպատրաստ նման քայլին:

Որմիզդ I-ի գահակալությունը, ինքնըստինքյան, ետին պլան էր մղում Սալմաստի ժայռաքանդակի քաղաքական-քարոզչական նշանակությունը: Ինչպես երևում է, նրա կերտման աշխատանքներն այդպես էլ չեն վերսկսել: Նույնիսկ արձանագրությունը, որի համար հաշվենկատորեն տեղ էր հղկվել ժայռաքանդակի աջակողմյան վերին անկյունում և որտեղ, ամենայն հավանականությամբ, պետք է լուսաբանվեր ժայռաքանդակի խորհուրդը, այդպես էլ չի փորագրվել:

Տիգրոնի գահին Որմիզդ-Արտաշիրի (Որմիզդ I) գահակալությունը սկսվել է նշանավորվել է նոր դրամների թողարկումով (նկ. 51 ա, բ, գ): Առաջին թողարկման դրամների վրա դրոշմված է Որմիզդի նախկին տիտղոսը՝ *mzdysn bgy 'wḥrmzdy RB' MLK' 'rmn'n* ... = «Մազդային երկրպագող, տիրակալ, Որմիզդ, «մեծ թագավոր Հայոց»»: Սակայն այդ դրամների դիմերեսին Իրանական տերության նկատմամբ նրա վեհապետական իշխանությունը ընդգծված է ոչ միայն ինքնատիպ թագով, այլև թիկունքին պատկերված արքայական խորհրդանշանով:

Դրամների երկրորդ թողարկումը կատարվել է նրա պաշտոնական թագադրությունից հետո: Դրանց երեսին արդեն ներկայացված է Որմիզդ I-ի նոր և ամբողջական տիտղոսը՝ *mzdysn bgy 'wḥrmzdy MLK'n MLK'n 'yr'n W 'nyr'n MNW ctry MN yzd'n* = «Մազդային երկրպագող Որմիզդ, արքայից արքա Երանի ու Աներանի, ով սերում է աստվածներից», իսկ դարձերեսին՝ *NWR' ZY 'wḥrmzdy*[465]: Սակայն այս երկրորդ թողարկման դրամների վրա Որմիզդ I-ը կրում է ոչ թե վեհապետական, այլ գահաժառանգի զինանշան: Հավանաբար այս ձևով նա փորձել է լրացուցիչ անգամ հանրածայնել Սալմաստի ժայռաքանդակի վրա պատկերագրված այն գաղափարը, թե Իրանի գահին պետք է նստի միայն այն անձնավորությունը, ով նախորդ տիրակալի կողմից ճանաչվել է որպես գահաժառանգ:

Շատ քիչ բան է հայտնի Որմիզդ I-ի օրոք Սասանյան տերության

[464] **Хосроев А. Л.**, История манихейство, с. 102, прим. 493.
[465] **Alram M.**, Nomina propria Iranica in Nummis. Nr. 700-704.

արտաքին և ներքին քաղաքական իրադրության մասին: Կայսրության արևմտյան սահմաններում շարունակում էր պահպանվել պատերազմական դրությունը Հռոմի հետ: Շապուհ I-ի գահակալության վերջերին Ավրելիանուս կայսրը կարողացավ ջախջախել Պալմիրայի թագուհի Զենոբիային և վերականգնել Հռոմի տիրապետությունը արևելյան պրովինցիաների նկատմամբ: Պալմիրյան երկրորդ պատերազմի ժամանակ (273 թ. գարուն), հռոմեացիներին հաջողվեց ոչ միայն կործանել Պալմիրյան թագավորությունը, այլև պարտության մատնել պալմիրցիներին օգնության եկած պարսկական հեծելազորին[466]: Դրանից հետո Ավրելիանուսը սկսեց պատրաստվել Սասանյան տերության դեմ մեծ պատերազմի, որը, սակայն, չհասցրեց իրականացնել՝ դավադրաբար սպանվելու պատճառով: Այնպես որ, պարսկա-հռոմեական սահմաններում ընդանուր առմամբ պահպանվեց status quo-ն:

Ռ. Ն. Ֆրայը անհավանական չի համարում Տաբարիի հաղորդումն այն մասին, որ Որմիզդ I-ը պատերազմել է նաև սողդիանացիների դեմ[467]: Այս հակամարտության ո՛չ պատճառները, ո՛չ էլ մանրամասները հայտնի չեն: Ռ. Ն. Ֆրայը չի բացառում, որ պարսից արքան այն մղել է պարզապես քաջարի ռազմիկի իր համբավը հաստատելու նպատակով: Իսկ եթե պալմիրցիներին օգնության գնացած պարսկական զորքի պարտությունը տեղի է ունեցել ոչ թե Շապուհ I-ի, այլ արդեն Որմիզդ I-ի օրոք, ապա վերոնշյալ ռազմական ձեռնարկը պետք է կարևորենք ավելին, քան արքայի փառասիրության դրսևորումը. պարտված արքան պետք է շտապեր իր հպատակներին ցույց տալ, որ *xᵛarənah* -ը չի լքել իրեն, և որ ինքը շարունակում է վայելել աստվածների հովանավորությունը:

Սակավ են տեղեկությունները նաև այս ժամանակահատվածի Իրանի ներքաղաքական կյանքի վերաբերյալ: «Կարնամակ»-ում այդ մասին հաղորդվում է հետևյալը. «Երբ տիրակալ դարձավ Որմիզդը, նա ի զորու եղավ ողջ Իրանշահրը մի տիրապետության տակ համախմբելու: Եվ տարբեր սահմանային շրջանների խվատավները ենթարկվեցին Որմիզդին: Ռումից ու Հինդուստանից նա նվերներ ու տուրք պահանջեց և Իրանշահրը դարձրեց ավելի զարդարուն, ավելի ծաղկուն, ավելի հռչակավոր, քան առաջ էր: Եվ հռոմեական կայսրը, Քաբուլի թաքը, Հնդկաստանի ռաջան, թուրքական խաքանն ու տարբեր երկրների այլ տիրակալներ ողջունելու համար նրա արքունիքը եկան»[468]:

[466] **Watson A.**, Aurelian and the Third century, Routlage, New York, 1999, p. 49.
[467] **Fray R. N.**, The Political History of Iran…, p. 127.
[468] **Книга деяний Ардашира сына Папака**, гл. XVIII, 21-22.



Հակիրճ են նաև Որմիզդ I-ի վերաբերյալ բյուզանդական մատենագիրների տվյալները: IV դ. հեղինակ Ագաթիաս Միրոնացին ընդամենը հաղորդում է. «Շապուհի մահվանից հետո նրա որդի Որմիզդը բարձրացավ գահ: Նրա գահակալությունը եղավ շատ կարճատև՝ ձգվելով մի տարի և տասը օր, ինչի պատճառով էլ հիշարժան ոչինչ տեղի չունեցավ»[469]: Իսկ Գ. Սինկելոսը բավարարվում է եզակի ակնարկով. «Երկրորդ արքա Որմիզդը պարսից վրա իշխեց մեկ տարի»[470]:

Նմանապես հակիրճ ու ընդրանրական է նաև արաբա-պարսկական պատմական ավանդության տեղեկությունը. «Երբ Շապուհը վախճանվեց, սկսեց կառավարել Որմիզդը և տվեց նա իր հոր մեծամեծերին այն նույն պաշտոնները, որոնք որ նրանք զբաղեցնում էին հոր օրոք»[471]: Արաբ մատենագիրների այս հաղորդումը, ինչպես նկատում է Վ. Գ. Լուկոնինը, այնքան էլ չի համապատասխանում իրականությանը: Կարտիրը, որը Շապուհի օրոք ընդամենը «հերպետ» էր, պարզորոշ վկայում է. «....Որմիզդը, արքայից արքան, ինձ շնորհեց քյուլահ և քամար (*kōlāf ud kamar*)[472] և սահմանեց իմ աստիճանն (տեղը) ու իշխանությունը և ինձ արքունիքում, և շահրից շահր, տեղից տեղ ամբողջ երկրում կրոնական հարցերում ինձ ավելի զորեղ և իշխող դարձրեց: Եվ սահմանեց (շնորհեց) ինձ «Կարտիր՝ Ահուրամազդայի մոգպետ» անունը՝ Ահուրամազդա աստծո անունով»[473]:

Վ. Գ. Լուկոնինի կարծիքով՝ 273 թ. կեսերին մտցված «Ահուրամազդայի մոգպետ» տիտղոսի շնորհումը Կարտիրին «առաջին քայլն էր արքայից արքայի դավանանքը տերության դավանանքի վերածվելու ճանապարհին»[474]: Սակայն, կարծում ենք, որ ավելի ճիշտ կլինի Կարտիրին արված շնորհը իբրև Որմիզդ-Արտաշիրի գահակալության հանդեպ զրադաշտական կղերի լոյալության հատուցում դիտարկելը, քանի որ Որմիզդ I-ին ուղղափառ զրադաշտական համարելու կամ ի դեմս նրա զրադաշ-

[469] **Agathiae Myrinaei** Historiarum libri quinque, Recens. R. Keydell, Berlin, 1967, IV. 24. 5.Τεθνηκός δὲ τοῦ Σαπώρου Ὁρμισδάτης ὁ τύτου παῖς τὴν βασιλείαν παραλαμβάνει καὶ διεβίω ἐν αὐτῇ χρόνον ἐς ὅ τι ἐλάχιστον, ἐνιαυτὸν γὰρ ἕνα καὶ δέκα ἡμέρας τῆς τύχης απώνατο, μηδὲν ότιῦν δρασς ὁποῖον καὶ ἐς λόγου φέρεσθαι μνήμην…
[470] **Syncellus G.**, I, p. 714: “Περσῶνγ ἐβασίλευσεν Ὁρμίσδας ἔτος ἕν”.
[471] **Луконин В. Г.**, Варахран II и Нарсе, с. 49, прим. 10.
[472] Վ. Գ. Լուկոնինը այդ պատվանշանները նույնացնում է գլխի պատվի և գոտու հետ (**Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 87): Պ. O. Սկյարվոն մի կողմից հղելով «*Ayādgār ī Zarēr*»-ին, մյուս կողմից փաստարկելով, որ Կարտիրը ժայռապատկերների վրա գոտու փոխարեն ներկայացված է խիստ տեսանելի խոշոր մարգարտաշար մանյակով, առաջարկում է *kamar*-ը նույնացնել հենց այդ պատվանշանի հետ (Skjærvø P. O., Kartir, pp. 608-628).
[473] **KNRm,** 5.
[474] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 102.

տականության անվերապահ հովանավոր տեսնելու հիմքեր չկան: Ընդհակառակը, փաստերը ցույց են տալիս, որ Որմիզդ I-ը կրոնական կյանքում փորձել է վերադառնալ հոր նախկին հանդուրժողական քաղաքականությանը: Դա պարզորոշ երևում է, մասնավորապես, մանիքեականության նկատմամբ նրա վերաբերմունքից:

Հոր օրինակով Որմիզդ I-ը ևս ընդունելության արժանացրեց Մանիին: Ղպտական խրատանիում պահպանվել են Որմիզդ I-ի և Մանիի հանդիպման որոշ մանրամասներ. «Եվ բարձրացավ Որմիզդը և նրա (Շապուհ I-ի) փոխարեն ընդունեց թագը... Իմ տերը (Մանին) եկավ [նրա մոտ և ասաց]. «Քեզ համարում են լավ արքա...: Նա (Որմիզդը) օգնեց նրան... որպեսզի նա կարողանա գնալ ասորեստանցիների [երկիրը][475]... Ասաց իմ տերը. «...[որպեսզի] ոչ ոք չմեղանչի իմ դեմ և նեղություն չտա [ինձ աս] որեստանցիների [երկրում]»: Այժմ (Որմիզդը) տվեց [նրան]...»[476]: Խրատանու տեքստի վնասվածքի պատճառով անհայտ է, թե Մանին ինչ է ստացել Իրանի վեհապետից: Սակայն կարելի է ենթադրել, որ այստեղ խոսքը այնպիսի հանձնարարական նամակի մասին է, ինչպիսին որ նա ստացել էր Շապուհ I-ից: Դա հաստատվում է Վարահրան I-ի արքունիքում կազմակերպված դատավարության ժամանակ Մանիի արտասանած պաշտպանական ճառով, որտեղ նա մասնավորապես հայտնում է, թե ոչ միայն Շապուհն է իր համար հանձնարարական նամակներ գրել, այլ նաև «Որմիզդ արքան, երբ ես նրա մոտ էի»[477]: Ղպտական սաղմոսագրքի 241-րդ սաղմոսում ևս վկայվում է. «[Դու] հայտնվեցիր թագակիրների առջև... Շապուհը մեծարեց քեզ, և Որմիզդը ընդունեց քո ճշմարտությունը»[478]:

Ուշագրավ է նաև այն փաստը, որ մանիքեական տեքստերում Իրանի նոր գահակալը հաճախ է հորջորջված «`*Yaxi/yaxē*»[479] (հայերեն՝ քաջ, խիզախ, արի, նաև՝ հիանալի) պատվանունով, ինչը, եթե չասենք բարյացակամ, ապա չեզոք վերաբերմունքի արտահայտություն է:

Մանիքեականության նկատմամբ հանդուրժամտության վերականգնումը խոսում է այն մասին, որ Իրանի նոր տիրակալը տերության կրոնաքաղաքական կյանքը նախկին հավասարակշռության ծիր վերադարձնելը համարել է արքայական իշխանության բացարձակության ամրապնդման կարևորագույն նախապայման: Այս ուղղությամբ Որմիզդ I-ի

[475] Գ. Վիդեգրենի կարծիքով այստեղ խոսքը Բաբելոնիայի մասին է (**Видегрен Г.**, Мани и манихейство, с. 63):
[476] **Хосроев А. Л.**, История манихейство, с. 102, прим. 496.
[477] **Ibid.**
[478] **A Manichaean Psalm—Book**, Psalm no. 241, p. 43. 5-8.
[479] **Skjaervø P. O.**, An Introduction To Manichean Sogdian, Berlin, 2007, p. 119.



գործունեության մեջ նկատվում է որոշակի շտապողականություն: Հոր և պապի օրինակով նա ևս դիմում է իր իշխանության օրինականության քարոզչության պատկերային մեթոդին: Պարսքում կարծես թե կերտվել է նրա աստվածային ինվեստիտուրան ներկայացնող բարձրաքանդակ: Սակայն արքայի թագն ու դեմքը խիստ վնասված են, և դժվար է համոզվել, որ նրա վրա պատկերված է հենց Որմիզդ I-ը[480]: Նա ընդլայնեց պատկերային քարոզչության շրջանակը՝ ինվեստիտուրայի թեման ներմուծելով դրամական պատկերագրության ոլորտ: Նրա դրամների դարձերեսին ատրուշանի ավանդական պատկերն է: Սակայն նրա պահապաններից մեկն արդեն արքան է, իսկ ատրուշանի պահպանության տեսարանն էլ երեք տիպերից երկուսում փոխարինված է աստվածության (նախ Միթրայի, ապա՝ Ահուրամազդայի) կողմից արքային իշխանության օղակի շնորհման տեսարանով[481]: Այդպիսով նա իր իշխանության աստվածային ծագման մասին գաղափարի քարոզչությունը ծավալում էր անհամեմատ լայն մասշտաբներով, քան մինչ այդ կատարվում էր անշարժ ժայռաքանդակների միջոցով: Վերոնշյալ նորամուծությունը առիթ է տալիս մտածելու, որ Որմիզդ I-ը փորձել է ընդգծել պալատական խմբավորումներից իր անկախությունը և ընդդեմ վերջինների՝ աջակցություն գտնել իրանական հասարակության տարբեր խավերում:

Իր իշխանության ամրապնդման ուղղությամբ Որմիզդ I-ի ձեռնարկած կարևոր քայլը գահաժառանգի որոշարկումն էր: Այս հարցում ևս արքան շեշտադրումը կատարել է իր նախորդների օրինակին՝ «մեծ թագավոր Հայոց» նշանակելով հարազատ որդուն՝ Որմիզդակին: Որմիզդ I-ի այս որդին ŠKZ-ում առաջնորդում է Շապուհ I-ի թոռների շարքը[482]: Դա առիթ է տալիս կարծելու, որ ինչպես Արտաշիր Պապականի օրոք, Շապուհ I-ի օրոք էլ Իրանի գահաժառանգության հարցը լուծվել է «օր առաջ»: Որմիզդակին Շապուհ անվամբ որպես Հայաստանի կառավարիչ հիշատակում է նաև Մ. Խորենացին[483]:

Թվում է՝ ներքին քաղաքական անկայուն իրավիճակը պետք է Որմիզդ I-ին դրդեր Արտաշիրի ու Շապուհի օրինակով լայն քարոզչություն սկսելու որդու իրավունքներն ամրապնդելու համար: Այս տրամաբանությամբ սպասելի էր, որ նա նախ և առաջ ավարտին կհասցնի Սալմաստի ժայռաքանդակի կերտման աշխատանքները և, ապա, պապի և հոր

[480] **Vanden Berghe L.**, Archeologie de l' Iran Ancien, p. 24, Tabl. 27.
[481] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 225, Табл. V, 1; **Alram M.**, Early Sasanian Coinage, p. 24-25, Fig. 17-18.
[482] **ŠKZ**, IV, 5.
[483] **Մ. Խորենացի**, II, Հէ:

օրինակով կնախածեռնի ուղղակի ժառանգորդության գաղափարն արտահայտող այլ հուշարձանների ստեղծումը: Սակայն առ այսօր այդպիսիք հայտնի չեն: Ամենայն հավանականությամբ, իրադարձությունների արագ և աննպաստ զարգացումների պատճառով այդպիսիք չեն էլ ստեղծվել:

Անկասկած, ո՛չ Կարտիրի ղեկավարած զրադաշտական կղերականությունը, ո՛չ էլ իրանական ավագանու պահպանողական թևը չէին կարող անտարբեր մնալ Որմիզդ I-ի կրոնաքաղաքական ձեռնարկումների նկատմամբ: Նրանցից առաջինը, որ Շապուհ I-ի գահակալության վերջում շոշափելի առավելության էր հասել իր գաղափարական հակառակորդ մանիքեականության նկատմամբ, հետամուտ էր կատարյալ հաղթանակի: Իսկ երկրորդը, որը հավակնում էր մեծացնելու պետության կառավարման գործում իր դերակատարումը, չէր կարող արքայական միահեծանության ամրապնդման լուռ ականատեսը մնալ: Մի կողմից իրանական հասարակության այդ երկու առաջնորդ խավերի դժգոհությունը Որմիզդ I-ից, մյուս կողմից՝ սեփական նպատակներին առանձին-առանձին հասնելու անկարողության ըմբռնումը վաղ թե ուշ պետք է նրանց մղեր համագործակցության:

Անհնարին է հստակեցնել, թե կոնկրետ ինչն է խթանել Որմիզդ I-ի դեմ գոյացած դժգոհությունների պոռթկմանը: Նմանապես և անհայտ է, թե դժգոհ կողմերից որ մեկն է նախաձեռնել այդ պոռթկումը: Փաստը մնում է այն, որ նրա ընդդիմադիրները գործել են շատ հաշվենկատ՝ առաջին հարվածը հասցնելով ոչ թե արքային՝ Տիզբոնում, այլ առավել դավադիր ձևով՝ գահաժառանգին՝ Հայաստանում:

Համաձայն Մ. Խորենացու՝ Որմիզդակ-Շապուհը Հայաստանում կառավարել է ընդամենը մեկ տարի՝ 273/274 թ.: Դրա հիման վրա էլ ենթադրում են, որ նա մահացել, թերևս, զոհ է գնացած իրանական ավագանու մեքենայություններին դեռևս հոր կենդանության օրոք: Իհարկե, դա հաստատելու կամ մերժելու համար որևէ հիմք չունենք: Սակայն, եթե վերոնշյալ ենթադրությունը ճիշտ է, ապա բնական կլինի կարծել, որ Իրանի գահաժառանգին ասպարեզից հեռացնելուց հետո ավագանին կամուրջներն այլևս այրված պետք է համարեր. «Շահին մորթում են, կամ շահն է մորթում...»: Արքայի վրեժխնդրությունից փրկվելու և գոյապահպանության բնազդն ու տրամաբանությունը Կարտիրին ու նրա կուսակիցներին պետք է տաներ հաջորդ՝ վճռական քայլին...

Տարօրինակ, եթե չասենք խիստ կասկածելի զուգադիպությամբ,



միևնույն 273/274 թ. մահացավ նաև արքայից արքա Որմիզդ I-ը[484]:

Որմիզդ I-ի մահը և համընդհանուր ճանաչում և հեղինակություն գտած թագաժառանգի բացակայությունը, կաթվածահար անելով գահաժառանգության ուղղակի սկզբունքը, գործունեության ազատություն էր տալիս տերության կրոնաքաղաքական ճակատագրի որպիսության մեջ շահագրգիռ տարրերին՝ իրենց ցանկալի թեկնածուին առաջադրելու համար: Սասանյան տերության կյանքում առաջին անգամ գահակալության հարցը ուղղակի ժառանգորդության փոխարեն մտավ այլընտրանքային ընտրության դաշտ:

Հայտնի չէ, Որմիզդ I-ը, բացի Որմիզդակից, ունեցել է այլ որդիներ թե ոչ: Վ. Գ. Լուկոնինը Շապուհ I-ի՝ ŠKZ-ում հիշատակված թոռներից Որմիզդ I-ի որդին է համարում նաև Վարահրանին[485], թեև արձանագրության մեջ Շապուհի թոռների հիշատակության կարգը[486] թույլ չի տալիս վստահանալու այդ կարծիքին: Բայց, եթե անգամ Վ. Լուկոնինի վարկածը ճիշտ է, Իրանի գահին Որմիզդ I-ի ուղղակի ժառանգի թեկնածությունը պետք է որ բացառվեր, քանի որ դա կհակասեր Որմիզդ I-ին ընդդիմացած ավագանու և զրադաշտական հոգևորականության քաղաքական գծին: Ասպարեզում մնում էին Շապուհ I-ի որդիներ Վարահրանն ու Ներսեհը:

Ներսեհը հոր օրոք նշանակվել էր տերության արևելյան ընդարձակ շահրերից մեկի՝ «Սակաստանի, Տուրեստանի և Հինդի մինչև ծով» կառավարիչ: Նա միանգամայն մեծարված էր Շապուհ I-ի և Որմիզդ I-ի կողմից և դրամների վրա կրում էր «արիացի, Մազդային երկրպագող» բավականին մեծադղորդ տիտղոսը[487]: Սակայն, նրա թեկնածությունը մերժվել է: Ըստ երևույթին, իրանական ավագանին, նախ գահաժառանգին, ապա և արքայից արքային ասպարեզից հեռացնելով, Ներսեհի գահակալությունը համարել է չափազանց լեգիտիմ, որպեսզի նրա հետ իր իրավունքների ընդլայնման շուրջ առք ու վաճառքի հույսեր կապի: Բացի այդ՝ նա պետք է որ զգուշանար Ներսեհի կողմից ընտանեկան վրեժխնդրության հեռանկարից:

---

[484] Որմիզդ I-ի մահվան թվագրումը կախված է այն բանից, թե որ թվականն է ընդունվում Շապուհ I-ի մահվան տարին: Տագիզադեն Որմիզդ I-ի վախճանը թվագրում է 274 թ. (**Taqizadeh S. H., Henning W. B.**, The Dates of Mani's Life, p. 116), Վ. Հինցի կարծիքով «Որմիզդ I-ը վախճանվել է 273 թ.՝ միայն 18 ամիս կառավարելուց հետո» (**Hinz W.**, Mani and Karder, p. 487), իսկ Թ. Դարյաին նրա մահվան թվականը համարում է 271 թ. (**Daryaee T.**, Sasanian Persia…, p. 10):

[485] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 103.

[486] **ŠKZ**, IV, 5. «… Որմիզդակ՝ որդին Հայաստանի արքայի, Որմիզդ, Որմիզդակ, Օդաբախտ, Վարահրան, Շապուհ, Պերոզ՝ Մեսենի արքայի որդիներ…»:

[487] **Луконин В. Г.**, Культура Сасанидского Ирана, с. 104.

